Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

VI

891.99.
U-81

06 DEC 2018

891.99
Ա-81
01 JAN 2009
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԻՊԱԿՆԵՐ

ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

(Արտատպութիւններ)

ԹԱՒՐԻԶ
Ատրպատականի Հայերի Թեմական Արագատիպ
Վարժարանի Եղիսաբէթ Միրզաբէկեանի Ցնծատափին
1904

21 FEB 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Հարազատներ 5
Բ. Անկում 217

Ա

ՀԱՐԱԶԱՏՆԵՐ

ԱՐՏԱՏՊԱԾ Է

„ՏԱՐԱԶ“, հանդիսի № 10—13 1897 թ.

Բագուի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց

ՀԱՐԱԶԱՏՆԵՐ

Վ Ի Պ Ա Կ

(Բարքեր Կ. Պոլսի հայերի կեանքից)

I

ՄԱՔՐՕՊՈՒԼՕԻ ԿԱԶԻՆՈՅՈՒՄ

Մայիսի սկզբներում, դալարներով զեղուած մի սրճարանի պարտէզում, նստած էին երկու երիտասարդ- ցած և պարզ աթոռների վրա։ Նրանց առաջը նոյնպէս մի ցած սեղան էր դրուած, որի վրա մաստիկայի բիւրեղի շիշը մեծ շողեր էր տարածել սեղանի անխնամ սփռուած ուտելիքի և կանաչների վրա։ Պարտիզի ծառերը այնքան խոշոր չէին, որ հնարաւոր լինէր նրանց շուքում հովանաւորուել, բայց ծածկուած էին քաղցրաբոյր ծաղիկներով, որոնք հրապուրում էին մարդու աչքն ու հոտոտելիքն և ստիպում ժամերով չբաժանուել այդ գեղազուարճ զբօսավայրից։

Պարտէզը գետեղած էր Քեաղազ—խանէի առուակի ափում, նոյն հովտի մէջ, որը գարնան սկզբնական գալար շրջանում ձգում է իր կոզմը պոլսեցուն. Նամանաւանդ կզական սեռին, առանց ցեղի և կրօնի խտրութեան, որտեղ առաւօտից մինչև երեկո, լի, թէ տօն, անտարբեր լեցւում է խուռն բազմութիւնով: Ամէն խումբ, իր ցանկութեան ճաշակի կամ գրպանի տրամադրութեան համաձայն. կամ մտնում է մասնաւոր այգիներ ու սրճարաններ, կամ ազատ տարածութեան մէջ սփռւում և շարունակում է իր զւարճութիւնը: Ամեն կողմից լսւում են երաժշտական ձայներ, մի կողմը ածում են, միւս կողմը երգում, անդին պարում, մի ուրիշ կողմ մելամաղձ դէմքով դիտում են շուրջը կատարւածները:

Ամէն խումբ ունի իր պաշարը, խմիչքը, մաստիկան և «սուտ—գառը» (*ուղտա քունով վազով*): Դեռ մի խումբ խոհարար *թառչաչիներ* ձողէ եռոտանիները գետին դրած, իրանց կաթսայից անընդհատ լցնում են պնակներով և ցրւում յաճախորդներին գիշերն եփած տոլմաները՝ հազարաւոր գովասանքներ թափելով: Այնպիսի ախորժակով էին ուտում դադրած զբօսնողները, որ ակամա տեսնողի ախորժակն էր գրգռւում:

Թէև արևի բարձրանալուց հազիւ երկու-երեք ժամ էր անցել, բայց Քեաղազ-խանէի հովիտը լցւել էր ահագին բազմութեամբ, այցելու տիկիններ գոյնըզգոյն շորերով, կանաչազարդ հովտի մէջ նորաբողբոջ ծաղիկների նման ծփում էին: Այս տեսարանը գրաւած էր սրճարանի պարտէզում նստած երկու ընկերի հայեացքը և թէև այնքան էլ ժամանակ չէր անցել, բայց

և այնպէս մատիկայի ազդեցութեան տակ թմրած՝ տեղերից շարժւել չէին ցանկանում:

—Աթարբէյ, ասաց յանկարծ ընկերակցին, *չաղըր-ջիները* կանչէ, քիչ շնորհքով բան չալել տանք *զառ-ռաւ* գնաց, անհամ գրգռոցները լսելով:

—Քու ալ քէֆդ այսօր շատ բաներ կուզէ, Սէթօ, բայց քանի՜ մէկ կրկնեմ, որ այսօր գրպանս այդպիսի ցանկութիւնների տրամադիր չէ:

—Մարդ ըլլալիք չունիս, պիտի միշտ ամէնը քեզ համար տքնին, միջոցներ գտնեն, որ դու կարողանաս ազատ ապրել:

—Շատ լեզւիդ մի՛ տար, լողները կարող են կարծել, որ Սէթօն վաստակել է ու Աթարբէյին պահել՝ իր ընտանիքով:

—Չէ ու, իբր թէ իրաւ չէ, այդ ըսածդ, եթէ ես չլլայի...

—Ձայնդ կտրէ, ապերա՛խտ, կից մ'օր չգարնեմ փորիդ միջէն տարիներով դունէս կերածդ փշրանքները կթափին: Դու ո՞վ ... Դէհ, մէյ մ'ասօր բերնի չափին մտիկ տուր...

—Ինչ կուզես ըսա՛, ես չեմ ուրանալ, որ ձեր դրան լակովն եմ մեծցել, բայց և այնպէս դու ալ մի՛ ուրանալ, որ եթէ ես ալ չլլայի, վաղուց ոսկորներդ փթած կլլային և ընտանիքդ սովի մատնւած:

—Մի՛ վրա կախեր, ասաց հանդարտութեամբ Աթարբէյը, երբ օձի նման սողալով Սէթօն խոստովանեց նրանց դռան լակով մեծացած լինելը և ընկղմեցաւ խոր մտածութիւնների անդունդը:

Մի առ ժամանակ երկուսն էլ լռեցին. միայն

Սէթօին մի ներքին մխաք չէր թողնում երկար ժամանակ կրքերը զսպելու։ Նա ակամայ լռել էր, բոլոր ճիգը գործ էր դնում իր կեղծ հանգստութիւնը պաշտպանելու, բայց նրա ջղերը չէին հնազանդում կամքին։ Նա մի գործով իրան զբաղեցնելու միտումով լքցրեց մաստիկայի բաժակները և ձայն տւեց սրճարանի ծառային, որ սառը ջուր բերէ, բաժակները լցնէ։ Մինչ այդ, Սէթօն կրակոտ երեխայի նման խաղում էր սեղանի վրա դրւած ուտեստները և պատառաքաղները կարգաւորելով, մաքրելով։ Մխանգամայն աչքի տակով զննում էր Ս.թաբէյի դէմքի արտայայտութիւնները, որոնք սրտում և մտքում անցուդարձածները հայելիի նման արտայայտում էին։

—Է՜հ, վերջապէս դու ալ, բէյ, քիչ քիչ *չիւզեաի* (ցիգան) կեանք վարելու պիտի վարժւիս, կրկնեց Սէթօն, սրտի մաղձը թափելով։ Կտեսնեմ, որ մուրացկան խնայողութեան փորձեր կընես։ Թո՛ղ գան այդ եբաժիշտները, իմ սուղ գրպանս կարող է անոնց վարձատրել։ Թո՛ղ այս օր ալ ես վճարած ըլլամ, մինչ ադոր համար ցաւելու ես։

—Յիմար անասո՛ւն, մինչ ես կեանքիս մէջ *ուլուտեակ* բառը գիտեմ։ Դո՛ւ չգիտես, որ ես հազարներն ու հարիւր հազարներն արհամարած եմ և միշտ ոսկին ոտքիս տակ շաղ տալով ժուռ եկած։ Բայց որ չկա, չես հասկանար... Դո՛ւ չգիտես, որ ջղերս երբ շարժեցան, ես ալ համբերել չեմ կարող, իսկ քու *չհօրիդի* քսակդ բաւարարութիւն երբէք չի կարող տալ կրքերիս։

—Է՜հ, ինչպէս ընեմ, բէյ, կրտեսնեմ, որ կատաղապէս, հոգեկան հիւանդի դէմք ունէս և ջղերդ զարճութիւն կորոնէ։ Հազար անգամ խօսեցայ, քեզ ցոյց տւի այս դառն կացութեանդ միակ ելքը, բայց որ անչափ բարի ես... այն աստիճան, որ քիչ է մնացել անձդ զոհես, ճգնաւոր դառնաս։ Ձշմարիտը այդ *հզ ևսևնաստակոմեան* առաջին քայլն է...

—Լռի՛ր, Սէթօ, լռի՛ր, մի խռովիլ հոգիս, ես կարողութիւն չունիմ այդ յանդիմանութիւնները տանելու...

—Ի՜նչպէս լռեմ, ինչ, մինչ կցանկանաս, որ ես ալ քեզ պէս պարտազանց դառնիմ, ինչպէս դու պարտազանց ես դէպի ընտանիք, զաւակներ... Փու այդ մելամաղձոտ վիճակը չի կարող երկար տևել, դու կարող ես գլխիդ փորձանք բերել, իսկ այն ժամանակ վա՛յ ինձ... պէտք է ես ալ տանջւեմ, որ իմ մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան ընկերոջ ընտանիքի դառնութիւնը բմբուլի ծանրութեան չափ չպիտի կարողանամ թեթևացնել... Ների՛ր, որ ես պարզը խոստովանեմ, այս բոլորը այնքան սիրտ ծակելու դիտմամբ չեմ ըսեր, որքան խղճիս բեռը թեթևացնելու։ Դոնէ ապագայի մէջ ես քիչ կտանջւիմ և ձեռքերս լւացած կլինիմ։ Մե՛ղքդ վիզդ։

—Ախար ինչ ընեմ, որ չուրն ընկնիմ, ես բոլորովին մոլորած եմ...

—Մոլորւելու առիթ չկա, այն կողմը նայի՛ր, տե՛ս, տե՛ս *յօնդ* կառքը, սև սամթի նման փայլող ձիերը, միջի զոյգը, արդ ու զարդը և կլորիկ օրիորդը, որի վրա, մի երկու ամսից պիտի պսակւի եղբայրդ... Եղբայրդ, հարագատդ, որն այսօր ափի մէջ բռնած է հօրդ

մօտ մելիոնի կարողութիւնը, ամսական հինգ հազար կլորիկ ոսկի եկամուտ ունի, մօտ հարիւր հազար ոսկի ալ կինը ժառանգութիւն է բերելու, իսկ դո՛ւ, կինդ, զաւակներդ... Աստուածը վկա՛, հաւատացած եմ, որ չբաւարարուիս եան և սովի ես մատնելու...

—Լսի՛ր, ես անոնց համար այնքան ունիմ, որ կարօտութիւն չեն քաշելու...

—Այո՛, տունդ և խանդ (*բարեհաճսպաս*), բայց այդ բոլորը պատմիր չարեկամներիդ, ինձմէ բան խո՛ չեն կարող ծածկել... Այսօր, վաղը պարտատէրերիդ ձեռքը կանցնին երկուսն ալ:

—Ես միայն մէկովը կարող եմ ծածկել պարտքերս:

—Մի՛ ստել, մի՛ կեղծել, դեռ երէկ երկուսն ալ տաս, տունդ, տեղդ, կահկարասիքդ, կնոջդ մի քանի կտոր զարդերն ալ վրա դնես, դարձեալ չես ազատիլ, դարձեալ բան մը ևս պարտք կմնաս, որի համար կարող ես անպատուել անգամ...

Ուզում էր մի որևէ կերպ ծածկել Ամթաբէյը իր անել վիճակը ընկերոջից. բայց զուր էր. ինքն համոզուած էր, որ Սէթօն ամէն բան գիտէր, հետևաբար անկարող էր քօղարկել: Եւ ինչքի էլ քօղարկէր, քանի որ հաւատացած էր, որ Սէթօն իր ամենաանկեղծ բարեկամն էր և մտերիմը: Այդ իսկ պատճառով չկարողացաւ այլ ևս պատասխանել, պարտաւորուած սիրտը ուռած մի հառաչանք ևս քաշեց ու լռեց

Սէթօն զգաց, որ հարուածը նպատակին հասել էր, Ամթաբէյը ընկճուած էր: Սկսած գործը շարունակելու և նպատակին հասնելու համար: Մի առ ժամանակ Սէթօն էլ չէր ուզում, նրան խանգարել, քանի որ ինք էլ խիստ խորասուզուած էր մտածութիւնների մէջ: Հեռուից ազմուկն ու ժխորը, երաժշտութիւն, երգեցողութիւնն և աղաղակները նրանց վրա էլ չէին ազդում: Բաւական մի ջոց անմռունչ անցկացնելուց յետո, Սէթօն նորից խզեց լռութիւնն ու ասաց.

—Մե՛ղք ես, բարեկամ, մե՛ղք ես, տէր իմ, Աստուած վկա՛, երբ աչքիս առաջ կենդկայանայ ամբողջ ապագադ՝ իրան մռայլ տեսարաններով... թ.քիր այդ ինքնասիրութեանդ, այդ մեծամտութեանդ և խղճա անմեղ զաւակներիդ: Դու քեզնէ, ես գիտեմ, ձեռք ես քաշել, գոնէ այն մանկահասներուն գթա՛:

—Ի՞նչ կուզես, ի՞նչ կցանկանաս, Սէթօ՛, որ կատարեմ...

—Այն, ինչ որ հօր պարտականութիւնները կթելադրեն. ապահովիր, ապահովի՛ր զաւակներիդ ապագան:

—Ի՞նչպէս, գողութիւն ընե՞մ... Մի՛թէ դու կբարևես, կյարգես, դու այդքան տաբուան մտերիմս, ընկերս, եթէ ես ստորացած՝ յափշտակութեամբ պարապե՞մ...

—Ես, երբէ՛ք չէի ցանկալ և տեսնել այդ ստոր վիճակի մէջ իմ հոգեկից բարեկամիս: Բայց ո՛վ է քեզ այդպիսի անարգ գործ առաջարկողը: Մի՛թէ հայրենի ժառանգութիւնէն մաս պահանջելը՝ գողութիւն է, մի՛թէ հօր հարիւր հազարներից բաժին վերցնելը՝ անարգութիւն է:

—Բայց չէ՞ որ ես արդէն ստացած եմ ինձ հասանելի բաժինը, ինձ վերաբերեալ մասը, դեռ ստորա-

գրութիւն ալ տւած եմ։ Ի՞նչպէս կուզես, որ ես ուրանամ, ժխտեմ այդ բոլորը։

— Այդ բոլորը դիւրին է, միայն թէ դու կամեցի՛ր ստանալ...

— Սէթօ, ո՛չ, ո՛չ, ես թքածս չեմ լիզել...

— Այդ է, ահա այդ բանի մէջն է խնդիրը, որ դու, քու մեծասրտութեանը զոհելու ես ամէն բան. նախ քեզ, ապա կնոջդ և զաւակներիդ։ Ահա այդ վեհանձնութեանդ պիտի զոհես բոլորը, միայն թէ, արժէք չունի ընթացքդ։ Այդ քայլերդ պիտի ապշեցնէ լսողները, որոնք խելագարութեանդ պիտի վերագրեն։ Տասնևիններորդ դարի վերջերը այդ աստիճանի ասպետական վեհանձնութիւն, ո՛չ միայն տարօրինակ է, այլ մինչև անգամ ծիծաղելի։ Բայց ի՞նչ բան է քու այդ աստիճանի ինքնասիրութիւնդ. քիչ մը փիլիսոփայաբար քննենք։ Դու յօժարակամ հրաժարել ես հայրական ժառանգութիւնից՝ յօգուտ եղբօրդ։ Այդ բանը մինչև անգամ ստորագրութեամբ վաւերացրեր ես։ Ի՞նչի, պատճա՛ռը։ Եկ տեսնենք, թէ հօրդ ժառանգութիւնէն հրաժարւելու օրինական պատճառ ունի՞ս։ Կամ ի՞նչ արդարութեամբ հայրդ քեզ պիտի զրկէ այդ իրաւունքէդ։ Կամ ի՞նչ խղճով պիտի խլացնէ եղբայրդ՝ եղբօրը բաժինը։ Քո վեհանձնութեան դէմ տե՛ս, տե՛ս, թէ ի՞նչ որոգայթներ կլարէ եղբայրդ քեզ դէմ՝ այդ հարստութեան համար և դու անզգայ, կհեռանաս, կհրաժարիս իրաւունքէդ։

—Ախմ՛ր, չէ որ ես ստացել եմ։

—Ի՞նչ, մի չնչին գումար, մի տասներորդը, գուցէ էլ պակաս, այն էլ քո վաստակածն են քեզ

տւել. իսկ հօրդ բաժինը, թագուցածնե՞րը։ Ի՞նչի ես զրկւելու։ Մէկ քանի տարի և՛ս, ալ դրամագլուխ չունեցողները յաւիտեան ծիծաղէ, խնդակցութիւնէ հրաժարւելու են։ Զբօսանք և զւարճութիւն յաւիտեան երես են դարձնելու պրօլէտարիատէ։ Եղբա՛յր, դու կատարեալ խելագարւած ես, մի՞թէ կարելի է հարիւր հազարներէ հրաժարւել։ Աստւած վկա՛յ, ես պէտք է մէկ խնդիր յանձնեմ կնոջդ կողմէ, քեզ որպէս խելագար փրկիչ ուղարկել տամ և շահերդ պաշտպանելու հնարը գտնեմ։ Ուրիշ միջոց չկա զաւակներդ փրկելու։

— Ի՞նչ ընեմ, Սէթօ, ես մոլորած եմ։

—Լսիր և հետևի՛ր ինձ, այդ բաւական է քեզ անդունդից փրկելու։

II

ՏԻՐԱՆ ԲԷՅԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ

Երեկո էր. վերջալոյսի մօտերը։ Գարաթաշի գագաթների բարձունքում, կիսազառիվայրի-կիսաբլրակի դաշտի վրա մի գեղեցիկ պարտիզում, գոյնզգոյն ապակիներով զարդարւած ճաբոնաձև *քէօշկում*՝ իրանց հայրենի տան հովանիի տակ, հեռու մարդկային աչքերից և ականջներից, հեռու ընդհատողներից, ուրախակցող, ժպտացող կամ նախանձոտ, ծաղրող, արհա-

մարանքներից, զոյկերը՝ Տիրան բէյը և նրա հոգեկից՝ Բէհթրիչէն արձակ ու ազատ ընկղմած երանութեան մէջ՝ խօսում, ծիծաղում ու իրանց երջանկութեան շրջանի ծրագիրն էին կազմում: Պարտէզի ծառերի վրա թռչկոտող թռչնիկները, իրանց թրթռացնող երգերով, կարծես ձայնակցում լինէին զոյգերի ուրախութեանը: Գալար կանաչ յատակը, կոկոններով և վարդերով զարդարուած փշալի թփերը, անուշահոտ ծաղիկների բուրմունքը, զեփիւռի մեղմ սօսափիւնը նոճիների և սոսիների մէջ, աւազանի շատրւանի ջրի կարկաչիւնի հետ միացած՝ մի սքանչելի ներդաշնակութիւն էին կազմում երկու սիրահարների անվերջ սիրաբանութեան կոնցերտին: Սոխակն անգամ, կարծես հրապուրուած լինելով այդ քաղցրահնչիւն համերգից, վարդի թփերի միջից իր գերիշխանական սօլօն էր արձակել և ներդաշնակութեան պսակը բոլորել: Եւ որքան արևը թեքւում էր, այնքան աստիճանաբար ուժեղանում էր այդ բնական համերգը, ցանկանալով յագուրդ տալ կրքերին, զգալով որ շուտով պիրելու է մութը և խաւարի թագաւորութիւնը իրան տխուր խարդաւանանքներով:

Այդ միջոցին մի յոյն աղախին տխրադէմ դուրս եկաւ տանից և ակամայ քայլերով սկսեց առաջ գալ, ձեռին մի այգետոմս բռնած: Աղախինն աչքերը յառած քէօշկի լուսամուտներին՝ գնում էր դողալով, տիրոջ բարկութեան դիմաւորելու սրտադողով: Եւ որքան առաջ էր գնում, այնքան թշւառի ծնկները դողում էին և քայլերը դանդաղում: Վերջապէս մօտեցաւ քէօշկին ու դուռը հրեց:

—Այդ դու ես, Էլէնա, ներսից ձայն տուեց մեղմաբար Տիրան-բէյը:

—Ների՛ր, բէյ, ես անճարացած յանձն առի խանգարել ձեր ձեր առանձնութիւնը: Ամթա-բէյը ստիպեց այդ կատարել...

—Եղբա՛յրս, ասաց Տիրանը, այգետոմսն առնելով աղախնի ձեռքից:

—Այո՛, ասաց աղախինը աւելի երկիւղածութիւնով:

Տիրա՛ն, ասաց Բէհթրիչէն, կինդրեմ, գնա, ներս բեր եղբօրդ և ինձ հետ ալ ծանօթացո՛ւր: Կաղաչեմ, լաւ առիթ է, քանիոր այսօր տանը չեն ծնողներդ:

—Այս րոպէիս, այս րոպէիս, ասաց դուրս գալով Տիրանը և դառնալով աղախնին շարունակեց. Էլէնա, շուտ այդտեղի լամպերը վառել տուր:

Մի երկու րոպէից վերադարձաւ Տիրանը եղբօր Ամթալի հետ ձեռ ձեռի բռնած, և մտան քէօշկը: Ծառաներն արդէն սկսել էին վառել ջահերը:

—Եղբա՛յր, խնդրեմ ծանօթանաք ձեր հարսնացու՝ Բէհթրիչէի հետ:

—Շատ ուրախ եմ, շատ ու շատ, ասաց թոթուելով Բէհթրիչէի ձեռը, որն ուզում էր համբուրել տաքեր ձեռքը: Ների՛ր, քոյրս, շարունակեց Ամթան, որ ես պարտականութիւնս չեմ կատարել, քեզ չեմ այցելել. այդ բոլորի մէջ լաւ իմացիր, որ ես մեղաւոր չեմ:

—Իսկ դուք, բէյ, ներեցէ՛ք, որ ես էլ չեմ կա-

տաՙրել իմ պարտականութիւնս. ես աւելի և ս մեղաւոր եմ։

—Ո՛չ, ո՛չ, դու ոչնչով մեղաւոր չես, աղջիկս, երբէք ալ մտքովս չի անցնիլ քեզ մեղադրել։ Մեղաւորը է նշանածդ, Տիրանը, որը պատիւ չհամարեց քեզ հետ այցելել իր եղբօրը և հարսին։

—Է՛հ, եղբա՛յր, թո՛ղ այդ քարերը, մի՛ վրդովեր ինձ, դու սիրտս գիտես, ինչի՛ այլևս կասկածանքներ կառաջես դէպ ի ինձ։

—Գիտեմ, գիտեմ և գիտցածս ալ երբէք չեմ ծածկել։ Եթէ եղբայրդ սիրէիր, գոնէ մի ոսպի չափ, ինձ պատահած ժամանակդ այնպէս խոյս չէիր տալ, ինչպէս սովորութիւնդ է։

—Եղբա՛յր, եղբա՛յր, զուր տեղ ինձ մի՛ ամբաստաներ Բէաթրիչէի մօտ... Մի՛թէ իրաւացի են այդ ակնարկներդ։

—Այնքան ճշմարիտ, որքան որ ես եմ՝ եղբայրդ այս րոպէիս այդ բոլորը քեզ զրցողը։

—Այդ կատակներդ դուրեկան չեն։

— Քեզ նման հաճելի լեզուի տէր չեմ, ապա թէ ոչ, ես ալ գրաւած կլլայի ծնողներիս սիրտը և այժմ նրանց գրկում նստած սպասելիս կլլայի միլիոնին։

—Դու՛ք արդէն հանաքի չափն անցուցիք. ինչպէս կնշմարեմ, եկել էք ինձ խայթելու, այն էլ հոգւոյս հատորի ներկայութեանը։ Բայց խնդրեմ տանձ դնէք ձեր լեզուին, զսպէք ձեր կրքերը, այդ նախատինքներին երբէք արժանանալու առիթ չեմ տուել։ Ես կկասկածիմ, որ գարձեալ փինանսական անձուկ մ՛ունիք և ճնշւած վիճակի մէջ եկել էք ձեր սրտի մաղձը գլխիս թափելու։

ՀԱՅԱՍԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄՅԱՍՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ
7/XI 1922

Տարաբախտաբար վատ ժամ էք ընտրել։ Աչքս որ ձեր կրքերին կզոհէք մի անմեղ արարած է՛ս, որ ոչնչով մեղաւոր չէ, տանելու այդ բորբոքումներդ։ Է՛ս, եղբայրդ եմ, հարազատդ եմ, ինձ չարչարանքիդ ընկերակից ընելու դուռցէ իրաւունք ունենաս, բայց այս խղճալուն խնայէ։

—Ներողութիւն, օրիո՛րդ, հազար ներողութիւն, այնպէս վրդոված եմ եղբօրս դէմ, որ ջղերս սանձելու այժ չունիմ... Բայց վերջապրի ըսելիքս, պրծա՛։ Իսկ դուք ինչպէս էք, գո՞հ էք ձեր բախտէն։

—Շնորհակալ եմ, բէյ, անչափ շնորհակալ ձեր բարեսրտութիւնէն։ Վիճակէս տրտնջալու առիթ չունեմ... Բայց ես կխնդրէի, որ դուք պարզէիք ձեր վէճը, որպէսզի առիթ չպատահէր, մի ուրիշ անգամ այսպիսի անախորժ տեսարանի պատահելու։

—Այո՛, եղբա՛յր, այո՛, Բէատրիչէն արդարացի պահանջ դրաւ, պէտք է պարզել։ Խօսքերդ անոր սրտի մէջ խոր արմատներ գցեցին և եթէ ամիջապէս չպարզես, ապագայի մէջ ամէն տեսակ բացատրութիւններ չեն կարող չնչել ասոր հետքերը։ Կխնդրեմ, առանց այլ և այլի, ինչ որ ըսիր՝ կրկնիր, պարզիր և որոշիր. թո՛ղ դատաւոր լինի մեր մէջ Բէատրիչէն կամ մէկ ուրիշը, ում որ կամենաս։

—Ի՛նչ դատաւոր, ի՛նչ բան, դու ինքդ խօսիր, դու ինքդ ասա՛, դու ինքդ ալ վճռի՛ր։ Պատճառն ինչ է, որ ծնողներս ինձ տեսնել չեն կամենալ, իսկ քո մի ժամ անոնց աչքէն հեռանալը սրտի բաբախում և անհանգստութիւն կպատճառէ։

—Չգիտեմ ես, իսկ դու կարող ես բացատրու-

թիւնը տալ. քանիոր այդ մասին երևի շատ ես մտածել և արդէն իսկ եզրակացութեան հասել, ասաց գլխակոր Տիրանը։

—Այդ ես գիտեմ, քո՛ կեղծաւոր, շողոքորդ լեզո՛ւդ է։ Ի՞նչ է պատճառն, որ ինձ ատելով ատում են, իսկ քեզ ընդհակառակը։

—Ազատ ես, այդ մասին ալ կայացրած վճիռդ յայտարարել։

—Չեմ մերժել, այդ ալ քծնութիւնդ է։

—Բաւական է, եղբա՛յր, բաւական է։ Խիղճ ունեցիր։

—Վատ կացութեան մէջ ես, ինչ է. նշանածդ քովդ է։ Խոստովանի՛ր, մի՛թէ դու չգրդեցիր, որ նրանք ինձմէ պայմանագիրը առան, որ ես իբր հայրենի ժառանգութիւնս ամբողջապէս ստացայ և այլևս պահանջ չունիմ։ Եւ մի՛թէ այդ բոլոր քու օգտիդ չէ՞ կատարուել։

—Յաւատում եմ, որ այնքա՛ն հոգեկան ծանր ճընշման տակ ես, եղբա՛յր, որ այդ աստիճանի ստորացել ես։ Մի պակասութիւն որ չունէիր՝ երես առ երես զրպարտել, ստել, այդ էլ երեսիդ կաշին պնդացնելով նոր արհեստ ես ընտրել։ Հարբեցողութեան և շռայլութեան հետևող ախտերը անհաշիւ են...Խորին կերպով վշտանում եմ, որ դու հոգիս իր էութեամբ ճանաչելով հանդերձ, այդ աստիճանի անարգ կերպով ինձ կրհայհոյես։ Ծնողներուս ատելութեան պատճառը, ոչ թէ իմ շողոքորդ, այլ քո թունաւոր լեզուդ է, որ խայթել և խոցել է անոնց սիրտը։ Մի բարկանար, որ ճշմարտութիւնը կպարզեմ, մի վեր վեր թռչկոտիր,

մի խանգարեր ինձ, մի աղմկեր, այլ ինչպէս ես համբերութեամբ լսեցի, դու ալ լսի՛ր։ Ո՛չ թէ իմ քծնելուս համար քեզ կատեն, քանիոր քեզ մի ժամանակ հաւիւը անգամ ինձանից աւելի կսիրէին, այլ քո մոլորութիւնների համար, որ անոնց հետ հաւասարապէս բաժանած կայքը մի քանի տարուան մէջ վատնեցիր։ Չբաւականացա՞ր...

—Ես իմ վաստակածս եմ տարել, իմ ճակատիս քրտինքը։ Տասնհինգ տարեկան հասակից հօրս հետ առևտրական տուն եմ կառավարել և ես եմ վաստակել անոր քեզ համար գողացած ու պահած ժառանգութիւնը...

—Խնդրե՛մ, մի՛ ընդհատեր, լսի՛ր, ըսելիքդ վերջը կարող ես շարունակել։ Չբաւականացար այդ բաժանմունքով. տասը տարուան ընթացքում հինգ տասն անգամ դարձեալ ահագին գումարներ տարիր,..

—Դու էիր վաստակել, որ կցաւիս տարածիս վրա։ Ի՛մ, իմ վաստակս եմ տարել։ Դու աշխարհ չէիր եկել, որ ես Լոնդոն, Մանչեստր, Լիօն ու Վիէննա ժուռ կգայի և գանձ կդիզէի քեզ համար...

—Բայց քեզ հետ խօսել անկարելի է, դու չես թոյլ տալ բացատրելու։ Վերջապէս անոնք տեսնելով, որ քեզմէ ազատելիք չունին, ճարահատեալ այդ պայմանագիրը կորզել են քեզմէ։ Իսկ դու այժմ, ամէն բան ինձմէ շատ լաւ գիտենալէն յետո, դարձեալ ինձ կմեղադրես, որպէս քեզ գրկելու խորհուրդները յղացող և թելադրող։

—Եթէ դու ըլլաս իմ տեղս, Տիրա՛ն, մի՛թէ այդպէս չես ենթադրեր, քանի որ այդ բոլորը կկատա-

րեն քու օգտիդ, քու շահիդ համար։

—Եւ դու այդպէս համոզուած ես. Աթա՛։

—Ես, ե՛ս։

Այո՛, դո՛ւ, պատասխանեց խեղդուած ձայնով Տիրանը։

—Այդ իմ գործս է։

—Քանի որ ինձ կվերաբերի, կպահանջեմ, որ պարզես...

—Իմ քէֆս չուզեր. որ պարզեմ, ասաց քմծիծաղով Աթա-բէյը։

—Ուրեմն դու վա՛տ ես. ասաց ու ինկաւ թուլցած Տիրանը թաւշէ բազմոցի վրա։ Բէատրիչէի մօտ, որը մոլորած էր սրտադողից այս տխուր տեսարանին ականատես լինելով։

—Նա՛ւ, լա՛ւ, լա՛ւ, այդ ձեւերդ բաւական է, Գիտեմ քիչ քէֆիդ կպաւ, բայց ճշմարտութիւնը լսելու չափ ալ քաջութիւն ունեցիր։ Քաջութիւն չէ միայն քսութիւնը։

—Կաղաչեմ, բէյ, գթացէ՛ք, դադարեցուցէ՛ք ձեր նախատինքները։

—Ա՛հ, ներեցէ՛ք, ներեցէ՛ք, որ ես, շարունակեց Աթաբէյը, ձեր քաղցր րոպէները խլեցի և դառնացուցի։ Ակամա, կեանքս վկա, ակամա կատարեցի այդ բոլորը։ Ճշմարիտը այնպէս վշտացած եմ հոգւով, որ ալ համբերելու կարողութիւն չունիմ։ Ինչո՞վ եմ ես խորթացել, ի՞նչն է սխալել, որ ծնողներս իմ զաւակներիս երեսն անգամ չեն կամենար տեսնել։ Ես վատ եմ, այն անմեղներն ի՞նչ մեղք ունին։ Կինս ի՞նչ ըրած ունի...

—Հերի՛ք, դու բոլորովին ապականուել ես։ Այդ

աստիճանի ստորացած տեսնել երբէք չէի ցանկանալ հարազատիս, ասաց կրկին գլուխը բարձրացնելով Տիրանը։ Մի՞թէ դու չէիր, որ բռնութեամբ հարսիս՝ Ագնիւին հեռացուցիր հայրենի յարկէն, մի՞թէ դու չէիր, որ լացկումած բաժանեցիր զաւակներդ տնէն՝ մօրս գրկէն։ Մէ՞թէ դու չէիր, որ արգելեցիր հարազատներին իրանց սիրելիներուն այցելութիւնը։ Այդ բոլորը կատարելէն յետո, այսօր այս անմեղի սրտի մէջ ի՞նչ որոմ կցանկաս աճեցնել, ասաց Տիրանը ցոյց տալով Բէատրիչէին։

—Ես պարտաւորւած կատարել եմ պարտիքս, պատասխանեց դողդողալով Աթա-բէյը և լռեց։

—Ամօ՛թ, հազար ամօ՛թ, ասաց պառկած տեղից Տիրան բէյը։ Ես գիտեմ բոլոր այդ ստորութեանդ պատճառը, բայց հնարաւորութիւն չունիմ այսօր քեզ օգնելու։ Գիտեմ, դարձեալ պարտատէրներդ քեզ նեղուցած են, միայն քու պատճառով այնքան ծնողներիս զայրացուցած եմ, որ գանձի բալանին ինձմէ խլեցին։ Շատ որ ջանք դնեմ, մի հարիւր, կամ երկու հարիւր ոսկով միայն կկարողանամ քեզ օգնել, աւել ոչինչ...

—Ե՛ս մուրացկան չեմ, ես քեզմէ բան չխընդրեցի, կարօտութիւն ալ չունիմ։ Շնորհակալ եմ, որ քեզ թողածս հարիւր հազարներէն, այնքան բարեսիրտ ես, որ ողորմութիւն ալ կընես եղբօրդ, նշանածիդ քով պարծենալով։ Մենք կտեսնուենք, ասաց ու հեռացաւ Աթա-բէյը։

—Բէյ, տէր իմ, կաղաչեմ, թէև ձայն տուեց Բէատրիչէն, բայց Աթա-բէյը առանց ետ դառնալու

շարունակեց իր ճանապարհը մոլեգնած քայլերով։

Նրա այս ցոյցը սառեցրեց սիրահարներին, որոնք անմռունչ իրենց երկիւղը իրար զգացնել տ՝ին։

III

,,ԱԼԺԻՐԻՑ'' ԱՓԷԱ

—Տիրան. ինչու առիթ տուիր, եղբօրդ զայրանալու և հեռանալու, ինչու չբացատրեցոյք։ Այդպէս քինախօսութիւնը երբէք լաւ վերջ չի կարող ունենալ։ Նա բորբոքած հեռացաւ, իսկ կատաղութիւնը մարդու ինչ յիմարութիւն չի գործել տալ։

—Մի՛ վշտանար, Հոգեակս, ինձ այս է վիճակուած, տանջուել և անվերջ վշտերի մէջ հալուել ու մաշուել։ Ի՞նչ, կկարծես, որ նա կզիջանէր բացատրելու։ Երբէք, նա երբէք չի ցանկար բացէբաց խօսել. նա հոգս մ՝ունէր, այն ալ գրպանի խնդիր։ Եկաւ, որ վըշտացնէ դարձեալ մէկ-երկու հազար լիրա տանի. բայց տարաբախտաբար վատ ժամանակ էր ընտրել։ Նամանաւանդ այս անցուկ միջոցներին, երբ արդէն ոչ մէկ կողմէն դրամ չստացուիր, ոչ ոք ո՛չ պարտքը կվճարէ, ո՛չ կրպակներու և տներու կապալը կհասցնէ տէրերին։ Կհաւատա՛ք, պատրիարքարանի դէպքէն վերջը, ահա քանի տարի է, և ոչոքէ կարգին կապալներն ստացած ենք։ Կտոր կտոր, ամիսներ ուշացնելով, քառասուն անգամ պահանջելով, դանգատով, վերջապէս երես

պնդեցնելով և աներեսութիւնով միայն քիչ թէ շատ բան ժողոված ենք։ Ստանալիքներիս կիսէն շատը կորսուած է։

—Բայց և այնպէս, եղբօրդ պէտք է հասնիս գուցէ ինչ տագնապի մէջ է, ինչպիսի ճգնաժամ կանցկացնէ։

—Ըսելիք չունիմ, իրաւացի է ձեր նկատողութիւնը, բայց գիտցէք, որ ան ալ սահմանն անցուցել է։ Հայրս բոլորովին վրդովուած է, վճռել է ոչ իսկ փարայի մը օգնութիւն ընել, իսկ ես հօրէս ծածուկ այնքան եմ հասել անոր օգնութեան, որ ինքս եմ օգնութեան կարօտ մնացել։ Թողլ տուր խոստովանելու, քանիոր առիթն եկաւ, չորս-հինգ հազար լիրայի ծածուկ պարտքի տակ ճնշուած եմ, կկարմրիմ ու կկապտիմ, երբ պարտատէրերիս կհանդիպիմ։ Խաբելու սահմանն անցաւ, ստախօսութեան կնիքը ճակտիս պիտի դրօշմեն շուտով և այդ բոլորը գէթ օգուտ տար եղբօրս, գէթ թեթևացնէր պարտքերը։ Ո՛չ, ո՛չ, բոլորը կուլ տուին անոր հարստահարիչ ընկերները, ամէն բան կլանեցին անառակներն ու գինեվաճառները։ Ես հաւատացած եմ, որ նա ինքն ալ յուսահատած է, բայց օձիքը տուել է, ազատուելու հնարքը չի գտներ...

—Գիտես, Տիրան, որ յուսահատ մարդը ընդունակ է...

—Սմէն տեսակ ստորութեան։

—Ուրեմն, ասաց ամբողջ մարմնով հարցական նշան դառնալով Բէատրիչէն։

—Ուրեմն, պատասխանեց Տիրանը, սպասելով շարունակութեանը։

—Պէտք է եւ ճանապարհը գտնես, սիրելիս, եթէ ոչ, մենք կարող ենք կորչել, ասաց դողդողալով Բէատրիչէն։

—Հօրէս փող կորզելու հնար չունիմ, դրսէն չեմ կարող գողանալ, ասաց յուսահատ Տիրանը։

—Ես կըսեմ եղբօրս, որ անմիջապէս իմ բաժնէն քեզ տա տաս հազար լիրա, հինգը պարտքերդ վճարիր, հինգն ալ տուր եղբօրդ...

—Բէատրիչէ, դու հրեշտակ ես, պահապան հրեշտակս, ոչ, ոչ, ազատարար հրեշտակս, ասաց Տիրանը գրկելով ու համբուրելով իր հոգեկից սիրուհին։

—Ձսպէ յափշտակութիւններդ, հոգեակս, ուշքի եկ, մտածելու բան շատ ունիս, ասաց Բէատրիչէն զննելով Տիրանի ճակատն ու աչքերը, որոնք հազիւ նկատելի էին, քանիոր Տիրանը դէմքը յառած Բէատրիչէի կրծին անզգա դրութեան մէջն էր։ Տիրան, Տիրան, ուշքի եկ, կրկնեց նա դողդողալով. երբ նկատեց, որ աչքերը չէր բաց անում սիրականը։

—Հոգեակս, վերջապէս պատասխանեց Տիրանը, ինչի այն աղտեղութեան մէջ թաւալւէի, ինչպէս ես պիտի արժանանամ զգւանքիդ ու յարգանքիդ։

—Տիրան, ինչեր կդուրցես։

—Ես քու այդ բարի սրտին արժանի չեմ.

—Այդ սիրտը քուկդ է, քեզ համար է բաբախել և պիտի տրոփէ յաւիտեան։ Ասաց և գրկախառնուած ընկան բազմոցի վրա։ Լռութիւնը տիրեց երկուսին էլ, երկար անմռունչ իրար էին նայում և չէին յագենում։ Գուցէ շատ երկար տևէր այդ տեսարանը,

բայց յանկարծ դուռը դրսից բաղխեց կրկին յոյն աղախինը։

—Էլէնա, ներս եկ, ձայն տուեց Տիրան բէյը.

—Բէյ, սոյն նամակը տուեց պոստի ցրւիչը, ձեզ հասցնելու համար։

—Ցրւիչը. տեսնեմ, այդ ինչի՞ կոնտոր չեն հասցրել, որ տուն են բերում, ասաց մմմոալով Տիրան բէյը։

—Բայց, տեսնենք, բայց կարդա, ասաց Բէատրիչէն։

—Իսկոյն ասաց և պատռելով ծրարը Տիրան բէյը կարդաց հետևեալ նամակը։

—«Յարգելի պարո՛ն. Ձեր ուղարկած հինգ հարիւր լիրան, պատիւ ունեցաւ ընկերութեանս գործադիր մարմինը ժամանակին ստանալու։ Գիտենալով ձեր հոգեկան վեհանձնութիւնը, սուրբ գործի համար տաճած անհուն սէրը, աւելորդ կհամարենք շնորհակալութեան բառեր շռայլելով ձեր սիրտը վիրաւորել։ Որպէս հայրենասէր, որպէս կատարեալ մարդ՝ կատարեցիք ձեր պարտքը։

«Սոյն նամակով կրկին ձեզ դիմելով, կցանկանք նոյն հաճոյքը ևս ձեզ պատճառել, որով անչափ թեթևացրած կլինիք գործավարների ուսերի ծանր բեռը։ Յոյս ունինք, որ վաղը մինչև երեկո, կհասցնէք դարձեալ հինգ հարիւր լիրա յիշեալ տեղը, նոյն պարոնին, որով ազգաշահ պարտականութիւններդ կատարելու բաղտ կունենաք։ Գործադիր ժողով. կնիք»։

—Ահա սիւրպրիզ մը, ահա նոր ցաւ մ'ալ։ Բէատրիչէ, դժւարացաւ, ալ անհնար է կ. Պոլսի մէջ

կեանք վարել։ Այս աստիճանի լիրբ խաբեբայութիւն, այս աստիճանի աներես զրպարտութիւն։ Ես երբ եմ հինգ հարիւր լիրա տուել և ո՛ւմ...

—Գուցէ նամակը քեզ չէ գրուած, Տիրան, ասաց Բէատրիչէն դողդոջուն ձայնով։

—Ո՛չ, ո՛չ, ուղղուած է իմ հասցէիս, ասաց Տիրանը զննելով ծրարը։ Ինչպէս կնկատեմ մատնուած ենք. չար նախանձող մ'ունինք, Բէատրիչէ, և եթէ սոյն նամակը Նազմ-բէյի կամ անոր որ և է կօմիսարի ձեռքն անցնի, ես յաւիտեան կորած եմ։ Մոմը վառէ, շտապէ՛ր, շտապէ՛ր, այրենք և մոխիրն անգամ անհետացնենք։ Այս ինչ սոսկալի շրջան մը կանցնենք, այս ինչ ճգնաժամ է հայ ծնուածների և հայ անունն ու լեզուն պահպանողների համար։

—Քաջամելի մատնիչներ, անգութ դահիճներ, մեր ինչը կխռովէ ձեր սիրտը, ասաց լացակումած Բէատրիչէն։

—Մեր հարստութիւնը, մեր ճոխութիւնը։ Լոկ նախանձորդի գործ չէ այս դաւաճանութիւնը, այստեղ վրէժխնդրական ոգի մը կնկատեմ, եթէ չեմ սխալիր այս կնիքը կեղծ է։ Այստեղ Հնչակեան բառը պարզ կկարդացուի, բայց մնացեալ տառերը բոլորովին անընթեռնելի են, մէջի նկարներն ալ անվարժ ձեռքի խակ ընդօրինակութիւն մ'է։ Ինձ կթուի, թէ այս գրուածքը այն մեր ապերախտ լացարարի որդոյ՝ Սէթօյի գիրն է, թէև մեծ չանք գրուած է գրի ձևը փոփոխելու։

—Կնիքը կեղծ լինելը նկատելի է, ասաց Բէատրիչէն քննելով նամակը, բայց գիրն անծանօթ է։ Եթէ այս աստիճան ստորութեան դիմել են, կարող են աւե-

լին ընել, պէտք է անյապաղ մտածել և ել ճանապարհը գտնել, ասաց Բէատրիչէն նամակը այրելով, որի փուշին ցրուեց սեղանի շուրջը։

—Պէտք է անյապաղ հեռանալ, Բէատրիչէ, պէտք է թողնել մի առ ժամանակ Կ. Պոլիսը, ապա թէ ո՛չ, կկորչինք։

—Պատրաստ եմ, գնանք, ուր որ կամենաս, ինձ քեզնէ թող չբաժանեն, գժոխքն անգամ պատրաստ եմ ուրախութեամբ քեզ հետևելու, ասաց Բէատրիչէն հեկեկալով և փաթաթուեց Տիրանի վզովը։

—Սոսկալի արարածնե՛ր։ Սիրտդ պինդ պահէ՛ր, Բէատրիչէ, եթէ դու չվհատիս, ոչ ոք կարող չէ ինձ վնաս հասցնել։ Աշխարհի մէջ բան մը չի կրնալ ինձ յուսահատութիւն պատճառել, բացի քո լքումը։ Դու արիացիր և ես անմահի առիւծ կդառնամ և կխորտակեմ ժանիքներիս և ճիրաններիս տակ դաւաճաններիս ու մատնիչներիս։ Գնանք տուն, այս երեկո իսկ պատրաստութիւնդ տես և վաղը ճանապարհ ընկնենք։ Հեռանանք Կ. Պոլսէն, այստեղ ամէն բան ապականած է, այստեղ ապրիլն անհնար է դարձած, շնորհիւ անբարոյականացած և ստրկացած արարածների, որոնք իրանց գեխութիւնը և անառակ կեանքը շարունակելու միտումով, պատրաստ են ոչ միայն դաւաճանել իրանց ընկերներին ու բարեկամներին, այլ նոյնպէս իրանց եղբայրներին ու հարազատներին։ Գնա՛նք. գնա՛նք,

—Գնանք, ասաց Բէատրիչէն և Տիրանի թևն առնելով դուրս եկան։

Արդէն փողոցի դրան առաջ սպասում էր տնա-

կան կառքը, որտեղ նստան ու սլացան վշտալի սիրահարները։

Հետեւեալ օրը արդէն ամէն պատրաստութիւն տեսնուած էր, այնպէս որ իրիկնադէմին Տիրանը և Բէատրիչէն ծպտած տարբեր ճանապարհներով իջան ծովեզերքը մի մի ընկերով և մակոյկներ նստելով՝ դիմեցին դէպի «Ալժիր» նաւը, որը պատրաստւում էր խարիսխ քաշել և մեկնել Կ. Պոլսէն Զանգ—գալէ, Աթէնք և Մեսինայիտ վրայով հասնել Մարսէյլ։ Բէատրիչէն մի լատին՝ «Սուրբ—Հոգու քոյր» ընկերութեան մայրապետի հետ, մայրապետական շորերով շտապեց, հասաւ ու բարձրացաւ սանդուղքներից, մտաւ «Ալժիր» նաւը, նախապէս հեռուից նկատելով Տիրանը, որ գալիս էր, ցիլինդրը գլուխը, իտալական կոնսուլատի մի ծառայողի հետ։ Շտապեց Բէատրիչէն և մի բերկրալի ժպիտ արձակելով մտաւ շոգենաւի կամերան, որտատրոփ սպասելով Տիրանին։

Այն ինչ մօտենում էր Տիրանի նստած նաւակը «Ալժիր» շոգենաւին, հեռուից նկատւեց մի նաւակ, որը չորս առոյգ նաւաստիներով թիավարւելով՝ դիմում էր նոյնպէս «Ալժիր» շոգենաւ։ Նաւակի մէջ մի պոլիսկոմիսար էր նկատւում և մի երկու էլ մաքսատան ծառայողներ։ Տիրանի ընկերակիցը զգալով որ կարող են Թուրք մաքսաւորների ճանկն ընկնել, նաւաստիին ասաց.

—Շտապի՛ր, Րէշիդ, մեզ շուտով հասցրու, քու փէշքեաշը ես կտամ մի ճերմակ-միջիտ, մի դեղին մէջիդ-ոսկի։

Նաւաստին կաշառի ձայնը լսելուն պէս թռ-

լցաւ, էլ թևերը մնացին, նա չէր ուզում թիակները շարժել։

—Ահա քեզ մի ոսկի, ասաց Տիրանը, շտապի՛ր, նաւի սուլիչը ահա երկրորդ անգամ հնչեց։

—Երկու ոսկի, երեք ոսկի, ասաց իտալացին, բարձրացաւ տեղից և նաւաստու ձեռքից ուզում էր խլել թիակները և անձամբ թիավարել։ Բայց նաւաստին պաշտպանողական դիրք բռնեց։

—Կանգնեցէ՛ք, ձայն տւեց հեռուից պոլիս-կոմիսարը, գայիգչի՛ (նաւաստի) յետ դարձրու նաւակը։

«Ալժիրի» սուլիչը դեռ հնչեցնում էր, խարիսխը արդէն վեր էին բարձրացրել և կապկպած պարաններով ներս էին առնում։

—Շտապի՛ր, ճչում էր Տիրան բէյը, աճապարի՛ր, շոգենաւի սանդուխը հիմի կբարձրացնին, հասցրու, տասը ոսկի առ, տասնըհինգ առ։

—Չես իմանում, գայիգչի՛, գոռում էին մաքսաւորները ու պոլիս—կոմիսարը և արագասահ մօտենում Տիրանի նաւակին։ Շոգենաւի սանդուխը սկսեցին բարձրացնել, իսկ նաւաստին շւարած տատանւում էր։ Իտալացին գոռաց։

—Սպասեցէ՛ք, մի՛ բարձրացնէ՛ք, սանդուխը, ամենակարևոր ծրար ունիմ նաւապետին յանձնելու։

Իսկ շոգենաւի նաւաստիները անտարբեր քաշում էին սանդուխի պարանը։ Ճախարակը մեծ ճռուճռոցով պտոյտ էր գալիս և սանդուխը քիչ քիչ վեր բարձրանում։ Քսան գրկաչափ հազիւ էր մնացել շոգենաւին հասնելու, երբ աւելի մօտեցաւ մաքսաւորների նաւակը, որտեղից անդադար գոռում էին.

Կա՛ց, գայլիգչի, կա՛ց, քեզ հետ ենք, ինչի չես կանգնում։

Տիրանի գայլիգչին էլ հնարաւորութիւն չունէր ճանապարհը շարունակելու, արդէն նկատել էր մաքսաւորներին, որոնք նրան շատ լաւ ճանաչում էին։ Կ. Պոլսի այդ շփոթ օրերում կեանքը անգութ դատաւորների ճանգից ազատելը հեշտ չէր։ Նա կանգ առաւ։ «Ալժիր» շոգենաւի սուլիչը երրորդ անգամ հնչեց և ճանապարհ ընկաւ։ Հենց այդ րոպէին էլ պոլիս-կոմիսարը, մաքսաւորների հետ մօտեցաւ Տիրանին և հրամայեց նաւաստիին, նաւակը դարձնել դէպի Իսթամբօլի մաքսատունը։ Իսկոյն մի մաքսաւոր և մի նաւաստի անցան Տիրանի նաւակը և արագ թիակաւորութեամբ դիմեցին դէպի մաքսատունն։

Իտալական կոնսուլատի պաշտօնականը թէև աշխատեց կաշառել մաքսաւորներին, որ իրանց ազատ թողնեն, բայց կաշառքն առնելուց յետոյ, կոմիսարը դարձեալ հրամայեց նաւակը տանել Իսթամբօլի մաքսատունը։ Երբ նաւակից դուրս եկան, Նազմ բէյի թիկնապահներից մինը մօտենալով ասաց.

—Տիրան բէյ, աճապարում էիք Կ. Պոլսից փախչել և «Ալժիր» գնալ, մի տարակուսիք, մենք ձեզ շուտով Ա.քեա կուղարկենք։

IV

ՂԱԶԱՐԻ ՍԱՓԱՅԻ ԲԱՆՏԸ

Բէյ-օղլի ոստիկանապետը, արտակարգ գործերի յատուկ քննիչի և դատախազի հետ մեծ իրար անցուդարձով վերադարձան Տիրան-բէյ Ա.Ջէմեանի տանից, հետները բերելով ահաւոր կապոցներով գրքեր, պատկերներ, լրագիրներ, նամակներ, այլ և այլ ձեռագիրներ և թղթեր։ Այս բոլորը անխնամ լցրել էին սիպտակ սաւանների մէջ և թոկերով կապկպելուց յետոյ, ծրարները կնքել էին Ա.Ջէմեանի, դատախազի և վկաների կնիքով։ Հասարակութիւնը Տողըլ-եօլի մայթերը բռնած աջ ու ձախ, կանգնել, դիտում էին մշակների գրկած ու շալակած այդ կապոցները, որոնց ծալքերը այնքան արձակ էին, որ կարելի էր ցանկացած քանակութեան նիւթեր հանել, կամ աւելացնել, առանց բոլորովին նկատելի փոփոխութիւն առաջացնելու։ Ոստիկանական գինուորները որքան որ ազմկում և պահանջում էին հեռանալ, ցրւել, չկանգնել մայթերի վրա, փողոցի մէջ, այնքան աւելի հետաքրքրում էին անցորդներին և այնքան աւելի խռնում ամբոխը, որոնց ատելութիւնը հասել էր ծայրահեղութեան։ Ոստիկանապետի յոխորտանքը, դատախազի մարակի ցնցումները հազիւ նրանց համար ճանապարհ էր բացում առաջ շարժելու, ո-

րոնց հետեւում էին կալանաւորուած գոյքերով բեռնաւորուած մշակները: Այդ գրաւած կապոցների հետ տանում էին նոյնպէս ոստիկանները Թադէոս աղա Աճէմեանին:

Ահագին բազմութիւն խռնուեց Ղալաթա-Սարայի դուռը եւ մեծ հետաքրքրութեամբ սպասում էին, թէ ինչ հետեւանք էր ունենալու ձերբակալածների գործը: Թէեւ գիշեր էր, ժամի տասը անցած, բայց Պէրայի փողոցները այնպէս էր լուսաւորուած եւ մագազիններից այնպէս էին արտացոլում էլէքտրիք եւ գազային ճրագների շողքերը, որ փողոցներում կարելի էր բոլորովին ազատ որոշել, ճանաչել, ինչպէս լոյս ցերեկով: Ժողովուրդը սովորականի նման շարունակում էր անցուդարձը, զբօսանքը եւ ամէն մարդ խռնած ամբոխը նկատելով, զգում էր, որ տարօրինակ դէպք էր պատահել, բայց շատերը ծուռ ծուռ հայեացք ուղղելով, հառաչում, հեռանում էին, որպէսզի չբորբոքուի իրենց սրտում կուտակուած մաղձը:

Ոստիկանները թէեւ աշխատում էին ցրուել ժողովուրդը, հեռացնել ամբոխը ոստիկանապետի դռնից, բայց հնար չէին գտնում: Գնացողներին հետեւում էին հարիւրաւոր անցորդներ, որոնք շփոթից հետաքրքրուած, անզգայաբար չորս հինգ րոպէ կանգնում, հարցեր տալիս, լսում ըմբռնում եւ ապա թքելով, նախատելով դիմում էին իրանց նպատակին: Կանգնած ամբոխի գոռում, գոչումը դեռ էլ հետզհետէ աւելանում էր, որոնք անվերջ հայհոյում, անարգում էին անիրաւ տանջողներին: Ժամերն իրար ետեւից սահեցան, բայց, ո՛չ Տիրանին, ո՛չ էլ Թադոսին դուրս բերին: Մի քանի ան-

գամ Իտալական կոնսուլատից պաշտօնականներ եկան, մտան ոստիկանատուն, դուրս եկան, բայց կալանաւորները չարձակուեցան:

Ոստիկանապետի, քննիչի եւ դատախազի առաջ Թադէոս աղան պնդում էր, որ ինքը Իտալացի է, Նէապօլ քաղաքացի եւ ապրում է քանի տարիներից իվեր Կ. Պոլսում Իտալական անցագրով, այնպէսոր ապօրինի էր համարում ոստիկանութեան եւ դատախազի ընթացքը, որոնք առանց Իտալական կոնսուլատի տեղեկութեան եւ ընկերակցութեան, բռնի մտել էին իր տունը, խուզարկել եւ իրեն էլ ձերբակալելով քաշէքաշ բերել էին ոստիկանատուն::

—Մենք, ասում էր դատախազը բորբոքուած, շատ լաւ ենք ճանաչում ձեզ՝ քրիստոնեա հպատակներիդ: Եթէ մեր երկիրը կողոպտելու եւ հարստահարելու ձեռնարկութիւններ ունիք, դուք ամենաստրուկ ռայա էք ձեւանում մեր խալիֆութեան, իսկ եթէ չարանենգ դաւերով տքնում էք կործանել մեր պետութիւնը, այդ դէպքում ամէն մէկդ ծոցերից մի մի օտար պետութեան անցագիր էք դուրս հանում եւ ձգտում էք մեզ ծաղրելով՝ պոչերդ պրծացնել: Ախր, Թադէոս աղա՛, եթէ դուք օտար հպատակ էք, ինչ իրաւունքով սրանից տասնեւութ տարի առաջ Օսմանեան պարլամէնտի անդամ ընտրուեցաք ձեր հայրենակիցներից՝ Բայբուրդցիներից եւ «առօք-փառօք» գնացիք ու բազմեցիք մեր ազգային պատգամաւորների ժողովում, օրէնքներ սահմանելու եւ դատելու այս երկիրը եւ կառավարութեան պաշտօնակալները, որին դուք չէիք պատկանում, որի անդամակցութիւնից հեռացել էիք:

—Ես այն ժամանակ թէև իտալահպատակ էի, ասաց Թադէոսը, բայց չկարողացա հայրենակիցներիս խնդիրքը մերժել: Ես պարտաւորուած ստանձնեցի այդ պաշտօնը, բացի այդ ձեր պարտականութիւնն էր քննել և իմանալ: Եթէ ինձ, որպէս օտարահպատակի հետացնէիք, խո՛ ես չէի կարողանալ բանի մտնել պատգամաւորական ժողովի:

—Ի՞նչպէս կարող էինք ձեզ հետացնել, քանի որ թէ Բալբուրդում և թէ Կ. Պոլսի նուֆուս (չափաբերական) և էմլաք (կալուածական) մատեաններում դուք անձնագրուած էք ձեր հօր, պապի տոհմագրական շարքում մեր պետութեան հպատակ: Այդ ձեր կեղծ անցագիրը, կեղծ օտարահպատակութիւնը աւելի կասկածոտ կացնէ, եթէ պնդէք այդ մասին, Թադէոս աղա: Մենք քննել ենք կարևոր փաստերը ձեռքերիս է և ձեր ընդդիմութիւնները միայն աւելի կխստացնեն դատաւորներին ձեր դէմ, մանաւանդ ձեր որդու դէմ: Դեռ մինչև այսօր դուք Բէյ Օղլի *Բէհէդին մէջլիսի* (քաղաքային խորհուրդ) անդամ էք և երեք օր առաջ ստորագրած էք նոյն ժողովի արձանագրութիւնները:

—Այդ ժողովներին օտարահպատակները մասնակցելու իրաւունք ունէին:

—Երբէք, բացէք օրէնսգիրքը և կարդացէք: Օտարահպատակ կալուածատէրը ընտրութեան կարող է մասնակցել, բայց ընտրել չի կարող:

—Ձեր օրէնքների գործադրութեան վրա հսկելու պարտականութիւն չեմ յանձն առած, պատասխանատու էլ չեմ... Բայց շատ վաղ ժամանակից յայտնի է Կ. Պոլսի ամէն մի շրջանին, որ ես իտալահպատակ եմ:

—Ձուր տեղը մի պնդէք, Թադէոս աղա, այդ ընթացքով վատթարացնում էք Տիրան-բէյի գործը: Բարեհաճէք, մանակցել մեր քննութեան և տուէք բացատրութիւն քննիչի հարցերին:

—Առանց կոնսուլատի դիտութեան և նրա լիազօրի ներկայութեան իրաւունք չունիմ ձեզ որևէ բացատրութիւն տալու:

Իտալական կոնսուլատից ուղարկուած պաշտօնագրերին և թարգմանին պատասխանեց դատախազը, թէ իրաւունք չունին միջամտելու, քանիոր Այէմեան ընտանիքը դարևոր Օսմանեան պետութեան ռայան է և ոչ մի օրինական արձանագրութիւն չկա նրա հպատակութենից դուրս գալուն: Երբ Թադէոս աղան յամառացած չգիջաւ բացատրութիւն տալու, դատախազը հրամայեց երկու քաղաքացի հրաւիրել ականատես լինելու Տիրանի դործի սկզբնական քննութեան: Դատնի ոստիկանութեան պատրաստած լրտես-վկաները ներս մտան, նստան, լուռ ու մունջ, ականատես լինելու գործողութիւններին: Թադէոսն էլ պապանձուած դիտում էր անց ու դարձը:

Նախ խուզարկեցին Տիրան-բէյին վրան- գլուխը և, բացի անցագրից ու ծոցի յիշատակարանից, ոչինչ չգտան: Ապա խուզարկեցին նրա ճանապարհորդական պայուսակն, որտեղ նոյնպէս քննիչի փնտուածները չէր կար: Յետո բաց արին մէկ մէկ այն կապոցները, որոնք դուրս էին հանել Այէմեաննների տանից, Տիրանի կալինետից և ննջարանից: Երբ կապոցները բաց էին անում, իսկոյն հայերէն լրագրի ծրար վար գլորուեց, որը նկատելով Թադէոս աղան չկարողացաւ զայրութը

զսպել, ասաց բորբոքած և կակազելով.

—Տուն քանդողներ, այդ ծրարը ով գետեղեց կապոցի մեջ: Մեր տնից այդպիսի իր դուրս չէ եկած, այդ ո՞ր անիրաւը ցանկանում է մեզ կործանել: Այս խօսքերը այնպէս բորբոքած կրկնեց խեղճ ծերունին, որ ոչ միայն հանդիսատեսների բոլորի ուշքը գրաւեց, այլ մինչև անգամ չկարողանալով կրքերը զսպել, ջղերը թուլացան, կաթւածահար ընկաւ: Հենց այդ րոպէին Իտալական կոնսուլը Սղաւնի խանումի հետ ներս մտաւ մեծ ազմուկով: Դրան մօտ ոստիկաններն ու պահնորդները թէև չանացին սրանց ճանապարհը կտրել, բայց կրակոտ Իտալացին ահեղ ձայնով լռեցրեց, անարգել առաջ անցաւ, ներս մտաւ: Դռնից ներս մտնելիս ձայնը աւելի բարձրացրած կանչեց:

—Էֆէնդիներ, այդ ինչե՞ր էք կատարում, ակն յայտնի մարդասպանութեամբ էք զբաղւած: Եթէ մեր պետութեան հպատակին մայրաքաղաքում, Պոլսում ամբողջ եւրոպալի աչքի առաջ այդքան անգթութեամբ մահացնում էք և անողորմ կերպով թշւառ ծերունին սպանում էք, հապա ինչ սխրագործութիւններ չեն անում ձեր արբանեակները գաւառներում, Անատոլուի մութ անկիւններում:

—Մխսիւ, մխսիւ, արդէն ուշ հասանք, ամուսինս կաթւածահար է եղել, ճչաց, Սղաւնի խանումը գրկելով խեղճ ծերուկին, անխնամատ և անկապ դէլին տալով:

—Զսպեցէք ձեր զայրութը, Գեներալ-կոնսուլ, ասաց դատախազը, դատավարութիւնը ընդմիջել,.. դա օրինազանցութիւն...

—Մխիթ կարծում էք, որ արդար զայրութը, ձեր քստմնելի գործողութիւնների դէմ բորբոքած կրքերը կարելի է զսպել և չարտայատել: Մխիթ մեզ անզգա և անտարբեր խրատիլակներ էք կարծում, որ խեղկատակութիւններով և միմոսական ձևերով ցանկանում էք մեզ վրա պատկառանք ազդել և արձանացնել:

—Մխսիւ, մխսիւ, հնարը գտէք, բժիշկ հասցրէք, ապա թէ ոչ բոլոր յոյսս կկտրւի, հառաչելով ու մորմոքելով մրմնջեց Սղաւնի խանումը:

—Բժիշկ, բժիշկ, գնացէք, խնդրեցէք բժիշկ հրաւիրեցէք, ասաց գայրալի կոնսուլը դէպի դուռը՝ բոպասաւորներին դիմելով:

Դատավարութիւնը ընդհատւած, դատախազը և քննիչը բորբոքած. կրակի նման այրւում էին, չէին կարողանում և ոչ մի ծպտիւն հանել: Հեռուն մեղաւորների աթոռի վրա նստած, երկու հրացանակիրների մէջ, Տիրան բէյը մորմոքում էր անմռունչ: Սղաւնի խանումը անդադար փայփայում էր ծերունի ամուսնին և գալարւում էր ամբողջ մարմնով այս ու այն կողմը, մինչ այն ատեհան համակւած էր վշտով, որ ցաւի խստութիւնից մոլորւած չորս-հինգ քայլ հեռուն զաւակին չէր նկատում:

—Մխդդէի-էֆէնդի, ասաց քննիչը գատախազին, ընդհանուր լռութիւնը խզելով և իբրև դործի ընդհատումը շարունակելով, Թագէոս աղայի ներկայութիւնը բոլորովին աւելորդ է մեր քննութեան համար, նրան կարող է Սղաւնի խանումը տուն տանել, կամ մօտակա մի սենեակ, մինչև բժշկական օգնութեան

հասնելը, իսկ մենք կարող ենք շարունակել քննութիւնը առանց նրանց ներկայութեան։

— Ո՛չ, էֆէնդիներ, ո՛չ, Տիրան բէյի գործը առանց մեր կոնսուլատի թարգմանի ներկայութեան իրաւունք չունիք քննելու։ Տիրան-բէյ, ասաց կոնսուլը, դարձաւ կալանաւորի կողմը, մօտեցաւ նրան ձեռքը սեղմելով յարեց, դուք իրաւունք չունիք և ո՛չ մի ցուցում տալու առանց մեզ և արդէն դեսպանը թարգմանին ուղարկել է բ. Դուռը և պալատ, որ անյապաղ ձեզ ազատելու հրամանը բերեն։ Անհոգ եղէք, վստահացէք և հաւատացած եղէք, որ նորին գերազանցութիւնը ամէն միջոց գործ է դրել ամիջապէս ձեզ ազատելու։

— Զաւա՛կս, որդեա՛կ, ասաց Աղաւնի խանումը, թողնենով ամուսնին, գնաց փառեցաւ Տիրանին, մինչ կոնսուլը շարունակում էր իր յուսադրական խօսքերը։

Այդ միջոցին մի եւրոպացի բժիշկ ներս մտաւ, սկսեց քննել կաթւածահարին, որին անմիջապէս *սէթիւայով* (պատգարակով) տուն տանելու հրաման տուեց։ Իսկոյն երկու ծառաներ գրկեցին Թադէոս աղային երկու կողմից դուրս հանեցին, տիկինը և կոնսուլը նրան հետևեցին։ Այս տեսարանը ահաբեկեց քննիչին դատախազին և Պէրայի ոստիկանապետին, այնպէսոր սրանք թողին իրանց աթոռները թափուր, հաւաքեցան մի անկիւն, իրար ականջ փարտալով խորհրդի նստան։ Տիրան բէյը վշտակիծ չէր զգում, թէ շուրջը ինչ էր կատարւում։ Զինւորները, ոստիկանները պատերին, կամ ճաղերին թէկնած յորանջում էին, ցած ձայնով խօսակցելով իրանց բողոքն էին արտայայտում,

որ մի անօրէն հայի համար կէս գիշերին իրենց նման միւսուլմաններին տանջում էին մեծաւորները։ Հէնց այդ րոպէին ներս մտաւ խալիֆի պետութեան ընդհանուր ոստիկանապետ՝ Նազմ-բէյը և դիմելով քննիչին ասաց.

— Աւարտեցի՞ք ձեր քննութեան արձանագրութիւնը։

— Ո՛չ, ասացին քննիչն ու դատախազը շփոթւած։

— Ինչի՞ էք սպասում, քանի որ ձեզ հրամայւած է անյապաղ գործը առաջ վարել և գիշերս իսկ կայացնել որոշումը.

— Ներեցէք, բէյ, ասաց դատախազը ամենահպատակօրէն զեկուցանելով մանրամասնութիւններով այն անակնկալ դէպքերը, որոնք ընդմիջեցին քննութիւնը։ Դեռ այս րոպէին, աւելացրեց քննիչը դուրս հանեցին կաթւածահարին, որին տուն առաջնորդեցին կինն ու կոնսուլը.

— Շտապեցէք, ժամանակը կորցնելու չէ, շշընջաց Նազմ-բէյը, տիրաբար քննիչին հրամայելով, անցաւ ներսի սենեակը հանգստանալու և գործի վախճանին սպասելու։

— Բէյ-էֆէնդի, ասաց նրան հետևելով դատախազը, ներեցէք, որ կրկնելու պարտաւորւած եմ, չի կարելի լռել և չբողոքել իտալական կոնսուլի արարքի դէմ, նա դատավարութիւնը ոչ միայն ընդմիջեց, այլ հրապարակապէս ծաղրեց, նախատեց մեզ, ոտնատակ տուեց մեր դատարանի պատիւը...։

— Բան չունի՛ք, լռեցէ՛ք։ Ո՛րքան բողոքենք,

այնքան աւելի պիտի անպատուինք։ Արհամարել պէտք է այդ եւրոպացիներին։ Քանիոր չպիտի կարողանանք նրան ընկճել և ներողութիւն խնդրել տալ, քանիոր մեր բողոքի դէմ նա ահաւոր գործ պիտի բայց անէ մեզ խայտառակելու և մենք այնքան ոյժ չունինք պնդելու,... Մանաւանդ պալատից պիտի գործը ծածկելու համամտին, ինչի խայտառակւինք։ Բողոքն աւելորդ է, լռեցէք և արհամարեցէք...

Դատախազը բորբոքած ետ դարձաւ և քննիչի հետ հաղճեղ շարունակեցին գործը։ Որովհետև Տիրան բէյը բոլորովին մերժեց որևէ բացատրութիւն տալու, առանց իտալական կոնսուլատի թարգմանի ներկայութեան, սկսեցին մէկ մէկ քննել Ա.Ջէմեանի տանից դուրս բերած թղթի կապոցները, որոնց մէջից մեծ քանակութեամբ յեղափոխական թղթեր և այլևայլ հակապետական թերթեր դուրս հանեցին։ Այդ թղթերը, որոնք առաջին անգամն էր նկատում Տիրան-բէյը, մեծ սոսկում ազդեցին, այնպէս որ յուզմունքից բոլորովին թմրեց և զգայազուրկ դարձեց գետին,

Ձինուորները իրենց հրացանի կոթերով մի քանի անգամ դրդեցին, որ բարձրանա և կարդին նստի, բայց զուր, Տիրան-բէյը ուշագնաց ընկաւ, չէր զգում այդ հարուածները, չէր լսում դահիճների պարը։ Ձահատեալ ոստիկանները այդ ապականած մարմինը գետնից վերցրին տարածեցին մեղադրեալի տախտի վրա, անհամար հայհոյանք ու նախատինք մրմնջալով։ Դատախազը քարի նման անզգա՝ քննիչի հետ անտարբեր շարունակում էին իրենց արձանագրութիւնը, կարդում էին թղթերն ու ձեռագիրները, կարևոր տողերի տակ

կարմիր թանաքով խազում և թարգմանելով արձանագրում էին իրենց պրօտօկօլի մէջ։

Վերջապէս քննիչը ակնարկեց դատախազին, որ իմացնէ Նազմ-բէյին, թէ արդէն պատրաստ է պրօտօկօլը և որոշումը։ Դատախազը զեկոյց և Նազմ-բէյի հետ վերադառնալուց յետո՝ քննիչը կարդաց իւր որոշումը։

«Որովհետև մեղադրեալ Տիրան-բէյ Ա.Ջէմեանը, իր նամակներով և ստացած յեղափոխական թերթերով կապ է ունեցել Օսմանեան պետութեան դաւադիր կոմիթէների հետ, որոնց նպատակն է բաժանել մեր պետութեան մի մասը և Հայաստան անունով մի նոր կառավարութիւն կազմել, պարբերաբար մեծամեծ գումարներով նպաստել է նրանց արբանեակներին, որոնք մայրաքաղաքում և գաւառներում անընդհատ ցոյց են կատարել Օսմանեան պետութեան պաշտօնականների և հպատակների դէմ, ուստի նախաքննիչ-ժողովը ճանաչելով Տիրան բէյին ընկերակից և մասնակից այդ բոլոր չարագործների, քրէական օրէնսգրութեան 59 յօդուածի և աւելուածների տրամադրութեան համաձայն՝ որոշեց կախաղան բարձրացնելու վճիռը պահանջել քրէական ատեանի արդարադատ դատաւորներից»։

V

ԼԻԱՅԱՐԱՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Սէթօն ոստիկանութեան մի առանձին սենեակում էր նախորդ անցքի գիշերը և անընդհատ ծխում ու ման էր գալիս փոքր սենեակի լայնքսին և երկանքսին: Ոստիկանները, կծան թուրքերն անգամ նրան զգոյշ և խոնարհ բարև էին տալիս և ակնածութեամբ խօսում: Ամեն զնացող-գալողի նա հետևում էր, յաճախ գրան ճեղքերից զննում, ականջ էր դնում մխիթէսսարիֆի և քննիչի մօտ կատարւած խօսակցութիւնները: Այդ օրը մի քանի անգամ նրա առանձնարանն էին մտել քննիչն ու դատախազը: Տիրանի նըն-ջարանից ու կաբինետից բերած թղթերը և սևագրութիւնները քննելու, թարգմանելու և նրանից բացատրութիւններ էին պահանջել: Նա ներկայացաւ Նազմ բէյին էլ, որի հետ հինգ րոպէ ականջ-բերան խօսակցութիւն ունեցաւ: Բայց Սէթօն յայտնի չէր գործում, ոստիկանական ծառայողներից համարեայ ոչ ոք չէր իմանում, թէ նա ինչով էր զբաղւած, թէ ի՞նչ ծառայութիւն էր մատուցանում խալիֆի գլխաւոր ոստիկանապետին: Շատերը նկատել էին նրա ազատ այցե-

լութիւնները Նազմ-բէյի մօտ, այնպէս որ վերջինս գլխաւոր արբանեակներն էլ ակնածում և նախանձում էին, բայց ոչ ոք չէր ըմբռնում, թէ ինչն էր կապում այդ երկուսին: Սէթօն ոչ պաշտօնական հաստատութիւն ունէր, ոչ համագգեստ, ոչ որևէ պետական աստիճան կամ շքանշան և ոչ էլ թոշակ: Ամենամտերիմ և խորհրդապահ պաշտօնականներն անգամ հետամտում էին, թէ արդեօք Սէթօն ոստիկանութիւնից որևէ դրամական նպաստ ստանում է, թէ ո՛չ... բայց բան չէին կարողանում հասկանալ: Ասում էին, որ նա սերայ էլ էր յաճախում, տեսնողներ էլ եղել էին, որից անգործ մարդիկ առասպելներ էին յօրինել: Բայց ամէնն էլ խոստովանում էին, որ նա զործունեայ մարդ էր, երկիւղալի հակառակորդ:

Երբ քննիչը գործն աւարտեց, կարդաց եղրակացութիւնը Բէյ-օղլիի մխիթասարիֆը դատարանից շտապեց, մտաւ Սէթօի առանձնարանը և ասաց հրճուալի.

—Գործը համարեա իննսուն տոկոս տարած է: Ամենևին կասկած չունիմ, որ վաղը միւս օր դատաւորները դատախազի պահանջները հաստատելու են, իսկ վճռաքննիչ և վճռաբեկ ատեանները առանց մի տառ անգամ փոխելու հաստատելու են եղեռնագատ ատեանի վճիռը:

—Տարակոյս չունիմ, մերոնց մասին կասկած չկայ, բայց այդ իտալական կոնսուլից զգուշանալու է: Վախենում եմ, որ ներքինիներից կամ օդալքներից մէկին ճանկեն և մեր բոլոր չանքերը փչացնեն:

—Այդ մասին բնաւ կասկած մի ունենաք, ար-

դէն ամէն ճանապարհ փակուած է նրանց համար, իսկ մինչև միջոց գտնելը, մենք գործադրութեան ֆերմանը կճողոպրենք։

— Շատ գիւրահաւատ էք, բէյ, բոլորովին մոռանում էք, որ մենք Սթամբօլուման ենք ապրում, որտեղ անկարելին կարելիացնելու բանալին եւրոպացիների ձեռքն է, եթէ կամենան։ Իմ կարծիքով մենք դեռ հարիւրին տասը հազիւ տարած ենք գործը։ Մինչև իսկ կախաղանի չուանի տակից էլ մարդ են ազատում, իսկ դուք մի չնչին որոշումը եղած կատարած էք համարում։

—Դուք էլ իրաւունք ունիք, ասաց միւթէսսարիֆը, կամայականութիւնը, իրաւունքի անսանձ բռնաբարումը դեռ համարձակ կատարւում է մեր երկրում, բայց այս հարցում, կասկածելի է, թէ յաջողութիւն գտնեն։

—Այս վէրքը անբուժելի է մեր երկրում, ասաց հառաչելով Սէթօն և խրեց մտքերի անդունդը։

Մի քանի րոպէից եկան կանչեցին Սէթօին Նազմ-բէյի կողմից, միւթէսսարիֆն էլ գնաց քննիչին ու դադախազին ճանապարհ դցելու։ Տասը րոպէից յետոյ Նազմ-բէյի հետ ցած եկան և երբ ոստիկանապետը, իւր կառքով սլացաւ դէպի Բէշիք թաշ, Սէթօն էլ կառք վարձելով հրամայեց իրեն տանել Թագսիմ։ Ս. Յակորի հիւանդոցի մօտ իջաւ Սէթօն կառքից, ուղղուեց նեղ փողոցով և սեղմեց երենց դուռն հնչակը։ Մայրը անհամբեր սպասել էր մինչև կէս գիշեր որդու դարձին, իսկոյն ձայն տուեց, քաշեց դռնփակի չուանը առանց իջնելու վերևի յարկից և դուռը

ճռնչելով բացուեց։ Մինչև Սէթօի սանդուխներից վեր բարձրանալը, մայրը դուրս եկաւ նրբանցք և ասաց.

—Սէթօ, դու ես, զաւակս, ինչի այսչափ ուշացար, մինչև կէս գիշեր քանի մէկ ինձ հալես ու մաշես...։

—Ի՜հ, մայրիկ, քեզ հազար անգամ կրկնել եմ, ինձ մի սպասէ, քնիր, երբ քունդ կտանէ, կեր, երբ քաղցած ես։

—Ձխում ըլայ քնածս ալ, կերածս ալ, խմածս ալ, ինչպէս ընեմ, երբ չեմ կարող հանգստանալ։ Առանց քեզ ամէն բան ոչինչ կերևա աչքիս, առանց քու ներկայութեան բան մ'ալ բուգէս վար չի երթալ։ Ի՜նչ ըսեմ, ծնող դառնաս, զաւակ մ'ունենաս, որ հասկանաս, թէ ի՜նչ կզգա մայր մ'իր զաւակին համար։

—Լաւ, լաւ, քեզի աչքալոյս եմ բերել... լաւ լուր մը... վերջապէս անէծքդ բռնեց և Թագէոս աղաղ կաթւածահար ընկաւ..,

—«Փառք քեզ, Աստուած», այսօրն ալ տեսա, հիմի թէ աւանդդ տանիս, սիրով կիջնեմ ցուրտ գերեզման։ Բայց այդ ինչպէս.

—Տէրանին որպէս խոովարար, *քոմիթաջի*, յեղափոխական բռնեցին, այժմ Դալաթա Սարայի բանտն է։ Քննութեան ժամանակ հայերը չդիմացաւ, ցաւից թուլացաւ։

—«Արդար ես Դու, Տէր», դու անիրաւին անպատիժ չես թողնիլ։

—Տէրն այդտեղ գործ չունի, վրէժդ Սէթօդ լուծեց.

—Ես քու ձեռքերիդ մատաղ, չէ որ Տէրը քեզ

սիրտ ու քաջութիւն տուեց: Ես ալ աշխարհիս վրա բաւականութիւնս ստացա, զաւակս, պարտքդ կատարեցիր, այն անգութ զազանից ոչ միայն վրէժս լուծեցիր, այլ արժանաւոր պատիժը տուիր: Ով որ լսէ, պիտի թքէ այն օձի ծնունդի գագաղի, գերեզմանի վրա, պիտի ուրախանա, որ թշուառիս բողոքը վերջապէս լսեց Արդարադատը: Ան գարշելին ինձ խաբեց, ինձ խայտառակեց, ինձ ազրի հետ հաւասարեց, ես աներեսի պէս դիմացայ, տարի ամէն տեսակ ստորութիւն, ոտքի տակ առի աշխարհի լիմար բերանը, անարգ բամբասանքը, չտեսա ծագրն ու ծանակը, չլսեցի նրա զարհուրելի խորհուրդը, դեռ լոյս աշխարհ չտեսած քեզ չխեղդեցի: Այլ հակառակը առանց ծածկելու քեզ ծնա, կամովս անցուցի, դառն աշխատութիւնովս կերակրեցի, հագուցի, մեծցուցի, համարձակ ման եկա, արհամարհեցի ստրուկ աշխարհին: Ո՜հ, ի՜նչ տանջանքներ չկրեցի այդ անխղճի երեսից: Այդ դժոխքի հոգին ինձ խաբեց, խոստացաւ հետս պսակուել, երդուեց այդ ճիւաղը երկնքի բոլոր զօրութիւններով, գլխովն ու արևով, դըժեց, ուրացաւ... Եւ ահա այդ երդմնազանցը այսօր ընկաւ այն կոյուղին, ուր ժամանակով ինձ գլորելու յանդգնած էր: Բայց ցաւալի է, Սէթօ ջան, այդ անզգամի հետ տանջուելու է այն անմեղ զաւակը .... Ախար Տիրանն ի՞նչ մեղ ունի:

—Իսկ ես մեղաւորը էի, ասաց Սէթօն, որ այդ գարշելի չհօր պատճառով քաշեցի ու տանում եմ այնքան ստորութիւն: Մանուկ հասակից կրեցի ընկերներիս այնքան անարգանքները, դիմադրեցի քաղցի, ցըրտի, մերկութեան, զրկանքի, կեանքի ամէն տեսակ հար-

ւածներին: Տաժանակրի նման ահա քսան հինգ տարի է, դեռ աւելի, որ դատեցի օրական տասնեւվեց ժամ ուրիշների բարօրութեան համար, մերժւած աշխարհի ամէն բարիքից ու վայելքից: Այն հրէշը, որ ինձ կեանք է տուել, հաստատ համոզւած է, գիտէ որ իր արիւնն է եռ գալիս երակներիս մէջ, ես նրա անդրանիկն եմ, հարազատն եմ, դատապարտէ տանջանքի, զրկանքի, իսկ նրա Սթան և Տիրանն, որոնց գուցէ իսկական հայրը ինքն էլ չէ, թողնէ շռայլելու իր միլիոնը, իւր ապարանքները, ամառանոցները և եալըները: Ինչի՞ Տիրանը նոյնպէս չկրէ ինձ հետ կեանքի դառնութիւնները, որոնց մատնւածեմ ես անոր ձեռով:

—Ա՛տաւած իմ, Ա՛տաւած, Սէթո՛, զաւակս, դո՛ւ գուէթ ունեցիր, դո՛ւ բարի եղիր, դու պատճառ մի՛ դառնալ: Արդարադատը թո՛ղ ինքը տեսնի իր դատաստանը:

—Կտեսնի՛... Եթէ Ա՛նոր մնար, դեռ շատ զարճութիւնների և բերկրանքի մէջ պիտի թաւալուէր քո հրէշը: Դու նախ մի միլիոն ոսկի ըսա, մէկ միլիոն լիրա մտածէ, այդ գումարի հետ կարելի է խաղալ: Այդ թագաւորութիւն է, դա կեանքի մէջ անկարելին կարող է հնարաւորել և մտքէ անցածը գնել.... Լաւ մտածէ, թէ քանի՛ քանի՛ ինձ նման Սէթօներ իրենց գըրչով, իրենց բահով ու բրիչով, իրենց բոլոր ճիգով, արիւն քրտինքով, գիշեր ցերեկ քանի՛ քանի՛ տարիներ պիտի աքնին ու տանջւին, որ այդքան գումար կազմեն, դիզեն և յանձնեն խելառ Սթալին, որ չորս - հինգ տարւա մէջ վատնէ, փչացնէ: Ո՛չ, մայրիկ, ո՛չ, ազոխ ուտողների որդիների ատամները, մինչև անգամ թոռնե-

ների ատամները պիտի դարերով հառած մնան։ Եթէ ես սխալիդ համար տարել եմ և պիտի տանեմ այդ տաժանակրի լուծը, թո՛ղ այն հրէշի մահուցը յանցանքի համար, եթէ ոչ ցմահ, գոնէ ժամանակաւորապէս տանեն նրա սիրելիները սրտի մորմոքներ, թունալի վրէտեր, որ գուցէ զգան, թէ ինչ է ցաւակծի զարհուրելի վիճակը։

— Վերջապէս զաւա՛կս, ես մխիթարուած եմ, բայց այս մխիթարութիւնը վախենամ թանգ նստի ինձ վրա, դառնացի արտասուքներիս վերջ չգայ։ Վախենամ քեզ փորձանք մ'հասնի այս գործէն։

— Դու անհոգ եղի՛ր, մայրի՛կ, եթէ ծովն ընկնեմ, ալիքներն անգամ ինձ կլանելու ույժ չունին, քանի որ կեանքը ինձ այնպէս թունաւորած ու աղուած է, որ ծովի լեղի ջրերն անգամ չեն դիմանայ սրտիս վրա կուտակուած դառնութեան։ Դու համոզուի՛ր և հաւատա՛, որ հրէշդ պիտի ուրախութեամբ ինձ առաջարկէ կիսել իր գոյքը, կարողութիւնը, որ փրկէ գլուխն ու ընտանիքը, բայց ուշ է, ամբողջ կայքն անգամ չպիտի կարողանայ կեանքը փրկել, որդին ազատել......

— Այդ Աստուածադատի վճիռն է, նա լսեց թշուառիս աղերսն ու կոծը։ Բայց անմեղ են զաւակները։ Ա՜խ, ինչի չոր փչի հետ դալար՝ ծաղիկներն ալ կվառին։ Սէթօ ջա՛ն, մոլորուել մնացել եմ, կէս գիշերն անցել է, դու ճաշէն մինչև հիմի բերանդ պատառ չես դրել։ Գնամ քեզի քիչ բան բերեմ։

— Գինի ունի՞նք, մայրիկ։

— Բաց պահարանը, այդտեղ օղի ալ կայ, ասաց ու հեռացաւ հին լացալարի ճարպիկ աղջիկը։

Մամս, մանկուայ քթի տակ Սէթօն, Աջամեանների դռանը ծառայէ, մայրս անոնց կեղտոտները տարիներով բերէ, լուայ, մաքրէ, հարթէ, օսլայէ. անոնց դռան աւելցուքով կերակրուինք, հներով հագնուինք, ծածկենք մեր մերկութիւնը. այս եղանակը կէս դար շարունակուի և յարատևել սպառնայ։ Բայց մինչև երբ, Աստուա՞ծ է խաբար։ Այն հրէշը ինձ ծնունդ տայ նեղութեամբ, բայց ոչինչով չցանկա ապահովել կեանքս, որին շունչ տուեց իր լիրբ տարփանքով։ Ծախուած դերբից ալ աւել անարգ և ստոր կերպով դատեցնէ յոկ մի փոր հացով այն թշուառին, որին խոստացել էր կեանքը, ոսկիներն գոյութեան կէսը, կարողութեան վայելքը։ Միթէ [illegible], միթէ անդրանիկները չեն ժառանգում հօր կայքն ու փարչութեան դէկը։ Ո՞վ է մեղաւոր, եթէ ան ճիւաղաբար դրժել է խոստման դէմ, բայց այդ դրժումը ինչի պիտի ինձ զրկէ կատարուած իրողութեան իրաւունքէն։ Այո՛, «ալէլուեա՛ն» է պակաս, իմ ինչ գործս է, ես ինչ իմանայի, թէ այդ արարողութիւնը կատարուած չէ։ Ահա երեսունը հինգ տարիս թաւալուել է, թեքուել եմ քառասունի կողմը, գուցէ կեանքիս կիսէն աւելին ապրել եմ և ինչ եմ վայելել.....։ Դառնութիւն, նո՞ղկանք, անվերջ տառապանք և վիշտ։ Ո՞ւմ շնորհիւ, ինչ պատճառով։ Մի թշուառ արարած բարեկեցութեան ձգտումով առաջարկուած բաղդը զրկէ, չարչարանքի լեղի ըմպից դուրս գալու յոյսով, իսկ ժպիրհ խարեփան թունաւորէ թշուառի կեանքը և գլորէ դժոխքի ալէծուփ բոցերի մէջ, իր բեզմնաւորած և ոգի տուած մանկիկը զրկում.....։ Ո՛չ, դեռ այս քիչ է, ո՛չ, դեռ այս հարւա-

ծը անհամեմատ չնչին է, վէրքը աննշան....։

Մինչ անմռունչ խորասուզւած այս վշտի ալիք-
ների ծովում Սէթօն լափում էր իր ընթրիքը, մայ-
լադէմ մայրը մի կողմ նստած յափշտակւած իր մտքում
ներկայացած զարհուրելի տեսարաններով, մայր ու որ-
դի մոռացել էին իրար ներկայութիւնը, անձնատուր
էին եղել իրենց զգացումներին։ Երբեմն մայլանում
էր նրանց դէմքը՝ սիրեկանի պատանը կարողի երեսի
նման, երբեմն զւարթանում՝ պսակի ծաղիկների տակ
կանգնող սիրահարների նման, անվերջ մռնչում և խոր
սրտից հառաչներ էին արձակում։ Սենեակը աղօտ
էր լուսաւորւած, լամպի կապոյտ լուսամփոփի տխրա-
գոյն լոյսը աւելի դժգունել էր նրանց դէմքերը։ Միայն
երբեմն երբեմն պատառաքաղի և դանակի պնակներին
քսելու սրսռոցը խանգարում էր սենեակի լռութիւնը։
Սէթօն սովորականից աւելի խմեց այդ գիշեր և զգա-
լով որ գինին չէր ներգործում իր գրգռւած ջղերի
վրա, մի բուդէլ ևս պահանջեց։ Թշւառ կինը իջաւ
քառասուն աստիճան սանդուխներից և գոհացրեց զա-
ւակին։ Դեռ Սէթօն նոր էր սկսել խմել, երբ դրսի
դուռը բաղխեցին։

— Մայրիկ, տես ով է, թէ ինձ հարցնեն, ասա,
որ տանը չեմ։

— Մտիր ննջարան, կարծեմ Աթան է, գիշերս
երկու անգամ եկել է։

— Դուռը մի բանալ, ասա վերէն, տանը չեմ,
ճանապարհ գնի։

— Սէթօ, Սէթօ ջան, ասաց լուսամուտը բաց
անելով լուացարարը, սպասէ, գամ բանամ։

— Ո՞վ եմ, ես։ Մի՞թէ Սէթօն դեռ չէ եկել։

— Աթա-բէյ, դուք էք, ոչ դեռ չէ եկել։

— Ո՞ւր մնաց գիշերս,

— Չգիտեմ, ուշացաւ.

— Լաւ, ես առաւօտ կգամ, ասա, ինձ սպասէ,
թող դուրս չերթայ,

— Շատ բարի գլխիս վրա, ասաց լուսամուտը
վրա գցեց, ներս քաշւեց։

— Յիմար անասուն, տեսնես դարձեալ ինչ ու-
նի, ինչն է տուժել, կէս գիշերին դուռս է բաղխում,
ասաց լռիկ Սէթօն։ Վերջապէս աղօր կամաց կամաց
սանձելու է, թէ չէ, չափը կփրանցնէ։ Այնքան պէտք է
խաղացնել, մինչև ծրագիրս գլուխ գայ....։ Բայց ա-
տամները սուր, անխախ գազան է այս դիւրահաւանը։
Զգուշանալու է, կարող է յանկարծ շղթան փշրել, յար-
ձակւել և այդ ժամանակ դիւրին չէ կարելի ճանկերից
ազատւել։

VI

ԴԵՍՊԱՆՍՏԱՆԸ

„Ալմիր“ շոգենաւի մէջ՝ Բէատրիչէն անհամբեր սպա-
սում էր Տիրանին։ Նորա համար իւրաքանչիւր վայր-
կեանի սահելը երկար ու ձիգ ժամերի տպաւորութիւն

էր թողնում, իսկ Տիրանը դեռ չէր երևում: Մէկ մէկ աչքերը խփում էր և անմռունչ ընկղմում դառն երևակայութիւնների մէջ, բայց ամէն մի շշուկ, ամէն մի աղմուկ նորան սթափեցնում էր: Աչքերը չռած նա նայում էր շուրջը, բաց էր անում օթեակի դուռը, մտիկ էր տալիս անցքերը և հարևան *կայուտները*, ու միշտ յուսախաբ յետ էր դառնում: Մի քանի անգամ նա բարձրացաւ, կամերի փոքրիկ կլորակ լուսամտից դիտեց դուրսը, նաւակներն ու մակոյկները, բայց Տիրանը չէր երևում, չկար:

—Երբ արդէն երկրորդ անգամ հնչեցրին նաւի սուլիչը, մի սառսուռ մտաւ Բէատրիչէի սրտի մէջ, նա սկսեց դողդողալ: Նորան ընկերակցող կոյսը, որ մինչ այդ զանազան յուսատու խօսքերով, կնճիռներով ու շարժումներով յուսադրել էր, ճարը կտրած մօտեցաւ գրկեց նորան և քաջալերելով ասաց.

—Անհանգիստ մի՛ լինիք. ինչո՞ւ էք տաղնապում, որտեղ որ է կհասնի անմիջապէս: Բէատրիչէն անմռունչ յուսահատ հայում էր կոյսի աչքերում, կարծես, ուզում էր ասել —Վախենում եմ, չլինի թէ անգութ պապանների ճիրանն ինկնի: Երբ կոյսը նկատեց, թէ ուժասպառ է լինում, գունատւում է թշուառ օրիորդը, մաքուր օդ ծծելու և գուցէ Տիրանին տեսնելով հանգստացնելու միտումով ասաց.

—Բարձրանանք վերին յարկը, այնտեղից կնկատես և Տիրան-Բէյին:

Մտաւ կոյսը Բէատրիչէի թևը, կամաց կամաց բարձրացան վեր, նաւի վերնայարկը: Հէնց այդ րոպէին հնչեց նաւի երրորդ սուլիչը և շոգենաւը ցնցւելով շարժւեց: Միևնոյն վայրկեանին Բէատրիչէն նկատեց Տիրանին նաւակում, թուրք ոստիկանների հետ, կոմիսարի, մաքսաւորների ու լրտեսների նաւակներով շրջապատուած, որոնք հրամայում էին նաւակը անյապաղ դարձնել դէպի Սթամբօլի-Գէօմրիւկը (մաքսատուն): Այս տեսարանից յուզւեց և այնպէս թուլացաւ, շոգենաւի ցնցումները այնպէս բորբոքեցին, որ չնայելով կոյսի գործ դրած միջոցներին, Բէատրիչէն ուշքը կորցրեց. կռուացաւ կոյսի թևից և պիտի փուլէր յատակի վրա, եթէ նորան չգրկէր ընկերուհին: Նաւապետը բարձրից նկատելով, հրամայեց իսկոյն ճանապարհ բացին և մի քանի տիկինների օգնութեամբ նւաղածին գրկած տարին իւր օթեակը:

Թէև ամիջական կարևոր օգնութիւնները հասցրին, Բէատրիչէն նւաղած՝ չէր սթափւում: Այս դէպքը խիստ յուզեց ճանապարհորդներին. օրիորդներ, տիկիններ մտնում էին ուշագնացի *կայուտը* և կոյսից բացատրութիւնները լսելով, կարեկցում էին դժբախտ օրիորդի վրա, լացակումած հեռանում էին, անարգելով, նախատելով և սրտի խորքից անէծք ու նզովք կարդալով այն դահիճների, անգութ պաշտօնակալների գլխին, որոնք առաջացնում էին այս սոսկալի տեսարանները: Դեռ Կ.Պոլսի տեսարանները աչքից չհեռացած, դեռ Նոր-Գիւղի աշտարակների և հազարաւոր մզկիթների մինարէների վրայից վերջալոյսի շողքերը չանհետացած՝ նաւի բոլոր ճանապարհորդները իմացել էին այս անցքի մանրամասնութիւնները, ատելութեամբ գեղուած- ողեպէս վշտացած, տխրադէմ դիտում էին արևելքի այդ սքանչելի տեսարանները և վայ կարդում,

որ այդ բոլորը· այդ հրաշալիքները ապականում էին, արիւնով ողողւում, արտասուքներով թրջւում գազանաբարո, անողորմ թուրքերի արիւնաուշտ ժանիքներում։

Շոգենաւը մռնչելով ճեղքում էր Մարմարայի ջուրը և վազում էր դէպի արևմուտք, դէպի այն սքանչելի հորիզոնը, որտեղից դեռ անհետացել չէր արևը, հորիզոնի վրա թողնելով իւր բոցափայլ ճառագայթները՝ ողողւած նոսր և ցւուր ամպերի մէջից, որոնք սրտագրաւ տեսարան էին բոլորել իրենց պարով։ Մութը աստիճանաբար սաստկանում էր և երկնքի աստղերը հետզհետէ լուսաւորւում, պսպղում և ցոլալով գլորւում էին։ Արևելքը իւր աննման սքանչելիքներով աւելի ու աւելի տխրացնում էր Կ. Պոլից ակամայ խոյս տւող արևմուտցիներին, որոնք դառն մտքերով համակւած չէին կարողանում բացատրել, թէ ինչո՞ւ բնութեան այդ հրաշալիքները թողել էին այդպիսի աւերիչների և կործանողների ձեռքին, որոնք դրախտը դժոխքի էին փոխարկել իրենց սուր սուր ժանիքներով ու ճերաններով։

Երբեմն լացով, երբեմն հառաչելով, բորբոքւելով և երբեմն էլ թմրած, անզգա. նւաղած լուսացրեց Բէատրիչէն այդ գիշերը։ Կոյսը մինչև լոյս զարթուն հսկեց, տանջւեց թշւառ օրիորդի հետ։ Լուսադէմին շոգենաւը մտաւ Դարդանէլ և Գէլլպօլիի առաջ կանգնեց առաւօտ վաղ։ Նաւապետը հարկ եղած կարգադրութիւնները անելուց յետո, դիմաւորեց Բէատրիչէին, ցանկալով իմանալ թշւառի դրութիւնը և մտադրութիւնը։ Բէատրիչէն նոյնպէս ուզում էր նաւապե-

տին տեսնել։ Սովորական հարցերից յետո, ասաց·

— Պարո՛ն նաւապետ, ես վճռել եմ անմիջապէս վերադառնալ Կ. Պոլիս։ Իմ ներկայութիւնս և՛ւ յոյս, և՛ւ քաջութիւն կներշնչէ Տիրանիս։ Թուրք ոստիկանների բարբարոս և նենգամիտ ընթացքը ձեզ յայտնի է, վախենամ ճնշեն խեղճին։ Իմ ներկայութիւնս ո՛չ միայն կոգևորէ, այլ ես կարող եմ միջոցներ գործ դնել, Ֆրանսիական դեսպանին ստիպել, որ լուրջ կերպով պաշտպան կանգնի, աջակցի Իտալական դեսպանին, խառնեն թուրք պաշտօնակալների, սուլթանի գլուխը և շուտով փրկեն Տիրանիս։ Կանխազգում էինք, որ Սէթօն Աժալին Նազմի մօտ տանել բերելը զուր չէր, այժմ նրանց թակարդից հեշտ չէ ազատւելը։

— Շատ լաւ էք խորհել, օրիո՛րդ, ասաց նաւապետը. այդ ընթացքով ո՛չ միայն ձեր բարոյական պարտքը կկատարէք, այլ նաև մի հերոսական քայլ կանէք, որը կարող է լքւած սրտերին անգամ քաջութիւն ներշնչել և յուսահատներին արիացնել։ Գնացէք, վերադարձէք, Ֆրանսիական դեսպանատունը չի թոյլ տալ, որ ձեր մազին, Տիրան-բէյի մազին անգամ դիպչեն։ Դուք քաջութեամբ կբողոքէք և եթէ չարանենգ ոստիկանութեանը թակարդից զգուշանաք, յուսով եմ, որ շուտով ձեր նշանածին էլ ազատէք, եթէ արդէն Իտալական կօնսուլատը նրան չէ առել թուրքերի ձեռքից։

— Այո՛, ես էլ այդ եմ մտածում, ասաց Բէատրիչէն, այսօր այստեղից կամենում եմ վերադառնալ։

— Տարաբաղտաբար, օրիո՛րդ, այսօր ո՛չ մի Եւրոպական նաւ անցնելու չէ դէպի Կ. Պոլիս։ Ես ուրա-

խուճամբ չորս հինգ ժամ ուելն կտրտեր ձեզ մի ապահով նաւով վերադարձնելու համար, բայց ինչ օգուտ, որ վաղն էլ յոյս չունիմ, որ Եւրոպական նաւեր հանդիպինք։ Այսօր մենք կրնկնինք դէպի Ալճէր, որտեղ մեր նաւը ինձ սպասելու է, որ ապա ճանապարհ ընկնի Կ. Պոլիս։ Խնդրում եմ համբերութիւն ունեցէք, լաւ խորհեցէք եւ ծրագրեցէք ձեր բոլոր ընթացքը և ապա մեր նաւով վերադարձէք։

Նաւապետի խորհրդի համաձայն Բէաորիչէն Ալճէրէն վերադարձաւ Կ. Պոլիս նոյն կոյսի ուղեկցութեամբ։ Կ. Պոլիս հասնելու պէս, ուղղակի դիմեց Ֆրանսիական դեսպանատուն, դեսպանին ներկայանալու ցանկութիւնը յայտնեց։ Դեսպանը լսելով օրիորդի վերադարձը, իսկոյն անձամբ դուրս եկաւ և նորա ձեռքից բռնելով, կոյսի ուղեկցութեամբ առաջնորդեց ընդունարանը, որտեղ դեսպանուհին նստած էր զաւակների հետ։ Դեսպանուհին անմիջապէս դիմաւորեց, գրկեց, համբուրեց Բէաորիչէին, կրած զաւակը գանող մօր նման։

— Օրիորդ, եթէ գիտենալիք քանիլ հետաքրքիր եմ տալ ձեր մասին և որքան լրտեսներ եմ ուղարկել քաղաքում ձեզ որոնելու։ Ասում էին, թէ գնացել էիք, աւելացնում էին, թէ ետ էիք դարձել, երբ նկատել էիք շոգենաւից Տիրան-բէյի կալանաւորումը։ Վերջապէս ինձ ուղում էին հաւատացնել, թէ ձեզ տեսել էին Նազմ-բէյի ապարանքում, պալատում, որ մէկն յիշեմ, Պոլսական սովորական ենթադրութիւններ և սուտեր տեղում էին ամէն կողմից։ Շատ ուրախ եմ, որ քաջառողջ և անվտանգ վերադարձաք։

— Իսկ Տիրանը, Տիրանն ինչ եղաւ, տէր իմ։

— Անհոգ եղէք, այսօր կամ վաղը նրան Խաւլական դեսպանը կառնէ ոստիկանութեան ձեռքից։ Ապրեցէք, մի տխրիք, մի մտածէք, գործը շատ հեշտութեամբ կվերջանայ։

— Ուրեմն վեց օրէ, նա բանտում է, այն բարբարոսների ճանկում ....։

— Վստահեցէք, հաւատացէք, որ նա քաջառողջ է, ամէն օր մեր թարգմանը նրան տեսնում է և վարդը անպատճառ կտանի.

— Երկու սլեւական դեսպաններ այս վեց օրւա մէջ չկարողացաք դուրս հրել դահիճների ճիրաններից։

— Հաւատացէք, որ բոլոր ջանքերս գործադրել ենք, օրիորդ, ինչպէս հպատակութեան իրաւունքը է հարուցել Բ. դուռը, ինչպէս թիւրիմացութիւն կայ, այսօր վարդը կկարդադրենք, կվերջացնենք։

— Ոսմանեան թիւնը սովորական խաղերով ձըգձգում է, որ տանջէ ողջ ողջ սպանէ խեղճին ու դաւք անվրդով թողել էք թշուառին դահիճների ցանցում, որ տապկէ, այրէ ու մրկի...։

— Ձգում եմ, օրիորդ, ձեր հզօրական դրութեան մէջ մանում եմ, բայց... հաւատացնում եմ, որ նրան ոչ մի տանջանք չեն կարող տալ, մանաւանդ առնետաղը երեք չորս անգամ նրան այցելում են երկու սեռութեան պաշտօնեաները։ Վստահացէք խօսքերիս, ես ունկնդրութիւն եմ խնդրել և հաւատացած եմ, որ այսօր—վաղը անձամբ ներկայանամ ուր հարկն է և ինձ հետ եւ բերեմ Տիրան բէյին։

— Ձեզ եմ յանձնում, Տէր, արէք, ինչ որ արժան դատէք։ Միայն խնդրում եմ, որ ինձ այսօր անմիջապէս ուղարկէք բանտ՝ Տիրանին տեսնելու։

— Ամիջապէս, ասաց դեսպանը և այցետոմսի վրա մի քանի տող գրելով, յաւելացրեց. — Խնդրեմ գնացէք, ներկայացէք ժեներալ-կոնսուլին և նա կը-կարգադրէ։

Կէս ժամ յետո կոնսուլի թարգմանը, Բէատրիչէն և կոյսը մի դոց կառքով ճանապարհ ընկան դէպի Ղալաթա-Սարայ։

Թարգմանը օրիորդին թևն առնելով, կոյսն էլ նրանց հետևելով բարձրացան սանդուխները և դիմեցին Պերայի միւթէսարիֆի գրասենեակը, որը տանձնարանում նոր ստացած կարգադրութիւնների ընթերցումով էր զբաղուած։ Ծառաները, դռնապանները անարգել բաց արին բոլոր դռները և այցելուները առաջ էին գնում։ Երբ միւթէսարիֆը նկատեց այցելուներին, ոտքի ելաւ, աթոռ առաջարկեց։ Թարգմանը, ուղեկիցները նստելուց յետոյ, ասաց.

— Բէյ, օրիորդ Բէատրիչէն՝ Տիրան բէյի նշանածը, ցանկանում է տեսնել ձեր ապօրինի կալանաւորին։

— Ներեցէք, միւսիւ, խնդրում եմ, կատակն աւելորդ է, ինչի էք գործածում «ապօրէն» բառը։ Մենք ամէն բան օրինական ընթացքով ենք կատարում. այն օրէնքների, որոնց գործադրման դուք նախանձախնդիր էք և պահանջում էք անխափան կէտակէտ կիրառութիւնը։

— Այո՛, բայց դրա քննադատութեան ժամանակը չէ։ Ժեներալ-կոնսուլը ինձ յանձնարարեց, որ ձեղնից խնդրեմ, անմիջապէս ներկայացնել Տիրան-բէյին իր նշանածին։

— Շատ բարի, միւսիւ, այս րոպէին։ Մի քիչ հանգստացէք, մի քանի խօսք խօսեցէք, իսկոյն, իսկոյն։ Շատ ուրախ եմ, որ օրիորդը վերադարձել է, ասաց միւթէսարիֆը, զանգակը հնչեցնելով։ Երբ սպասաւորը ներս մտաւ, ասաց.

— Միւթէնափիզ էֆէնդիին (քննիչին) խնդրեցէք, որ ներս գայ։

Մի քանի րոպէ յետո քննիչը ներս մտաւ, որին միւթէսարիֆը յայտնեց թարգմանի պահանջը։ Քննիչը խորհրդաւոր դէմք ընդունեց և ծանրութեամբ ասաց.

— Առանց դատախազի ներկայութեան օրինականութիւն է թոյլ տալ նշանածներին խօսակցել։ Մանաւանդ արդէն մի քանի կէտերի մասին, սկզբ է նախապէս օրիորդից բացատրութիւն առնել և ապա թոյլատրել, որ տեսակցին նշանածները։

— Կարելի է այդ բանը իսկոյն կատարել, ասաց միւթէսարիֆը, չկամենալով գժգոհացնել ֆրանսիական կոնսուլատի թարգմանին էս, քանիսը այդ կառավարութեան գործակալներին միշտ սիրաշահելու բարձրագոյն հրահանգ ունէր։

Հարկ եղաւ կէս ժամի չափ դարձեալ սպասել, մինչև դատախազի Նազմ-բէյի դռնից վերադարձը։ Միւթէսարիֆը զայֆով, օշարակով անընդհատ հիւրասիրում և մեծարում էր թարգմանին։ Մինչև անգամ քաղցրաւէնիներով և շաքարեղէններով ուզեց հիւրասիրել օրիորդին և կոյսին, բայց սորանք խոպան մեր-

ժեցին այդ առաջարկները։

Մեծ տպնասի մէջ էը Բէատրիչէն, սրտատրոփ սպասում էր դատախազի գալուն, ամէն մի կառքի դղրդիւն, ոտնաձայն զրաւում էին նրա հայեացքը, բայց յուսախաբուր վրդովւում և մաշւում էր։ Եկաւ վերվերջապէս դատախազը, կազմեցին օրագրութիւն, առաջարկեցին զանազան հարցեր, որոնց Բէատրիչէն որոշ և լակոնական պատասխանները տւեց։ Երբ ամէն բան արձանագրուեց, դատախազը դարձեալ դիմելով Բէատրիչէին հարցրեց։

—Օրիորդ, Տիրան բէյի կալանաւորման նախընթաց իրիկունը որտեղ էիք.

—Կեսրանցս տանը, պարոնիդ *pko,rpnn*։

—Խնդրում եմ, միառմի պատմէք, թէ ինչ դէպքեր պատահեցան ձեզ այդտեղ։ Աչքի առաջ ունեցէք, որ ձեր ճշդրիտ ցուցմունքից կախուած է Տիրան-բէյի ապագան, ազատութիւնը։ Խնդրում եմ առանց քաշւելու և ծածկելու։

Բէատրիչէն հազիւ չղերը զսպելով կարողացաւ պատմել բոլոր մանրամասնութիւնները, որոնք բառացի կերպով արձանագրեց քննիչը։

—Անպատճառ նշանածները, երբ տեսած, կամ թղթակցած են, ասաց քիմի տակ քննիչը դատախազին, որը ապշած մնացել էր արձանի նման իւր թիկնաթոռին կռթնած։

Երբ լռութեան մէջ դադարեց և քննիչի գրչի խզխզոցի ձայնը, դատախազը քնից զարթնողի նման սթափւած, աչքը շուրջը պտտցրեց և ասաց.

—Հանգամանքներն այնպէս բարդւեցան, որ

այսօր անհնար է այլևս տեսակցել։ Կան պարագաներ, որոնց առթիւ դատախազս մեզ բացատրութիւն պիտի տան Տիրան-բէյը և ուրիշները։ Տեսակցութիւնը, օրիորդ, մնաց վաղւան։

Բէատրիչէն շանթահար գետը եկաւ և նորան գրկել անզգա տուն տարին։

VII

ԿԱԹԻԱԾԱՀԱՐԸ

«Ուրբաթը շատ եկաւ քանց թէ շաբաթը։»

Եօթն օր ամէն ճիգ թափից, ամէն միջոցի դիմեց Բէատրիչէն, երկու դէպանը իրենց ժեներալ կոնեուներով և ստորագրեալներով չյաջողեցան, չկարողացան մի տեսակցութեան իրաւունք առանալ, որով յուսահատութեան ճգնաժամին մօտեցրին թշւառ օրիորդին։ Թուրք պաշտօնեաները իրենց հոգւոքարդ լեզուով, կեղծ երգումներով և խոստումներով ձգձգում էին դեսպանական ծառայողներին, անընդհատ կրկնելով.

—*Ինշալլահ*, այսօր, այս իրիկուն, գիշերս վաղը, առաւօտեան, կէսօրին բարձրագոյն բարեհաճութիւնը կատանանք, կգոհացնենք, կիատարենք ձեր ցանկութիւնը և այսպէս ճանապարհ էին գցում և օրերը

մթնացնում։ Փարլադի ընտանիքը՝ Բէատրիչէի ծնողները ալրւում, խորովւում էին, բայց հնար չէին գըտնում մի կերպ բաւարարութիւն տալու իրենց սիրասուն և քնքշասիրտ դստերին։ Օրւա մեծագոյն մասը Բէատրիչէն կուզը նստած փողոցներն էր չափչփում եղբօր, քրոջ, կամ մի ուրիշ ազգականի ընկերակցութեամբ, գնում էր ոստիկանատուն, այնտեղից դեսպանատուն, պալատ, կամ նշանաւոր անձնաւորութիւնների բնակարանները, իսկ մնացեալ ժամերը անցկացնում էր սկեսուրի, սկեսրայրի մօտ, որոնց արխացնում, ոգևորում և համբերութիւն էր ներշնչում։ Այս թշուառ ծերունիները համարեա մահւան անկողնումն էին և յուսահատութեան ճիրաններում։ Այնքան թրև էր գալիս, այնքան սիրտ էր հատցնում, որ ոչ կարգին կարողանում էր հաց ուտել, ոչ խմել և ոչ իսկ քնել։

Երբ Բէատրիչէն մտնում էր կաթուածահար սկեսրայրին, վերջինս ամէն ճիգ թափելով ժպտում և նորանից պահանջում էր այցելութիւնների և կատարած գործերի հաշիւը։ Բէատրիչէն մտնում էր կաթուածահարին, կարգի էր բերում նրա անկողինը, բարձերով և վերմակներով յարմարութիւններ էր շինում նստելու, թէկն տալու և ճիգն ամփոփած մեղմութեամբ պատմում էր անցքերը, յուսադրելով ծերունին իւրեն խոստացած յոյսերով։ Թադէոս աղան երբեմն լաց էր լինում, երբեմն անհասկանալի ձայն էր բարձրացնում, ուզում էր շարժուել, բայց չէր կարողանում նստած տեղը խգխգալ։ Ազաւնի խանումը միշտ նստած ամուսնի մահճակալի սնարին, բացատրում էր կաթուածահարի շարժումները դիմագծերը, հայեացքը, բա-

ցականչութիւնները, որից ընդհանրապէս գոհ էր մնում թշուառը։

Մի օր հէնց այն միջոցին, երբ Բէատրիչէն նկարագրում էր օրւա անցքերը և դէպքերը Թադէոս աղայի, ծառան ներս մտաւ և յայտնեց, թէ Ալմարէլը ներս է գալիս։ Դժգունեցաւ կաթուածահար հայրը, աչքերը չռեց, արտասուքի հատեր գլորւեցան դէմքից։ Ազաւնի խանումը ըմբռնեց, որ ամուսինը չի ցանկանում որդու ներկայութիւնը, բայց մինչև նա դառնալը, արդէն Ալման ներս մտաւ և գլուխը խոնարհելով բարևեց, առանց համարձակւելու մէկին ձեռք տալ, աթոռ առաւ, նստեց հօր մահճակալի դէմուդէմ։ Ալմայի ներկայութիւնը խանգարեց Բէատրիչէի նկարագրութիւնը և սգաւոր լռութիւնը տիրեց։ Ազաւնի խանումը երբեմն երբեմն հառաչում էր և արտասուքի էր ենթարկւում, երբ նկատում էր Թադէոս աղայի կնճիռները, որոնք արտայայտում էին զայրոյթ և պահանջ՝ որդուն շուտով դուրս հանելու։ Գալարւում և հալւում էր խղճալի պառաւը, բայց ոչինչ չէր համարձակւում խօսել։

Բէատրիչէն մասամբ գիտէր, թէ ինչ վիհ կար երկու եղբօր, հօր ու որդու մէջ, ըմբռնել էր, թէ ինչ դեր էր խաղացել տագրը իր նշանածին ձերբակալելու խնդրում ու յուզւել էր, մի կողմ քաշւած, անմռունչ նստած ալէկոծւում էր վշտի անծայր ովկեանի ահեղ ալիքների վրա։ Այս լռութիւնը, ալէծուփ պատերից մաշւած հառաչները, տխրութեամբ համակւած դէմքերը արտայայտում էին իրար այն մտքերը, որոնք ոչ լեզուն կարող էր արտայայտել, ոչ գրիչը

արձանագրել և ոչ վրձինը նկարել: Ամէն մի րոպէյում, ամէն մի վայրկեանում ու անընդհատ փոփոխւում էին նրանց դէմքերի գոյնը, կնճիռների ձևը, հայեացքը և նուանքը:

Զգում էր Աթան՝ ինքն էլ, թէ ինչ ճգնաժամում էին գտնւում ճակատագրերը, հոգին ճնշւած գիտակցում էր իր ներքին տանջանքներին էլ, ըմբռնում էր, թէ իւր ներկայութիւնը որքան բորբոքում էր սիրում շուրջը, բայց չէր կարողանում վճռել, թէ ի՞նչ ընթացք բռնի: Այս քայլը անելու նրան դրդել էր իւր վիճակի սոսկալի պայմանները, մանաւանդ նախանձոտ և թակարդ լարող դահիճը, որոնց առաջ բերած պարագաները ստիպում էին Աթային տանել այդ դառնութիւնները, դիմադրել ամենասոսկալի անարգանքի, մինչև պարտատէրների ճիրաններից ազատւելը, որոնց յանձնել էր օձիքը իր անխոհեմ ընթացքով: Գերի էր ընկել կրքերին, ընկել էր Սէթօի մեքենայութիւններով գործւած որոգայթում, որից դուրս ճողոպրելու ոչ ճար ունէր, ոչ էլ հնար: Իսկ Նազմի-բէյը իւր պատւէրների անպայման գործադրութիւնն էր պահանջում, որին կեանքից ձեռ քաշելու քաջութիւն ունեցողը միայն կարող էր դիմադրել: Այնպիսի թակարդներ էր լարել Սէթօն, որ Աթայի պարտատէրների բոլորի մուրհակները անցել էին Նազմի տրամադրութեան, մինչև պարտքերը ամբողջապէս տոկոսիքով չվճարէր, Աթան ազատւելիք չունէր:

Աթարէյի պարտատէրերը Սէթօի թակարդների համաձայն Նազմի սպառնալիքներից ճնշւած, ուզում էին գանկատ ներկայացնել դատարան և որպէս ննդաւոր

սնանկ բանտարկել տալ մեծատան շռայլ զաւակին: Պարտատէրերը համոզւած էին, որ եթէ դատարան դիմէին, Աթայի կայքերը նրանց պահանջը հազիւ քառասուն տոկոսով լրացնէր, վաթսունից պէտի գըրկւէին: Ուստի լռում էին նորոգելով մուրհակները, բարդելով տոկոսները, յուսալով որ Թադէոս ազայի մահից յետոյ, Տիրան բէյը, որպէս պատւազգած և բարեսիրտ մարդ, չկամենալով արատաւորել եղբօր, մանաւանդ տոհմի անունը, չպիտի խնայէր յիսուն վաթսուն հազար լիրան այն ահաւոր կարողութիւնից, որը ժառանգելու էր հօրից, եղբօրը բացերը գոցելու համար: Բայց Նազմի յորդորները, ակնարկները այնպիսի սոսկում էր առաջացրել, որ բոլորը միասին ոչ—պաշտօնական ճնշում էին սկսել և Աթարէյը մոլորւած ոստիկանապետի սպառնալիքից, դրանց պահանջներից, Սէթօյի խրատներից ձեռք կարկառում էր ամէն կողմ, բայց չէր գտնում մի այնպիսի յենարան, որ խեղդւելուց ազատւէր: Աթան այլևս միջոցների ընտրութեան մասին մտածելու հնարաւորութիւն չունէր, ձգւում էր, որ կողմ որ նրան մղում էին:

Սէթօն այնպէս էր ծրագրել, որ Աջէմեանի ամբողջ գոյքը, կարողութիւնը անցնէր Աթային, քանի որ, այլևս ազատութեան ճար չէր թողել Տիրան բէյին:

—Եթէ այդ ընկերավարականին չկախեն, ասում էր Սէթօն փրփրած բերանով անպատճառ Աքէեա կամ Ֆէզան կուղարկեն ցմահ բերդարգելութեամբ, որտեղ, եթէ չթունաւորեն այդ տեռօրիստներին աշակերտողին, անպատճառ կարիճների և մորմերի ճանկը կգցեն դրա գլուխը: Աթարէյ, դու կարող ես անմիջա-

պէս գնալ և տիրել Հօրդ ամբողջ կայքը, քանի որ նա արդէն բանականութիւնը, ուշքը կորցրել է և գտնըւում է մահւան մահիճում։

Սկզբում Սէթօն և արբանեակները միշտ Աթաբէյին շոյում, շողոքորթում, փաղաքշում էին, նրբան ոչ մի յայն մեծարում, փքւեցնում էին, այլ մինչև անգամ մեծամեծ խոստումներով առաջ էին քաշում։ Տիրանին ձեռքակալելուց յետո, այլևս բոլորը խօսելու եղանակը փոխեցին։ Երբ բացարձակապէս Տիրանի կեանքը ոչնչացնելու մտքերը պարզեցին, Աթան սթափւեցաւ, գգաց, որ իր կեանքի հետ էլ կարող էին նոյնը խաղալ այդ դաժան լծակիցները, բայց արդէն ուշ էր։ Յնցւեց Աթան, մթնեց աչքերը, երբ ըմբռնեց իր խորխորատում գլորւած լինելը։ Սոսկաց, բայց իր սանձը, իր ջղերը յանձնել էր հակառակորդներին հէնց այն րոպէից, երբ իր ձեռքով տեղաւորել էր Տիրանի դարաններում, արկղներում և գրադարանում այն թղթերը, այն յեղափոխական կոչերն ու յարձակումները, որոնց մասով տանջւում էին եղբօրը։ Յուսահատւած ուրիշ ելք չէր գտնում, պարտաւորւած կուրաբար հետևելու էր առաջնորդներին մինչև վերջը, որպէսզի իրեն համար չւան չիւղէին։

Այդ օրը Նագմ-բէյի հրամաններից և Սէթօի յորդորներից ստիպւած եկել էր Աթան ծնողների մօտ, որ սրանց յայտնէ, թէ պետական օրէնքների տրամադրութեան համաձայն ինքը՝ որպէս ընտանեքի աւագ անդամը, պարտաւորւած էր Այէմեան տան ամբողջ գոյքը իր հսկողութեան տակ առնելու, մինչև հօր ապաքինումը և եղբօր բանտից ազատւիլը։ Այս միտքը ամ-

բողջ ժամեր որոճել էր, բայց այնքան ոյժ չունէր, որ պարզեր հարազատներին։

Քանի լսել ու մունջ անցկացրին հարազատները, ոչ ոք բերան չբացեց և մի բառ չկարողացաւ արտասանել։ Միայն կաթւածահարը անվերջ ճիգը թափելով կնճռոտում էր դէմքը, անթարթ հայեացքը կնոջն ուղղելով, անորոշ ձայներ, բացականչութիւններ էր արձակում, սպահանջում էր անմիջապէս դուրս վռնդել որդուն։ Շատ լաւ ըմբռնում էր Աղաւնի խանումը ամուսի ցանկութիւնը, բայց չէր յանգգնում տեսարան ներկայացնել մատաղահաս հարսի ներկայութեանը, բորբոքելով Աթային։ Որդին հօր դէմքից կարդում էր նրա միտքը, կատաղութիւնից փրփրում էր, բայց ծպտուն չէր կարողանում բարձրացնել։ Թշւառ մօր մտքում ներկացան այն բոլոր պատկերները այն բոլոր նախատինքներն ու անարգանքները, որ թափել էր Աթան տարիների ընթացքում, յուզեցին նորան, բորբոքեցրին և կատաղութեան հասցրին, երբ լիշեց, որ սիրելի որդու բանտարկութեան, ամուսնի կաթւածի և իրենց այս վերջին տառապանքի պատճառն էլ այդ անառակ որդին էր դարձել։

Կաթւածահարը չկարողանալով այլևս տանել դաւաճան որդու ներկայութիւնը, սկսեց անհասկանալի հնչիւններով և ազմկալի ձայնով կիրքն արտայատել և երերալ։ Դողացին բոլորն էլ, սարսուռ ընկաւ ամէնքի անձում և մայրն անճարացած բերանը բացեց ու ասաց.

—Կտեսնես, որ ներկայութիւնդ անոր կտանջէ, գիտես ալ, որ երեսդ տեսնելն անոր սոսկում կը-

պատճառէ, ալ ի՛նչը կստիպէ քեզ յամառութեամբ անոր դէմը նստել ու թշուառը բորբոքել, վշտերս բեւեռապատկել:

—Քեզ նման մա՛յրը ճիւաղների կարգն անցնի, որ ես ազատեմ: Օձ ու խոցով լի՜ց հօրս սիրտը, բորբոքի՜ր անոր կատաղութիւնը և ապա տարբողի՜ր, որ ան իմ երեսս տեսնել չի կամենար: Ա՜հ, դժոխքի փարտի՛չ, այդ ի՛նչ զարհուրելի դեւեր կենակին սըրտերդ խորքերը: Կարելի է գեհենի մէջ ալ սադայելներին իմ դէմ դրդուես ու բորբոքես: Սատանէ՛ ու չորանայ՛ արդանդիդ մէջ և քու արիւնով չսնէի, ծծու խմէի, օձի թո՛յնով վարակուէի, քանթէ քու ստինքներէն կաթ ծծէի, և այս կեանքի դառնութիւնները կըլլանէի:

—Դարձեալ դէմս, ելի՛ր, դեւերի պարագլո՛ւխ, հեռացի՛ր, կորի՛ր, աչքիս առաջից, մի՛ սպանիլ թշուառ հօրդ, որին նենգաւոր քայլով կաթւածահար արի՛ր:

—Զրպարտի՛ր, զրպարտի՛ր, այդ է միան զէնքըդ:

—Դեռ, անամօ՛թ, կհամարձակիս խօսիլ անգամ, թշուառացուցածներիդ աչքին երեւալ ու ծաղրել անգամ և այսքան մօտենալ, անոնց վիշտը սաստկացնել անգամ... Ի՞նչ էր արել եղբայրդ, որ գաղտնագողի գըրոցների մէջ դարսեցիր այն թղթերը, որոնցով անոր մահ կսպառնան դահիճները: Մեր հարստութիւնը, եղբօրդ բաժինն ալ կորզելու և շռայլութիւններդ, անառակութիւններդ ընկերներիդ հետ շարունակելու յոյսով... Եղբայրասպան դահի՛ճ...

—Ե՛ս, ե՛ս,.... սկսեց կակազել Աթան. բայց

մայրը նրա խօսքը կտրելով շարունակեց:

—Դո՛ւ, անզգա՛մ, դո՛ւ, ապերա՛խտ, դո՛ւ, ագա՛հ, դո՛ւ, մատնի՛չ, դու նենգաւոր, այն անմեղ եղբօրդ ի՛նչ վիճակի հասցրիր: Ան որ քեզ կեանքը չէ խնայել, ան որ քսան անգամ պարտքերդ գաղտնապէս վճարել, քեզ խայտառակութիւնից ազատել է, ան որ քու պատճառով հօրը վշտացրել է, որ քեզ փողով օգնէ, դու անոր ո՛ւր գլորեցիր...,

—Ե՛ս, ե՛ս, ես, շարունակեց Աթան շփոթւած և բորբոքւած:

—Դո՛ւրս, դո՛ւրս, տնէս, դո՛ւրս յարկէս, դո՛ւրս աչքիս առաջէն, հեռացի՛ր, կորի՛ր հօրդ աչքի առաջէն:

—Ինձ կվռնդե՞ս, ինձ տնէս դո՛ւրս կվռնդես, ա՛լ ուշ է, ա՛լ իրաւունք չունիս, դու կարող ես գնալ, դո՛ւ կորի՛ր այս յարկէն, որտեղէն տասը տարի է ինձ արտաքսել ես... Օրէնքն այսօր ինձ է յանձնել այս տան վերատեսչութիւնը, օրէնքով այսօր ես եմ տէրը, դո՛ւ, դո՛ւ դուրս կորի՛ր:

—Այդ էր պակաս, այժմ ամէն բան կատարեալ է, ասաց Աղաւնի խանումը լացուկումած: Բէատրիչէն, որ մինչ այդ լուռ հանդիսատես էր ներկայացման, առաջ եկաւ և ասաց.

—Աղաչեմ, եղբա՛յր. գութ ունեցի՛ր, թշուառ զառամեալներին մի՛ բորբոքիլ, կաթածահարին կարող է այս տեսարանը մահ ազդել: Կարեկցի՛ր, եղբա՛յր, խղճա՛, մի՛ դառնութեամբ վերջացնել անոր կեանքի թելը:

—Դո՛ւ կարեկցիր, դո՛ւ գթա՛, դո՛ւ խղճա՛... Իմ

Հարազատ ծնողներիս դու աւելի կխղճաս, դու աւելի
կկարեկցես, քան թէ ես... Կեղծաւո՛ր, նենգաւո՛ր, դո՛ւ,
դու անոնց Հարստութիւնը կուզես չորթել, դու ա-
նոնց գոյքը կուզես կողոպտել, ո՛չ թէ կարեկցել։ Այդ
քարոզները մենք շա՛տ ենք լսել, այդ դերը խաղացող-
ներին շատ ենք տեսել...։ Քեզ խօսեցնողը անոնց
Հարիւր Հազարներն է, գնա՛ բանիդ։ Դու չգիտես, թէ
ինձ ինչ Հրէշ է ծնել։

—Մի՛ բորբոքէք առանց այն էլ անոնց խանձ-
ւած ու մրկած սրտերը։ Ինձ տուէք, ինչոր կկամենաք,
բայց Հանգիստ թողէք անոնց սփոփանքի կարօտ սըր-
տերը։

—Ա՜խ, ես ինչպէս Համբերեմ, ինչպէ՛ս խա-
ղաղութիւնս պաՀպանեմ, երբ այսպիսի անարգանքի
ու զրպարտութեան դատապարտուած եմ, ասաց և ուղ-
ղւեց դրան կողմը։ Վերջին անգամ դարձեալ ետ դար-
ձաւ դունիցն Աթաբէյը և թքնելով մօր երեսնիվեր
Հեռացաւ։

Աթայի վարմունքը մաՀւան քրտինք բերեց
ծնողների վրա։ Աշտակոծները շանթաՀարի նման տա-
րածւած մտածում էին իրենց ամբողջ անցեալի մա-
սին, որը ներկայացել էր նրանց մտքում անթիւ ի-
րար յաջորդող տեսարաններով։ Հարստութիւն, ճո-
խութիւն, զաւակներ, կեանքում մարդկային բաղ-
ձանքների բոլորին Հասել էին, բայց ինչի՞ երջանկութիւնը
նրանցից խոյս էր տւել։ Բաղտի չարաՀար Հարւածնե-
ների Հետ որքա՛ն կռւել էին, քանի՜ քանի՜ մութ օ-
րեր էին անցկացրել, որքա՛ն տանջանքներ էին կրել,
մինչև իրենց բաղձացած ուրախ արշալոյսին դիմա-

ւորելը և Հէնց այդ ցնծալի արշալոյսը, կենսաբոյր ա-
ռաւօտը ինչպէ՜ս փոխարկւել էր յանկարծակի դժոխա-
յին խաւարի։ Տխրաշունչ քամիները, քստմնելի փո-
թորիկները ի՜նչպիսի սև սև ամպերով ծածկել էին
իրանց Հորիզոնը, շանթալի փայլակները աՀեղ որոտով
ինչպէ՜ս նրանց զարՀուրեցրել էին և մռայլ երկինքը
յուսաՀատութիւն սփռել։ Եւ ո՞վ էր դարձեալ նրանց
Հալածողը, նրանց աՀաբեկողը—հարազատը իրանց զա-
ւակը իրենց սնուցածը։

Թշւառ օրիորդը չէր իմանում ի՛նչ միջոցով
մխիթարել այդ բեկւած սրտերը, այդ փշրւած կեան-
քը, որոնք այդ աստիճան դառնութիւն էին կրում
իրենց վերջին ճգնաժամում։ Բէատրիչէն պաՀապան
Հրեշտակի նման երբեմն մէկի, երբեմն միւսի ակ-
նարկներին յուսատու ժպիտով էր պատասխանում և
աշխատում էր արիութիւն ներշնչել։ Աջէմեան կաթ-
ւածաՀարի Հայեացքը չէր Հեռանում Բէատրիչէի աչ-
քերից, կարծես թէ նա մի ինչոր բան էր ուզում։
Դիւրազգաց օրիորդը նկատեց և սկսեց Հարցեր տե-
ղալ, բայց սկեսրարի միտքը չէր կարողանում գուշա-
կել։ Հարս ու սկեսուրը երկար տանջանքից յետո, ի-
մացան, որ Թադէոս աղան ցանկանում էր Հրաւիրել
իրանց կոնսուլ ժէներալին։ Անմիջապէս Հրաւիրեցին
պաշտօնակալին։ Բայց կաթւածաՀարը դեռ էլի ցան-
կութիւն ունէր, նա վերջապէս Հասկացրեց, որ Շէյխ-
իւլ-իսլամի դունից մի ղադի (դատաւոր) ևս Հրաւիրեն։

Ժեներալ-կոնսուլը ըմբռնելով, որ կաթւածա-
Հարը ցանկանում է կտակ, կամ ինչոր մուրՀակ գը-
րել տալ, իսկոյն չորս Հինգ բժիշկ Հրաւիրեց։ Բժիշկ-

ները երկար քննելուց յետոյ, համոզուեցին, որ կաթուածահարի ուշքը լիովին տեղն է. կամքը կատարելապէս արտայայտում է, կազմեցին իրենց արձանագրութիւնը և յանձնեցին ժեներալ կոնսուլին: Թադէոս աղան յայտնեց, որ իւր ունեցած ութ հարիւր հազար լիրայի պարտամուրհակի փոխարէն, որը ներկայացրեց ժեներալ կոնսուլին առանձին արկղով, վճարելու է օրիորդ Բէատրիչէ Աստուածատրեան Փարլադիին, սորան ծախում է և անմիջապէս յանձնում իր բոլոր կայքը, որոնք գտնւում են Կ. Պոլսում, Ալէքսանդրիայում և Գահիրէյում: Անմիջապէս օրիորդի տրամադրութեան տակ է դնում բանկ օտտոմանում և ուրիշ տեղ ունեցած դրամները և նորան է յանձնում օբլիգացիաները ամողջապէս: Մինչև անգամ բնակած տան և դրասենեակի բոլոր կահկարասիները: Ժեներալ կոնսուլի սեկրետարը այս մուրհակը գրելուց յետոյ, վաւերացրեց պետական կնքով, որի վրա իրենց ստորագրութիւնով բժիշկները գրեցին համառօտ կերպով բժշկական զեկուցումը: Կոնսուլը Թադէոս աղի նշանների համաձայն մուրհակը յանձնեց օրիորդին և վաւերացուած գրքերը տարան կոնսուլատ:

Դեռ կոնսուլն ու բժիշկը չէին հեռացել, երբ ներս մտաւ խալամի նախանձախնդիր պաշտօնակալը երեք չորս արբանեակներով: Միևնոյն բովանդակութեամբ հեօջէթի- շէրի գրեց Ղադին, վաւերացրեց և շէրիաթի ծրագրած կէտերը գործադրելով, յանձնեց Աջեմեանի գոյքի իշխանութիւն Տիրան-բէյի նշանածին—Օրիորդ Բէատրիչէ Փարլադիին:

VIII

ԱԹԷՆԱ

Հօր տանից Աթան արհամարհած վռնդուելուց յետոյ, ուղղակի դիմեց իր խորհրդականի և շուայտութեան ընկերի մօտ, որպէսզի խորհին իրանց նպատակին հասնելու միջոցները գործադրելու համար: Սէթօն տանն էր, գրկաբաց համբոյրով ընդունեց Աթային՝ սովորականի համաձայն: Վշտակցութիւն ձևացրեց, բորբոքեցաւ, քաջալերեց և խրախոյսներ կարդալով միասին գնացին Նազմ-բէյին: Ոստիկանապետը, որ երկար ժամանակից իվեր ծրագրուած գործի ընթացքի այդ մոմենտին էր սպասում, անմիջապէս կանչել տուեց իր տրամադրութեան տակ դրուած արտակարգ գործերի դատախազին և յատուկ ձևերով ու շեշտերով,—խալիֆի ապարանքների կողմը ունքերը թեքելով—պատուիրեց, որ Աթային օգնէ, դիւրացնէ անմիջապէս հայրական ժառանգութեան գլխին կանգնելու և տիրելու գոյքը, որպէսզի խելացնոր զառամեալների անկարողութեան պատճառով օտարների ձեռքը չփչանայ այն ահաւոր հարստութիւնը: Նազմն այնպիսի ձև ու ձայն

էր տալիս խօսքերին, որ դատախազը պարտաւոր էր ենթադրել և հաւատալ, թէ այդ պատգամը աւելի բարձունքից էր ստացած։

Դատախազը արդէն ծանօթ էր Ա.թայլին ու Սէթօին, այնպէս որ նրանց ուղղակի իրեն չդիմելը ոչ մէյն անարգանք չհամարեց, այլ աւելի ևս նրա սրտում ամրապնդեց և արմատներ տարածեց այն ենթադրութիւնը, թէ այս գործը հզօր անձնաւորութիւնների հետ կապւած էր, իր աչալուրջ և անմիջական գործողութիւններով կարող էր այդ կարծեցեալ մեծամեծների շնորհին արժանանալ։ Բայց գործը յարկ եղած օրինական ձևականութեան ենթարկելու համար, առաջարկեց, որ անմիջապէս դիմեն յայտնի փաստաբան Մագսէդ բէյին, նրա աջակցութեամբ և խորհրդով առաջ վարեն գործը։ Դատախազը այնքան տգէտ էր օրէնսդրական կարգերից, որ խորամանկութեամբ ցանկանում էր փորձառու փաստաբանի աջակցութիւնը ձեռք բերել, անդունդը չգլորւելու համար։ Դատախազի և Նազմի այցետոմսերի գրաւականով ընկերակիցները դիմեցին Մագսէդ բէյին։ Փաստաբանը գործի պարագաները մանրամասն ուսումնասիրելուց, ըմբռնելուց յետո, վստահ ոստիկանապետի և դատախազի աջակցութեան ասաց.

— Ա.թա բէյ, խնդիրը որոշ է, օրէնքը թելադրում է, որ անմիջապէս ձեզ, որպէս ամենամօտ արիւնակից ժառանգի, յանձնել ամբողջ կարողութիւնը, մինչև Տիբան բէյի գործից ազատւիլը։ Հարկ եղած խնդիրը ես կպատրաստեմ, իսկ դուք իմ անւան հաւատարմագիրը տարէք, իսկոյն պատրաստել տէք, որպէսզի միասին

ներկայանանք դատախազին։ Վստահ եմ, որ վաղը ձեզ յանձնել տամ այն որոշումը, որ գնաք տիրէք հայրենի կալւածները և գոյքերը ցնոր տնօրինութիւն։

Սէթօն Ա.թայլի հետ նստարի մօտ փոխանակգիրը վաւերացնելուց յետո Գալաթայլի միջով անցան, մի վաշխառու սեղանաւորի ականջում մի քանի խօսք փսփսալով հարիւր լիրա ստացան, որի մասին յարկ եղած մուրհակը Ա.թան ստորագրեց և հեռացան։ Սբրանք հրճւալի, տուն ուղարկելիք մթերքի պատւերը նպարավաճառին, դինեվաճառին տալուց յետո, դիմեցին իրենց սովորական զբօսավայրերը— Գալաթայլի կռիվ-չանթաննները...

Իդէասը՝ Ադնիւ խանումի մօրքուրի որդին ազատ մուտք ունէր իւր ազգակիցների տունը։ Ա.թայլի յանձնարարութեան համաձայն փողոցում ապսպրւած մթերքը մշակներին բաց[illegible] ու դիմեց մօրքուրի (այդպէս էր անւանում Ադնիւ-խանումին՝ մօրքուրի աղջկան) տունը։ Խոհարարը թմբւած դէմքով դիմաւորեց երիտասարդին, փնորելով տուն բերած նիւթը։

—Այդ իմ գործս չէ, գայրացած պատասխանեց Իդէասը խոհարարին, բէյից ասա, նա գնեց, ինձնից խնդրեցին, որ մշակներին տուն առաջնորդեմ։

—Լաւ, ասաց Ադնիւ խանումը երես առած խոհարարին, քեզ ինչ որ հրամայեն, այն կատարիր։ Վերջը դառնալով իր տոհմակցին յարեց.—Իդէաս, ներս դնա, ինչ ես կանգնել, մտորում։ Մի թէ չգիտես, որ ներկայութիւնդ մեծ հաճոյք է մեզ համար, իսկ դու մինչև աւելի չպատահի, դէմքդ մեզ չես ցոյց տալ։

—Ներիր, մօրաքոյր, ճշմարիտը քանի օր է

խիստ զբաղած էի։ Որքա՜ն ժամանակ է, որ ձեզ չեմ այցելել, ընդամէնը երեք օր։

—Ամէն օր եկ· ամէն օր պիտի գաս, հատկացար։ Մանաւանդ Աթէնան քանի օրէ կկարդա, կըկարդա յանձնած գիրքը, բան չի հասկանար, աչքը քեզ կփնտռէ, որ բացատրես։

—Բարով ես եկել զարմիկ (cousin), որտեղ էիր այս երեք օր է։Խոստովանիր, որ մեղաւոր ես, առաջ գալով ասաց Աթէնան, համբուրուեց Իդէասի հետ և ձեռ ձեռի ներս դնացին։

—Ես համոզուած եմ, որ մեղաւոր չեմ, բայց քանի որ դու ես ինձ վրա մեղք բարդողը, թո՛ղ մեղաւոր լինիմ. ասաց Իդէասը։

—Փաստաբանութեան մի դիմել, այլ խոստովանիր, պատասխանեց Աթէնան, բարեխղճ խոստովանութիւնը արդարացման արժանի է։

—Թո՛ղ այդպէս ըլլա, յարեց խնդալով Իդէասը

—Ա՜խ, դո՛ւք, մարդի՛կդ, երբէք չէք գիջանիլ, երբէք չէք ցանկալ թեքուիլ, ասաց Աթէնան և Իդէասի ձեռքից բռնելով դրկախառն տարաւ իւր առանձնասենեակը։

—Մօրքո՛ւր, ասաց Իդէասը ետ դառնալով, բէյն ասաց, ա՛խ, քիչ էր մնում մոռանայի, թէ իրիկուան հիւր ունի ընթրելի, չորս հինգ մարդու բաժին աւելի պատրաստէք։

—Շատ լա՛ւ, զաւակս, շատ բարի, պատասխանեց Աթենէ խանումը խոհանոց դիմելով։

Մի քանի րոպէ զոյգ զարմիկները առանձնասենեակում անցկացնելուց յետո, դուրս եկան, ինչպէս նոր Ֆրանսիական հանդէսներ ձեռներին, թևերը իրար ուսով զրած իջան սանդուխներից դէպի պարտէզ, որը սքանչելապէս յարդարուած էր գարնան գալարներով, անուշաբոյր ծաղիկներով։ Բաւական ընդարձակ պարտէզը Բալկանները Բոսֆորի ափին վերջացող մի բլրադագաթի վրա դնելով, առաջը՝ արևելեան կողմը ընդարձակ հորիզոն ունէր, եւրոպայի ստորոտից դիտում էր Ասիայի եղերքում վերջաւորուած Տորոսի լեռնադագաթները, բլուրներն ու զառիվայրերը, որոնք աստիճանաբար ցածրանալով հասում էին Բոսֆորի ծիծաղափայլ ափերին։

Արևը վաղուց թեքուել էր, բազմայարկ տների երկար շուքերը կէսից աւել ծածկել էին պարպէզը, գետինը չերմութիւն էր արտաշնչում։ Ջրչքնած ուղիներից և ցանկերից բարձրացած աներևոյթ գոլորշին հալելով անհաճոյ տաքութիւն էր ներգործում զբօսնողների վրա։ Թէև չէր կարելի ասել, թէ ամռան էր, բայց մայիսի սկզբնական մեղմ և դիւթիչ օդերը օրեցօր տեղի էին տալիս չերմութեան։ Պարտիզի գոյնզգոյն ծաղիկները, կոկոնները մրգի էին փոխարկուել, կեռասն ու բալը արդէն կարմրել, հասել, սեղանի զարդ էին դարձել, տանձը, խնձորը դեղնել, սկծռտել ու շողքերը էին սիրել, բազմերանգ ծիրանն ու սալորը դուրս էին եկել իրենց թաւիշեա պատմուճանից, դեղին, թուրինջի ու ալ բէհեզ էին հագել, թէև դեռ դակ ու տհաս, բայց մեղմ զեփիւռի տատանումներից ցնցուղներից պոկ էին գալիս իրենց կրծից ու ցած էին գլորւում։ Խաղողի ողկոյզները զմռուխտանման փոքրիկ հատիկները աչք էին զրաւում, նուշն ու

թուղն ախորժակ էին գրգռում, արիւն պղտորում, ջըղեր քայքայում, բորբոքւած կրքերը լափել էին տենջում....։

Իդէասն ու Աթէնան նստան Հողից ու *չինիից* պատրաստած բազմոցի վրա, մեծ ընկուզենու Հովանու տակ, որի անուշ բուրումը, զոյկ զոյկ դալար գըկախառնած ծինգակները նւազ Հրապուրիչ չէին։ Կարծես թէ խիստ յոգնած լինէին զոյկերը, բազմելու պէս թէկն տւին, լուռ դիտում էին իրանց շուրջը, մտածում էին իրենց ներքին աշխարՀում ամփոփւած, ագահաբար շնչում և ուզում էին յագեցնել իրենց թոքերը, Հոտոտելիքը և զգացումները... Ամբողջ երեք օր, երեք երկար օրեր իրար չէին տեսել զարմիկները, երեք օրւա անջատման ծարաւը ուզում էին զովացնել, յագեցնել իրար Հոտոտելով, Հեռու աշխարՀի չըկամ աչքից։ Այս առաջին անգամը չէր, այս առաջին դէպքը չէր, շատ ու շատ անգամ պատաՀել էր, որ երեք օրով, եօթն օրով, անջատւած էին մնացել զարմիկները, իրար կարօտն էին քաշել, անՃկութեամբ մթնացրել էին օրերը, տանջւել, տխրել և իրար դիմաւորելով Հրճւալի գրկւել, Համբուրւել, յանդիմանւել և առանց անցածի, դարձածի ու արարքների վրա լուրջ Հայեացք գցելու, ձեռ ձեռի, թև թևի, գլուխ գլխի, ուս ուսի, տւել, Հպել, խօսել, ծաղրել, ծիծաղել և բաբախալի սրտով ուրախ ժամեր էին միշտ սաՀեցրել, ժամե՜ր, օրե՜ր, որոնք վայրկեանների նման սլացել էին, որոնց քաղցր տպաւորութիւնը անջինջ նկարւել էր մատաղաՀաս Հոգիների ջղերի ու ծուծերի մէջ։ Այս անյագենալի ժամերի վայելքի ընՀարումնե-

րը միշտ տխրութիւն ու թախիծ առաջացրել քնքոյշ սրտերի Համար, անջատումները միշտ ու տանջանք, իսկ իսպառ բաժանումը կարող էր նրանց գոյութեանը սպառնալ...։

Արդէն քանի մէկ տարւան մէջն էր Իդէասը, դեռ երեսին ո՛չ պեխ ունէր, ո՛չ աղւամազ, նրա կարմիր այտերը ձիւնի նման սպիտակ մորթի վրա բոցավառւում էին կակաչի նման։ Նրա աչքերը, ունքերը ոզորկ կզակը, վարդագոյն շըթունքները ոչնչով չէին զանազանւում Աթէնայի դէմքից։ Մինչև ուսերը ձըգւած սաթի նման սև փայլուն մազերը Հրապուրել կարող էին երկնքի Հրեշտակներին անգամ, Իդէասը այդ գարնան աւարտել էր Ֆրերների Քաղկեդոնի *քօլէժը* և պատրաստւում էր Պարիզ գնալու գեղարւեստի ակադէմիան յաճախելու Համար։ Իդէասի նկարները արդէն մեծ ապագա էին խոստանում, նրա պորտրէտները, պատանիների և օրիորդների դէմքերը Կ. Պոլսում ձեռից ձեռ էին մանածում, ամէն մի գեղարւեստի սիրաՀար աշխատում էր նրա բնածի տաղանդի, սկսնակ վրձինի արտադրութիւնները ձեռք բերել։ Իդէասը Հուչակւել էր դիմանկարով, այնքան նուրբ կերպով էր դիմագծերը դասաւորել էր կտաւի վրա, այնպէս արտայայտել իր Հոգեկան աշխարՀը այդ ներկերի միջոցով, որ ուսուցիչները միաձայն որոշել էին այդ նկարով զարդարել իրենց *քոլէժի* դաՀլիճի ճակատը։ Բայց աւելի Հրաշալի յաջողութեամբ էր նկարել Աթէնայի պատկերը, որը օրիորդին ընծայել էր զարմիկը նորա տասնվեցամեակի տարելիցի առթիւ։ Այդտեղ անտիական օրիորդի Հրաշագեղ դէմքի վրա

կարելի էր կարդալ նորա անմեղութիւնը, գթասրտութիւնը և բարեսրտութիւնը, որոնցով զրոշմած էին Ամենայի զաւակները:

Թէև երեք տարով մեծ էր Իդէասը Ամենայից, բայց որովհետև Իդեասի հայրը որդու աշխարհ գալուց մի ամիս յետո փոխադրուել էր յաւիտենականութեան անդունդը, թշուառ մայրը ամբողջ սէրն ու գոյութիւնը կենտրոնացնելով միակ զաւակի վրա, սրան տարիներով դիեցրել էր, այս գեղքից օգտւելով զոյկերը փոխադարձաբար շատ ու շատ անգամ իրար մօրերից կաթ էին ծծել, իրար պատառը հաւասար բաժանել, միևնոյն օրօրոցում քնել, նոյն յարկի տակ յառկրթել, կայտռւել, խնդացել ու լացել էին: Թշուառ այրին, որ ամուսնից միայն աղքատութիւն էր ժառանգել, ամիսներ ու տարիներ մթնացրել էր իր քրոջ գաւեր՝ Ագնիւի տանը, որը հասակակից էր մօրքուրին: Այնքան իրար նման էին, այնպէս սիրով, որ բոլորը նրանց հարազատ քոյրեր էին համարում, ինչպէս Իդեասը Ագնիւին, այնպէս Անթենան Ամատամին մօրքուր էին կանչում և երբէք մօրքուրները մօրից չէին զանազանում:

Երկար տարիներ, ամբողջ կեանքերն այնպէսի սիրով և դուրգուրանքով էին անցկացրել զոյկերը, որ նրանց բարեբախտ ժամերը միայն բերկրանք էին պատճառել իրանց ծնողներին, ոչ մի ուրիշ կասկածի, ոչ միայն կայծը երբէք չէր ցոյտել նորանց սրտերի մէջ, ոչ միայն հետքը չէր երևացել նրանց աչքում, այլ երբէք չէին կարող երևակայել անգամ: Զաւակների արբունք հասած շրջանում էլ մայրերը այն հայեացքը ունէին, որ կարծես դեռ երեխաներն անմեղ, անարատ իրար գրկած և օրօրոցում պառկած, նիհրած լինէին: Դեռ ոչ ոք նրանց առանձնութեան բարեբախտ ժամերը ոչ խանգարած, ոչ հետամտած և ոչ էլ լրտեսած էր: Պէրայի Մեծ-փողոցի, բուլւարների, այգեստանների մայթերը մաշող՝ զբօսնողները սրանց քոյր և եղբօր տեղ էին ընդունած, որանց անմեղ յարաբերութիւնները, յար ու նման դէմքերը, կազմը բոլոր նկատողները այս համոզումն էին կազմած: Որքան սքանչացման առիթ էին ներշնչած զոյկերը իրենց առոյգ կազմուածով, բարձր հասակով, քնքոյշ դէմքով, վայելուչ հագուստով նորանց դիտող աչքերին: Որքան երանութեան էին արժանացել Անթառամն ու Ագնիւը այսպիսի զոյգ աշխարհ բերելու համար և որքան սրտեր էին բորբոքած դէպի համանման ագնիւն ու գեղեցիկը ձգտելու:

Զոյկերի մանկական ու պատանական սիրուն փոխարինել էր մի աւելի ջերմ սէր, սերտ համակրանք, առանց որևէ արուեստակութեան: Բնութիւնը զգացել էր այն, ինչ որ նրա սովորական օրէնքներն էին պահանջել և զարմիկներն, արդէն վերջին երեք տարուա ընթացքում, առանց թագցնելու և ծածկելու զգացումները, իրար արտայայտել, բացատրել էին և առանց տատանուելու գարձեալ մանկական անմեղութեամբ ու անարատութեամբ շարունակել էին իրենց սէրը, անձնատուր էին եղել սիրո սրընթաց գետի ահեղաշունչ հոսանքին, առանց երևակայելու, որ մի օր, մի ժամ կարող էր մռնչելով գետը տանել նրանց բաղխել մի ապառաժի, փշրել, թոթափել, ընկղմել գետի ու ծո-

վի խորքերը, ձկներին կեր դարձնել, հետքերը ջնջել։

Նրանք հակաբնական ոչ մի արդելք չէին կարող դնել այն բուռն սերին, որ իրենց ամբողջապես համակել էր, մարդկային օրէնքների և ոչ մի կէտը չէր կարող նրանց զգայումները ընդհատել, շեղել, փոխել, նրանք առանց այդ փոխադարձ համակրանքին կարող էին անզգայանալ, նեխիլ ու փթիլ։ Զոյկի մեկ յանցանք կարծածն այն էր, որ իրենց վերջին զգայումը ծածկել էին իրենց շրջապատողներից, ծնողներից, նրանցից ոչ մեկը չէր յանդգնում սրտի խորքերում կուտակուած այդ չերմութիւնը, զեղուած հաճոյքը և քաղցրութիւնը՝ բացի երբերից, ուրիշի, նոյն իսկ իրենց մօրը պարզել, սոսկալով այդ յայտնութիւնից, կամ նրա հետեւանքից։

Զոյկին սարսափեցնում էր մի նոր հարց ևս, Իդէասը աշնանը գնալու էր Պարիզ. շարունակելու իւր նկարչութիւնը։ Ինչպէս պիտի բաժանուէին նրանք, ինչպէս պիտի դիմադրէին մի քանի ձիգ ձիգ տարինեբի անջատման։ Այս մասին շատ էին մտածել երկուսն էլ, հնար չէին գտել։ Անթառամը չուզելով մեկ զաւակից բաժանուել, միջոցներ էր գտել, որ ընկերակցի Իդէասին. իսկ Ա.թէենան երեւակայելով այդ անջատման տառապանքը, առանց բաժանուելու սկսել էր քրքրուիլ, մաշիլ։

Պարտիզի շաքսում քիչ հանգստանալուց յետո, մի գառն հառաչ արձակեց սրտի խորքից Իդէասը և խզելով սիրուհիի ալէծուփ մազի յորձանքը, ասաց.

—Ա.թէենա, ինչ ըրիր, ժամանակ ունեցար ծըբագիրս գործադրելու.

—Մասամբ, բայց ոչ հաստատապէս, ասաց գըլուխը թեքելով Իդէասի ուսին։

—Ինչպէս, ասաց կրկին Իդէասը լարելով բոլոր ուշադրութիւնը։

—Հօրս խնդրեցի, որ քեզ ու մօրուքիս հետ ինձ ալ Պարիզ ուղարկէ, երաժշտութեան դասընթացս շարունակելու և կատարելագործելու։ Նա առանց տատանուելու ասաց, որ ինձ համար վարժուհի և ուսուցիչներ կհրաւիրէ, որ կատարելագործեմ։ Ես թախանձեցի, որ անպատճառ ինձ ուղարկէ ձեզ հետ։ Նա այլևայլ խոստումներ ըրաւ, երբ ես ամէն բան մերժեցի, ասաց.

«—Լաւ, այդ մասին կխորհինք մայրիկիդ հետ։»

Իսկ մայրիկս չի կարող մերժել իմ, քու և մօրքուրի խնդիրը։

IX

ԿԱՍԿԱԾՆԵՐ

Երեկոյան ժամի տասի մօտ տուն եկան Ա.թաբէյն ու Սէթօն, եթէ ոչ հարբած, գոնէ շատ զւարթ։ Կարմրած էին երկուսն էլ, հաւտորական ձայնով և ձևերով սրախօսելով հակաճառում էին։ Պահլեճը արդէն վաղ լուսաւորուած էր, դաշնամուրի ձայնը վաղուց ծա-

ծանուում էր սրահներում, ցնցելով լսող սրտերը։ Սիրահարները Իդէասն ու Աթէնան՝ այնպէս էին ոգեւորուած, երեւակայութեամբ իրենց բաղդի երանութեան այն օդային բարձունքն էին թռչկոտած, որ բոլորովին չսթափւեցին, չլսեցին դռան բացուելը, ներս մտնողների ոտնաձայնը։ Իդէասը թիկնաթոռի մէջ ամփոփուած ուշի ուշով հետեւում էր եղանակին, որի ձայնի արագաթռիչ ծածանումների հետ սաւառնում էր երբեմն դրախտի և երբեմն էլ դժոխքի խորքերում, հրեշտակների կամ դեւերի շրջանում։ Յանկարծ երիտասարդի յոգնած աչքերը բարձունքից ցած իջան, յառեցան Աթէնայի դիմագծերին, որոնք դաշնամուրից արձակուած եղանակների տրամադրութեամբ՝ բաղխիւներից էլ արագ, էլ շտապ փոփոխւում էին, տարբերելով երիտասարդի սրտի բաբախման աստիճաններ։ Աթէնան ինքն իրեն Ապօլոնի աթոռի առաջ երեւակայելով, ամբողջ հոգովը կարծես բոլորովին ջղեր դարձած՝ մատների ծայրերով սահում էր դաշնամուրի ստեղնաշարի վրայից, արձակելով բիւրաւոր ձայների տատանումներ ու եւէջներ, որոնք լսող ականջների սրտերն ու ջղերը սանձում, գրաւում կենտրոնացնում և առաջնորդում էին ապականութեան վայրերից դէպի անապականութեան, սիրո վեհ բարձունքը։

—Աթէնա՛, աղջիկս, ասաց դռնից ներս մտնելու պէս Աթա-բէյը, բայց իսկոյն դաշնակի ձայնը նրան արձանացրեց, չկարողացաւ քայլերը առաջ փոխել։

—Սը՜ս ս՜, մեղմիկ շշնջաց, նրա թեւից բռնելով Սէթօն, մի՛ ընդմիջեր, լսի՛ր, հրաշալի կտոր մ'է Մոցարդի երկնային նուագներից։

Երկու ընկերները կարծես գամւեցան իրենց կանգնած տեղը, քաղցրահնչիւն նուագը նրանց դիւթեց, սթափեցրեց, գինիի ոգին կորցրեց իւր ոյժը, նրանք ամբողջ մարմնով՝ ջիղերով ականջ ու լռութիւն դարձած, անշշունջ լսում էին, հարբում էին եւէջների ներգործութեամբ և ամբողջ նեարդներով ցնցւում, երբ մեղմ ձայներից յետո՝ ահարկու հարւածներով օդն էր թնդացնում Աթէնան իւր մատների արագասահ ոստիւնների բաղխումով։

—Նազենի հրեշտա՛կս, ասաց յանկարծ մօտենալով Աթա բէյը Աթէնային և նրա գլուխը համբուրեց, երբ եղանակի միջնադադարում նա ինքն էլ սուզուած էր քաղցր երեւակայութեան ովկիանը։ Աթէնան վեր թռաւ դաշնամուրի առաջից, որին հետեւեց Իդէասը։ Սէթօն առաջ գալով բարեւեց օրիորդին, երիտասարդին. ձեռքերը թօթւելով և աղերսալի ձայնով խնդրեց.

—Կաղաչեմ, օրիո՛րդ, շնորհ ըրէք, շարունակեցէք ձեր նուագը, որքա՛ն պիտի ինձ բախտաւորացընէք, եթէ բարեհաճիք կրկնել նորից այդ եղանակը։

—Խնդրեմ, աղջի՛կս, կրկնէ, բէ՛ս, բէ՛ս, ծափահարելով թախանձում էր Աթա-բէյն էլ։

—Վաղուց է, հայրի՛կ, շատ վաղուց է, որ կընուագէի։ Արդէն շատ յոգնած թողի։ Դուք շատ պատեհ ժամին եկաք, որով պարտաւորեցա ընդհատել, քիչ հանգստանալ։

—Մի՛ մերժէք, օրիո՛րդ, խնդիրս, կաղերսեմ, եթէ հնարաւոր է կրկնեցէք, ասաց Սէթօն կցկւելով։

—Նուագի՛ր, Աթէնա՛, աղջի՛կս, մի՛ մերժել, երբ

կխնդրեն։ Նազանքը թէև քեզ շատ կվայելէ, բայց խաթերս համար . . .

—Մէկ քանի րոպէ ձեզ՝ սպասեցնելու հաճոյքը տուէք ինձ, թոզէք, որ գոնէ քիչ մատներս հանգստանան .... Աղդէն թմրել են, չեմ կարող շարժել ..... սպասեցէք մի քանի րոպէ։

— Ուրախութեամբ, ուրախութեամբ, յարեց Սէթօն։

—Սիրտ չեն կոտրել, աղջիկս...։

—Մի սնդէք, բէյ, ասաց Սէթօն, թոզ հանգստանա....

Բայց այդ քանի րոպէն չըրացած Ազնիւ խանումը ներս մտաւ, մարդու ասպպրած հիւրի վրխարէն կարմրած Սէթօին նկատելով՝ վրդովուած ասաց տխրադէմ.

—Ընթրիքը պատրաստ է, հրամեցէք ճաշարան։ Ինչի այսքան ուշացար, բէյ, աւելացրեց, խօսքը ամուսնին ուղղելով։

—Ի՞նչի կաճապարես, Ազնիւ, թոզ քիչ հանգստանանք։ Մի վախենալ, ախորժակս գրգռուած է, գալլի նման պիտի յարձակիմ սեղանի վրա լափելու։

—Բայց սովորական ժամը անցեր է, կերակուրները կփչանան, եթէ աւելի ուշանաք.... երեխաները,

—Վնաս չի տալ տիկին, պատասխանեց ընտանեկան շարժումներ կեղծելով Սէթօն, օտար չենք, հիւր չկա,

—Տարակոյս չկա, բայց մէջերս գուցէ քաղցածները կան, որոնք անհամբեր ձեր գալուն կսպասէին...

—Ճշմարիտ է, մայրիկ, քաղցած եմ, Ասաց Աթէնան ոտքի ելնելով։

—Ես ալ, մօրքուր, ասաց Իդէասը, կարծես Աթէնային արձանք տալով։

—Պէտք է հետեւել, հառաչելով ասաց անճրկած Սէթօն Աթաբէլին, մենք մինչև այժմ անոնց ստիպել էինք սպասելու, այժմ ալ անոնք իրաւունք ունին մեզ խոնարհեցնելու իրենց քմհաճոյքին։

Սեղանի վրա գինին աւելի զարթացրեց Սէթօյին, որը խորհրդաւոր խօսքերով ուզում էր միտք արտայայտել Աթէնային։ Օրիորդը անտարբեր չէր եւ լըսում նրա ճոռոմաբանութիւնները և երբեմն երբեմն ակամայ գլուխը թեքելով դրական կամ բացասական նշաններ էր արտայայտում անզգայաբար։ Ընթրիքից երբ վերադարձան դահլիճ, Սէթօն պատեհ առիթ գտնելով, առանձնութեան մէջ մօտեցաւ օրիորդին, ամբողջ մարմնով դողալով ու կակազելով ասաց.

—Կարող եմ համարձակուել, օրիորդ, ձեզ առաջարկ մ՚ընել։

—Ձեզ չեմ հասկնար, պարոն, ասաց զարմացած Աթէնան, ինչ կուզէք։ Այդ հարցին նա վաղ էր սպասում։

—Եթէ ձեզ առաջարկէի սիրտս, հոգիս, ինձ ալ գերի հրատարակէի ....

—Ձէք խոսնիր, չէք ամաչեր՞ պարոն, ասաց վրդովուած Աթէնան, նրա խօսքը կտրելով։ Դուք որ հօրս տարիքն ունիք, դեռ աւել, ինչպէս կյանդգնիք այդպիսի յիմար մտքեր տածել և կհամարձակիք յայտնել ինձ... Մարդիկ մարդիկ անզութ ու եսամոլ մարդ...

—Կաղաչեմ, օրիորդ, ձեր ոտքն ինկած, խնայեցէք, խղճացէք .....։

—Հազար ամօթ ձեզ, որ ընդունակ էք այդ

աստիճան ստորանալով անձնատուր լինել ձեր անզուսպ կրքերին, աղտեղի վավաշանքին, ասաց ձայնը բարձրացնելով, ...

—Դիտացէք, օրիորդ, խղճացէք:

—Լուեցէք, այդ մտքերդ արտայայտելու չհամարձակիք ուրիշ անգամ....: Աւելի լաւ կանէք, որ այս տան շէմքից այլևս ներս չմտնէք, քանի որ ես այստեղ եմ....:

—Ձեր մերժումը, ձեր սպառնալիքը, օրիորդ, ինձ հուսահատութիւն կպատճառէ...:

—Կախուեցէք, ծովն ընկէք, կհովանաք կատէլ ձեր սադայէլական սէրը.... Այդ էր, որ ամբողջ մի տարի է մեղւի նման, մոծակի նման կըզզայիք մեր տան շուրջը, անխիղճ սրիկայ, ասաց զայրալի Ամէնան և դիմեց ննջարան, դուռը խիստ շրխկացնելով, բորբոքած սրտով մեռալատիպ տարածուեց անկողնի վրա:

Այս ձայնի վրա ներս մտաւ Ամթան Իդէասի հետ դահլիճ, որին այլևայլ պատճառներով բաժանել էր Ամէնայից, Սէթօին աղջկան հետ առանձնութեան մէջ թողնելու դիտմամբ: Սէթօն յուսաբէկ ընկել էր բազմոցի անկիւնը և դողում էր ամբողջ մարմնով: Ընկերակցի դէմքի արտայայտութիւնից Ամթան եղելութիւնը ըմբռնել էր: Ամթաբէյը կաշկանդած սկսած գործերի շղթաներով, չէր կարողացել մերժել Սէթօի առաջարկը, ուստի թողել էր աղջկա կամքին: Սէթօն վրատահ իւր խօսքի ներգործութեան վրա, համարձակւել էր Ամէնային թակարդ քաշելու, բայց օրիորդը նախապէս նրա տրամադրութիւնը մի քանի ամսի ընթացքում ուսումնասիրած լինելով, ջախջախել էր հերոսաբար:

Որքան ատելել էր Սէթօն Ամթաբէյին խօսք տալ, վերջինս միշտ մերժել էր, առարկելով որ ինքը փեսա ընտրելու խնդրում չի կարող աղջկա բացարձակ իրաւունքը բռնաբարել: Այս բանաձևը թէև դուր չէր եկել Սէթօյին, որ երազում էր, Այջմեան Թադէոս աղալի հարիւր հազարների հետ խնամանալու, դրանք իւրացնելու համար, կապւել ծերունի կաթւածահարի հրեշտակապէտ թոռի հետ: Վաղ ժամանակից Սէթօն ձգտում էր սիրտը բաց անել Ամէնային, բայց պատեհ ժամ չգտնելով չէր համարձակւում: Այդ օրւա արկածները. դինիի ազդեցութիւնը, Նազմի խոստումները և յաղթանակները նրան խրախուսեցին այս յաղթանակն էլ վաստկելու, բայց սխալւեց, նաւը ապառաժի ընդհարւեց:

Երբ դահլիճ մտնելով Իդէասը չտեսաւ Ամէնային, մի խոժոռ հայեացք արձակեց Սէթօյի վրա, համարձակ սլացաւ, ներս մտաւ այն դռնից, որտեղ մտել էր երկու րոպէ առաջ իր սիրելին: Իդէասի հայեացքը և ներկայութիւնը սարսուռ էր ազդել Սէթօյի սրտին, որը Ամթաբէյի դերդաստանի անդամների հետ բացատրւելու ոյժ չզգալով իւր ջղերում, վեր կացաւ, ընկերակցի թևը մտաւ և միասին տանից դուրս սողացին: Երբ արդէն բաւական հեռացել էին Ամթա բէյի տանից, բոլորովին առանձնութեան մէջ էին, Սէթօն ասաց ընկերոջ ականջում.

—Ձգուշացիր, ես լսել էի, քանի որ չէի տեսել, չէի կարող հաւատալ և քեզ էլ չէի յայտնել, Իդէասը Ամէնային սիրով կտոչորի: Երկու քրոջ զաւակները... այնպիսի խայտառակութիւն է, որ թուրքանան աւելի

նախապատիւ է... Հասկցաք, անուն, պատիւ, դիր-քըդ, բոլորը կկորցնես։ Այնպիսի արատ է, որ անջնջելի է, մենք հայ ենք... հայ ծնել, հայ ալ պիտի մեռնինք... Լաւած ու տեսնւած բան է...։ Երկու քրոջ զաւակները... Ես որ այս ցանկութիւնս քեզ առաջարկեցի երեք-չորս ամիս առաջ, դու — համոզւած ես, որ ես ցմահ բարեկամդ եմ—, այս բոլորի հոտն առած էի և չէի կամենար արատաւորել բարեկամիս անունը։ Իմ նպատակս քեզ խայտառակութիւնից ազատելն էր։ Ինձ աղջիկ պակաս չէ. ես որ կարգւել ուզենայի, վաղուց աղջիկ կկարողանայի գտնել։ Ինչի՛ զգացումներս թագցնեմ, ծածկեմ, Ամէնային կպաշտեմ, բայց աւելի ևս ընկերոջս անունը, պատիւը... Դու դեռ շատ ուշ պիտի ծանօթանաս և ճանաչես սրտացաւ բարեկամիդ։

—Ոսկալի է, սարսափելի է յայտնութիւնդ.

—Ես չեմ ուրանալ, որ գեղանի է աղջիկդ. հրաշալի տաղանդ ունի, գրաւիչ է իր ամբողջութեամբ։ Ես մեծ բաղտ կհամարիմ այդ արժանիքին հասնելս, բայց ևս առաւել ձեր անունը, ձեր տոհմի պատիւը... Վրադ պիտի խնդա եղբայրդ, թէ աղջկանդ չկարողացար զսպել...

—Ե՛ս. իմ անունս, պատիւս... ասաց կցկտուր կերպով Ամաքէլը։

—Զգուշացէք, ամէն մէջոց գործ դրէք, Ամէնային հպատակեցնելու և Իդէասին Կ. Պոլսից հեռացնելու։ Գոնէ ձեր տունը երբէք չթողնելու։

—Դիշերս, այս դիշեր իսկ պէտք է սկսել...

—Խոհեմ գործեցէք, խիստ վարմունքը մարդու ծայրահեղ ձեռնարկները կհասցնէ։ Մեղմութեամբ և խոհեմութեամբ...

—Դառնամ, ես վերադառնամ տուն.... ասաց Ամաքէլը մտածել կեղծելով։

—Ապահովութեան համար վտանգից զգուշանալու է։

Բաժանուեցին ընկերները, Ամաքէլը տուն դարձաւ, Սէթօն դէպի Թագսիմ։ Զորս քայլ առաջ չըգնացած Սէթօն ետ դարձաւ և ասաց·

—Ես վստահ եմ, որ դու ոչ միայն ինձ չպիտի խայտառակես, այլ պիտի բաղտաւորացնես,....

—Կասկած չունենաս, ես բոլոր ոյժս դրած եմ քո տրամադրութեան տակ և պիտի գործադրեմ կամքս։ Գնա՛ բանդ։

—Աղնիւ խօսք կտա՛ս։

—Ամէն կերպ պիտի աշխատիմ, բայց վերջին խօսքը Ամէնային է։ Վստահ եղիր, որ նա կընկճւի և անձնատուր կլլա։

Սէթօն ոլոր մոլոր քիչ առաջ գնալուց յետո, կառք պահանջեց և սլացաւ տուն։ Իսկ Ամաքէլը չէր կմանում, ինչ միջոցի դիմել, թէ աղջկան փրկելու և թէ Սէթօյի դարանից ազատւելու։ Ամաքէլը ընկել էր երկու կրակի մէջ, ո՛չ Սէթօյից կարող էր ձեռ վերցնել, ո՛չ աղջկան այդ հրեշին տալ։ Եթէ Սէթօյից հեռանար, Նազմ-բէյի դրդմամբ պահանջատէրները հաւաքելու, ունեցած-չունեցածը զրաւելուց յետո, իրեն էլ բանտի խոնաւ նկուղներում տանջելու էին։ Ո՛չ միայն մենակ ինքը, այլ կինը, սիրասուն Ամէնան, իր բոլոր զաւակները թշւառանալու, աղքատութեան

գիրկն էին մտնելու և յաւիտեան բանւորական կեանքով, ուրիշի դռան օրավարձով ծառայելով անցկացնելու էին իրենց կեանքը։ Ո՛չ կինը, ո՛չ աղջիկը և ո՛չ էլ փոքրերը այդ կեանքի-բանւորի վիճակի համար չէին պատրաստւած, ո՛չ մի զէնք չունէին, ո՛չ մի գործի՝ ապրուստ հայթայթելու համար։ Անչափ մռայլ գոյնով ներկայացաւ Աթային այդ զարհուրելի ապագան, իւր քստմնելի տեսարաններով... Քաղցը, կարիքը, իր փայփայւմով մեծացրածներին՝ քշել, մղել էր դէպի դժոխային կեանքը....

Այս տեսարանները մի առժամանակ այնպէս ընկճեցին Աթա-բէյին, որ նա մտքում վճռեց զոհել Աթէնային, զոհել իւր անդրանիկ աղջկան, իւր պաշտելի էակին, գցել գազանի՝ Սէթօյի ճիրանները, որպէսզի փրկէ կնոջը, զաւակներին, տունը, պատիւը և իւր գլուխը։ Մի ընտանիքի, մի խումբ կեանքի փրկութեան համար, նա նախապատիւ համարեց զոհել իր Աթէնային.. Տանել ամբողջ կեանքում այդ ներքին տանջանքը, կռւել խղճի հետ, մարտնչել զգացումների հետ, զոհել անմեղ ու քնքոյշ աղջկան՝ տունը, ընտանիքը, զաւակները և պատիւը պահպանելու համար։ Բայց խղճի ձայնը անվերջ կրկնում էր նրա ուղեղում.—Մի՞թէ Աթէնան նրա զաւակը չէ՞, մի՞թէ Աթէնան նրա աւելի քիչ է սիրում Ազնիւից, Միլտոնից, Կոլխպսէից ու Տէլէմաքից։ Ո՛չ, նա զոհում է Աթէնային, որ իւր գլուխը պահպանի, իւր կրքերին ազատ ասպարէզ բաց անի և շւայտութիւնները շարունակէ։ Կամ թէ ի՞նչն էր իրեն կապում Սէթօի հետ, ինչի՞ց ստիպւած ընկել էր Սէթօյի ճիրաններում, ինչի՞ էր ընկել դաժան պահանջատէրների ծուղակը, ո՞րտեղ էր փչացրել այն ահաւոր կարողութիւնը, որը սպառելուց յետոյ, այդպիսի մեծ պարտքերի տակ տանջւում էր...։ Ո՛չ, նա ուզում էր զոհել աղջկան, որպէսզի սորա շնորհիւ Սէթօյի հետ կարողանա կողոպտել հօրը, եղբօրը և շարունակել իրենց զեխ և անբարոյական կեանքը...։

Այս մտքերով բորբոքւած նա քայլերը շարունակեց Մեծ-փողոցով դէպի Թագսիմ, մեքենաբար հետեւելով Սէթօյին, որ իր սովորութեան համաձայն արընթաց կառքով արդէն վաղ հեռացել էր։ Փողոցը թէև ամայի չէր, բայց այնչափ նոսր էր անց ու դարձը։ Աթայի քայլերը հարբածի ընթացքին այնքան նման էին, որ անցորդները ակամա հայեացքները ուղղում էին, նրան զննում և ապա շարունակում իրենց ճանապարհը։ Մտատանջութիւնը այնքան խիստ էր, յուզումները այնքան բուռն էին, երևակայութիւնը այնպիսի դաժան պատկերներով էր գրաւած, որ Աթան անդանար ձեռքերով, ոտքերով, ուսերով, թեւերով ու գլխով շարժումներ էր անում և անընդհատ մռմնջում, դէլլին էր տալիս։

Յանկարծ Թագսիմի զօրանոցից լսւած փողի, կէս գիշերային յայտարարութեան աղմուկները նրան սթափեցրին և նա ուշքը կիսով չափ հաւաքած ետ դարձաւ, քայլերը տան կողմը ուղղեց։ Երբ հասաւ հօր ապարանքի առաջ, նա խելակորոյս կանգնեց և ձեռքերը վեր ուղղելով մռմնջաց։

—Ինչի՞, պատճառն ի՞նչ է, որ հօրս այս ահաւոր ապարանքը Տիրանին մնա, իսկ պահանջատէրներս

ինձ իմ տնէս ալ դուրս դցեն, ես քաջի նման զաւակներս կուռտալների պէս բերանս առնեմ և թաղէ թաղ թափառիմ։ Ես, սև փողի կարօտ մնամ, իսկ եղբայրս հազարներ շռայլէ և ինձ ալ ողորմութիւն տա։ Ի՞նչ մեծ բան է եղել, որ հօրս գոյքէն ես շռայած եմ եղել։ Միթէ՞ Տիրանը չէ շռայլել և չէ շռայլելու հօրը մահէն վերջը։ Կամ թէ հօրս ինչ, միթէ՞ նա է վաստկել այս ահաւոր հարստութիւնը։ Ուղիղ է, սպասէս ժառանգութիւն չէ ստացել, մայրս օժիտ չէ բերել, բայց հայրս իրեն թևերով ու ձեռքերուվ մէկ միլիոն ոսկի լիսուն տարւան մէջ չէր կարող վաստկել։ Բաղտ է, դարձւածն է բերել, դիզել է։ Քանի որ այս փողը կուտակելու համար գուցէ ես աւելի շատ եմ աշխատել, քան թէ եղբայրս, նոյն իսկ հայրս, այս գումարը դիզելու համար կարիք չէ եղել ինչպէս. ոչ իմ ջանքիս, նոյնպէս հօրս ու եղբօրս ջանքին, հայրս ու եղբայրս ինչի՞ կոչնին ինձ զրկել... Ինչի՞ Տիրանը հնարաւորութիւն ունենա այս ահաւոր գանձը իւր քմքին, կրքերին ու ցանկութիւններին ծառայեցնել, ինձ զրկելով, իսկ ես յուսահատութեան այն կէտին հասնեմ, որ իմ ձեռովս, իմ անմեղ և հրեշտակատիպ աղջիկս զոհեմ, յանձնեմ Սէթօլին նման հրէշի ժանիքներին... Ո՜չ, կամ միասին պիտի վայելենք, կամ ոչ մեկս, Տիրան...։

X

ԱՐՋԻ ԹԱԹԸ

Իդէասը խանդակաթ սիրով պաշտում էր Ամէնալին։ Երիտասարդ սիրահարի խանդոտ աչքերը Սէթօլի Ամէնալի վրա ուղղած ճիւաղական ակնակնեըը վաղուց նշմարել էին, իսկ այդ երեկոյան սեղանի վրա հաղիւ կարողացել էր կրքերը զսպել։ Երբ Իդէասը խոժոռ հայեացքով Ամալին ու Սէթօլին չափելուց յետո մտաւ ննջարան և Ամէնալին մեռելատիպ նըւաղած դտաւ մահճակալի վրա տարածւած, աչքերը մթնեցին, գլուխն սկսեց պտոյտ գալ, այնպէս որ չէր կարողանում ո՛չ տեսնել, ո՛չ լսել և ո՛չ իսկ դատել։ Նա փառեցաւ Ամէնալին, գրկեց բարձրացրեց, ձայն, տւեց, բայց թշւառ օրիորդը բորբոքումից նւաղել, ուշքը կորցրել, չէր զգում և չէր սթափւում։ Այս տեսարանը այնպէս ընկճեց թշւառ երիտասարդին, որ քիչ էր մնում նա էլ ուշաթափւի։ Ուզում էր խօսել, լեզուն բռնւել էր, ուզում էր աղաղակ բարձրացնել, մօրքոյրին կանչել, ձայնը կոկորդից չէր դուրս գալիս, ուզում էր գրկած զոհը վերցնել, տանել մօրքրոջ նըն-

ջարանը, ծնկները դողում էին, թևերը թուլացել, սրտի սոսկալի յուզումից երանին կրակ կպել, այրում էր։ Երկար տատանումներից և յույզերից յետո, ույժն ամփոփւած մոլեգնաբար կանչեց...

—Մօրքո՛ւր, մօրքո՛ւր, մօրքո՛ւր...

Բայց այդ ձայնը փակ դռներից հեռւից հեռու սենեակները չէր կարող հասնել, պատասխան տւող չեղաւ։ Ագնիւը մանկանոցի խորքերն էր քաշւել, երեխաներին քնցնելու, Աթաբէյը Սէթօյի հետ դուրս էին գնացել, ծառա, աղախին խոհանոցում ու սեղանատանը ուրախ զւարթ ընթրում էին, կամ աման-չաման մաքրում։ Առանց մահճակալից հեռանալու, առանց բեռը ձեռքից վար դնելու յուսահատական ճիչով կրկին ձայն տւեց Իդէասը.—«Մօրքո՛ւր, մօրքուր, մօրքուր.»—Բայց զուր նրան օգնութեան չհասան։

Համբերութիւնը հատած, ուժն սպառած վերջին ճիգը թափեց երիտասարդը, գրկեց իւր անգին բեռը, տեղաւորեց նորան ձախ ծնկի վրա, տարածելով ձախ թևին, աջովը քանդեց ու բացեց սիրուհու կրծքի ու վզի կոճակները, բաճկոնակները, բաց օդին տւեց նորա փղոսկրի նման փայլուն, ողորկ ու սպիտակ վիզն ու կուրծքը։ Դարանի վրայից վերցրեց *գրաֆինը*, սառը ջուր սրսկեց Աթէնայի դէմքին ու, մերկ երանին և թաց ձեռքով տրորեց ճակատը, գլուխը և քունքերը։ Այնքան առատ ջրեց, որ օրիորդի հագուստը ամբողջապէս թրջւեց և նա ցրտից սարսռաց, ցնցւեց, բացեց աչքերն, հառաչեց ու ասաց.—Իդէա՛ս...

—Աթէնա՛, հոգեակս, սթափւի՛ր, ես եմ, խօսի՛ր, աչքերդ մէյմնալ բաց, նայի՛ր ինձ, ես եմ, սթափւի՛ր,

ինձ մի տանջի՛ր... մի՛ վրդովւել, հանգստացի՛ր...

Աթէնան դանդաղութեամբ աչքերը կրկին բացեց, զննեց ոտից մինչ գլուխ, տնդղեց, չափեց Իդէասին, և կարծես ակամա ուժ արաւ նրա գրկից ցած գալու։ Իդէասը զգուշութեամբ նորան նստացրեց մահճակալի վրա և քնքշաբար գլուխը գրկելով կրկնակի համբոյր դրոշմեց և ասաց.

—Սթափւի՛ր, հոգեա՛կ, ուշքի եկ, բան չկա, մարդ չկա, ես եմ, բա՛ց աչքերդ...

—Պուտ մը ջուր տուր, թոթովեց աչքերը կրկին փակելով Աթէնան։ Երբ Իդէասի ներկայացրած բաժակի ջուրը սուտ պուտ խմեց, տարածւեց թիկունքի վրա, աչքերի ներքին բիբերը առաստաղի կողմն ուղղելով, կարծես հայեացքը երկին բևեռելով մրմնջաց.

—Այս ալ վիճակւած էր, ա՛նգութ հա՛յր, մոլութիւններդ մի՛նչ աստ մեզ պիտի մղէին,... Առանց դէրքը փոխելու Աթէնան շրթունքները անձայն շարժում էր, կարծես շարունակում էր իւր բողոքը։ Իդէասը ոլոր-մոլոր շւար կանգնած լսում ու դիտում էր նորա ամէն մի ծպտիւնն ու շարժումը, դիմագծերը տատանումները։ Բռնեց երկու ձեռքերը իւր ափերի մէջ, թեքւեց, նորա աչքերի մէջ ուղղելով իւր հայեացքը ասաց.

—Աթէնա՛, Աթէնա՛, զգաստացի՛ր, քիչ ալ խօսի՛ր, քեզ ի՞նչ պատահեց.

—Դեռևս չէ՞ չքւել այն ճիւաղը...

—Ո՛չ, ո՛չ, մարդ չկա, բոլորն ալ դուրս ելան։

—Նա՞ ալ, որ հայր Աբրահամի նման ինձ

զոհել կմտածէ... ինձմով պիտի յաղթանակէ՝ Ադամեմնոնի նման։

— Գնացեր են, չկան, ասաց Իդէասը առանց դիրքը փոխելու։ Երբ արդէն բաւական լրջացաւ, երբ բնական գոյնը, ջղերի շարժումները կանոնաւորուեցան, Աթէնան սկսեց հանգիստ շնչել, Իդէասը հարցրեց.

— Ըսա, Հոգիս, ըսա, կաղաչեմ, ամէն բան, ամէն ինչ, այդ ինչ պատահեց։

— Վիժոխքի մոխրաթափը վերջապէս կատուները ցոյց տուեց և տարիներէ իվեր որոճացածը համարձակուեց շրթունքներից դուրս թափել։ Նա ինձ առաջարկեց սիրտն ու հոգին՝ ժանիքների և ճիրանների հետ։

— Եւ դու, փոխանակ անոր ծաղրելու, քեզ կըտանջես, ինձ կհալեցնես, կդոլորշիացնես։ Այդ ինչ նորութիւն է, մինչ դու չգիտէիր, որ հրեշը անուրջքի մէջ կտապկի, իսկ այդ ցնորքները քեզ ինչի ահաբեկեցին, ինչի այսքան յուզուեցիր և յուզեցիր։

— Իդէաս, ախ Հոգիս, մինչ հազար անգամ դու ինձ չես բացատրել, թէ ան ինչ ներքնագործն է։ Մինչ չգիտես, թէ ան ինչպիսի որոգայթներով ամփոփել է իւր բոի մէջ հօրս սիրտը, ջղերը, ինչպէս անոր տանձել, մղել է ապականութեան և ոճիրներուն անդունդը։ Մինչ այս գիշեր ենթադրութիւն էր, կասկածներ էր, բայց արդէն պատռուեց վարագոյրը։ Ան այսպիսի խաչտառակութեան չի համբերել, այս ստորութեան չի դիմանալ և իր նենգաւոր դարաններով ինչ թակարդի մէջ չէ կարող մեզ գլորել...։

— Այդ բոլորի մասին կարծեմ հաւասարակշռի

գաղափար ունինք, ես ալ այնքան քննած, ուսումնասիրած եմ այդ ճիւաղը, որ շատ բան ես եմ քեզ սորզած.....։ Բայց երկիւղիդ պատճառն ինչ է, սարսափդ և ահաբեկումդ ինչից առաջացաւ։

— Այժմ ըմբռնեցի հօրս կղկղուր խօսքերի, խուսափող պատասխանների իմաստը ...։ Հայրս կաշկանդած է, պարտաւէրները, Նաղմը, քրէհական տեսանը ընկճած են անոր,....։ Գուցէ հայրս իսկ թէ-լադրած էր հրեշին այս համարձակ քայլն ընելու։ Այդ անզգամը չէր համարձակուել, եթէ հայրս մասամբ անոր կամակից չլներ։ Ա՜խ, Իդէա՛ս, ես ինչ ընեմ։

— Այն, ինչ որ բանականութիւնդ կթելադրէ։ Ընենք, ինչոր պարտաճանաչութիւնը և առաքինութիւնը մեզ կսադրէ։

— Ես հաւատացած եմ, որ Տիրան բեյլին մատնողները, քեզ ալ կարող են թունաւորել ճանկը դցել, Իդէա՛ս, քեզ ալ տապալել, քեզ ալ զոհել, որպէսզի բարձրանան իրենց երևակայած ոսկէ հորմի անդրիին մօտ, բազմեն միլիոնների գահոյքին։ Գլուխներս փրկելու միջոցը խորհելու է, Սէթօն այս գիշերուան գործը վաղուան չի թողուր, երեւի արդէն հեռատեսութեամբ իւր ծրագիրը կազմած էր, գնաց գործադրելու։ Այժմ թեթև կասկած մը յարուցանելով շատ դիւրին է ինձ նման և քեզ նման թոյլ արարածներին այնպէս տապալել, որ յաւիտեան ալ անդունդէն չկարողանան ետ դառնալ։ Ի՜նչ դժուար է Սէթօի համար քեզ նման երիտասարդի մը գլորել տալ Նաղմի դժոխային որջերից մէկը, աքսոր ղրկել. կամ ձկնելին սպահ տալ։

— Ամէնից կարճ ու ապահով ճանապարհը՝ փախչիլ Պարիզ և ամէն վտանգից ազատուիլ:

— Ե՞թէ վագոնի մէջ կալանաւորեն, ե՞թէ նաւակի մէջ ձերբակալեն, ինչպէս ձերբակալեցին Հօրեղբօրս՝ Տիրանին, այն ժամանակ, ասաց Հայեացքը Իդէասի աչքերի մէջ ուղղելով մատաղահաս օրիորդը:

— Ես կգնամ, եղելութիւնը կպարզեմ մեր կոնսուլին, եթէ կարիքն ստիպէ քեզ ալ հետս կտանեմ....

— Այդ տեղէն յոյս չկայ, ասաց խօսքը կտրելով Ալթէնան: Տիրան - բէյի նման մելիոնատէր մարդու ճանապարհ չգտան ազատելու, ահա տասն օրէ կտառապի Գալաթասարայի բանտը, ուր մնացինք ես ու դու:

— Ես ալ ուրիշ հնար չեմ գտներ, կամ Պարիզ, կամ կոնսուլատ...: Իսկ դու ինչ միտք ունիս, ինչ կըխորհիս:

— Կխորհեմ, թէ արջը թաթը պարզել է, խրել է վիզս, իսկ դու ինձ ինչպէս ես ազատելու:

— Ո՛չ թէ արջ, այլ եթէ վագր լինէր, ինձ լինէր, առիւծ լինէր, ես պատրաստ էի ճակատ առ ճակատ կռւել, կամ քեզ ազատել, կամ քեզ հետ զոհուել, իսկ նենգամիտ ճիւաղի հետ, որը դարաններով կգործէ, իհարկին կաներևոյթանա, ինչ կարող եմ անել: Դարը ազնիւ դար չէ, փախչել և ճողոպրել սոսկ ճիրաններէն, Ալթէնա, գնա, հաւաքիր արդ ու զարդ, ինչոր ունիս, ինչքան որ կարող ես, խնդրիր մօրքուրից և անոր աջակցութեամբ գնանք երկաթուղու կայարանն ու փախչինք....

— Յետո՞, հայրս անոր կխաչէ, Իդէաս, մանաւանդ որ ան ալ....

— Ան պատրաստէ խաչելու մեզ փրկելու համար, բայց պէտք է անոր պարզել պարագաները....:

— Ան այնպէս նախապաշարուածն է, որ երբէք չի զիջանիլ մեզ օգնել, եթէ պարզուի մեր սէրը....:

— Որքան ժամանակ է, քեզ խնդրեցի, խօսեցա, չկարողացա համոզել... Պէտք էր վաղ անոր յայտնել ամէն բան, ասաց վրդովուած Իդէասը:

— Յայտնէիր, ինչի մինչև օրս չհամարձակեցար երկու խօսք անգամ անոր խօսել, լոկ միասին Պարիզ դնալու և դաշնամուրի կուրսը շարունակելու համար: Գուցէ ան մեզ օգնէր, եթէ մէջտեղ սէրի խնդիր չըլնէր....: Սէթօն այնպէս խայթուած, վէրաւոր հեռացաւ, որ այս գիշեր ան ամէն բան պարզած պիտի լինի հօրս, որը տուն դառնալով փոթորիկ պիտի բարձրացնէ մօրս և ինձ դէմ: Ըսենք ես չեմ վախենար, բայց թշուառ մայրս ո՞րքան պիտի տառապի:

— Ուղիղ որ արջի ճիրանների մէջն ենք մնացել և այս թաթից ազատուելիք չունինք, ասաց գլխակոր Իդէասը և մի քիչ լռելուց յետո յարեց. — Մի՛ ընկճուիր, Ալթէնա, մի՛ հառաչեր, մենք կփրկուինք: Ինչ մենք մեր դեսպանի կնոջը: Կյիշես, նա ինձ մրցանակաբաշխութեան օրը ինչ ասաց. — « Իդէա, դուներս քեզ համար բաց է, երբ որ կամենաս, կարող ես դիմել և քո բոլոր ցանկութիւնները կկատարուին: » Ես անմիջապէս կդիմեմ անոր բնակարանը, դուրս չեմ գալ, մինչև չապահովէ երկուսիս բաղդն ու վիճակը: Այն՝ ինչոր չկարողացաւ անել դեսպանը Տիրանի համար, դեսպանուհին կկատարէ մեզ համար:

— Ո՛չ, ո՛չ, այդ տեղերէն յոյս կտրուած է:

Մեզ կարող է փրկել միմիայն մամս, որն լինձ ամենամեծ կսիրէ է, օրիորդ Բէատրիչէին, որ մեզ նման կոտուա-ոլի և կաթուածահար ոլասլա, որ մեզմէն չավ կատէ Սէթօլին։ Ես հաւատացած եմ, որ եթէ ոլասլս համոզ-ւի, թէ հայրս համամիտ է լինձ Սէթօլին տալու, նա ամէնն միջոցի կդիմէ, որ խափանէ և լինձ փրկէ այդ արջի ճիրանից։

— Փորձենք, Ամէնա, դու դիմիր մամիդ, ոլա-ոլիդ ու Բէատրիչէին, իսկ ես դեսլանուհուն։ Ոլա-հովուհեան համար վտանգների դէմ զինուելու, միջոց-ների դիմելու ենք, մինչև որ փոթորիկը դադարի։

— Իսկ ալեկոծութիւնը դեռ նոր է սկսել, փոթորիկը այդքան արագ դժուար թէ դադարի։

— Գիշեր է, ես գնամ, մայրս լինձ կսլասէ։ Դու լաւ մտածիր, Բէատրիկ, հոգիս, լաւ մը խորհէ, առաւօտ վաղ կգամ և կդործադրենք...

— Ինչի՞ կշտապիս, Իդա, սլասէ, լինձ ինչ խորհուրդ կտաս։

— Կէս գիշերն արդէն մօտ է, խեղճ է մայրս։

— Մխթէ, ինչ արագ կահի ժամանակը։ Բայց առաւօտ կանուխ չեզ կսլասեմ։

— Անտարակոյս, զարթնելուս պէս հոս կթռչիմ։ գիշեր բարի....։

— Շտապիր, թող հայրս քեզ չտեսնի։ Թող փո-թորիկը իմ գլխուս թափէ։

Իդէասը հազիւ լիսուն քայլ հեռացած էր տա-նից, երբ տուն վերադարձաւ Ամթա - բէյը։ Նա մռըն-չում էր, մշմշում, աչքերը լեցւել էին, կարմիր կակաչ դարձել, դէմքը այրուում էր չիկացած երկաթի նման,

քրտինքը շարւել էր ճակատին, հոսում էր քունքերից՝ շոգեկաթսայից ծորած գոլորշու նման։ Նա բորբոքած դիմեց Ազնիւի ննջարանը և նորա թևից բռնելով դուրս հանեց, տարաւ իր կաբինէտը,—«Բան ունիմ, երթանք, բան եմ խօսելու» մրմնջալով։

— Հոգիդ սիրես, լինձ հանգիստ թող, Ամթա, թող քիչ մը դադարիմ։ Ո՞ւր կգչես լինձ, այստեղ ըսա խօսքդ.

— Գաղտուկ բան ունիմ, առաջ քալէ առաջ գնա, ասելով, հրմշտելով ներս մտցրեց կնոջը իւր ա-ռանձնասենեակը։

— Սա դուռը վրա դնենք, շատ աստեղ նստէ, քեզ խօսելիք ունիմ, կնիկ, ասաց սենեակի դռան փա-կը ամրացնելով։ Յոգնած ինքն էլ նստեց իր թիկնա-թոռին և աչքը շուրջը դարձնելուց յետո, ասաց լըր-ջութիւն ձևացնելով.

— Ազնիւ, դու ալ մայր ես, դու ալ կնիկ ես, աղջիկ ես մեծցուցիր, աս ինչ խաղ կխաղաք իմ գըլ-խուս մայր ու աղջիկ։ Կուզէք, որ երթամ ծովն ընկ-նիմ, ալատուհանէն ինձ բակը գլորեմ, գլուխս պատ-ռեմ ազատիք,.... Այս ինչ օրը դուք ինձ թողիք, ա-նամօթներ, անխիղճներ..

— Մարդ Աստծո՛, ինչ ես իմացեր, ինչ խաղ է, այդ ինչ զրպարտութիւններ են... Ո՛վ է նորէն փորդ օձեր լցեր, քեզ վեր է վարել։ Լափեց, պատռեց, հե-րիք չէր, կերած - խմածի փոխարէն՝ տարաւ ճիւաղներ լցրեց սիրտդ, ետ դարձրեց.

— Ինչո՞ւ կխօսիս, Ազնիւ, ես տղա՞ եմ, ու-րիշի խօսքով նստիմ, կանգնիմ.. Թէ դու աչք չունիս,

հրջահոյեաց չէս, մինթէ կուզես, որ ես ալ քեզ պէս կուրանամ։ Թէ նպատակով մայր ու աղջիկ խորհուրդ էք դրել, որ ինձ կուրացնէք։ Այդ իմ բանիս չի գալ, ես աչք ունիմ, կտեսնեմ, ականջներս երբէք բուրդ ու բամբակ չեմ խրել, պնչներս էլ բաց է, ամէն հոտ իսկոյն քթիս կկպչի։ Աղնիւ, ինձ մի կուրացնել, մի ջանալ ինձ խաբել, այդ ի՞նչ խաղ են սարքել Իգէասն ու Աթէնան, այս ի՞նչ խայտառակութիւն բերին իմ գլխուս։ Ամբողջ քաղաքին բամբասանքի ծամոն դարձանք....

— Ա՜յ մարդ, ի՞նչ կըսես, խելքդ գլո՞ւխդ է,

— Գնա՛ բանդ, ես խելառ չեմ, կոյր ալ չեմ։ Թէ դու կոյր ես, չեմ գիտեր։ Բայց ամբողջ քաղաք անոնց խայտառակութեան վրա կխօսի։ Երկու քրոջ տղա.... Սիրահարուե՜լ.... Այ մարդը կորեցաւ աշխարհի երեսին, որ գնաց մօրքուրի լակոտի օձիքին կպաւ, որ ինձ խաղք ու խայտառակ ընէ.... Երկու քրոջ որդի.... Այս որքա՛ն ես լիմարացայ, որ այնքան տարի թողի, որ կրակը վառօդին մօտենա.

—Հոգիդ սիրես, թո՛ղ, զուր խօսքերով ո՛չ յուզուիր, ո՛չ ալ ինձ տանջիր։ Նախանձոտ սրտի կասկածներ։ Խեղճերի սիրտը մի կոտրիլ, մի կրակ գցել, բռնկցնել։ Ես հաւատացած եմ, գլխովս գրաւ կդամ, որ երբէք անոնց սրտէն այդպէս բան անցած ալ չէ։ Անտեղի զրպարտութիւններով մի պղտորիլ անոնց հոգին, այնտեղ տանջանք ու յոյզեր մի սփռել։

—Վրաս դրէ.... կնիկ, մի քնիր, ի՞նչ խոր քնով ես անցել։ Խե՜ղճ ողորմելի, բանը բանէն անցել է, դու տեղեկութիւն անգամ չունիս։ Ողջ Բէյ-օղլին

անոնց սիրահարութեան մասին խաղեր ու տաղեր կը կլկլացնէ, դու անմեղ ձեւացիր և անոնց միամիտ աղաւնի ներկայացուր։

—Ես երկուսին ալ լաւ կճանչնամ, կաթ կերած օրէն մինչև օրս ինձմէ գաղտուկ բան պահած չունին, եթէ լինէր, վաղուց Իգէասն ինձ խոստովանել էր..

—Դու ոչխար ես, Աղնիւ, դու մի կարծեր, որ ինձ ալ կարող ես խոյ դարձնել։ Այս խայտառակութեան առաջն առնելու է, թէ չէ Պոլսից փախչելու ենք։ Մօրքուրի՛ զաւակներ իրար վրա սիրահարե՛ր են։

—Հոգիդ սիրես, թո՛ղ ուրիշ բան խօսիր։

— Ես վաղը Աթէնան նշանելու եմ, որ բամբասանքից ազատինք։

— Այդ ուրիշ խնդիր է։ Իսկ փեսացուդ ո՞վ է....

— Սէթօն,

— Չես խայնիր, ան քեզնէ տարի մ' մեծ է, մանաւանդ կրակը պիտի գցես....

XI

ՊԵՏՔ Է ԱՊԱՀՈՎԵԼ

Օրիորդ Բէատրիչէն Թադէոս աղայի տնօրինութեան համաձայն իր անձնական բոլոր իրերը տեղափոխեց անմիջապէս հօր տանից սկեսրանց տունը։ Ֆրանսիական կոնսուլատին յայտարարեց, համաձայն նոտարական փոխանցական մուրհակների և *Ռեօջիեթի-շէնի*, թէ ինքը, որպէս սեփականատէր Աջէմեանի տանը, կալուածներին և շարժական գոյքերին, այնուհետև բնակւելու էր այնտեղ և նրա հովանաւորութիւնը խնդրեց։ Շէյխ-իւլ-իսլամի դունից, Պէրաի գլխաւոր նոտարից և *Թիջարեթի Աւագրից* (վաճառականութեան վերատեսչից) հաստատուած դոկումէնտները քննելուց, պատշաճաւոր վաւերացումը կատարելուց, արձանագրութիւնները մատեան անցկացնելուց յետոյ, Ֆրանսիական կոնսուլը այդ մասին հարկ եղած կարգադրութիւնները անելով, պաշտօնապէս Թուրքերի արտաքին գործերի մինիստրին զեկուց, թէ Աջէմեանի տունը և կալքը,

որպէս օրիորդ Բէատրիչէ Փառլադիի սեփականութիւն, անցել էր Ֆրանսիական դեսպանատան հովանաւորութեան տակ։ Դեռ կոնսուլատի *կաւասներից* մէկին նշանակեց, որ միշտ պահի Աջէմեանի դռնապանէ սենեակում և կարևոր դէպքերում ոստիկանութեան յայտարարէ, թէ տունը գտնւում է Ֆրանսիական դեսպանատան հովանաւորութեան տակ, թոյլ չտա առանց կոնսուլատի լիազօրի ներկայութեան որևէ ձեռնմխումի, խուզարկութեան կամ բռնութեան ենթարկելու։

Այս պաշտպանութիւնը բաւական չթւաց կաթուածահարին. Բէատրիչէն Թադէոսի խորհրդով հրաւիրեց տուն նրա ծանօթ մի յայտնի իւլէմականի, որը անդամ էր շէյխ իւլ իսլամի բարձր խորհրդին, մեծ ազդեցութիւն ունէր և խորհրդաւոր կապերով յարաբերութեան մէջ էր ներքինապետի հետ։ Այս իւլէմականը, որ կոչւում էր աղա Սադդ, մի շէրիական վճիռ տւեց, որը հաստատեց շէյխ իւլ իսլամը, պալատից յատուկ հրովարտակով վաւերացրեց այդ որոշումը և յանձնեց Բէատրիչէին, որով խալիֆական ֆէրմանով Աջէմեանի բոլոր շարժական և անշարժ գոյքը անցաւ օրիորդ Փառլադիին։ Մոլլա Սադդը իր բարեկամին վերջին ծառայութիւնը մատուցանելու և Տիրանին ազատելու նպատակով, մի օր ներքինապետին բերեց, ներկայացրեց Թադէոս աղա Աջէմեանին, որպէսզի կարևոր բանակցութիւնից յետոյ, ձեռնամուխ լինի երիտասարդին ոստիկանութեան ճիրաններից ազատելու։

Թադէոս աղան Սադունի խանումի հետ իրենց սովորական ընդունարանում ընդունեցին այդ խափշիկին։ Բէհջէթ աղայի բարձր հասակը, թուխ, բայց

վայլուն դէմքը, խոր—խոր աչքերը, տափակ քիթը, դուրս ցցուած կզակը, սպիտակ ու խոշոր ատամները, այնպէս սոսկում ներշնչեցին, որ Բէատրիչէն երկիւղից չհամարձակուեց նրան ներկայանալ, չահել աղջիկը դողդում էր ամբողջ մարմնով։ Սովորական հիւրասիրութիւնները կատարելուց յետո, վերջապէս Բէատրիչէն ամրապնդուած սրտով, Տիրանին մի օր առաջ ազատելու տենչով, թէև սրտատրոփ, բայց առաջ գնաց և հեռուից գլխով կարևոր յարգանքը յայտնելուց յետո, նստեց սկեսրարի և սկեսրոջ մէջ։ Մոլլա Սադգը յայտնեց Բէհջէթ աղային, թէ օրիորդը նրանց հարսնացուն էր և նորա անուանն ստացել էին խալիֆական հրովարտակը՝ Այէմեանի ամբողջ գոյքի մասին։

—Ինշալլա՜հ, ինշալլա՜հ, Տիրան բէյին ազատելով մի երկու օրից ձեզ, տխրութիւնից խլատ կազատեմ, ասաց խավշիկը, ատամները ցոյց տալով, ժպիտ ձևացնելով։

—Ալլահը ձեզ երկար կեանք տա, ասաց Աղաւնի խանումը, շտապեցէք մի օր առաջ տնով տեղով մեզ կոտորածից ազատեցէք։

—Ես խօսք եմ տալիս, իմ խօսքս, իմ կամքս, Սադգ էֆէնդին գիտէ, դուք չէք կարող հասկանալ։ Ինչ որ ես եմ ասում, այն էլ խալիֆն է ասում, իսկ ինչ խալիֆն է ասում, այդ բոլորը նւիրական է իսլամ աշխարհի համար, դուք վստահ եղէք։ Իմ ասածս, խոստացածս կատարւած համարեցէք։

—Այդտեղ կասկած չկայ, ասաց Սադկ աղան, եթէ ես համոզւած չլինէի, ձեզ չէի առաջնորդել բարեկամիս տունը։ Իսկ ես Աղաւնի, Բէատրիչէ խանում-

ների կողմից երաշխաւորում եմ, որ դուք էլ կստանաք խոստացած դրամը, երբ կբերէք ու կյանձնէք այս շէմքից ներս Տիրան բէյին։

—Ինշալլահ, ինշալլահ,... բայց ...։

—Բէատրիչէ խանում, Բէհջէթ աղայի հետ թադէոս աղայի կողմից սակարկեց Աղաւնի խանումը, որ հարիւր հազար լիրա սլիտի վճարեն նրան, երբ խալիֆի յատուկ հրովարտակով Տիրան բէյին տուն վերադարձնէ և ձեզ յանձնէ։ Քանի որ այժմ ամբողջ կայքի տէրը դուք էք, պէտք է մի կերպ ապահովէք Բէհջէթ աղային, որ նա էլ ձեր յոյսով գնա, գործը կարգադրէ։

—Հարիւր հազա՞ր.... ասաց Բէատրիչէն հայեացքը ուղղելով անգամալոյծի աչքերին։

Երբ անգամալոյծը դրական նշան արաւ, Բէատրիչէն ասաց,

—Քանի որ ազատ խօսք տւել է, նրա կամքը սուրբ է մեզ համար։ Բերէք Տիրանին և սպացէք։ Ես խոստանում եմ աղային կամքը անմիջապէս կատարել։

—Այո, բայց մի մուրհակ, թուղթ... կակազեց Մոլլա Սադգը։

—Ես մի խոստմնագիր կարող եմ տալ, ասաց, որ երբ ներկայացնէք այդ գրութիւնս խալիֆի *հրամանի* հետ Տիրանին ազատած, այն ժամանակ պարտաւոր եմ վճարել...։

—Բայց վճարման տեղը.... պէտք է մի երաշխաւորութիւն, ասաց Սադգը...։

—Այս օրլիգացիաներից հազար հատ կսպառեցնեմ, որոնց ամէն մինը հնչուն դրամ է, ոսկի։ Երբ և

որտեղ որ ներկայացնէք, կրէդի Լիօնէլի դրասենեակնեբում, ձեզ կվճարեն ամէն մէկի համար հարիւր լիբա։

—Ֆրանսիական ոսկի, քան ֆրանկնոց, ասաց զննելով մոլլա Սադգը։ Բայց տարբերութիւնը....

—Տարբերութիւնն էլ կաւելացնեմ, ասաց Բէատրիչէն հետևելով սկեսրարի հայեացքներին։

—Բայց լոկ խօսքի վստահել, հարիւր հազարլիրայի համար, դժւար է, ասաց Բէհջէթ աղան։

—Ասացի, որ խոստմնագիր էլ կտամ։ Եթէ կամենում էք, իսկոյն կգրեմ։

—Անհրաժեշտ է, խանում։

—Թուղթ ու թանաքամանը բեր, ասաց Բէատրիչէն աղախնին, որ կանգնած էր կթուաճահարի ոտնակողմը։

—Այժմ ես էլ խոստանում եմ այս դիչերւանից սկսել գործը։

Երբ գրութիւնը վերջացրեց ու յանձնեց Բէհջէթ աղային, մոլլա Սադգը մօտեցաւ օրիորդ Բէատրիչէին և անլսելի կերպով ասաց.

—Այդ տոմսերից մի բան տէք Բէհջէթ աղային, որ տանի փողն ստանայ և վստահ գործին հետամտի։ Ձեմ ասում մեծ դումար, մի բան սոսկ վստահութիւն ներշնչելու համար։

—Ուրբա՛ն, ասաց օրիորդը աչքերը յառելով մոլլա Սադգի հայւածքին։

—Ձեր կամքն է։

—Լաւ, ասաց և կրէդի Լիօնէլի բանկնոտներից հինգ հատ հարիւր լիրանոց առաջադրեց Բէհջէթ աղային ասելով. — Դուք առայժմ այս ձախսեցէք, մինչև....

—Շնորհակալ եմ, պէտք չէ, կակազեց Բէհջէթ աղան դրամը դրպանելով և ոտք ելան հեռացան։

Դեռ դռնից դուրս չեկած ետ դարձաւ Բէհջէթ աղան և կրկնեց.—Դուք ստիպեցէք, որ գոնէ մի անգամ Ֆրանսիական դեսպանը ուսկդրութեան գայ, այս առթիւ երկու խօսք առաջարկէ, մնացածը ես կկարգադրեմ։

—Այսօր անպայման ես դեսպանից կխնդրեմ, նա արդէն դիմել է, ուր որ հարկն է։

Բէատրիչէն առանց դադարելու ամէն օր դիմում էր դեսպանին նրա ատորադրեալներին, որոնք ամէն անգամ թուրքական *փոլիթիկայի* դռներից ստացած սուտերը անփոփոխ յայտնում էին թշւառ օրիորդին, հաւատացնելով որ այսօր վաղը կվերադարձնեն Տիրան բէյին հօր տունը։ Ամեն օր էլ նախորդ օրւա ընթացքում թուրք ոստիկանութեան կողմից յերիւրւած մի անակնկալ դէպքի պատմութիւնը թուխակի նման կրկնելով ներողութիւն էին խնդրում և առաջարկում մի օր ևս սպասել, բայց ոչ օրերն էին հատնում ոչ էլ սպառնալիքները վերջանում, չնայելով որ արդէն վաղ սպառել էր Բէատրիչէի և ծնողների համբերութիւնը։

Դեսպանը հարցապնդումներից յետո վերջապէս իմանալ աղամին ներկայանալու արտօնութիւնն ստացաւ, թէև այս բանը խափանելու շատ աշխատեցին Նազմը ու իւր պալատական արբանեակը՝ աւագ թիկնապահ—Ջէւադ բէյը։ Դեսպանը մեծ գոհունակութեամբ գնաց

խալիֆի մօտ, եթէ ոչ պարտքը կատարելու, գոնէ Բէսարիչէի առաջ կարմրելուց, քրտնելուց և կակազելուց ազատելու համար: Այս այցելութիւնը ոչ միայն Նազմի, Ջէւադի քթին կոպաւ այլ ունչափ նպաստեց ներքինապետին դրծ առաջացնելու, ծրագիրն իրագործելու համար: Թէև դեսպանը առանձին ուղղակի կրօնապետի հետ խօսելու շնորհին էր արժանացել, բայց Ջէւադը կարողացել էր լսել իւր իշխանապետի վերջին խօսքերը.

—Անհոդ եղէք, գործը ես անձամբ եմ քննում, երբ եզրակացութիւնների հասնիմ և ամեն բան պարզւի, ոչ միայն ներողութեան կարժանանա ձեր թևարկեալը, այլ խոստանում եմ նրան անվնաս ձեզ յանձնել:

Այս խօսքերը այնպէս էր խռովել Ջէւադին ու Նազմին, որ նրանք մոլորւել, ինչ ընթացքով իրենց նպատակին հասնելը չէին կարողանում ծրագրել: Ընդհակառակը ներքինապետը Օդալգաների մէկի միջոցով պարզել էր հաւատացեալների իշխանապետին Նազմի և ընկերութեան ծրագիրը, որից այնքան կատածներ էին արձարձւել նրա սրտում, որ Նազմի և Ջէւադի ներկայացրած փաստերը հաւատ չէին ներշնչում:

Այդ օրը, դեսպանի մեկնելուց մի քանի ժամ վերջը երբ Նազմը կարևոր զեկոյցներ տալուց յետո, հրովարտակ խնդրեց, որպէսզի արտակարգ դատաստանական ատեան կազմւի Տիրանին դատելու համար, նրան հրամայեցին թէ դեռ փաստերը չեն ապացուցած Տիրանի դաւաճանութիւնը: Կարևոր է Տիրանի ձեռագրով, կամ ստորագրութեամբ վաւերացուած

կամ կոմիտէներից մէկի զրաւոր գործերով հաստատած դոկումէնտ ներկայացնել, եւրոպացիներին համոզելու և գործի յաջող ընթացքը ապահովելու համար: Երբ արտաքին նրբանցքում ընկերակիցները բաժանւելու էին Նազմն ասաց Ջէւադին.

—Որքան տխմար պիտի լինի մի որևէ յեղափոխական, որ իւր ձեռագրով, ստորագրութիւնով ապացոյց թողնէ գործի ընթացքում, որպէսզի հնարաւոր լինի այդպիսի անհերքելի փաստաթղթով սրանց հաւաստիացել—համոզել: Բէհջէդը խառնում է գործը, պէտք է նրան կախաղան բարձրացնել, ասաց մրունչելով Նազմը ու դուրս գնաց ապարանքից:

—Գնա, Սէֆօյին տես, նա սրա էլ ճարը կարող է տեսնել, խոնդխնդալով ասաց Ջէւադը և ետ դարձաւ:

Ներքինապետը արհամարելով իր ախոյաններին, ոչ այնքան Այէմեաններն խոստացած ոսկիների սիրուն, որքան հակառակորդներին խայտառ տապալելու տենչով, անդադար գործում էր կառափնարանը աչքն առած: Նա իրեն խոստացածի երկու երրորդ բաժինը խոստացել էր ընկերակիցներին և բոլորը միասին ձեռ ձեռի տւած ուզում էին տապալել իրենց հակառակորդ՝ Ջէւադին ու Նազմին: Բէհջէթը արդէն յոյս էր տածում կարճ միջոցում ստանալ հարկ եղած հրովարտակը և Տիրանին տանել յանձնել Ֆրանսիական դեսպանատուն: Համարեա թէ հակառակորդները ընկճած էին և արդէն հրամայւած էր, որ գրւի այդ հրովարտակը: Բայց Նազմն ու Ջէւադն էլ քնած չէին, գիշեր ցերեկ վազում էին այս ու այն կողմն, ու-

չի ուշով հետևում գործի ընթացքին: Սէթօյին արբանեակները իմացրին, թէ ինչ եռանդով ներքնապետը գործի էր կպել: Այս բանից սաստիկ բորբոքած, նա իսկոյն վազեց Նազմի մօտ և տարածուեցաւ նրա առանձնասենեակի բազմոցի բարձր անկիւնում: Ոստիկանապետը լսելով Սէթօյի իրեն սպասելը, շտապեց —թողեց գործերը, վերադարձաւ պաշտօնատեղին, բաւականացնելու իր աջակցին և լսելու նրա խորհրդները:

—Գործի ընթացքը փոխուեց, ասաց ներս մըտնելով Նազմ բէյը, ներքինապետը խոստացել է Ջէլադին յիսուն հազար լիրա, այնպիսի մի գումար, որ կարող է գրաւել երկնքի հրեշտակներին անգամ: Նա թէև տատանւում էր, բայց ընկճած տեսա: Նկատելի էր, որ չպիտի կարողանար այն դարանագործների վոհմակին դիմադրել:

—Իսկ դուք ինչ արիք.

—Ի՞նչ պիտի անէի, ես էլ կրկինը խոստացա, քաջալերեցի, ոգևորեցի և դրական խօսք առած վերադարձա: Նա թէև երդումով խոստացաւ մինչև վերջին շունչը կուել և անձն անգամ չխնայել գործը տանելու համար, բայց ես կասկածում եմ... Նա կշէռքի ծանր թաթը ցատկելու վարժած է, կասկածում եմ...

—Ուրեմն խոստմանը չէ՞ք վստահանում.

—Նա մինչև անգամ տիրոջ գլխովը երդուեց, որ չի դաւաճանել, բայց...

—Եւ եթէ օգնէ, եթէ հաւատարիմ մնա գործին, խոստացել էք նրան ընդհանուր գումարից տասը

տոկոս, գուցէ դեռ աւելի... Ամենաչաղ բաժինը...

—Ձար չկա, խայտառակութիւն է, եթէ պարտւինք, մեզ այնպէս կզլորեն, որ շունչներս կամ Աքէա կառնենք, կամ Ֆէզան:

—Տասը տոկոսն էլ դուք էք վեր առնելու, իսկ ինձ, ասաց Սէթօն նայելով Նազմի աչքերի մէջ:

—Հինգն էլ քեզ:

—Հապա մնացորդներին, այնքա՜ն աջակիցներ և սովածներ...

—Նրանց էլ թո՛ղ գոհացնէ Ամթաբէյը, հոգին խո՛ չի դուրս գալ: Նա է տանելու այն ահաւոր ժառանգութիւնը, մենք բոլորս նրա համար տանջւում ենք պատիւներս ոտքի տակ գրած, կեանքերս վտանգած:

—Այս մասին դուք իրեն հետ խօսեցէք, ինձ հետ կարող է գժտուել: Մի քիչ խիստ լեզու բանացրէք և սպառնացէք: Ասէք թէ հայրը, Բէատրիչէն կրկնակի են խոստանում:

—Այդ շատ դիւրին է. բայց դուք ինչի՞ չըգնացիք չափրեցիք կալքերն ու գոլքերը:

—Պաշտօնական բոլոր գրութիւնները արդէն կատարւած է, դադաստանական ծախսերը ահաւոր գումար է բռնում, քսան հազար լիրայի չափ փող պիտի վճարւի, որ որոշումներն ստացւի: Դրամի տեղն արդէն արել եմ, այսօր վաղը անպատճառ գործադիր ժողովը կգնա, կյանձնի:

—Շտապեցէք, շտապեցէք, ասաց խեղդւած ձայնով Նազմ բէյը և շոգին սպառած մեքենայի նըման երերաց, տեղն ու տեղը արձանի նման անշարժ

ընկղմեց մտատանջութեան մէջ։ Այն մտքերը, որ յուզում էին ոստիկանութեան ընդհարական պետին, չէր կարողանում արտայատել, չէր իմանում ինչ ձևով խօսք քաշել խորհրդակցի բերանից և տանջւում էր ամփոփած ինքն իր խոհերի մէջ։ Միևնոյն վիճակի մէջն էր Սէթօն, տարածւած թիկնաթոռի մէջ, այն տրուկի նման, որ իւր իշխանի գահոյքին բազմած, երևակայում է, թէ մի ժամի գահակալութիւնն էլ վայելչութիւն է, պէտք է օգտւել։ Սէթօյին էլ գրգռում էր Նազմի լռութիւնը, խորհրդաւորութիւնը, ուզում էր իր պետի ներքին աշխարհի պատկերները ջննել, ըմբռնել, չէր կարողանում հնար գտնել։ Երկուսն էլ առժամանակ անձնատուր էին նրած իրենց մտքերին և պատերից կախւած պատկերների մնան չէին անգամ զգում իրար ներկայութիւնը։

Յանկարծ պաշտօնական խորհրդականներից մէկը դուռը այժգին հրեց, բացեց և այս աղմուկից սթափւեցան վատ երազներից զարթնողի նման։ Նազմ բէյը վերցրեց իրեն ներկայացրած ծրարը, պատռեց և աչքից անցկացրեց։ Խորհրդականը երբ նկատել էր, թէ մեծաւորը առանձնարանում մենակ չէր, նրանց խորհրդաւոր լռութիւնից քաշւելով, իսկոյն հեռացաւ։ Թուղթը կրկին անգամ ուշադրութեամբ կարդալուց յետո, ասաց ոստիկանութեան ընդհանրական հրամանակալը.

—Տիրան բէյը որչից անբաւական է, խնդրում է բանտը փոխել։

—Խնդրագիր է ուղարկել, ինչ է, ասաց Սէթօն ուշադրութիւնը լարելով։

—Ոչ թէ խնդրագիր, այլ Իտալական կոնսուլի պահանջի կամեմատ բժիշկները խորհուրդ են կազմել և տեղեկագիրը ինձ են ղրկել, սպառնալով...

—Բայց գիտէք, ես ինչ էի մտածում, բէյ, ասաց Սէթօն դէմքի մկանները որքան որ այժ ուներ ձգելով, ամբողջ զգացումները խորշոմներով ու կրնճիռներով արտայայտելով.

—Ասէք, ասացէք, էֆէնդի, ականջս ձեզ եմ յանձնում, ասաց Նազմ-բէյը բիբերը կրկին անգամ կենտրոնացնելով ստացած գրութեան տողերը երրորդ անգամ աչքից անցկացնելով։

Այս անտարբեր ձևացումը սաստիկ գայրացրեց Սէթօյին, որի ձիթագոյն դէմքը բոլորովին գեղնեց, կապուտակեցաւ և սոսկալի գաժան արտայայտութիւն ըստացաւ, այնպէս որ այդ րոպէին ժանգոտ հոգին իսկութեամբ արտացոլաց նրա երեսի վրա։ Զգաց Սէթօն, որ Նազմը թէև հոգով տենջում էր իր չըրթունքներից քաղել վնտրած ու չգտած հնարը, ըմբռնեց, որ ոստիկանութեան հրամանակալը կարօտ էր իր նենգաւոր խորհուրդներին, բայց կեղծում էր սառնասրտութեամբ, դէմքը ծածկում էր թերթիկով, որպէսզի զգացումները խորհրդաւորն չմատնէ և աժան ձեռք բերէ կարևոր խորհուրդը։ Կրքերի բորբոքումից դողում էր Սէթօն, բայց այնպիսի մի թակարդումն էր, որ սպարտաւորւած էր սանձել զայրութիւնը և չափաւորել զգացումները։ Մինչև Նազմը աչքերը գաղտագողի չրջեց նրան ջննելու, նա այնպիսի խոհուն դէմք առաւ, որ ոստիկանական հրամակալը ենթադրեց, թէ մտածում էր ամփոփել, դասաւորել ասելիքները։

Բայց Սէթօյի հոգու խորքում մրրկում էր այն միտքը, թէ նրան հարստահարում էր ոստիկանապետը ճիշտ այն ձևով, ինչպէս հարստահարել և կեղեքել էին վաճառականները, սեղանաւորները, գործարանատէրները։ Ինչպէս նրա սրամտութիւնից և հնարագիտութիւնից օգտւել էին, առանց կարգին վարձատրելու, իր նախկին տէրերը, նոյն ընթացքով Նազմն էլ ձգտում էր միմիայն օգտւել, առանց երախտագիտութիւն անգամ արտայայտելու։ Ուրեմն, ասում էր մտովի Սէթօն, ես աշխարհ եկել եմ սոսկ գատելու, աշխատութիւնով և հնարագիտութիւնով ուրիշներին օգնելու, նրանց բարեկեցութեան և վայելչութեան նպաստելու, իսկ ինձ համար,.. ոչինչ։ Ե՛ս մի մեքենա եմ ստեղծւել, մի գործիք, որ ինձնից մարդիկ օգտւին, շահագործեն, իրենց բարեկեցութեան ծառայեցնեն... իսկ ես սոսկ մեքենա, մետաղ, անզգա անօթ մնամ ինձ համար.... Ինձ համար վայելք, վայելչութիւն, ներքին բաւականութիւն երբէք չունենամ։ Մամս գատի, աշխատի Աչէմեաններին վայելչութեան համար, մայրս ծառայէ Թաթոսին հաճոյք պատճառելու համար, ես էլ դրամատէրներին կամ ոստիկաններին փառքի գագաթը բարձրացնելու համար... իսկ ինձ, ինձ ոչինչ...։

Նազմը շարունակեց իւր ընթերցանութիւնը, ազատ թողնելով Սէթօյին, որ ամփոփէ մտածութիւնները և ծրագրէ նրա ուղին, որը կորցրել էր շփոթից։ Սէթօն ցանկալով շուտով դուրս գալ այդ որջից, ասաց.

— Բէյ, խնդրում եմ, թողէք այդ թուղթը, յետո էլ կարող էք կարդալ, ուշադրութիւններդ ամփոփեցէք, խորհենք, թէ ինչ ենք անելու։

Կարծես Սէթօն մոռացել էր, որ իւր իշխանուորի հետ էր խօսում։ Նրա ձայնը այնքան իշխանական էր, որ Նազմը միառժամանակ կասկածեց. ենթադրեց, թէ այդ անպիտանը բարձրագոյն իշխանութիւնից իր վրա հսկելու պաշտօն ունէր։ Այնպիսի դարուման էին ապրում, մի այնպիսի շրջան էր, որ մարդ այսպիսի կասկածներ չտածելը, չերևակայելը անգամ մեծ յանցանք կարող էր համարւել։ Նազմը մի րոպէ այնպէս ընկճւեց, այնքան թուլացաւ, որ ձեռքի պաշտօնաթուղթը վար դրեց, արմուկները լինեց գրասեղանին, կզակը ափերին և ամբողջապէս ուշադրութիւն դարձած ասաց.

— Ասէք, խնդրում եմ, ասէք ձեր որոշումը, լսում եմ,...

— Ե՛ս կասկածում եմ, ես կորցրել եմ վստահութիւնս, սէտք է գործը բոլորովին ապահովել։ Մի փոքրը սխալ, մի կոյր անհեռատեսութիւն, և մենք կկորցնենք, կտուժենք...

— Ձեմ հասկանում, չեմ ըմբռնում ձեր միտքը։

— Կարող է ներքինապետը, *օդաշիքները*, կամ ուրիշը իրենց շահի համար, այսքան ժամանակի ընթացքում մեր ծրագրածը մի հարւածով խորտակել։ Մանաւանդ Ֆրանսիական դեսպանը շատ է պնդում, որին խոստացել են ուրբաթ *Հեյամիքից* յետո ունկընդրութիւն։

— Թէև ես վստահ եմ, ասաց ոստիկանապետը խոհուն դէմքով, որ չեն դաւաճանել մեզ, չեն կարող

իմ զեկուցումները հերքել, հակառակ համոզմունք ներշնչել. բայց չեմ կարող հաստատ համոզուած լինել, որ անպատճառ կհասնենք մեր նպատակին։ Կարող է պատահել, որ մենք կորցնենք բոլորը, քանի որ կամայականութիւնից և քմահաճոյքից է կախուած մեր երկրում ամէն գործ, խօսքը մեր մէջ...

—Ոսկով և դիպլոմատների խաղերով մեր երկրում ամէն բան հնարաւոր է, մանաւանդ ոսկով։ Դուք խոստացաք, ասաց Սէթօն ծանրութեամբ, որ յիսուն հազար տաք գործը աւարտելուց յետո, իսկ եթէ Բէատրիչէն եօթանասուն, նոյնիսկ հարիւր հազար վճարէ կանխիկ, ինչ չի կարող անել, ո՞ւմ չի կաշառել և ուզածը գնել։

—Դրա դէմ խօսք չունիմ, մեր երկրում ամենակարողը ոսկին է, փող ունեցողը կարող է *խաթթի-շերիֆն* էլ գնել, ասաց հառաչելով ոստիկանական ընդհանուր հրամակալը։

—Ուեմն ինչ ենք անելու։

—Ձեր կարծիքը, ձեր նպատակն ինչ է։

—Մի քայլ, միմիայն մի քայլ ունինք կատարելու և այդ քայլը ամէն բան, մեզ բոլորիս լիովին կապահովէ։ Իտալական, Ֆրանսիական դեսպանատները մեզնից մի կեանք են պահանջում՝ Տիրան-բէյինը։ Եթէ Տիրան-բէյը չլինի, կազատուինք օտարների պահանջից, կգլորի պետական մի հզօրագոյն դաւաճան և մենք կազատուինք անտանելի հոգսերից։ Այդ ժամանակ առանց այլևայլի Աթա-բէյը անմիջապէս կտիրէ հօր կարողութեան, ոչ մի բողոքող չի մնալ, իսկ մեր պայմանը անքակտելի է։ Եւ այս քայլը, ես կարծում

եմ, շատ դժուար չէ ձեզ համար...

—Այնքան էլ դիւրին չէ... բժիշկները խոշորացոյցով են վերլուծում արեան գնդիկները, պալատից խիստ հրաման կա նրա կեանքը պահպանելու...

—Վաղը շոգենաւով ուղարկուելիք յեղափոխական վնասաբեր *ֆիդայիների* (անձնազոհ) հետ կարելի է Տիրանին էլ շոգենաւ փոխադրել և ուղարկել Սև ծովի *ձկներին* կերակրելու....։

—Առանց իրաւունքի անհնարին է,....

—Կարելի է մի ուրիշի փոխարէն դրան ուղարկել և յանցանքը՝ որպէս սխալանք բարդել զինուորների՝ ստորին աստիճանաւորների վրա...

—Մտածենք և խորհենք...։ Առանց նրանց խորհրդին անհնար է...։

XII

ԹԱԳՆԻԵՑԻՆ

Բէհջէթ Աղան և Մոլլա Սադգը դեռ նոր էին հեռացել Աջէմեանի տանից, դեռ Բէատրիչէի սրտի անկանոն տրոփիւնը չէր խաղաղել, դեռ ծերունին չէին հանգիստ դրել, աղախինը մտաւ նրանց սենեա-

կը և Աղաւնի խանումին մօտենալով՝ զգուշութեամբ ականջին ասաց.

—Օրիորդ Աթէնան Իդէասի հետ եկել, ցանկանում են ձեզ ներկայանալ։

—Ի՞նչ, ասաց շւարած մամը, երբ լսեց թոռին անակնկալ այցը։

—Սաստիկ սրտադողի, վախի մէջ են, դողդըղալով ներս մտան, գիտես թէ հալածողներից, ոստիկաններից են խոյս տալիս։

—Ասա, թո՛ղ ներս գան։

—Ո՛չ, ասաց օրիորդ Բէատրիչէն, Թադէոս աղայի կնճիռներից տհաճ արտայայտութիւնը նկատելով, ասա, գնան իմ ընդունարանը։ Տար այնտեղ, ահա ես ալ շտկրթեմ անկողինը, աղային հանգստացնեմ, կգամ։

Աղախնի ետևից մամը, թոռան ձայնը լսելու պէս, սլացաւ դէպի ընդունարան։ Աթէնան մամի տարածած գիրկն ընկաւ, վզովը փաթաթւեց, կարկամել էր. հեկեկում, բայց բան չէր կարողանում ասել, համբուրւում, բայց չէին կարողանում բան խօսել, հառաչանքը շղթայւել, չէին բաժանւում։ Թըշւառ պառաւի յիշողութեան մէջ նորոգւեցան հին հին տարիները, երբ իւր գրկում էր խաղում թոռնիկը՝ Աթէնան, ծոցումն էր քնում և իւր ձեռքից ուտում, խմում...։ Փղձկեց խղճալու սիրտը, սկսեց երեխայի նման լալ, անվերջ համոյրներ դրոշմելով թոռնիկի ճակատին ու մազերին։ Իդէասը արձանի նման կանգնել, ձեռքերը բաճկոնի գրպանները դրել, դիտում էր տեսարանը։ Բէատրիչէի մուտքը մասամբ

նրանց հանգստացրեց, Աթէնան մամի գրկից անցաւ հօրեղբօրկնոջ կրծքին փառեցաւ և կրկին թշւառների արտասուքի մարգարտանման խոշոր խոշոր կաթիլները թրջում էին իրար կուրծքը։ Վիրաւորւած սրտերի լեղւած արիւնը արտասուքի հետ դուրս էին թափւում, որպէսզի սրտերի վրա կուտակւած ծանրութիւնից թեթևանան և ազատ շունչ քաշեն։ Երբ նկատեց փորձւած պառաւը, որ անփորձ օրիորդները ուժասպառ են դառնալու իրենց անզուսպ վշտակցութեամբ, մօտեցաւ նրանց, գրկեց, բաժանեց ու ասաց.

—Աթէնա՛, հոգի՛ս, դու ի՞նչ ունիս, քեզ ի՞նչ է պատահել...։

—Մայրի՛կ ջան, ինձ փրկի՛ր, ինձ ազատի՛ր. մի՛ թողնիլ, որ հայրս ինձ գցէ այն դժոխքի փարթիչի՝ Սէթօյի ճանկը։ Մօրս չի լսեր, անոր խօսք է տըւել և կպատրաստւի սև նշանդրէքի։

—Ի՞նչ, ի՞նչ. աչքերը չռելով ասաց Բէատրիչէն։

—Ծի՛ւաղը իր ճանկերն ու ժանիքները սրել է, որ ինձ խեղդէ, օրի՛որդ, իսկ հայրս դահի՛ճս է դարձել և կանգնել է գլխուս վրա, բռնի, սպառնալիքներով ինձ կուզեն Սէթօյի, սաթայէլի գիրկը գլորել, մայրի՛կ...

—Քո փոխարէն քա՛ր ծնէի, Աթա՛, քո տեղ ապառաժ բէրէի, էս օրէրը չտեսնէի, տտահա՜կ...։ Սապառաժ բէրէի... — Սապռաժ բէրէի

Correction omitted.

կարողանաս մէկ ձագովդ լցնել, նա այնպիսի վիշապ է, որ ամէնիդ գլուխն ուտելէն վերջը, քեզ ալ, ողջ ողջ կուլ կտա, դարձեալ ստամոքսի քառորդը չի լցուիլ։ Դու մի յուսահատիր, ես չեմ թողուր, որ անոր կամքն առաջ երթա։ Դու մնա մեր տունը, ոչ ոք չի կարող քեզ այստեղէն քաշել, տանել։

Աթէնան մանրամասն պատմեց այն բոլոր անցքերը, որոնց ականատես էր եղել և հօր անդառնալի որոշումը։ Զգաց Բէատրիչէն, թէ ինչ սոսկալի դրութեան մէջն էր թշուառ աղջիկը և որքան զարհուրելի պիտի լինէր նորա վիճակը իրենց ընտանիքի ոխերիմ թշնամիի յարկի տակ։ Այս պատմութիւնների մանրամասնութիւնները ուշի ուշով ունկնդրելուց, քննելուց յետո, ըմբռնեց, թէ բոլոր մեքենայութիւնները ինչպէս Տիրանի և իւր, նոյնպէս Աթալի ու Աթէնայի դէմ ով էր լարողը և ղեկավարողը։ Բէատրիչէի և Աղաւնիի քայքայած ջղերը չդիմացան, չկարողացան մինչև վերջը լսել Աթէնայի լացուկամաց նկարագրութիւնը, փխրեցան, բորբոքեցան նորանց սրտերն էլ և հեկեկացին ու հառաչացին, խօսելու, մխիթարելու ընդունակութիւնը իսպառ կորցնելով։ Իրդէասը դժգունած, մեռելատիպ անդադար փոփոխում էր տեղը, դիրքը, աթոռը, բազմոցը և հանգստութիւն չէր կարողանում գտնել։ Երբ քիչ դադարեցան, թուլացան, գրգռած ջղերը հանգստացան, ըզգացումներին յաջորդեց դառողութիւնը, Բէատրիչէն Աթէնային գրկած համբուրելով ասաց.

—Քոյրիկս, երկուսիս ալ միևնոյն դարանակալն է հալածողը, միևնոյն մեքենայութիւնների զոհն

ենք, իրար վշտակցութեան, մխիթարութեան և քաջալերի կարօտ։ Դու այսօրւանէ այլևս դուրս չես գալ այս տնէն, մինչև գործերը բարելաջող ելքի հասցնելը։ Յոյս ունիմ, որ ձեռ ձեռի, խելք խելքի տաճ կարողանանք իրար արիացնել, սիրտ տալ և համբերութեամբ դիմադրել այս անգութ դահիճներին։

—Ես երբէք իրաւունք չեմ տալ, ասաց հեկեկելով Աղաւնի խանութը, որ քեզ կապեն այն հրէշի հետ, որ ոչ միայն տարիքով հօրիցդ մեծ է, այլ յայտնի չէ, թէ ում սերունդն է։ Երբէք, երբ պապդ իմացաւ, զայրութից պատռտեց վերմակի երեսը, հասկացնելով, թէ պէտք է այն սրիկային, այն հրէշին կարտել, պատռտոտել, որպէսզի քեզ ազատենք նրա կարմից։ Բայց մեծ մեղաւորը քո՛ հայրդ է, մեր ցեցը, մեր կեանքի ու թոքերի որդը, որ մեր սիրտն անգամ կըծոտելով այնպէս է ծակծկել, որ ոչ մեռած ենք, ոչ ալ կապրինք։ Եթէ ստահակ որդիս մարդ լինէր, ինչպէս պիտի Սէթօների ընկերը դառնար, տներս քանդելու համար, *մանավանդ* բորենիի ատամները քցելու ելնէր։ Ես հրաման չունիմ, որ դունէս դուրս գաս. մնացեալը դիւրին է։ Ո՛չ ոք չի յանդգնել, գալ տունս մտնել և քեզ բռնութեամբ դուրս քաշել։

—Ես եկել եմ, ձեր թևի տակ, որ ինձ ազատէք, փրկէք, այս տնէն չեմ դուրս գալ մինչև կեանքս չապահովէք, ասաց Աթէնան և գրկեց մամին։ Լաւ է ինձ տանիս քու ձեռովը *Քաղաք-խանի* գաղանոցի ինձերին, կամ վագրներին տաս պատառեն, քանթէ Սէթօյին։ Գազանները մի անգամից կուլ կըտան, իսկ այդ ճիւաղը ամէն օր սլիտի մխա ու հո-

գիս ծամէ, ծամծմէ ու ճիրաններով խոցոտէ...:

—Բայց ինչ ընենք, որ Իդէասին ալ առայժմ ազատենք գժոխքի վարժիչների վրէժխնդրութիւնէն, մինչև տեսնենք ինչ վախճան կունենայ մեր բողոքը :

—Հոգիս, Բէատրիչէ, ասաց Ա.թէնան գրկելով հօրեղբօր նշանածին, անոր դու պիտի տանես ու յանձնես Իտալական դեսպանատուն: Ես կսոսկամ համոզուած եմ, որ Սէթօն արդէն թակարդները լարած անոր որոնել կտա: Թէ ձեռ գցեն, այլևս փրկութիւն չկա: Իդէասը բացի թշուառ մայրն ունի, որ անոր համար հոգա: Ո՛վ պիտի մտածէ սըրբան ազատել հրէշների որջէն:

—Բայց եթէ ճանապարհին յարձակուին ձեզ վրա, այն ժամանակ ինչպէս կարող ես պաշտպանուել, ասաց յուսաբեկ պառաւը, որին այնքան էլ հաճելի չթուաց թոռի առաջարկը:

—Ես իսկոյն տոմսակ կգրեմ և կխնդրեմ, որ Ֆրանսիական դեսպանատան զինուորական կցորդը շրնորհ բերէ մեր տուն: Անոր կխնդրեմ, մեզ առաջնորդէ կառքով Իտալական դեսպանատուն և ինձ տուն դարձնէ, ասաց Բէատրիչէն, անպատճառ երիտասարդին փրկելու և զոյկերին խրախուսելու ցանկութեամբ:

Իսկոյն գործադրեցին իրենց ծրագիրը և երկու ժամ յետո Բէատրիչէն տարաւ յանձնեց Իտալական դեսպանուհուն Իդէասին, անվնաս վերադարձաւ տուն: Թէև օրիորդը նկատեց, որ ճանապարհին գաղտնի ոստիկանական լրտեսները իրենց էին հետևում, մինչև անգամ դեսպանատան դրան ընդդիմակաց մայթի վրա

կանգնած էր Սէթօն, բայց նա առանց ուշք դարձնելու կառարկ իւր որոշումը, շտապեց Ա.թէնային և Աղաւնի խանումին հանգստացնելու:

Իդէասին դեսպանուհին ոչ միայն անկեղծ սիրով ապաստան տուեց իւր յարկի տակ, այլ զաւակնեբով շրջապատած աշխատում էր միշտ ուրախ տրամադրութեան մէջ պահել իւր արտասովոր հիւրին: Որպէսզի Իդէասը Ա.թէնայից անջատման առթիւ չտխրի և ինքնակամ բանտարկութիւնից չընկճուի դեսպանուհին նրանից խնդրեց, որ իւր երեխաների դիմանկարները պատրաստէ: Իսկոյն Իդէասին ներկայացրին կաւրւոր նիւթը և երիտասարդ նկարիչը գործի կպաւ: Բայց Իդէասը փոխանակ դեսպանի զաւակների դիմանկարները գծելու, մի տեսարան նկարեց, Բոսֆորի ասիական ափից դէպի եւրոպական ափը ձգուած մի լարի վրայից երկու գեղադէմ, հեշտակատիպ կոյս մի կոյրի Ասիայից Եւրոպա էին առաջնորդում: Լարի մի ծայրը ամրացրած էր Հայդար-փաշայի բարձունքի գըլխին կանգնած Սէլիմէ գօրանոցի կտուրին, մեսը Ֆաթիհ-Սուլթան-Մէհմէդի մզկիթի գմբէթին: Թշուառ օրիորդները դողդողալով երիտասարդ կոյրի աջ ու ձախ ձեռքերը բռնած առաջ էին գնում, սոսկալով լարից ցած ձգուած այն ահաւոր անդունդից և անյատակ ծովից, որի մրրկած ալիքները այնքան վեր էին բարձրանում, իջնում, որ կարծես կլանել էին ուզում այդ խիզախ ճանապարհորդներին: Տեսարանի արևելքից նկատւում էր արշալոյսի սկզբնական ճառագայթները, որոնք պատառելով թանձր ու մռայլ ամպերը լուսաւորել էին երկնակամարն և բարձրութիւնների

գագաթները, թէև խաւարը չէր հեռացած երկրից։

Երեք-չորս ժամ չանցած, երբ դեսպանուհին այցելեց երիտասարդ նկարչին, զաւակների պատկերները տեսնելու յոյսով, մնաց ապշած, իսկոյն ետ դարձաւ դեսպանին բերեց զննելու այդ տեսարանը։ Մի քանի րոպէից յետոյ դեսպանատան ծառայողները ներս մտան և սկսեցին հիանալ ու քննել առաջադրուած գործը։ Ամէն կողմից նկատողութիւններ էին անում, իրար առաջարկում էին հետաքրքրութեամբ յատկապէս դիտել տեսարանի այս ու այն մասը։ Վրձինի ամէն մի խաղը, ամէն մի խաղը բնութեան հրաշալիքները հաւաքել էր կտաւի վրա, ծովի մրրկածուփ ալիքները ամպերի պայքարը, լոյսի խորաթափանց ալիքները փոթորկած իրար էին խառնուել, սարսափ էին ներշնչում դիտողներին անգամ։ Իւսկիւդարի և Քաղքեդոնի շինութիւնները հրդեհի բոցերին ճարակ էին դարձել, նրանց շողքը տարածուել ամպերն էր բոցավառել, ծովի ջուրն էր պղծոտել և կրակից ցայտած բիւրաւոր կայծերը սպառնում էին լարը բռնկցնել և անդունդը գլորել փախստականներին։

— Մարգարիտա, Մարգարիտա, նայի՛ր, զննի՛ր, տե՛ս այս կոյսը, որ առաջնորդում է կոյրին, որքա՜ն նման է Աթէնային, կարծես օրիորդը թևաւորուած հրեշտակ է դարձել, հրդեհից փախցնում է իր սիրեկանին, ասաց դեսպանը իւր կնոջը։

—Իսկ միւսը, միւսը, մի՞թէ նման չէ Բէատրիչէին, ասաց դեսպանուհին։

— Ա՛յո, այո՛, ասաց զինուորական կցորդը, Իգէասը մի հրաշալի Ալէգորիա է ստեղծել, կոյսերը նրան

հրդեհից ու փոթորկից ազատելու տենչով իրենց կեանքն էլ վտանգել, ուզում են Եւրոպա փախցնել, եթէ լոտեները չկարողանան բռնկցնել այդ լարը.......։

— Սիրո ոտքերը առանց լարի էլ կարող են սլանալ և ազատել սիրեկանին, ասաց դեսպանը ակնոցները աչքից վար առնելով։ Անկեղծ սիրո անձնազոհութիւնը այնքան զօրաւոր է, որ նրան չեն կարող դիմադրել բնական ուժերը։ Ո՛չ, այս տաղանդը չպիտի սպանուի, չպիտի խեղդուի, նա Եւրոպայում պիտի մարզուի և կատարելագործուի հանուր մարդկութեան համար։

Երբ դուրս էին գալիս Իգէասի սենեակից նրա նկարով սքանչացողները, դեսպանուհին դարձաւ ու ասաց երիտասարդ նկարչին.

— Զաւակներիս դիմանկարների փոխարէն այնպիսի տեսարանով մեզ հմայեցիք, որ ես միաժամանակ մոռացա ապսպրանքս. խնդրեմ այժմ նրանց պորտրէտները պատրաստէք։

— Ներեցէք, տիկին, որ ես այնքան յափշտակուած էի վշտովս, որ ձեռքերս չհնազանդեցին դատողութեանս, նրանք արտայայտեցին վիրաւոր սիրտս։

— Այժմ յոյս ունիմ, որ ձեր սրտի փոթորիկը խաղաղեց, ասաց ժպտալով դեսպանուհին ու հեռացաւ։

Բայց այնպիսի մրրիկ ու ալէկոծութիւն էր բարձրացած Իգէասի գանկում, Աթէնայից անջատումը այնպէս էր փոթորկել նրա սիրտը, Սէթօյի ձիթոտ դէմքը և սուր հայեացքը այնքան բորբոքել էր նրա թոքերը, որ աշխարհը ամբողջապէս մթնել, մռայլել, նրա

աչքին միայն հրէշներ էին ներկայանում։ Դեսպանի զաւակների դիմանկարի փոխարէն Իզէասը մի ճիւաղ նկարեց, որն, իւր եղջիւրները, ճիրաններն ու ժանիքները թագցրած - կոկած, մօտեցել էր մի հրեշտակատիպ կոյսի՝ սէրն առաջարկելու։ Ճիւաղը իւր անցած ճանապարհին շանթեր էր գցել, շէնքեր էր հրդեհել, երկրաշարժ էր բարձրացել, թաղեր էր քանդել, հազարաւոր զոհեր ոտնատակ տուել, անմեղների և թշուառների կործանելով մօտեցել էր կոյսին, թախանձում էր նրան աղերսը չմերժել և մի քաղցր ժպտի արժանացնել։ Իսկ կոյսը ահաբէկ թէև ձգտում էր խոյս տալ, բայց այնպիսի ոստայնի մէջ էր կաշկանդուել, որ շարժուելու կարողութիւնից զրկուել էր։

Այս նկարը թէև աւելի ապուշ կրթեց դեսպանատան անձնաւորութիւններին, բայց սաստիկ վշտացրեց դեսպանուհուն, որը երիտասարդ նկարչից արտայայտուած արհամարանք համարեց այդ ընթացքը։ Իզէասը այդքան ճնշուած դրութեան ժամանակ անգամ համարձակուել էր մերժել դեսպանուհիի կրկնակի խնդիրը, նորա մատակարարած կտաւների վրա՝ փոխանակ առաջարկուած դէմքերը գծագրելու, իր սէրն ու վիշտն էր դրօշմել. իր հոգու խորքերում կուտակուած վէրքերն էր վիժել, զետեղել։ Որքա՛ն խիստ էր դեսպանի, զօրական կցորդի հիացումն ու համակրանքը, դրանից հարիւրապատիկ աւելութեան էր արժանացել նկարիչը տիկնոջ կողմից, որը չէր իմանում ինչպէս վրէժ լուծէ երիտասարդից։ Խեղճ Իզէասը երբէք չէր էլ երեւակայել որևէ անխոհեմ ընթացքով անպատուել իր բարերարներին, իրեն ապաստան տուողներին,... Նա ին-

չով էր մեղաւոր, եթէ իրեն պաշարած պատերն ու պարիսպները, բանտի որմերի նման ճնշել էին նրա հոգին, Աթէնայից անջատումը բորբոքել էր նրա զգացումները և նա մոլեգնած ցնցել էր ձեռքն ու մատները, վրձին ու ներկերը և արտայայտել էր այն միջավայրը, որը նրա կեանքն էր թունաւորել։

— Ի՞նչի է պէտք այն տաղանդը, ասաց դեսպանուհին ընթրիքի վրա իր խօսակցին՝ ուսագ թարգմանին, որ կենտրոնացած է անարժան և ապերախտ հոգու մէջ։ Արևելքը տալիս է ձիրքով մարդիկ, բայց ի՞նչ օգուտ, որ այդ բնատուր յատկութիւնները ի չարն են գործ դնում։

— Ո՛չ, տիկին, ո՛չ, մի սխալուիք, ձիրքը տաղանդը դաժան հոգիների մէջ չեն կարող բնակութիւն հաստատել։ Դարևոր իսլամի ստրկական լծի տակ ճընշուած ռայաներից չի կարելի յանկարծակի պահանջել լայն սիրտ, վեհ հոգի և նուրբ պարտաճանաչութիւն։ Միայն ժամանակը կրթութեան հետ կարող է սրբել այդ արատները, որը դարերով արմատացել է ստրկացած սրտում։

Իզէասը կասկածեց, թէ իրեն էին ուղղուած այդ խօսքերը, բայց նրա հայրը բնիկ Իտալացի լինելով՝ տարակուսեց և ընկաւ խոր մտածութեան մէջ, թէ ինչով էր տեղի տուել այդ նախատինքին։

Մինչդեռ զբաղուած էր Իզէասը իր ստեղծագործութիւններով, Բէատրիչէն ու Աթէնան հորթը կորցրած կովի նման անընդհատ հառաչում էին իրենց առանձնասենեակում։ Նորանք անբաժան իրար հետ էին տանը առաւօտից մինչև երեկուն, գիշերն էլ իրար

գրկած մխենոյն մահճակալի վրա էին պառկում, ողբում էին իրենց դառը վիճակը, հնար էին մտածում իրենց սիրահարներին ազատելու և փրկելու։ Տառապալի էր նորանց կեանքը, ամէն առաւօտ վաղ պիտի դիմաւորէին մխենոյն տխուր, հալումաշ կաթւածահարին, սգահեղձ պառաւին, ամէն ջանք դործ էին դնելու, որ իրենց կեղծ ժպիտով նրանց մխիթարին, արեււելքին ներշնչեն, ամէն օր մխենոյն աստիճանաւորների ու պաշտօնականների այցելութիւնները էին ընդունելու, նախորդ օրւա խօսակցութիւնների կրկնութիւնները և յուսատու եղթադրութիւնները լսելու։ Իսկ յոյսերը իրականանալու նշոյլը դեռ չէր երևում։

XIII

ԹՌԻՉՔ

Ղալաթա - սարայի բանտի ներքնայարկը գրաւում է Սուլթանի - Լիսեի պարտիզի աջակողմը, որտեղից նեղլիկ լուսամուտների միջոցով լուսաւորւում է այդ խոնաւ որջը։ Այդ ներքնայարկի մի փոքրիկ խցիկում փակւած էր Տիրան բէյը, որի խոր պառուհանի անչափ կեղտոտ ապակուց և թանձրամատ վանդակներից շատ աղօտ լոյս էր ներս սփռւում, այնպէս որ փողոցից ներս մտնողը ոչ մի առարկա չէր կարող նըշմարել, մինչև որ հինգ-տասը րոպէ աչքերը չվարժեցնէր այդ մթութեան։ Տիրան բէյի որջը չորս արշին երկարութիւն ունէր, երեք արշին լայնութիւն և այնքան էլ բարձրութիւն։ Թէև յատակը ալիւսած էր, բայց ապականութեան տակ աղիւսները հազիւ կարելի էր նկատել։ Այս աղտեղութիւնից արտաթորում էր մի զզւելի դարշահոտ, որը միշտ ապականում էր խցիկի օդը, որը մաքրւում էր Լիսեի պարտիզի վրա բացւած նեղլիկ պատուհանից։ Պատերը և կամարակապ առաստաղը շինւած տարին մի անգամ կրով ծեփելուց յետո, այլևս ոչ միայն վերանորոգութեան, կամ լոկ սպիտակացման չէին ենթարկւել, այլ մինչև անգամ պոչաձողի չէին արժանացել։ Տարիներով մամուռը, սարդի ոստայնը երար վրա բարդւելով և փոշու հետ միախառնւելով գորշագոյն թաւիշի պաստառի ձև էին ստացել։

Մի կողմը պատին ու յատակին կից ոտխտակից շինւած մահճակալի նման մի թախտ էր կազմած, որը այնքան ազատուած էր, այնպէս սևացած, որ չէր կարելի երևակայել թէ սկզբում ինչ գոյնի էր ներկւած։ Իսկ այդ թախտի տախտակների արանքում և ծակոտիներում այնպէս էին վխտում մլակներն ու միջատները, այնքան համարձակ էին շարժւում, որ կարծես *զարթինելով* նրանց պատւիրած էին աներկիւղ յարձակւել իրենց ճանկն ընկած մահկանացուի վրա և դրանց արիւնը այնպիսի ագահութեամբ ծծել, որ չկարողանային իրանց մրցակցել մի քանի տասնեակ տզրուկներ։ Մի անկիւնում դրւած էր փայտի մի մեծ գուշ, որը միակ զարդն էր այդ որջի, որից արտաբուրած նողկալի

աւշակի հոտը կարող էր բորբոքել ձուլածո արձանների քթերն անգամ։ Օդն այն աստիճանի նեխուած էր, որ շնչելիս մարդու թուլացնում և աչքերից ակամա արտասունքի խոշոր կաթիլներ էր թափել տալիս։

Օդանցքը միայն դռան մէջ գտնուած մի թզաչափ քառակուսի բացուածքն էր, որտեղից պահապանները անդադար դիտում էին կալանաւորի շարժումները։ Սեղանի, պահարանի փոխարէն ծառայում էր լուսամուտի գոգը, որտեղ դարսում էր Տիրան բէյը ստացած ուտեստները։ Պատի այդ գոգը բաւական ընդարձակ և բարձր էր, հաց ուտելիս նստելու կարիք չունէր Տիրանը, ուստի աթոռի շռայլութեան պէտք չը կար։ Այդ խցիկում անկողին խստիւ արգելուած էր, իսկ Բէատրիչէի շպրտած ոսկիների շնորհիւ մի մեծ կապոց սպիտակեղէնը թոյլատրել էին ստորին ծառայողները, որոնք յաճախ փոփոխելու սովորութիւն ունէր Տիրանը, միանգամայն ծառայում էին բմբուլ բալիշի փոխարէն։ Դեռ լաւ էր, որ Տիրանը հետն ունէր ճանապարհորդական հաստ ու երկար վերարկուն, որը գործածում էր, թէ վերմակի և թէ դօշակի փոխարէն։

Այս որջում ենթարկուած տասն և հինգ օրուա անասելի տանջանքներից դեղնած, նուաղած, լղարած, համարեա թէ թոքերն ապականած՝ Տիրանը դիմել էր և խնդրել, որ գոնէ մի մաքուր և օդասուն սենեակ յատկացնեն, մինչև գործի քննութեան աւարտը։ Ոստիկանապետը բժիշկների այս որջի առթիւ կազմած տեղեկագիրը ու կոնսուլատի բողոքը ստանալուց յետոյ, Ֆրանսիական և Իտալական կոնսուլների թարգմաններին հրաւիրեց Ղալաթա-սարայ և նրանց ներկայութեան Տիրանին ստորերկրեա ներքնատնից հանել տուեց և վերին յարկում, փողոցի վրա գտնուած մի պատշգամբով սենեակում առանձնացրին, որը բաւական կոկ կահաւորուած էր, աթոռ, բազմոց, սեղան, վարագոյր և ուրիշ յարմարութիւններ ունէր։ Նոյնպէս Պերայի-ոստիկանապետը յայտնեց, որ կարող են անկողին բերել և ցանկացած բժիշկն ուղարկել, որ դարմանէ կալանաւորին։ Իսկոյն կարևոր պարագաները բերին յանձնեցին Տիրանին, ճաշ, ընթրիք արդէն թոյլ էր տրւում, որ նրանց տանից ուղարկեն և զապթիէն այնքան բարի եղաւ, որ հակառակ իւր պարտաւորութեան, զիջաւ գինի էլ բաց թողնելու կալանաւորին մինչև կազդուրուիլը։

Այս փոփոխութիւնը ուրախացրեց և յուսադրեց թէ Տիրանին և թէ Բէատրիչէին։ Ոստիկանապետը այնպէս էր ձևացրել, որ այդ բոլորը կատարւում է իրենց բարձրից տրուած հրահանգների համաձայն, իսկ Բէատրիչէն համոզուած էր, որ ներքինին գիշեր ցերեկ տըքնում էր Տիրանին ազատելու տենչով։ Այս մեղմ վարմունքը, խոստութիւնների դադարումը օրէորդը վերադրում էր Բէհջէթ աղային։

Հէնց այս սենեակումն էլ առաջին անգամ Տիրանին այցելեց Բէատրիչէն, տասն և հինգ օրուա անջատումից յետոյ, հազիւ թոյլատրեցին ամոլներին գըրկախառնուելով կարօտներն առնելու։ Թշուառ սիրահարները այնպէս էին բորբոքուել, այնքան կարօտել էին, որ իրար գրկից չէին ցանկանում բաժանուել։ Սրտերը այնպէս էր ուռել, լցուել, որ ոչ լեզուներն էր դառնում և ոչ շրթունքները շարժւում խօսելու։ Որքան

ճիգ թափեցին, որքան ոյժ գործ դրին սիրահարները ուրախ, ժպտադէմ բաժանուելու, յուսատու հայեացքով հեռանալու, ոյժերը չպատեց, փղձկուեցան և չկարողացան զսպել ո՛չ հեկեկանքներն, ո՛չ էլ արտասուքները. ո՛չ քայլերն էին հնազանդւում նրանց կամքին, ո՛չ բերաններն, ո՛չ աչքերը, ո՛չ էլ շրթները: Համարեա քաշելով դուրս հանեցին ուղեկիցները Բէատրիչէին, որը դալկացած, ընկճուած, համարեա թէ թուլացած յենուեց բժշկի թևին, իջաւ Ղալաթա-սարայի աստիճաններից և իրեն սպասող կառքը տարածուած դիմեց տուն:

Բժիշկը կրկին ու երեքին անգամ Տիրանին քննելուց յետո, իսկապէս նրան ծառայելու, օգնելու, ազատելու պատրաստակամութիւնը հաւաստեց և վերջապէս ասաց.

— Ես գնում եմ, մի ժամից քեզ կուղարկեմ կարևոր դեղերը:

Բժիշկը դեղերը գործածելու կերպը, ժամանակը բացատրելուց յետո, խոստանալով թէ ինքը յաճախ նրան կայցելէ, որ անձամբ քննէ ու կարևոր միջոցները ձեռք առնի շուտափոյթ առողջացնելու՝ յարեց.

— Քեզ կուղարկեմ մի շիշ կնքուած տասնը երկու տարեան գինի, ապահովութեան համար վրան կգտնէք իմ ստորագրութիւնը: Դուք իմ ձեռագիրը խո՛ լաւ էք ճանաչում, զգուշացէք, չփոխուէք: Այդտեղ ձեր դեղատոմսի վրա ստորագրութիւն ունիմ, համեմատեցէք:

Տիրան բէյը բոլորովին ուշք չդարձրեց բժշկի ասածներին, նրա ուշքն ու միտքը գրաւուած էր մի կերպ օր առաջ, ժամ առաջ դուրս պրծնել այդ որջից: Բոլորովին տարբերութիւն չունէր նրա համար նախըն-

թաց օրերի նողկալի խցիկը այդ սենեակից. վանդակը բանտ է, ի՛նչ զանազանութիւն երկաթից կամ ոսկեթելից հիւսուած ճաղերի մէջ, քանիոր բոլորն էլ միանման արգելարան են, չեն թողնում թռչելու, կաշկանդում են, չեն թողնում բարձրանալու: Առանց այդ էլ նրա փխրած սիրտը Բէատրիչէն յուզել-փոթորկել էր, նրա մտքերը ալիքների նման մռնչելով բաղխւում էին այս ու այն ժայռին, անդադար ծփւում էին անվերջ հարուելու և փշրուելու համար: Երբեմն նա աչքը դարձնում էր պատուհանից դուրս և փոխանակ սովորական անծայր հորիզոնի խորքերում անհետացող և երկնի հետ միապաղաղուող ալիքների, ամպերի մէջ ծածկուող մանիշակագոյն լեռների և լեռնագագաթների, աչքագրաւ դալար դաշտերի և զառիվայրերի, մոյգ-կանաչ անտառների, հայելանման մակարդակ ծփացած ծովի, նա տեսնում էր նեղ փողոցի վրա բարձրայարկ տըխուր բնակարաններ, վանդակներով ու վարագոյրներով ծածկուած պատուհաններ, խոնաւ ու կեղտոտ փողոցներ և անվերջ խաժամուժի երթուգալը, իրենց աղաղակներով, բացականչութիւններով, որոնք մրջիւնների նման, ոչխարների նման կուրաբար իրար հետևելով հրմշտկելով անցուդարձ էին անում, ալիքների նման տարուբերուելով և յաճախ իրար հարուելով ու ոտնատակ տալով:

Ո՞ւր էր տանում այդ խաժամուժը, ինչն էր ձըգում նրան, միթէ նրանք էլ ծովի ալիքների նման դատապարտուած չէին անվերջ աննպատակ տատանուել, ծածանուել, ափերի ժայռերին հասնելով բաղխուել ու անհետանալ: Այս դառն խոհերը ծփացնում

էին Տիրանին, խորասուզում մաքի ովկիանի անյատակ անդունդը, մերթ անզգալաբար հառաչելով, մերթ ակամա մռնչելով, յաճախ ձեռքերը գրասեղանին խփելով ու ցնցելով։ Յանկարծ բանտի դռան կողպանքները շռնչեցրին, բացուեց Տիրանի սենեակի դուռը և ոստիկանը մի շիշ գինի ձեռը ներս մտաւ ու ասաց.

— Բէյ, այս ձեր բժիշկն է ուղարկել և սեղանի վրա դնելով հեռացաւ։

Սթափուած տխուր խորհրդից՝ տխրադէմ մօտեցաւ սեղանին Տիրանը, շիշը ձեռքն առաւ լիշելով բժշկի վերջին խօսքը։ Ընդհանուր տկնարկով կնիքն ու նշանագրերը դիտելուց յետո, աչքն ընկաւ բժշկի տոթագրութիւնը, որը շատ նուրբ տառերով արձանագրուած էր խաղողի տերևների նկարներից մէկի վրա։ Բայց բացի տոթագրութիւնը ընդհանական կողմը արձանագրուած էր մի քանի խօսք ևս, որոնք գրաւեցին Տիրանի հայեացքը։ Զգուշութեամբ կարդաց հետևեալ ֆրանսերէն գրուածը.

„Գիշերս ժամի մէկին, աքաղաղը խօսելիս, դուրս ելէք պատշգամբ, զննեցէք, փողոցում բռնուած օպիոսակ պաստառը և աներկիւղ թռէք նրա մէջ, վրատահացէք։“

Շատ վարպետութեամբ և մազանման խազերով էր գրուած, այնպէս որ հեռուից ոչ ոք չէր կարող նկատել այս գիրը, եթէ յատկապէս չգննէր։ Տիրանը բժշկի շշնջոցի պատճառը այդ համարեց և նրա վրա կասկածելու առիթ չունէր։ Ամբողջ ժամեր նա մտածում էր այդ յանդուգն թռիչքի մասին և չէր կարողանում վճռել։ Հապա եթէ վայր ընկնէր,... սայլայատակի վրա,

տաներկու արշին բարձրութիւնից....։ Եթէ ամուրպինդ բռնուած չլինէր պաստառը, եթէ ծակէր պաստառն ու ինքը թաղուէր մայթի լեռ քարերին...։ Գուցէ խաբում էին, մի այսպիսի մահով ուզում էին նրան ոչնչացնել եղբայրն ու Սէթօն...։ Վճռում էր, համաձայնում էր իւրովի, բայց յանկարծ փոխուում էր միտքը։

Երբ մութը պատեց, Տիրանը զգուշութեամբ պատշգամբի դուռը քաշեց, մի քանի անգամ բաց ու խուփ արաւ և իրան համար բերուած ձկան իւղից քիչ կաթեցրեց դռան ծխնիների, փակերի և պտուտակների վրա, որպէսզի չճռնչեն։ Զափեց, չափչփեց փողոցի բարձրութիւնը, յատակի մայթերի և սայլայատակի քարերը, անցուդարձը, մեղմիկ հայեացքով և որոշեց թռչել, սահիլ ու ազատուիլ,...։ Ազատուիլ կենդանի կամ մեռած։

Ժամերը ծանր էին սահում, համրընթաց էին գլորուում, այն ինչ Տիրանի մաքերը անհուն թռիչքով անսահմանութեան մէջ էին սաւառնում, քաղցր ու անուշ անուրջով։ Քանի՛ քանի՛ անգամ նա որոշեց ետ մնալ այդ մաքից, չհետևել բժշկի խորհրդին, բայց տանջանքը այնպէս էր դառնացրել նրա կեանքը, որ այդ լեղութեան ծովում ապրելուց, նախապատիւ համարեց թռչելը, կամ ազատ կեանք վարելու, կամ տանջանքներին վերջ տալու համար։ Որքան մօտենում էր վճռական ժամը, այնքան յուզուում, մրրկուում էր Տիրանի սիրտը։ Ինքն իրեն ներշնչման—խրախոյսներին այնքան էլ չէր հաւատում։ Ապրելուց, քաղցր կեանքից բաժանուել չէր ուզում, սոսկում էր, երբ մտածում էր շնչասպառ յատակի վրա տարածուելու մասին....։

Տխրութիւնը փարատելու, ժամանակը սպանելու համար Տիրանը խցհան պահանջեց և մի փոքր ընթրելով, բժշկի խորհրդի հակառակ պարպեց այն հին գինին, մինչև վերջին կաթիլը, որը նրան սիրտ տուեց և ոգևորեց։ Ամբողջ մարմնով նա կերպարանափոխուած ման էր գալիս և անհամբեր սպասում էր վճռական աքաղաղի կանչելուն։ Գինին իր դերը կատարեց և հակառակ տենչանքին՝ Տիրանը ինկաւ քնեցաւ։ Բայց յոյսերը, մտքի տանջանքը երազներով այնպէս էին խռովում նրա հոգին, որ նա մի քանի անգամ զարթնեց, ժամացոյցին նայեց, դուրս եկաւ պատշգամբ, բայց դեռ չէր հասել որոշուած րոպէն։

Կէս գիշերն էլ անցաւ, Ջխէի ժամը կէսն էլ զարկեց։ Տիրանը բոլորովին զգաստացել և սրտատրոփ զննում էր չորս կողմը, աչքերը չռած դիտում էր փողոցի հատ հատ հարբած անցորդներին և սրտի բաբախումը սաստկանում էր, կորցնելով իր դադարումն ու անդորրութիւնը։ Ամէն մի շշուկ, ամէն մի սուլում նրա ուշքն էր գրաւում և Տիրանը երբեմն արձանացած ուշի ուշով լսում էր ձայները, երբեմն էլ տարածուելով լուսամուտի գոգում քննում էր մութ փողոցի յատակը։

Յանկարծ հեռուից աքաղաղը կանչեց։ Այս կոչը ցնցեց Տիրանին, նա չհաւատաց ականջներին։ Նա կասկածեց ջղերի, զգացումների վրա և սաստիկ ցանկանում էր, որ էլ չլսէ այդ ձայնը։ Երբ սուսիկ, բոլոր զգացումները կենտրոնացրած, շնչասպառ հետևում էր ձայնին, աքլորը աւելի մօտից կրկնեց իւր կանչը։ Էլ կասկած չկար. նրանք եկել էին։ Զգուշութեամբ, ան-

շշուկ Տիրան բէյը դուրս սողաց պատշգամբ, մահուան քրտինքում պատած։ Մեռելային լռութիւնը տիրում էր աշխարհին և ցուրտը թափանցեց Տիրանի ոսկորների ծուծը ու նրան սարսռացրեց ջերմախտով տառապողի նման։ Մութն էր գիշերը, աղջամուղջը պատել էր Բիւզանդիոնին Ադամի խաւարի նման և երկինքը ծածկուել էր տխուր ամպերով, որոնց երեսից հատ հատ կաթկթում էր, մշտահեղձ կնոջ արտասուքների նման։ Քնել էր քամին, դադարել էին հովերը և խորհրդաւոր այդ լռութիւնը խզում էին սալայատակի վրա գլորուած հատ հատ անձրևի կաթիլները։ Այս տխուր լռութեան մէջ Տիրանը լսում էր փողոցում իրար մեղմամաբար խօսածները և աչքերը չռելով մթնումը նկատեց խոստացուած պաստառը, որ արդէն պարզել էին։ Վերջապէս աքաղաղը երրորդ անգամ կանչեց և շշնջալով Տիրանին ձայն տուին։ Մինչև անգամ մէկը գլանակը վառելու ձևով յատկապէս լուցկի բռնկցրեց, որ Տիրանը իսկապէս պաստառը տեսնի և այն կողմը ուղղէ իւր թռիչքը, թէև պաստառն այնքան մեծ էր, որ որկողմից էլ թռչէր, նրա վրա էր ընկնելու։ Էլ ոյժ չմնաց Տիրանի անձում, նա դողդողալով անցաւ պատշգամբի ճաղերից, կախուեց նրա յատակից, օդի մէջ ազատ տատանուեց, բաց թողեց ձեռքերը....։

Անվնաս ընկաւ պաստառի վրա, իսկոյն նրան դրկեցին, վազեցրին դէպի Երրորդութեան եկեղեցու կողմը կանգնեցրած կառքը նստեցնելու, յանկարծ ոստիկանները շրջապատեցին Տիրանին փախցնողներին, կալանաւորեցին և թշւառ բանտարկեալին ազատել տենչացողների հետ վերադարձրին բանտ։ Տիրանին

համարեա շնչասպառ գլորեցին իր հին որջը։

Ոստիկանական աստիճանաւորները, Պերայի մխիթէսսարիֆը, քննիչը, դատախազը, Նազմ-բէյը և Սէթօն դիմեցին Ղալաթա-սարայ։ Անմիջապէս պրօտոկոլ կազմեցին և մանրամասնութիւնները հեռախօսով յայտնեցին ուր որ պէտք էր։ Արշալոյսը չբացուած խիստ հսկողութեամբ Տիրանին Ղալաթա-սարայի բանտից փոխադրեցին Զրաղանի պարտէզի քաղաքական նշանաւոր յանցաւորների վանդակը։

Հետևեալ իրիկունը, արևը մայր մտնելուն մօտ, Սէթօն Բաբ-Ալիի հրապարակից արագ քայլերով դիմում էր ստիկանական հրամանակալի դուռը։ Նա սաստիկ մռայլած էր և յոգնածութիւնը քիչ էր մնում նրան ընկճի, գլորի, բայց նպատակին հասնելու տենչը, վրէժխնդրութեան ոգին քաջալերի էին կարդում նրա ջղերին և նա ամենայն եռանդով ձգտում էր, բարձրանում էր զառիվերից դէպի նպատակատեղին։ Այնպէս զբաղած էր իւր ծրագրով, ինքնախոհով, որ չէր նկատում շուրջը կատարածն ու անցած դարձածը։ Վերջապէս նա հասաւ ոստիկանութեան դուռը և ուղղուեց Նազմի առանձնասենեակը։ Խալիֆի զաթիէների հրամանակալը նրան սպասելուց արդէն կրքի էր եկել և զայրութից չեխում էր, որին որ պատահում էր։

— Վերջապէս, էֆէնդի, երևցաք, մի՞թէ կարելի է այսքան սպասեցնել, այսքան չէն տանջել...։

— Ներողութիւն, ես պարապ չէի ման գալիս, զուր զբօսանքների մէջ չէի, այնքան հեռու է ձեր պաշտօնավայրը, որ մարդ ժամեր կորցնում է, մինչև տեղ հասնելը....

—Ասացէք, խնդրում եմ, ինչ արիք։ Ահա ձեր ծրագրի հետևանքը. որսը մեր ճիրաններից հանեցին. Բէհչէթը այժմ կարող է ամէն խաղ խաղալ։

—Ո՛չ ոք չէր կարող երևակայել, որ Բէհչէթի լրտեսները կէս գիշերին մեզ պիտի հետևէին և որսը ճիրաններիցս խլէին։ Ահա, եթէ դուք չպնդէիք, բաց թողնէիք, նա կչախչախուէր սալայատակի վրա և այսքան սրտատանջի չէինք ենթարկուել։

—Յետո՛, ես էլ կկործանուէի, ես խոստացել եմ նրա կեանքի ապահովութիւնը։

—Փախչող, թռչողին դուք էլ ինչպէս կարող էիք երաշխաւորել։

—Ինձ լաւ չհակելու մէջ կմեղադրէին և այդ էլ բաւական էր կործանումս արագացնելուն։ Շատ լաւ եղաւ, որ անմիջապէս հասանք և պրօտոկոլ կազմեցինք։ Դրանց կալանաւորումը էլի իմ ձեռքով կատարելով, կարողացա գիրքս բռնել, թէ չէ Բէհչէթը պիտի երկու որսը միասին յափշտակէր, թէ Այէմեաններից վարձատրութիւնը և թէ մեր անկումը։

—Նա ականջի ետևը կտեսնի, այդ չի տեսնի։ Նա երևակայում էր, թէ մեզ քնացրել է, բայց ինքը չորս ոտով ծուղակն ընկաւ. մեզ խանգարեց, բայց չկարողացաւ խոստովանել, թէ ինքն էր յափշտակել կալանաւորը փախցնողների ձեռքից։

—Այդ թո՛ղ մնա, գեթ այստեղ էլ մաշկերս դիմացաւ չպատռուեց։ Ասա՛, տեսնենք, այժմ ինչ կարող ենք անել։

—Ես արդէն Զրաղանում ամէն բան կարգադրել եմ. ամէն բան պատրաստել, մնում է նաւապետը,

որին դուք հրաւէր կարդացել էք և գիշերս յատկապէս պիտի տեսնէք։

—Կարդադրել, վճարել էք. վստահ էք, որ չեն դաւաճանել։

—Բոլորովին, տարի դրամը, նրանց վստահած տեղը թողի որ երբ մէջ գիշերին բաց անեն դռները չարագործներին նաւ ուղարկելու ՁԵ (85) համարի փոխարէն ՀԵ (75) տան։ Այս խառնաշփոթ շրջանում ով է հետևելու, այն էլ կէս գիշերից յետոյ։ Երբ նաւապետը Մարմարա դուրս գնա, իսկոյն կոտորածն ըսկսելու է։ Դուք յատկապէս նրան կպատուիրէք, որ ամէնից առաջ Տիրանի գործը լմնցնէ և խոստումդ էլ, վճարումդ էլ՝ այնպիսի ձևով կտաք, որ նա թաղուի ենթադրութիւնների և կասկածների մէջ, երկիւղից անմիջապէս կատարէ կարևորը։

—Բայց եթէ Բէհջէթը հետամտի, ինչպէս երէկ գիշեր հետամտեց, այնժամանակ...

—Բէհջէթին խոստացել են հրովարտակ, որը վաղը, կամ միւս օրը ստանալով մեզ պիտի խայտառակէ ու կործանէ։ Նա գիշերս այդ անուրջների մէջ է և դժուար թէ կարողանա կասկածել։ Բացի այդ, Չիբուխչիին ասել եմ, որ գիշերս նրան թիրեաքի...

—Բանտապետից վստա՞հ էք, խօ մեզ չի՞ մատնել։

—Անկասկած. նոյնպէս զօրականից, որ պիտի առաջնորդէ խումբը դէպի շոգենաւ։ Ես չեմ երևցել նրանց, ինձանից կարող էին կասկածել։ Սակարկութիւնը եղել է իմ բացակայութեան, ոչ ոք չի կարող

որևէ փաստ գտնել մեր դէմ։ Քաղցած մարդիկ են, ինչի առիթը պիտի ձեռքից բաց թողնեն։ Հազարական լիրան քիչ փող չէ։ Արդէն հարիւրական ոսկի տրուեցաւ, որ սրանք իհարկին մէջ գիշերին հնչիւն ոսկով լռեցնեն զինուորներին, կամ պահակներին՝ խորհրդաւոր հպատակութիւն պահանջելով։ Արդէն հրամանագրի ՁԵ թիւը՝ քերուած ու շինուած է ՀԵ, այնպէս որ Չրաղանից յանկարծակի ՀԵ թիւը շոգենաւ բարձրանալուց—թռցնելուց յետո, ուր ուզում են թող գնան...։

XIV

ՈՍՏՆՈՒՄ

Սէլթօն ամբողջ օրն ու գիշերը վազել էր ինչպէս Տիրանին Մարմարա գնալիք շոգենաւին հասցնելու, նոյնպէս Աթէնային Բէատրիչէի հովանիից դուրս քաշելու համար։ Ոստիկանապետի դռնից դուրս գալուց յետո, նա ուղղակի կառք նստեց և ուղղուեց պատրիարքարան, որտեղ պիտի տանէին այդ գիշեր Աթէնային, որպէսզի հօրը յանձնեն։ Աթաբէյը Սէլթօյի ծրագրի, Մադսէթ բէյի խորհրդների համաձայն դիմել

էր պատրիարքարան և պահանջել էր, որ բռնի ույժով աղջիկը դուրս կորզէին ծնողների տանից և իրան յանձնէին։ Խնդրագրի գլխաւոր փաստը Աթէնայի և Իգէասի՝ երկու մօրքուրի զաւակների՝ *զարմիկների* սէրն էր, որոնք յանդգնել էին եկեղեցական այդ կարգի դէմ մեղանչել իրար սիրելով։

Պատրիարքարանը յատուկ պաշտօնագրերով դիմել էր արտակարգ գործերի դատախազին, խնդրել էր, որ իրեն աջակցի Աջամեանների բնակարանից դուրս քաշելու Աթէնային, որտեղ Իգէասի մուտքը յաճախ նկատել էին Սէթօյի լրտեսները։ Պատրիարքարանը Սէթօյի ծրագրի համեմատ առանց նրա ընկերակցութեան կատարել էր այդ փորձը և վարդապետները, բարապաններով ու ոստիկաններով այնպէս յանկարծակի մտել, վերցրել, տարել էին Աթէնային Պատրիարքարան որ ոչ ոք չէր կարողացել նրանց ընդդիմանալ։ Տարաբաղդաբար Բէատրիչէն տանը չէր եղել. Աղաւնի խանումն էլ չէր ըմբռնել վարդապետների միտքը, Աթէնան պատրիարքի առաջ դուրս գալու և վէճը բացադրելու էր շտապել։

Պատրիարքարանում երբ դիմադրել էր Աթէնան և չէր զիջանել հօրը խնդիրներին՝ տուն դառնալու, վրա էր հասել Բէատրիչէն Ֆրանսիական հիւպատոսի թարգմանի հետ. Հայրը և պատրիարքարանը չէին զիջել Բէատրիչէի խնդրին, աղջիկը պապոնց տունը վերադարձնելու, Աթէնան էլ մերժել էր հօր տունը վերադառնալու։ Վերաջպէս որոշել էին Աթէնային յանձնել Պէրայի միւթէսսարիֆի օգնականի տունը, որի կինը Աթէնայի մօրքուրի աղջիկն էր։

Սէթօյի կառքը Պատրիարքարանի դուռը կանգնելու պէս, բարապանը դուրս վազեց և նրան նկատելով ասաց.

— Էֆէնդի, գնացինք, բերինք խանումին, հանգիստ եղէք։

—Վե՞րևն է, ասաց կառքից իջնելով Սէթօն և ձեռքը գրպանը խրեց ու մի ոսկի հանեց աւետատուին վարձատրելու։

—Վերը մարդ չկա, գրագիրն է,... Տարին, գընացին, շնորհակալ եմ, էֆէնդի... այս ի՞նչ նեղութիւն..

—Ո՞ւր տարին, ո՞ւր գնացին,

—Այդ չգիտեմ, բայց Աջէմեանների տուն չըտարին։

—Կարելի է, գրագիրը գիտէ, դուռը բա՛ց է, հարցրեց և ուղղւեց Սէթօն սանդուխներից դէպի վեր։

Գրագիրը թէև գործ չունէր, բայց սեղանի մօտ նստած թուղթ էր մրոտում, անհամբեր Սէթօյի դարձին սպասելով։ Կառքի աղմուկից նա էլ դուրս թռաւ, դիմաւորեց ոստիկանութեան գաղտնի պաշտօնակալին։ Դեռ Սէթօն բերանը չբացած, գրագիրն ասաց գլուխը խոնարհելով։

—Էֆէնդի, ամէն բան լմնցաւ, խանումին ուղարկեցինք *մուավին* (օգնական) էֆէնդիի տունը, Աթէնայի մօրքուրի աղջկանը մօտ։

—Հա՛ն, ասաց Սէթօն ետ դառնալով,

—Աթաբէյը խնդրեց, որ անմիջապէս դիմէք իր տունը, որտեղ Մագսէթ էֆէնդիի հետ ձեզ են սպասելու։

—Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ, ասաց քայլերը փոխելով Սէթօն...

—Յատկապէս ձեզ յայտնելու և խորին երախտագիտութիւնս ապացուցանելու համար. երկու ժամէն աւելի կա, որ ձեզ կսպասէի...

Սէթօն ձեռքը գրպանը տարաւ, երկու ոսկի դուրս հանեց և գրագրին ափը դնելով ասաց.—Ներեցէք, ուշքս անգամ կորցրել եմ...:

—Շա՛տ շնորհակալ եմ, ասաց գրագիրը և հետևեց Սէթօյին, որ սլացաւ դէպի կառքը:

Մ՝ազսէթ բէյը Ա.Թայլի հետ ալդէն մի ժամից աւել սպասում էին Սէթօյին: Մի քանի անգամ փաստաբանը ուզեցել էր հեռանալ, բայց Ա.Թայլի Թախանձանքից ստիպուած նստել և շարունակել էին իրենց խորհրդակցութիւնը՝ մաստիկայի և աղանդերի սեղանի շուրջը: Սէթօյի մուտքը նրանց ազատեց տաղտկալի սպասողական վիճակից: Երբ տեղաւորուեցաւ Սէթօն նրանց սեղանի մի կողմը, փաստաբանը ասաց.

—Ես արդէն շատ ժամանակ կորցրի, գիշերս մենք յատուկ խորհուրդ ունենք, պարտաւոր եմ ա-ճապարել, որ ինձ չսպասեն: Ա.Հաւասիկ, արդէն յանձնել եմ Ա.Թաբէյին գործագիր մարմնի որոշումը, վաղը առաւօտ դուք կշտապիք Էնվէր-բէյին վեր կառնէք, գրասենեակիս առաջին անցնելով՝ ինձ ալ իմաց կտաք, որ ընկերակցիմ պաշտօնապէս ստանձնելու և յանձնելու Ա.ջէմեաններին գոյքը Ա.Թաբէյին: Վերջապէս ուզէ օրւան տանջանքից յետո, հազիւ կարողացա համոզել, թէ երկու տոկոս դատաստանական ծախս առնելու իրաւունք չունի Ադիեա (արդարութեան

դատարանը), քանի որ վէճ չէ սկսած և վիճելի խնդիր չկա: Ասան հազար լիրան այնքան քաղցր է, մանաւանդ ներկա անձուկ ժամանակը, երբ արդարութեան առեաններին գանձանակը ամբողջ տարւան մէջ այդպիսի գումար չի գանձուիր, որ նախագահը ո՛չ մի փաստի, ո՛չ մի խօսքի, ո՛չ մի օրէնքի, չէր ցանկար հպատակիլ:

—Շատ էլ իրաւացի է նախագահի առարկութիւնը, կառավարութեան գանձարանը դատարկ է, երկրի եկամուտը օտարները կկլանեն, թէ որպէս պետական պարտքի տոկոս և թէ որպէս պահանջք, երկիրը սնանկացած է, գոյութիւն ունեցող հարկի եօթանասնուն տոկոսն ալ չէ կարող լրացնել, ինչ անեն պաշտօնակալները, դրամ չկա, որ ռոճիկ ստանան և վարձատրեն իրենց բոլորած ծառայողների ստւար բազմութիւնը: Նախագահի որ մէկ վերքը կարող է բուժել այն երկու հազար լիրան, որ գաղտնապէս մտցրիք անոր դրպանը: Ինչպէս, ուրեմն հրամանը—ամէն բան պատրաստ է, առաւօտ մենք ստանանք գոյքը, մնացեալի մասին վերջը կխորհինք, ասաց Սէթօն, մի բաժակ մաստիկ խմելով:

— Թէև ուղղ օր ինձ տանջեցին, բայց նպատակները իրագործուեց, ասաց ինքնագոհ Մազսէթ բէյը: Իսկ օրհորդի խնդիրը.....

— Դուք կարողացա՞ք պատրիարքարան գնալ, ասաց Սէթօն ամբողջ ուշքը կենտրոնացնելով Մազսէթի դէմքի վրա:

— Մի՛թէ արժէ դրա համար պատրիարքարան գնալ. Գործն աւարտած է, օրհորդը Մուահիդ էֆէն-

դիի տանն է։ Բէյը կգնա առաւօտ, կհամոզէ և ամէն բան կվերջանայ։

— Այդ մասին անհոգ եղիք, ես վստահ եմ, որ Ամէնան այս գիշերը իսկ ինձ հետ տուն դառնայ։ Ես անմիջապէս գնալու եմ այնտեղ, ասաց Ամաբէյը։

— Դատախազը արդէն գրաւոր դիմել է պատրիարքարան, ասաց Մագսէթ. բէյը, որ յանցաւորին եկեղեցական պատիժը սահմանէ պատրիարքը։ Ես գրեցի, որ Իդէասին ճամբեն որևէ վանք, մի կամ երկու տարի ժամանակով ապաշխարելու և մոռանալու.....։

—Իդէասին ոստիկանութիւնը արդէն կալանաւորել է, ասաց Ամաբէյը։

—Ինչպէս, ասաց Սէթօն բոլորովին հարցական նշան դառնալով։

—Դեսպանատնից դիմել էր Բէատրիչէին տեսնելու, երբ լսել էր Ամէնայի պատրիարքարան տարուիլը, ուղղակի կառք էր նստել գնացել Պատրիարքարան։ Պատրիարքարանի դրան մօտ կալանաւորում են և տանում ոստիկանական—հրամանակալի դուռը։ Մայրը լեղաճաք այստեղ էր վազել, Ադնիւը ճանապարհ էր գցել, որ ինձ հետ դեմառդէմ չտեսնուի։ Իտալական դեսպանատուն է դիմել, դեսպանուհին չի՞լ ընդունել, գնացել է կօնսուլին։

—Ուրեմն ճիշտ է այն լուրը, թէ դեսպանուհին չի ուզեր այդ լակոտի երեսը տեսնել, ասաց Սէթօն անտարբերութիւն կեղծելով։

—Դեսպանն էլ շատ է զայրացել, թէ ինչի առանց արտօնութիւն խնդրելու ինքնագլուխ Իդէասը դուրս կգա դեսպանատնից և կթափառի, ասաց Ամաբէյը, ինքնագոհ կնճիռներ ընդունելով։

—Ուրեմն առաւօտ վաղ գրասենեակս ձեզ կսպասեմ, ես պէտք է գնամ, ասելով ոտք ելաւ Մագսէթբէյը։

—Ես ալ տեղ ունիմ գնալու, ասաց Սէթօն և ուղղուեց դէպի Բէշիքթաշ։ Գիշերը մթին էր, ամպամած և Բոսֆորի ափերի բնակարանների լուսամուտներից ճրագների լոյսը դադարել էին իրենց շողքերը արտացոլացնելուց։ Խաւարը սաստկացել էր, այնպէս որ Տոլմաբաղչէի ծովափունքը շրջողը չէր կարող զանազանել ծովը ցամաքից։ Մռայլ երկնքի տակ տխրել էր Նորբիւզանդիոնը, խալիֆի երջանկավայրը մրափում էր խոր քնով։ Ոչ մի թեթև հովի շարժում չէր նկատուում, ոչ մի անցորդ սիրտ չէր անում քայլերը առաջ փոխել մութ փողոցներում, որոնց լապտերներն էլ փլփլում էին մահամերձ հոգեվարքի աչքերի նման։ Երբեմն երբեմն գիշերապահների մահակի սալայատակին խփած հարուածների ձայն էր լսուում, որոնք շատ կարճ էին տեւում, կարծես չէին յանդգնում բնութեան խորհրդաւոր լռութիւնը խանգարել։ Ամբողջ Բոսֆորի երկարութեամբ շարուած նաւերից միայն «Օրխանիէ» յածանաւի լապտերների շողքերը անդրադարձել էին նեղուցի ջրերում և ծխանից կարմրաշէկ բոցեր ու կայծեր էին օդում տարածուում։ Նկատելի էր, որ յածանաւը պատրաստուում էր խարխախը քաշելու։ Մռայլութեան մէջ յածանաւի արձակած կարմրագոյն ճառագայթները սարսափ էին սփռում։

Ամաբէյի տանից դուրս գալով Սէթօն, մի քանի տեղ պատահելուց և կարևոր հրահանգները տա-

լուց յետո, իջել էր Տոմլա-բաղչէ: Ծովափի մայթից նկատելով «Օրխանիէ» յածանաւի պատրաստութիւնները, թէև նա հրճւեց, բայց դեռ կասկածում էր, տարակոյսը նրան տանջում էր: Մի քանի անգամ նա ուզեցել էր մեծ պողոտայով դէպի Ջրաղան, բայց չէր համարձակւել առաջ գնալ, քանի որ այդ ուղիից գիշերային անց ու դարձը արգելւած էր: Կասկածը փարատելու տենչը նրան մղեց առաջ՝ մինչև պահականոցի դուռը, որտեղ պահակները նրան կալանաւորեցին և ուզում էին արգիլել: Սէթօն գիշերային «պառոլը» յայտնելով թէև ազատւեց, բայց ստիպւեց ետ դառնալ, քանի որ զօրականը չուզեց կարդալ անգամ նրա այն վկայականը, որով նա թոյլտւութիւն էր պահանջում առաջ գնալու, ինչոր արտակարգ խուզարկութիւն կատարելու համար: Զօրականը համաձայն իրան տրւած հրահանգին, ասաց խրոխտաբար.

—Եթէ նոյնիսկ Սուլթանը ցանկա այս ժամին այս փողոցով անցնել, իմ պարտքս է նրան էլ արգիլել: Ձեր «պառոլն» ու վկայականը յարգելով, ձեզ բաց եմ թողնում, որ ետ դառնաք, իսկ եթէ պնդէք, գիշերս ինձ մօտ հիւր կմնաք պահականոցում:

Սէթօն գիտէր այդ բոլորը, բայց ըմբռնեց, որ ոչնչով յամառ չէրքէզին ո՛չ մի զիջում չպիտի կարողանար անել տալ, ուստի վերադարձաւ կրկին Տոլմաբաղչէ: Թէև ծովափում նաւակներ շատ կային, բայց ո՛չ մի նաւաստի չէր կարող գտնել, որ յանդգնէր իրեն «Օրխանիէ» հասցնել: Վերջապէս տեսաւ, որ «Օխանիէն» քաշեց խարիսխը և շարժւեց: Տասը րոպէից յետո, մի նաւակ մօտեցաւ Բէշիքթաշի նաւա-

մատոյցի մօտ, մի քանի անձ բարձրացան նաւակից, ուղղեցւան դէպի ծովափ: Սէթօյի սիրտը խիստ արագ տրոփելուց քիչ էր մնում, որ ճաքի, նա անհամբեր ուղղւեց նաւակից դուրս գալողների կողմը, որոնք իրեն էին դիմաւորում:

—Դուք էք, էֆէնդի, ձեզ լաւ շուտ գտանք: Ես ենթադրում էի, թէ դուք, այլևս համբերութիւնը կորցրած, վերադարձած կլինէիք, բայց շատ ուրախ եմ: Հեռուից՝ նաւակից ձեր մշտավառ սիգարը նկատելով ուղեկիցս, ինձ վստահացնում էր, որ ձեզ այստեղ էինք գտնելու, ուրախ եմ, որ չսխալւեց:

—Այդ բոլորը վերջն էլ կարող էք պատմել, ասաց այլայլած ձայնով Սէթօն, կոշտ թրքական արտասանութեամբ, դուք ինձ ասէք, վերջացրիք յանձնարարւածը....

—Ահա նաւապետի տոմսը...

Սէթօն տոմսակը յափշտակեց և գրպանի լապտերի լոյսով անմիջապէս զննեց ու ասաց.

—Խո՛ չէ՞ք սխալւած, նա էր, որին յանձնեցիք նաւապետին:

—Էֆէնդի, ինչի էք կասկածում, Տիրան-բէյին եթէ ես անձամբ չճանաչէի, կարող էին ինձ սխալացնել, բայց աչքերս և ականջներս չէին կարող սխալւել...

—Վստա՞հ,

—Բոլորովին ապահով, խեղճը սարսափից քիչ էր մնում, որ խելագարւի: Կարդացիք խօ՛ նաւապետի տոմսակը, նա մի քանի տող էլ գրեց, որ Նազմ-բէյին յանձնենք:

—Շտապինք, նա Ղալաթա-սարայում է գիշերելու, անհամբեր մեր պատասխանին սպասելով։

Սէթօն ընկերների հետ մտան իրեն սպասող կառքը և Գազ-խանէի ձորակով բարձրացան Թագսիմ, սլացան դէպի Ղալաթա-սարայ։ Նազմի հետ ամէն բան կարգադրելուց և զօրականներին խոստացուածները յանձնելուց յետոյ, Սէթօն բաժանուեց, դիմեց տուն։ Նա մտազբաղ, մրթմրթալով գնում էր, տատանուելով երբեմն երբեմն կանգ առնելով հարբածի նման։ Ադաջամիի առաջից անցնելիս, Սէթօն կանգ առաւ և շուրջը զննելուց յետոյ ասաց.—Ամէն բան վերջացաւ. մէկ ոստումով Տիրանը Մարմարա ծովը, Իդէասը զընդան, իսկ Աթէնան ոտքերիս տակ.... Վաղը գիշեր, հէնց այս ժամին արդէն մեր նշանը օրհնուած, վերջացած կլինի։ Առանց պատերից պատասխան ստանալու, նա շարունակեց իր ճանապարհը։

Գնում էր Սէթօն իւր երկար ճանապարհը, աշխատելով կարողացածի չափ ձիգ պահել իրանը, ձողի նման ուղղել էր ցանկանում իր կորացած քամակը, որ վաղուց կրկալ էր դարձել։ Կարծես յաղթանակով Հռոմ էր մտնում խաւարի հերոսը։ Մտապատկերները երբեմն մեծ մեծ քայլերով սլացնում էին նրան մայթերի վրայից, երբեմն էլ ստիպում էին հանդարտել, մեղմել գնացքը։ Աչքերը մերթ չռում, չորս կողմն էր շրջում, ականջները սրած, լարած ուշի ուշով լսում էր, կարծես մարդ էր որոնում, թշնամիներից էր ուզում փախչել և ծածկուել։ Ամէն մի ճրագ, ամէն մի փողոցային լապտեր նրա աչքերն էին գրաւում, նա զննում, քննում էր ամէն շշուկ, ամէն մի սաւ-

լոց սրտադող էր անում, նրան ստիպում էր մի կողմը քաշուել, շունչը կտրուած դիտել, զննել և երբ զգում էր խաբուած լինելը, նա կրկին շարունակում էր ընթացքը։

—Կառք ալ չէ մնացել, որ մարդ կարողանա շուտով տուն հասնել, հանգստանալ, ասաց Սէթօն ինքն իրեն, զննելով ժամացոյցի սլաքները գազի լամպի շողքերի տակ։ Ցուրտ է, ձմռան նման սառն քամի է կփչէ, կդողամ պէտք է շտապել, տուն հասնել, մռմռալով քայլերը արագացրեց։

—Այս գործս ալ պրծա՛։ Առաւօտ պէտք է ամբողջ օրս անոր համար զոհեմ։ Ա՜հ որքա՜ն պիտի այս ու այն կողմը վազեմ։ Ալ այսօրուանէ էն իմս է, իմս, ան ալ իմս է, ան ահաւոր ոսկիի շեղջը։ Իմ թագուհիս է, իմ գանձս է, իմ գոհարս է, ես էնոր ալ, անոր ալ տիրեցի... Այո՛, ես, ես տիրեցի անյողդողդ ջանքով, իմ յարատև աշխատութիւնով, հաստատամիտ կամքով և յամառ կռուով։ Թո՛ղ նախանձից ու գայրութից ճաթին Պէրայի երիտասարդները, բժիշկները ու փաստաբանները, Աթէնան պիտի զարդարէ Սէթօյի բնակարանը, նա պիտի շողշողա յարկիս տակ... Իսկ անդին, Աթէնայի հետ մի ահաւոր, մի շլացնող ու ապշեցնող գանձ։ Երկու գանձ միասին, երկու յաղթանակ մի հարուածով և մի ոստումով։ Եւ եթէ այն ալ կյաջողի, ոտքս կդնեմ Շուրայի-Դօվլէթ (պետական խորհուրդ), ալ այն ժամանակ... ես գիտեմ, ես... Հարիւր հազարներ հնչիւն ոսկով, սիրուն կնիկ, բարձր դիրք։ Այո՛, այո՛ և այս բոլորը մի միայն իմ ջանքով, իմ տոկուն աշխատութիւնով, իմ եռանդով և հանճա

րով, առանց որևէ մեկի հովանաւորութեան ու պաշտպանութեան: Ընդհակառակը միս մինակ հազարների դէմ, նախանձորդ բիւրաւորների դէմ կուելով և ընդհարուելով: Թո՛ղ չյանդգնեն խօսել, թո՛ղ չհամարձակին պարծենալ, թո՛ղ սիրտ չանեն փքուել պոլսեցի երիտասարդներն իմ դէմ, ո՛չ իրանց ուսումով, ո՛չ իրենց փողով, ո՛չ էլ դիրքով: Ամէնն էլ առաջ են գնացել իրենց հօր փողով, իրենց նախորդների անունով, շքով, իրենց բարեկամների, բարերարների հովանաւորութիւնով և աջակցութիւնով: Իսկ ես, լացաթաթի զաւակս, հացթուխի թոռը, աննշան հիւղից, անորոշ որջից, անյայտ սերնդից, անարգւած հասարակութիւնից, նախատւած ամբոխից, այսօր գալիս եմ պաշտպանութիւնս և հովանաւորութիւնս տարածելու...: Հալածւածը, անարգւածս, զրկւածս և զրկանքի ծովում հեղձւածս առաջ պիտի անցնիմ, առաջ պիտի կանգնեմ, զրկւածներին անարգւածներին, հարստահարւածներին պաշտպանելու...: Թո՛ղ սարսին թագէոսներն, անմեղ կոյսերին թունաւորողները, այրիների արիւնը ծծողները, կեղեքումով թշւառութիւն տարածողները...: Թո՛ղ այդ տանջանք ստեղծողներն ու արծարծողները տաջրւին, լեղի լճակների մէջ խեղդւին, հառաչանքների ճապին, արտասուքների մէջ ընկղմին, գուցէ ըզգան, գուցէ ըմբռնեն իրենց զոհերի վիճակի՝ անհանգչելի բոցերի, խանձւածի, խորովածի, տապակւածի տանջանքները,...: Սրտակէզ մորմոքների կսկիծը զգան զգա՛ն, գուցէ զգաստանան...:

Սէթօն համակւած այս մաքով, երբ անցաւ Պէրայի հանգստարանը, թողեց Մեծ-փողոցը, մտաւ

իրենց տան նեղ անցքը, մօտեցաւ դռան, նա նորից կանգ առաւ և շարունակեց իր մենախօսութիւնը.— Բայց եթէ թուրթուշիկս գարձեալ շարունակէ իր յամառութիւն. չուզենայ անձնատուր դառնալ... չուզենա ինձ հետ կապւել...: Ա՜հ, ես, ես ինձ կրակը կգլորեմ, ծովը կընկնեմ...: Այո՛, թուրթուշիկս անչափ հաճելի է. անոր կազմը, աչքերը, վարդ շրթունքները հմայել են ինձ, բայց այդ հմայքը հազարաւոր աղջիկներ էլ ունին. որոնց ո՛չ մեկի հետ երբէք չէի զիջանել կեանքս կապել... Ամէնեան հրապուրիչ է, բայց անոր հետ կացպւած հարիւր հազարները.... ա՜հ, այդ ոսկիները են ինձ պէտք... այդ գանձը Ամէնայի նման հարիւրաւոր աղջիկների կտիպ բզզալ իմ չորս բոլորս, երկրպագել և խնկարկել... Ի՞նչի պիտի ես զրկւիմ այն վայելքներից ու հաճոյքներից, որոնց մէջ կլողան իմ բարուջս չարժող բազդից երես առածները:

XV

Ե Փ Ա Ն Ֆ

Մինչ Սէթօն ու Նազմը զբաղւած էին Աջ համարի փոխարէն Ցջ համար կալանաւորը «Օրխանիէ» յանձնաւը փոխադրելու, որ Մարմարիայի ձկներին

վերատեսուչ ուղարկեն. Բէատրիչէն նորից ժամադրութիւն էր խնդրել Բէհջէթ աղայից Բէյ-լիք-թաշում բարեկամներից մէկի տանը տեսնուելու: Որոշեալ ժամին եկաւ խափչիկը. որին անհամբեր սպասում էր թշուառ օրիորդը:

—Ես ձեզնից ամաչում եմ, ասաց ներքնին դէմքը մռայլած, ես երբէք այսքան ամօթապարտ չէի մնացած, եմ առաջս, խոստացածս ժամացոյցի սլաքների հետ հաւասարապէս որոշեալ պահին կատարւածվերջացած էին: Չեմ կարող ձեզ համոզել, խանում, թէ ինչ տանջանքներ եմ կրում: Ձեր թշնամին, ձեր հակառակորդը մէկ գլուխ չունի, քառասուն բերան ամէն կողմից յարձակւում են, մոլորեցնում: Բայց և այնպէս չմտածէք, թէ վհատած եմ, ընդհակառակը, եթէ հարկ լինի բացի ամբողջ գոյքս, կարողութիւնս այս առիթիւ փչացնելու, իմ կեանքս էլ պիտի զոհեմ...: Երբէք Սէթօն, կամ Նազմը իրենց փափագին հասնելու չեն:

—Աղա, ես համոզւած, եմ որ դուք ամբողջապէս նւիրւած էք այս գործը կարգադրելու, գուցէ կարիք ունէք փողի, գուցէ կանխիկ դրամ պէտք է, առէք, վերցրէք, որքան կամենաք, միայն թէ շուտ, որքան որ կարելի է շտապեցէք: Ղալաթա-սարայի պատշգամբից նրան ցատկել տւողները, ամէն տեսակ ստորութիւն կատարելու պատրաստ են: Պէտք է աճապարել...

—Դրան կասկած չկայ, ես էլ համոզւած եմ, բայց այնպիսի արգելքներ են դրել և օրէցօր այնպիսի շղթաներով են կապում իմ անցքերը, որ չեմ կա-

րողանում հասնել նպատակիս Ես փողի նեղութիւն չունիմ, քսակս լիքն է, դեռ կարող եմ ահաւոր խոշոր կոխել անկուշտների որկորը, բայց....:

--Խնդրում եմ, առանց քաշւելու, ինչոր պէտք է, ասացէք, իրար նպաստենք, որպէսզի ժամ առաջ ազատենք Տիրանին...: Նա չի դիմանալ...:

—Ձեր խոստացած գումարից մի բան էլ աւել ես խոստացել եմ շրջապատողներիս, բայց իմ խոստման կրկնակին արել է Նազմը: Ուստի ես պարտաւորւած եմ ոչ միայն աւելացնել, այլ կանխիկ վճարել, որ անպայման ձեռք բերեմ կարևոր ‘‘իրադեն,, ...

—Հարիւր հազարի փոխարէն ես էլ խոստանում եմ հարիւր յիսուն հազար, երկու հարիւր հազար, միայն թէ դիշերս բոլոր միջոցները գործ դրէք, գնաս հանեցէք Տիրանին...: Նազմը ասել է, թէ գիշերս ամէն բան լմնցնելու են, իսկապէս այս ժամադրութիւնը խնդրելուս, ձեզ տեսնելուս պատճառն ալ այս է:

—Դուք անհոդ եղէք, ոչ թէ Նազմի, այլ վիւքեալալի ձեռքն էլ չի կարող հասնել այնտեղ, որտեղ Տիրանն է պատսպարւած: Վստահացնում եմ ձեզ, մի կասկածէք: Քանի որ դուք խոստացաք կրկնապատկել խոստացւածը, ես էլ տասնապատկելու եմ ջանքերս, որ այս գիշեր ոչ միայն հսկեմ. այլ անպայման ազատեմ և ձեզ վերադարձնեմ Տիրանին: Դուք ձեր դռնապանին ապսպրեցէք, որ զգաստ քնի, եթէ դուռը բաղխեն, իսկոյն բաց անի:

Այս տեղեկութիւնը առնելուց յետո, Բէհջէթ աղան դիմել էր պաշտօնատեղին, լրտեսներ էր կարգել, որտեղ որ պէտք էր և պարագան զեկուցել էր ու-

կարեւոր էր։ Բոլորը միասին հսկել էին, ենթադրելով թէ Նազմը այդ գիշեր որեւէ արտակարգ միջոցով պիտի կեանքից զրկէր իր թշուառ գահին։ Կէս գիշերի մօտ երբ պաշտօնակալները Ճա համար կալանաւորի փոխարէն Վա համարից Տիրանին դուրս էին բերել եւ «Օրխանիէ» յածանաւը փոխադրել, եղելութիւնը իսկոյն յայտնել էր Բէհջէթ աղան ուր հարկն է եւ անմիջապէս ստացել էր կալանաւորին նաւից դուրս բերելու եւ ֆրանսիական դեսպանատուն հասցնելու հրամանագիրը։

«Օրխանիէն» դեռ խարիսխը չքաշած, Բէհջէթ աղան իրաղէն ձեռին հասաւ նաւ։ Հաւատացեալների հրամանակալի պալատից քսանը չորս թիավարների, գունաւոր լապտերները նաւապետը դեռ հեռուից նըկատելով, շտապել էր Տիրանին բերող աստիճանաւորներին տոմսակ յանձնել ու հեռացնել։ Թէեւ սանդուխը բարձրացրած էին, բայց նաւապետը անձամբ մօտեցաւ նաւաստիներին եւ հրամայեց ցած գցել սանդուխը ներքինապետին ընդունելու համար։

Մէջ գիշերին, երբ մօտեցել էին զօրականներն ու ոստիկանները Տիրանի Զրաղանի որջին, վերջինս այդ անակնկալ այցելուներից այնպէս էր զարհուրել, որ ուշքը կորցրած, բժժած հետեւել էր դահիճներին, առանց ըմբռնելու արածն ու խօսածները։ Նաւակի մէջ թշուառը ուշագնաց էր եղել, իսկ երբ աչքը բացել նկատել էր «Օրխանիէ» յածանաւը եւ նրա պաշտօնեաները, հասկացել էր, որ իրեն հեռացնելու էին Կ. Պոլսից, գուցէ ծովի ձկներին կերակրելու համար…

Նաւապետը ներքինիին ընդունելիս, Տիրանը արդէն բանտարկուած էր նաւի մի ներքին փակուած օթիակում ուր առանձնութեան մէջ նա մի մաշկէ խշտիկի վրա անզգա գլորւել էր։ Տիրանը երեւակայութեամբ ազատ սաւառնում էր եւրոպայում, առանց զգալու իրեն շրջապատած խաւարը։ Նաւաստիները եւ նաւային սպասաւորները զարմացել էին, թէ ինչի նաւապետը այս օթիակը յատկացրել էր այդ պուշ եւ անխօս կալանաւորներին, որին յատուկ խնամով էին յանձնել պաշտօնակալները եւ առանձին ստացական ստացել ու հեռացել։ Շատերը ենթադրել էին, որ նա պալատական բարձր տոհմից, կամ նշանաւոր քաղաքական յանցաւորներից էր, որ արժանացել էր այդպիսի ուշադրութեան, թէեւ բոլորը նրան 75 թիւն էին անւանել։

Երբ ներքինապետը բարձրացաւ նաւ, անմիջապէս ծոցից մի սպիտակ սնդուսի քսակ հանեց, որի ծայրի ոսկեթէլ փունջի վրայի կնիքը մօտեցրեց նաւապետի շրթունքներին, որն անմիջապէս տարածած երկու թաթերով վերցրեց փունջը համբուրեց, ճակատին դրեց եւ ետ քաշուելով ուղղաձիգ կանգնեց, լսելու կրօնապետի հրովարտակը։ Նաւի պաշտօնակալները, ծառայողները ներքինապետի շքախումբը հետեւեցին նաւապետին, բոլորւեցին ներքինիի շուրջը, մի ձուաձեւ շրջան կազմեցին, ամէնը ձգուած շարւեցին որոշ դիրք բռնած, սպասելով պատգամի ընթերցման։ Ներքինին զգուշութեամբ եւ հանդարտ շարժումներով սնդուսի քսակից դուրս հանեց հրովարտակը եւ իր քարտուղարին առաջարկեց բարձրաձայն կարդալու։

Ընթերցման աւարտից յետո, նոյն յարգանքով

և ձևերով ներքինին հրամանագիրը դրեց քսակը, յանձնեց նաւապետին, որը ստացաւ կրկին համբոյրը դրոշմելով կնիքի և ոսկեթել փնջի ծայրին և ասաց ներքինապետին.

—Ազա, Զրաղանից երեսունը հինգ մարդ են բերել, որոնց անուննները յայտնի չէ, նրանց չեմ էլ ճանաչում: Պահանջած անձնաւորութիւնը եթէ ճանաչում էք, խնդրում եմ, վերցրէք և տարէք: Բայց սխալմունքից ազատելու և պատասխանատուութեան չենթարկուելու համար, ասացէք գոնէ նա ո՞ր համբուման էր ապրում, այստեղ միայն թուերով կարելի է մարդիկ գտնել:

—Նա 75 համարում էր, նիհար, միջահասակ թխագոյն դէմքով, սև աչք—ունքով մի թոյլ արարած է:

Նաւապետը հրամայեց և օթիակից դուրս քաշեցին, բերին Տիրանին: Ներքինին հրամայեց հետևորդներին գրկել Տիրան բէյին և իջեցնել նաւակ, որը ոչխարի նման այս ու այն կողմն էր տատանւում՝ ըսպանդների ձեռքից ազատելու համար: Նկատեց ներքինին Տիրանի անբնական շարժումները, աշխատեց մի քանի քաղցր խօսքերով նրան հանդարտեցնել, բայց զուր, Տիրանը կորցրել էր հոգեկան կարողութիւնը....:

Նաւակից դուրս գալուց յետո, կառք նստան, ներքինին Տիրանին առաջնորդեց հօրը տունը: Թէև կէս գիշերից երեք ժամ անցել էր, բայց ո՛չ դռնապանը, ո՛չ կահապը և ո՛չ էլ Բէատրիչէն կարողացել էին քնել: Այդ օրը նրանց դառնութեան բաժակը

այնպէս էր լցւել, որ բոլորի հանգիստը կորւել էր: Պատրիարքարանից խաբէութիւնով եկել, Ա.թէնային տարել, յանձնել էին մօրքուրին: Այն մօրքուրին, որի ամուսինը Պէրայի միւթէսսարիֆի օգնականի պաշտօնըն էր վարում, այսինքն Սէթօյի և Նազմի ստորադրեալն էր: Իդէասը անխոհեմութեամբ հետևել էր Ա.թէնային և ընկել էր ոստիկանութեան ճանկը, թուրքական գնդանը, որտեղից դուրս կորզելու համար Իտալական կոնսուլը դեռ ոչ մի քայլ չէր արել: Կաթւածահարը բոլորովին ընկճւել էր, երբ Ա.զաւնի խանումը սրտի պայթումի էր ենթարկւել, Ա.թէնայի պատճառով: Բէատրիչէն ամբողջ օրը դեսպանատուն, ոստիկանատուն, ներքինապետի և Սադգ աղային այցի գնալուց և դառնալուց տանջւած, եկել էր տուն կիսախելագար, ահաւոր տան մէջ մի խշտիկ չէր գըտնում, որ կարողանա անվրդով տարածւել և հանգստանալ. ամէմ կողմ, ամէն մի անկիւն նորա հոգիի խորքում խռովութիւն էր բարձրացնում և նա անդադար թափառում էր, այս սենեակից այն սրահը, այս նրբանցքից միւս պատշգամբը, պարտէզից բակ և չէր կարողանում խաղաղւել:

Ա.զաւնի խանումին հագցրել, տարածել էին մի սեղանի վրա, խունկ մոմ էին ծխացնում, որոնց բուրումը աւելի էր գրգռում թշւառ օրիորդի չղերը: Թէև Փառլադի ընտանիքի անդամները բոլորել էին իրենց դստերը և Թադէոս աղային, բայց Բէատրիչէն մնջել վհատել, հառաչում էր անմռունչ: Ա.թէնայի կորցնելը՝ նորան բոլորովին ընկճել էր, պատրիարքի թուրք ոստիկաններին աջակցելը՝ նորան յուսակտուր

էր թողել։ Զգում էր, որ նորան ընկճելու էին։

Յանկարծ երբ եկան իմացրին, թէ ներքինին Տիրանի հետ ներս են գալիս, Բէատրիչէն ոչ միայն չհաւատաց, այլ սկսեց մատները, երեսը տրորել, համոզուելու համար, թէ չէր երազում։ Բայց և այնպէս նորա ծնկները, սրունքները չհանգստացան, նա ուղղակի դուրս թռաւ դիմաւորելու իր սիրելիին։ Տիրանը որ մինչ Բէատրիչէի դիմաւորելը ապուշ, անխօս, դընդըրշկած ոչինչ չէր զգում, գրկաբաց ընկաւ սիրուհիի գիրկը և իրար կոկուց գրկախառնած ամոլները մտան իրենց առանձնարանը։ Փառլադի ընտանիքի անդամների ուրախութեան չափ չկար, բոլորը շրջապատեցին նրանց մոռանալով ներքինիին, որը սրահում բոլորւած շքախումբով սպասում էր Բէատրիչէի դարձին։ Երբ իմացրին օրիորդին, թէ նորան էր սպասում ներքինապետը, օրիորդը նախապէս պատրաստած կապոցը հանել տուեց դրամարկղից և ներկայացաւ խափշիկին շնորհակալութիւնը յայտնելու։

Մինչ ներքինին երկու հարիւր հազար լիրայի թղթակապոցը բարձած մի մանկլաւիկի իջնում էր Թագսիմից դէպի Տոմլա-բաղչէ, Սէթօն էլ դուրս գալով Պէրայի միւթէսսարիֆի օգնականի տանից՝ Աթէնայի մօտից, Հայոց գերեզմանատան կողքից միս մինակ անցնելով ուղղուեց դէպի տուն։ Ներքինապետը և շքախումբը չճանաչեցին այդ գիշերաշրջիկին, որը չղջիկի նման թիկնոցի ծայրով փաթաթել էր վիզն ու գլուխը և ծանր քայլերով առաջ էր շարժւում։ Այն ինչ Սէթօն ճանաչեց ներքինիին և մակաբերեց, որ նա Աջէմեանների—ոսկի աղբիւրի տանից էր գալիս,

բայց չկարողացաւ գուշակել, թէ ինչն էր խափշիկին այդ ժամին մղել դէպի կաթուածահարի բնակարանը։ Երբ նրանք բաւական իրարից հեռացան, Սէթօն ետ դարձաւ, կանգնեց, զննեց ներքինիի և շքախմբի ընթացքը, դիտեց ու ասաց իւրովի․

—Խե՜ղճ այլակերպ, չի կարող երևակայել, որ վանդակից ոսկի ձու ածող թութակին թռցրին։

Իրիկուն էր, Աղաւնի խանումին արդէն թաղել էին։ Աթա-բէյը ո՛չ միայն չէր գնացել մօրը յուղարկաւորութեան, այլ անչափ վրդովել էր, որ *նիշէթ-ի-թուար* չէր համաձայնել մեռել տուն մտնել այդ օրը և Աջէմեանի գոյքը իրան յանձնել։ Բէատրիչէն Տիրանին նորմալ վիճակի հասցնելու, ոստիկանութիւնից խսպառ ազատելու համար, առանց սպասելու սկեսուրի թաղման, ֆրանսիական դեսպանատան թարգմանի ընկերակցութեամբ-ծպտեալ դիմել էին Սիրքէջի և երկաթուղիով մեկնել էին դէպի Վիէննա, աշխատելով իրենց հետքը բոլորովին ծածկել ոստիկանութիւնից։ Բէատրիչէի ծնողները մի առժամանակ Թադէոս աղայի ցանկութեամբ տեղափոխուել էին կաթուածահարի տունը, որ պահպանեն, թէ իրենց դստեր գոյքը և թէ թուլացածին։ Ոստիկանութիւնը դեսպանատների և կոնսուլատների արտակարգ դիմումներից և պահանջներից ազատուելու համար, Իդէասին աւելի խոր որջ էր գլորել․ Թշուառ մայրը զաւակի հետքն անգամ

կորցրել էր, իսկ Սէթօն մտածում էր այնպիսի անդունդը գլորել թշւառ երիտասարդին, որ ինքը առանց որևէ ախոյեանի տիրէ Պէրայի գեղեցկուհիին՝ Աթէնային, իսկ նորա ձեռքի հետ Աջէմեանի կարողութիւնը....։

Ճշմարիտ է, Սէթօն հոգւով, սրտով աւելի կապւած էր Աջէմեանի գանձին, Թադէոսից՝ մօրը դահիճից վրէժը լուծելու կրքերին, բայց տարիների ընթացքում հետևելով Աթէնային, նրա սրտի խորքերում բացի վրէժխնդրութիւնից ուրիշ կիրք էլ էր բորբոքւել, ուրիշ զգացումներ էր արծարծւել և նա ակամա այն կրքին, այդ զգացումին աւելի էր ստրկացել, քանթէ ինծնէ արմատացած ատելութեանն ու նախանձին։ Սէթօն ատում էր իրեն շրջապատող բոլոր մարդիկը, որովհետև նրան ատել, նախատել, արհամարել, հարստահարել էին բոլոր պատահողները։ Ովքեր որ կարողացել էին, զրկել էին նրան ամէն մի վայելքից, ամէն մի քաղցրութիւնից։ Նա սոսկալի տենչով ձըգտում էր դէպի վայելքը, որը նրանից խուսափում էր, որին նրանից խլում էին, այս պատճառով նա նախանձւում էր, նա բորբոքւում էր, թէ ինչի պիտի շրջապատողները ունենային, վայելէին, իսկ իրեն զրկէին...։ Երբ ըմբռնում, էր թէ իր ջանքի, իր աշխատանքի արդիւնքը վայելում էին ուրիշները, նա բորբոքումից կորցնում էր խաղաղութիւնը և հոգեկան տանջանքից չէր կարողանում ոչ քնել և ոչ հանգստանալ։ Զրկանքներից ազատւելու համար, նա մօտեցել էր մեծամեծներին, հզօրներին, որտեղ Նազմներից և Զէւադներից աւելի կեղեքւիլը նկատելով, էլ

խիստ էր տանջւել, բայց ոտների տակ չտրորւելու համար, մի կերպ շարունակում էր ընթացքը...։

Աշխարհի մէջ բացի մայրը ուրիշ մտերիմ և ցաւակից չունենալով, ամէն մի անհատի մօտենալիս, Սէթօն միայն կեղծել և նրան իր շահերին ծառայեցնել էր մտածել, նրանից օգտւելը իր նշանաբան էր համարել։ Բայց Աթէնան Սէթօյին այլ կերպ էր ըստրկացրել, իր հմայքով այլ կերպ էր ներգործել նրա սրտի խորքերի վրա։ Աթէնային մօտեցել էր ճիւաղային և հրէշային ճիրաններով, Աթէնայի միջոցով երազել էր փառք, գանձ վայելք ձեռք բերել, բայց Աթէնայի աչքերը, հայեացքը, նազանքն ու շարժումները, նրան ուրիշ շղթաներով էին կաշկանդել, այնպէս որ Աթէնայի սիրուն արժանանալու համար, Սէթօն պատրաստ էր ողջ կեանքը զոհել, ամբողջ աշխարհը կեղեքելով Աջէմեանի գանձից քառասուն անգամ աւելի մեծ գոյք թափել Աթէնայի ոտքերի տակ։ Իսկ Աթէնայի մերժումը, Աթէնայի նախատինքը, Աթէնայի սպառնալիքը յուսահատեցրել էին Սէթօյին, որը նպատակին հասնելու համար, պատրաստ էր խանձել, խորովել ամբողջ Պոլիսը, աշխարհը, միմիայն մի օր մի ժամ ցանկալին վայելելու․ վայելքին հասնելու տենչով։

Նախանձի, վրէժխնդրութեան և վայելչութեան ոգները թէև հանգիստ չէին տալիս Սէթօյին, նա ձըգտում էր, ձգտւում էր Նազմի հետ ցանկալիին նըպատակին հասնելու, բայց ամէն քայլափոխին, ամէն մի ակնթարթում նրա աչքից չէր հեռանում իր պաշտելի էակի խոժոռ և սպառնալից դէմքը, նրա ական-

չի թմբկաթաղանդին անվերջ բախում էին Աթէնայի նախատալի խօսքերը, որոնք կտրել էին նրա խաղաղութիւնը...:

—Եթէ նա կարողանար մի ժամ, միայն մի ժամով այցի գալ սրտիս, զգար թէ այս սիրտը ինչպէս է բաբախում նորա համար, համոզէր, թէ այս սիրտը ինչ անելու պատրաստ չէ նորա համար, ես վստահ եմ, որ նա չպիտի ոտքի տակ տրորէր այս մսի կտորը և անցնէր առանց խղճահարւելու, առանց կարեկցելու և առանց սիրելու..., Ո՜հ, այս ինչ չար բաղտի տակ եմ ես ծնուած, այս որքան զարհուրելի է ընկերական այս արհամարանքն ու հալածանքը, ինչէի մէկը, ահաւոր աշխարհի երեսին մի էակ չէ գիջանում, չգիջա՜ւ զննել այս սիրտը... Աթէնա՜, Աթէնա՜, այս ինչ փոթորիկ բարձրացրիր սրտիս խորքում, դու ինչ յեղափոխութիւն առաջացրիր գանկիս մէջ... Եթէ նա յամառի, շարունակեց Սէթօն քթի տակ, եթէ շարունակի յամառել, ո՞ւր պիտի բախւի և կորճանւի սրտիս նաւը...: Այո՛, շա՛տ խիստ, շա՛տ դաժան էր վարմունքը, անգթաբար գլորեցի Իդէասին անդունը, Աթէնա՜, բայց չէ որ ինձ հազար հեզ են գլորել աւելի խո՛ր և աւելի ա՛հեղ անդունդները...: Ի՜նչպիսի տանջանքներով և ինչպիսի գերմարդկային չարչարանքներով իմ ես ազատւել կեանքի դժոխային փոթորիկներից և դեռ կռւում եմ խաղաղութեան ափը հասնելու...: Թո՛ղ, թո՛ղ այդ Իդէասը ընկած անդունդից ազատւի, ապա գա համեմատւի ինձ հետ, ապա գա մրցի...: Մի՞թէ քեզ մօտ սիրտ չկա, Աթէնա՜, մի՞թէ դու կին չես, մի՞թէ քու հոգին քաջութիւնը, արիութիւնը, անվեհերութիւնը չի գերազատում մի երեխայի կարմիր այտերից և գանգուր մազերից...: Ի՜նչ անենք, ինչ անեմ, որ տարիներս անցել է, ինչով եմ մեղաւոր, որ քառասունիս մօտեցել եմ, քեզ ինչ, ուրիշին ինչ, դու արիութիւն ու ձգտում պահանջիր ինձնից, դու գանձ, բաւականութիւն պահանջիր և ես աշխարհը սանդուխ շինեմ, քեզ մի ուրիշ մոլորակ ցանկալիդ, բաղձանքիդ հասցնելու համար: Ի՞նչով եմ մեղաւոր, որ ինձ նախատում ես, չէ՞ որ մրցումն ազատ է աշխարհի երեսին, *ազատ մրցման օրէնքները* ոսկի, ադամանդի տառերով գրւած են ազգերի օրէնքների առաջին տողում: Ո՞վ չէ գլորում անդունդը իր մրցակցին, ո՞վ չէ փշրում իր ախոյանին... Չէ՞ որ աշխարհը լափում են, աշխարհը վայելում են մրցանակի արժանացածները,...: Ինչո՞ւ պիտի թողնէի, որ մի երեխա մրցանակս ձեռքիցս յափշտակէր: Աթէնա՜, ախ հոգեակ, ինչի ես մտածում աշխարհի կարգերի հետհակ ուղղութեամբ գնալ, անխել աղջիկ և չես գըրկում այն կուրծքը, որ քեզ հովանաւորելու համար պատրաստ է ռումբերի դիմադրել...:

XVI

ՀՈԳԵՍՊԱՆԸ

—Հաւատացիր, Հոգիս, լսիր Հօրդ խնդիրը և փրկիր Թէ մեզ, Թէ եղբայրներիդ: Ես համոզւած եմ, որ աշխարհի վրա ո՛չ ոք չի կարող քեզ այնպէս սիրել պաշտել, ինչպէս կպաշտէ Սէթօն, ո՛չ ոք քեզ չի կարող այնպէս բաղտաւորացնել, ինչպիսի բաղտ կխոստանա Սէթօն: Բաղտիդ գլխուն մի գարնել, ծնողներիդ ալ մոխրի վրա մի Թողնել: Այսօր պարտաւէրներիս Թէ աչքով մի նշան տա, վաղը անով տեղով պարտաւորւած կլինինք բաղնիսի մոխրատունը փոխադրելու: Ես գիտեմ, որ դու ո՛չ միայն իմ մտածկոտ աղջիկս ես, այլ ինձ, մօրդ եղբայրներիդ և քոյրերիդ այնքան կսիրես, որ չես ցանկալ մեզ մոխրատանը, ուրիշի օգնութեան կարօտ մնացած տեսնելու: Բաւական է, Աթէնա՛, բաւական է, որքա՛ն ինձ տանջեցիր խնայիր, ատքերդ ընկած պաղատանքս լսիր: Մի Թողուր, որ արտասուքովս Թրչեմ ոտքերդ, մի՛ ինձ...

Աթէնան լուր, արձանի նման չէր էլ շարժւում: Կարծես նրա աչքերը արոյրից էր ու բիւրեղից՝ չէր տեսնում, ականջները արճիճից էր՝ չէր լսում,

չրթունքները պողպատից էր, չէր հառաչում: Ազնիւի, մօրքուրի, փեսայի, բոլոր ազգականների ու մտերիմների խօսքը, խնդիրը չէր ներգործել, Աթէնան անդրդւելի էր մնացել: Վերջապէս մօրքուրի ամուսինը՝ միւթէսսարիֆի օգնականը ոստիկանական դերով եկաւ, ներկայացաւ առանձնութեան մէջ Աթէնային և զգուշութեամբ նորան յանձնեց մի տոմսակ: Աթէնան Իդէասի ձեռագիրը նկատելու պէս յափշտակեց Թուղթը մօրքուրի մարդու ձեռքից և ծրարը պատռելով հետևեալ տողերը կարդաց.

«Հոգեակս, էլ բոլոր յոյսս կտրւեց, շնորհիւ այն դաժան կնոջ, կոնսուլատից ինձ համար ո՛չ մի քայլ, ո՛չ մի դիմում անող չկա: Մօրս չթողին, որ գոնէ դէմքս տեսնի և յուսահատութիւնից չխելագարւի: Եթէ ապրում եմ, եթէ չեմ խելագարւում ես էլ, այն յոյսի, այն լոյսի նշոյլն է, որ հանգչող կանթեղի նման փլփլում է սրտիս խորքում և հաւատացած եմ, որ դու ամէն բան, մինչև իսկ մեր խոստումն ու սէրը կզոհես կեանքս փրկելու համար: Եթէ չշտապիս Ս.... ին գրաւելու, երկու օրւա ընթացքում, հաւատացած եղիր, որ դիակս տեսնելու էլ չէք արժանանալ ո՛չ դու, ո՛չ մայրս, ո՛չ էլ մօրաքոյրս: Մահւան ճիրաններից քեզ արածս թախանձանքը չեմ կարծում, որ սիրտ անես մերժելու և անճարիս Թողնիս դժոխքի խորքում տանջւելու:»

Տոմսը գրւած էր Իդէասի ձեռքով, Իտալերէն լեզւով, այնպէս որ գրի, ստորագրութեան և բովանդակութեան մասին ո՛չ մի կասկած, ո՛չ մի տարակոյս չէր կարող ծագել Աթէնայի սրտում: Այս տոմսը մեռե-

լային գոյն դրօշմեց Աթէնայի դէմքի վրա, որը վերջին շաբաթը կրած տանջանքներից ու վշտերից անչափ նիհարել, դժգունել և կնճռոտուել էր։ Ոստիկանական աստիճանաւորը տոմսը յանձնելուց յետո նենգամտութեամբ հեռացել և առանձին էր թողել, որ Աթէնան կարդա և զգացումները աներկիւղ արտայայտէ, որպէսզի ինքը գաղտնագողի կարողանա լրտեսել նորա հոգեկան աշխարհի արտայայտութիւնները և ըստայնմ միջոցների դիմել։ Այս տոմսակը Աթէնայի վրա հազար անգամ աւելի ներգործութիւն էր ունեցել, քանթէ հօրն ու մօրը թախանձանքը և նա վշտակոծ տրորել էր նամակը բռի մէջ, տարածուել էր բազմոցի անկիւնը լռութեան մէջ սգալու վիճակը։ Այս միջոցով էլ ոստիկանական գործակալը չէր հասել նպատակի, չէր կարողացել ընկճել քենիի աղջկան, որը ամէն մի ճնշումի լռութեամբ էր դիմադրել, յամառութեամբ մղել իւր հոգեկան կռիւը։

Իդէասի վշտակոծ մայրը կորած զաւակից համանման բովանդակութեամբ մի տոմս ստանալով, վազել էլ Աթէնայի մօտ։ Թշուառ կինը, որ իւր հարազատ զաւակի նման խնամել, մեծացրել ու գուրգուրացրել Աթէնային, գրկեց նորան արտասուքից խեղդուած և լայագին պաղատեց.

—Աչքի լոյս, դուք այս ինչ ձիւնը գլխս բերիք, դուք ինչի մեղանչեցիք եկեղեցու պատկերների դէմ, որ Աստուած այս կրակը գցեց ձեր սիրտը, իմ սիրտը և կտառապինք բոլորս։ Ոտներիդ մատաղ, Աթէնա՛, խղճա՛, ինձ ողջ ողջ գերեզման մի՛ խրել, մի՛ թողնել, որ զաւակս մանրեն, ձկներին կեր թափեն։

Թո՛ղ, թո՛ղ այդ յամառութիւնը, գնա՛ պապերի շինած ճանապարհով և մեզ բոլորիս ազատէ այս կրակից։ Բա՛ց բերանդ, պատասխան տո՛ւր, հոգիս շրթունքներդ շարժէ, ձայնդ լսեմ.. աղջիկս...։

Աթէնան արձանի նման լուռ, պապանձուած, կարծես չէր էլ լսում մօրքուրի թախանձանքը, թէ և նորա ներքին աշխարհը սիրտն ու գանկը այնպէս էին փոթորկած, որ մռնչելու, որոտալու, փայլատակելու և արտասուելու անչափ տրամադրուած էին։

—Չե՛ս խղճար, չե՛ս ցաւիր մօրքուրիդ վրա, գոնէ խղճա՛ զաւակիս, գո՛ւթ ունեցիր և մեզ փրկի՛ր։

—Հապա սէ՜րս... սի՜րտս.... ասաց սրտի խորքից մի կիզալի հառաչ արձակելով թշուառ օրիորդը։

—Ո՞վ է աշխարհի երեսին իր սիրուն հասել, Աթէնա՛, ո՞ր աղջիկը, ո՞ր տղան հասել են իրանց սիրուն կապոյտ երկնակամարի տակ, կամ թէ հասնելու տենչացողները, հասնողները ի՜նչ բաղդի են տիրացել։ Ի՜նչ էր եմ յամառ սէրը, որ անարգեցի հա՛յր, մա՛յր, քո՛յր, աշխարհի կարգ ու դիրք և գնացի տրկլոր Իտալացու հետ ամուսնացայ՝ կոյր սիրով բռընկուած... Ի՜նչ շահեցայ, Աթէնա՛...։ Մէկ երկու տարին սառեց մեր սէրը, ատեցինք իրար, նա մեռաւ աղքատութեան մէջ, առանց որևէ ապահովութեան՝ զաւակը վզիս թողած և քսան տարի է որ ես տանջուեցա ու ապրեցա մուննաթով, կերածս հացը քթէս գալով։ Մի՞թէ այսօր որդիս՝ Իդէասը հօրէն աւելի աղքատ և թշուառ չէ, ի՜նչ ապահովութեամբ խելք խելքի էք տուել և իրարմէ ձեռ չէք քաշեր։ Այդ բոլորը, հոգիս երեխայական է, խաբուսիկ է և ապագային արիւն-ար-

տասուքի՛ պատճառ պիտի դառնա։ Լրջութեամբ մըտածէ, աղջի՛կս, գլխէդ հանէ այդ երևակայական ցընորքը և ազատէ զաւակս, առանց բաղտիդ գլխին քար գցելու։ Աթէնա՛, հոգիս, բաւակա՛ն է ինձ տանջես, մի՛թէ չե՛ս խղճար Իդէասին, մի՛թէ չե՛ս ցանկար ան ազատել դժոխքի որջէն, ուրտեղէն ան գլորելու են անդունդը, եթէ շարունակես յամառութիւնդ, Աթէնա՛։ Քո շրթունքի շարժելէն կախուած է Իդէասին կեանքը, կամ մահը, առաջ ինձ թաղիր, քանիոր ալ ոյժ չունիմ դիմադրելու այս տանջանքին, ապա յամառ կռիւդ շարունակէ։

—Ա՜խ, մօրքո՛ւր եթէ հասկանայի՛ր, եթէ կարողանայիր սրտիս խորքերը կարդալ...։

—Զաւա՛կս, այդ բոլորը ես կրել եմ, ես տարել եմ, ես փորձել, դու լսի՛ր փորձառուիս խօսքերին և մի՛ հալածել դուռդ ընկած բաղդը։ Եթէ այս բաղդը դռնէդ վռնդես, համանմանը չես գտնել։ Այն ոտքերդ, որ հազար անգամ բոլուլիդ մէջ համբուրել եմ, կրկին ճակատիս դնելով, կպաղատիմ, կլամ, կերերամ, որ ինձ լսես, խնայես զաւակս, մի՛թէ դու անոր դիակը կըցանկաս գրկել։

—Մօրքո՛ւր, համարիր թէ անոր ալ, ինձ ալ թաղել էք, պրծել, ալ հերի՛ք մեզ տանջէք...։

—Դու ալ համարիր, թէ մեռաք, ձեր երևակայած աշխարհը կորցրիք, այժմ դու յարութիւն ես առել մէկ ուրիշ երկրի մէջ, մէկ տարբեր պայմանների մէջ, անջատ ու ազատ Իդէասէն, ապրի՛ր քեզ համար, ապրեցուր զաւակս ալ ինձ համար։ Ենթադրէ՛ր, թէ վայելեցիք ձեր անարատ, անբիծ սէրը, մթնից ձեր

երկրային կեանքը, այժմ մէկ ուրիշ երկրի վրա էք, իբար անծանօթ։ Կեանք տուր զաւակիս, Աթէնա՛, փրկի՛ր և մի՛ խաւարեցնել մօրքուրիդ մռայլ կեանքը, գլգլած ու մաշուած սիրտս մէկ հարուածով նախ փշրէ, ապա մերժէ Իդէասի խնդիրը, որ ինձ ղրկել է մութ բանտից։

—Ա՜խ, երանի՛ թէ մայրս ինձ բոլորովին ծնած չլինէր, մօրքո՛ւր, երանի՛ թէ...

—Ենթադրէ՛ր, թէ դու Աթէնան չես, երևակայի՛ր որ Աթէնայի ոգին թողեց անհետացաւ այդ դիակից, ուր այժմ մի բարի և վեհ հոգի է բուն դրել, որին անծանօթ է Իդէասի սէրը. բայց այնքան ազնիւ և բարի է, որ կեանք է տալիս մեռած, մէկ մեռած զաւակի, մի թշուառ ջրասուզ մօր արտասուքի ծովէն ազատելու համար...։

—Պատրաստ եմ, մօրքո՛ւր պատրաստ եմ ձեզ ազատելու համար հոգիս մորթել, բայց որ ձեռս չէ, ոյժէս վեր է, ես ի՛նչպէս զգացումներս սպանեմ....։

—Եթէ կամենաս, եթէ ցանկաս, ոյժէն վեր բան չկա, հոգի՛ս, միայն թէ ցանկացի՛ր և կյաղթես... Այս սէրը ինչպէս մի միայն թշուառութիւներ է ծընել, թշուառութիւնով էլ մեզ բոլորիս պիտի կործանէ, եթէ յամառիս, ասաց վշտաբէկ մայրը գրկելով Աթէնային և թշուառները փղձկուած լացին, սրտերի վրա կուտակուած մաղձը նրանց այնքան մորմոքայրեց ու մաղկտեցրեց, մինչև որ թուլացած ընկան բաղմոցի վրա, անզգա ու թմրած։

Ոստիկանը եղելութիւնը իսկոյն կնոջը, քեռուն և քենակալին յատնեց, որոնք եկան շրջապատեցին և

կտրեցին Աթէնայի յամառութիւնը, խօսք առին, որ Սէթօին առաջարկն ընդունէ։

—Դու ինձ բաղտաւորացո՛ւր, ընդունի՛ր սիրտս, մի մերժիլ սէրդ և պահանջի՛ր, պահանջիր ինչ որ կամենաս։ Ես քեզ բաղտաւորացնելու, հաճոյքդ լրացնելու համար պատրաստ եմ ամէն զոհողութեան, ասաց Սէթօն դողալով։

—Ես քեզ խօսք կտամ, քեզ կյանձնեմ միայն մի պայմանով, որ նախ մօրքուրիս զաւակը ազատես բանտէն, հեռացնես Պոլսէն, ուղարկես Պարիզ, որ հանգստանա Թշւառ մօրքուրս, կարի անոր արտասուքն աչքերէն, ապա պատրաստ եմ հոգւով, սրտով ամբողջապէս քեզ անձնատուր դառնալու։

—Այս իրիկուա գնացքով ես անոր ճանապարհ կդնեմ, դուք ապահով եղի՛ք։

—Խնդրեմ, մօրքրոջս հետ միասին, անոնք իրարմէ չեն կարող անջատուիլ։ Այս է իմ առաջին խնդիրս, առաջին գաշս, վստահ եմ, որ անմիջապէս կձեռնարկէք և կկատարէք։

—Իսկոյն, իսկոյն։ Այժմ ժամը մէկն է, ես շտապեմ, որ կարողանամ մինչև ժամը հինգը անոր Սիրքէյի կայարան հասցնել։ Իսկ դուք մօրքուրիդ հետ կգաք կայարան, անոնց բարիչտու մաղթելու։ Իսկ այնտեղէն միասին կգնանք ծնողներիդ մօտ՝ օրհնութիւն խնդրելու։

—Ես պատրաստ եմ։ Մօրքո՛ւր, մօրքո՛ւր, էֆէնդին խոստացաւ, որ ձեզ Իդէասի հետ այս իրիկուն ճանապարհ գցէ դէպի Պարիզ։ Շտապեցէ՛ք, պատրաստուի՛ր տեսէք, որ իրիկուա ժամի հինգի գնացքին հասնի՛ք։

—Ես կեանքիդ մատաղ, Աթէնա՛, հոգի՛ս։ Ես բոլորովին պատրաստ եմ, ինչ ունիմ պատրաստելու։ Էֆէնդի՛, անչա՛փ պարտաւորեցի՛ք, դուք ինձ և զաւակիս կեանք տուիք, նոր կեա՛նք...։ Այս կեանքը քեզ են՛ք պարտական...։

—Ես պարտքս սիրտ կատարեմ, տիկի՛ն, լո՛կ պարտականութիւն է արածս, ինձ ներեցէ՛ք, որ շտապիմ և վստահ եմ, որ որոշեալ ժամին հասցնեմ ձեր զաւակը կայարան։ Բայց դուք չուշանա՛ք, աճապարեցէ՛ք։

Աբդէն Իդէասին մօր հետ ճանապարհ էին դրել Սէթօն ու Աթէնան և միասին կառքով դարձել էին Ալթաբէգի տուն։ Մինչ կէս գիշեր Սէթօն զարճացել, ուրախացել, ուրախութեան գագաթն հասած՝ լուսուն երեք ժամ մնացած դուրս էր եկել գիշերաշրջիկը և թաւալ-գլոր դիմում էր տուն։ Թէև ծառաները, բարեկամները ուզեցել էին նրան ընկերակցել, բայց նա մերժել էր նրանց թախանձը, չուզելով երբէ՛ք իր սովորական ընթացքից շեղուել, Նրան ճանապարհում էին մեծ փողոցի բոլոր գիշերապահները, որոնք իրենց յարգանքն էին յայտնում, երբ մօտերից անց-

նում էր Սէթօն։ Շատերը մինչև անգամ մօտենում, բարևում, մի քանի խօսք էլ փոխանակում էին։ Զօրքերի սիրուն արժանացած զօրականի նման Սէթօն զւարթ ժամերին նրանց մարդի տեղ էր դնում քէյֆերն հարցնում և յաճախ փող էր շպրտում ասելով.

— Ինացէք, տաքացէք.....։

Մի քայլ առաջ գնալուց յետո, երբ մօտեցաւ զօրանոցի հրապարակին, զինավարժութեան դաշտին, նա կանգնեց. ազատ շունչ քաշեց, ետ դարձաւ զննեց իւր անցած երկար ուղին, ժպտալի հայեացքն ուղղեց, դիտեց առանց կշտանալու և ասաց.

—Փչիր, սուլիր, որքան որ քեզ հաճելի է, զեփիւռ, սուլիր, բաղխիր թիկունքիս և ուսիս, սրբունքներիս և վզիս, ինձ չես կարող տապալել, ինձ չես կարող փոշու նման քշել, տանել, կամ թէ մրոսեցնել...։ Փչիր, շոլիր ինձ, ես այս գիշեր սիրով հարբել եմ, սիրականիս բուրմունքից վերածնել, կենդանացել եմ, անշուկիս համբոյրներովը երիտասարդացել ու թարմացել եմ։ Հպիր, բաղխիր իմ մորթին ու մազերին, էլ սրանից յետո դու չես կարող ինձ սառեցնել, դողդողացել ու սուսափայնել։ Փչիր, զեփիւռ, հոսիր, աւիլէ, մաքրէ, տար ծովը լծափէ այն բոլոր փոշիները, որոնք այս փողոցները և մայթերը ծածկել են, տար այդ աղրն ու ապականութիւնը թափիր Մարմարիայի ջրերը, որ չկեղտոտեն սիրեկանիս մազերն ու մորթը, շորերն ու կօշիկները....։ Դու չես կարող ինձ տատանել, զեփիւռ, ինձ չեն կարող ցնցել փոթորիկներն ու թաթարները, մրրիկն ու վիշապը։ Ինձ հետ կատակ մի անել, քաղցրիկ զեփիւռ,

քշէ, գլորելով տար ծովը լից այն փուչին ու աղբը, որը չի կարող դիմադրել քո տատանումներին....։ Այո՛, ես էլ այն փուշուցն եմ կազմւած, իմ էլ հիւլէներս այդ ապականութիւնից է շաղաղած, բայց ճարտար ձեռքեր են ինձ հիւսել, ատելութիւնից ու արիւնթիւնից իմ բեղմնաւորւած, կեղեքիչների և հարստահարիչների մատնելով իմ լմւած, պողպատով պատած, մագնիսով ջրւած։ Ծահիճից փառապանծ լեռան ցից գագաթն եմ բարձրացած, երկնամերձ ապառաժի վրա գահոյքս դրած, իմ ջանքով. իմ աշխատութիւնով... Եւ ո՛ր մահկանացուն այնտեղ ստեղծւած, բեղմնաւորւած և սնած է եղել... Չէ որ ամէնն էլ ինձ նման ապականւած տղմից սողալով—սողալով են այնտեղ հասել։ Մէթէ իսկապէս այս աշխարհի կեանքը այդ չէ՞ թելադրում, մէթէ համատարածի վրա գոյութիւն ունեցող մրցման օրէնքներն այդ կողմը չեն ուղղում բոլոր մրցակիցների, ախոյեաններն հայեացքը, քալլերը...։ Ո՛վ որ ընդունակ է, ո՛վ որ օժտւած է ամենակատարեալ ձիրքերով, ընտրւած տալանդով, տոկուն կամքով, յարատև արիութեամբ և անընկճելի քաջութեամբ թռչղ բարձրանա, ոտքի տակ փուշու նման տրորելով ամէն բան, ինչպէս մրջիւններին, մժղուկներին անզգալի կերպով կոխրճում անցնում ենք,....։ Իսկ ցոյլերը, անճարակները, անընդունակները արժէն, որ ընտրեալների դասը մտնեն, թռչղ գլորւին անդունդը, ճարակ դառնալու արժանաւոր ծնունդներին.....։ Եւ որքան ես ապուշ պիտի լինէի, զեփիւռ, որ ընկճւէի քո առաջ և թոյլ տայի, որ դու էլ Իդէասի նման յափշտակես, խլես ուսիցս ծածկոցս.....։

Սէթօն թէև քայլերը ուղղած գնում էր դէպի տունն, բայց սիրտը, հոգին մնացել էր Ամէնալի մօտ: Նորան թուում էր, թէ լսում էր Ամէնալի ձայնը, ականջներին հարուում էին Ամէնալի նուագած եղանակները, ագահաբար շնչում էր օդը, Ամէնալի հոտից ու բուրմունքից կշտանալու բաղձանքով,... և դանդաղ քայլերով շարունակում ընթացքը: Ուրախութեամբ նա պատրաստ էր եւ դառնալու, նորից մտնելու Ամաթաբէյի տունը, մի սիրալիր ժպտի արժանանալու համար, բայց պատշաճութեան դէմ չէր ցանկալ մեզանչել, երբէք չէր դիջել վայելչութեան ներհակ ընթացք բռնել, որքան էլ որ հարբած լինէր.....:

Երբ տան զանկագը հնչեցուց, թշուառ մայրը լուսամուտի առաջ կանգած քնով էր անցել, նա չլսեց որդու դարձը: Յանկարծ նկատեց Սէթօն մօրը և ասաց.

— Եթէ նա քո սիրո մի հարիւրերորդականը տածէ ինձ համար, մայրիկ, որդիդ բարեբաղդ է:

Սէթօյի սրտից չէր անհետացած կասկածները, շրթունքի, ժպտի, աչքերի արտայայտութեան մասին նա անչափ հաւատ չունէր. դրական փաստ էր պահանջում.... Ամէն զգացմունք և ամէն արտայայտութիւն նա իւր սրտաչափով էր կշռում...:

XVII

ՆՇԱՆՏՈՒԻՖ

Ողջ գիշերը անհանգստութեամբ անցկացրեց Սէթօն և առաւօտ վաղ վերկացաւ, սովորական նախաճաշը կատարելիս ասաց մօրը.

— Մայրիկ, ես պատւիրել եմ, հիմի Տիգրանն ու Ափիկը կգան, անոնց հետ միասին տան մնացած կարասին փոխադրեցէք և այնտեղ սարքեցէք, ինչպէս պէտք է: Ես դուրսը դործ ունիմ, մինչև կէսօր ամէն բան կարգի դիր: Այսօր ճաշը այնտեղ կուտենք:

— Յաւակս, դու անհոգ գնա գործիդ, տան դործի համար ալ սիրտ մի հատցներ, ես մեր Պողոսին ալ կանչել եմ, տղոց հետ մէկտեղ ամէն բան կարգի կբերեմ: Կահաւորոցները, արդէն երեք օր է այնտեղ են, բանւոր ու հասարակ դրանս առաջ կանգնած, այդ ինչ մեղքիս մեծ բանն է, որ չպրծնիմ: Միամիտ գնա գործիդ նայէ: Ջմռուանոս, ետ դարձիդ թրիմու ճաղկիկը պատրաստ կլինի, հետդ բեր, որ գիշերուան դէմ նորից Բէզէսթեան չերթաս:

— Լաւ, միտս է, չեմ մոռանալ, կբերեմ:

— Այս օղերն իմ սրտովս չէ, թէ ստացել այն

խոշոր *կոլաղասի* օղերը, անոնք բեր, ինչ վնաս, թէ հինգ հարիւր լիրա աւելի պիտի տաս, լաւ ապրանքին տուած փողը կորած չէ։

— Լա՛ւ, մայրի՛կ. լա՛ւ, ասաց ու ցած եկաւ տնից Սէթօն, նկատելով որ մայրը պատրաստւում էր պահանջները սաստկացնել և մեծացնել։

— Սէթօ՛, ասաց երբ որդին իջնում էր սանդուխներից, եաղութ մատանիս չմոռանաս, անպատճառ բերես։...

—Միտս է մայրի՛կ, միտս է։

—Մանեակի մարգարիտը անպատճառ վերցուր, այնպէս խոշոր ու կոկ ապրանք դժւար կգտնուի։ Քսանը հինգ *մաղազի* մէջ քսանը հինգ ոսկին մեծ մեղքս չէ, որ այդքան դէմ առար։ Տուր ու բեր, աչքըս վրան մնաց։

—Մնացածները ա՛լ ինչ կրկնեմ... ասաց մայրը, երբ արդէն տանից դուրս էր եկել Սէթօն։

—Ափսո՜ս, ասաց հին լւացարարը, մոռացա միտքը գցելու, որ ինձ խոստացած ապարանջաններն էլ բերէ և սկսեց ժողվրդուքը։

Սէթօն կառք նստաւ, հասաւ Ղալաթա-Սարայ, այնտեղից տասը րոպէից յետո դուրս եկաւ և դիմեց Ղալաթա՝ Մագսէթ էֆէնդիին գրասենեակը, որի հետ միասին դիմեցին Պէրայի *Բիդայէթ*-դատարանի գործադիր մարմնին, որպէսզի գնան Աջէմեանների տունը և գոյքն ու կարողութիւնը ցուցակագրելով յանձնեն Աթա-բէյին։ Թէև *Հէյէթի Իթհամի* պաշտօնակալները դժկամակեցան այդքան արագ գործ տեսնելու պահանջից, բայց Աթաբէյի ոսկին ստիպեց գրիչները արագ

շարժելու։ Հետզհետէ քսակները գրպաններից դուրս հանեցին պաշտօնագրերը կնքելու պատրւակով, իսկ կնիքների հետ ստացած ոսկիներն էլ տեղաւորեցին մետաքսաթել հիւսներով գործւած քսակներում։ Երբ ամէն բան պատրաստւեց և փողոց դուրս եկաւ գործադիր մարմինը, փաստաբանի և Աթաբէյի հետ, նախագահը ասաց.

—Աթա-բէյ, ախա՛ր էթիկայի դէմ է, այսօր մըտնել այն տունը, որտեղից երեկ մօրդ գերեզմանոց առաջնորդեցին։ Դեռ չէ պաղած մօրդ մահւան անկողինը, ուզում ես, որ մենք գնանք տակ ու վրա անենք նորա ննջարանը։ Մեզ ստիպում էք մտնել այն տունը, որտեղ մահւան ճիրանների դէմ լացող աչքերի արտասուքը դեռ չէ դադարել, ողբասացների մըրմունջներին դեռ արձագանք են տալիս պատերը։ Գուցէ արդէն լսած էլ են, որ եղբօրդ վարել են աքսոր և նրա սուքն են կատարում նշանածն ու հայրը, ուրոնց ուշադրութիւններին և մարեմրումներին մի՛ ստիպէք, որ մենք ակամա վկա դառնանք։ Ինձ համար նշանակութիւն չունի, ես պարտաւորուած եմ, պաշտօնըս ստիպում է հնազանդելու և գործադրելու ձեր կամքը, բայց դուք մտածեցէք, որ ձեր մօրն են երեկ թաղել, ձեր ղարդաշ մօրը, ձեր եղբօրն են երեկ տարել դէպի աքսոր, ձեր ղարդաշ եղբօրը։ Գոնէ դուք՝ Մագսէթ էֆէնդի, դո՛ւք մի լաւ խորհուրդ տըւէք Աթա բէյին. նրա՛, մանաւանդ իմ և ձեր պատւի համար... ախա՛ր նրանք սրա ղարդաշներ են...

— Ճշմարիտ է ձեր հրամայածը, անպատշաճ է, այսօր ւեթ գնալ քրքրել երեկւա մեռնողի դալանները.

բայց կարող է կորուստ պատահել...։

— Ի՞նչ պիտի կորչի, անշարժ կալքերը չեն կարող տեղից շարժել, արդէն ազդարարուած է, ոչ ոք չի կարող վարձ վճարել ո՛չ Թադէոս աղային և ո՛չ ալ ուրիշի։ Երեկ ես մտա, խօսեցա բանկ Օտտօմանի տեսչին։ Նա ասաց, որ ոչ ոք Աջէմեանի հաշուից մինչև օրս ստակ չէ ստացած և չի էլ վճարել, մինչև նախապէս այդ մասին մեր վկայութիւնը և երաշխաւորութիւնը չտրւի, Բէատրիչէն այնքան անազնիւը չէ, որ տնական ալդուգորդից թանկագին իրեր գողէ։ Է՛լ ի՞նչ երկիւղ կա, քանի որ գրասենեակն էլ այժմ գնացին կնքելու։

— Օրէնքի տրամադրութիւնը մեզ ստիպում է, որ անտէր չթողնենք այն ահաւոր գոյքը, մանաւանդ տնական արդ ու զարդը, գոհարեղէնը....։

— Ա՞յնպիսի բան էք ասում, այնպիսի պատճառաբանութիւն....։ Ես պարտաւորուածեմ ձեզ հետեւելու, բայց մեզ բոլորիս պատիւ չի բերել. մանաւանդ Աթաբէյին....

Երբ համբրնթաց գործադիր մարմինը առաջ էր գնում դէպի Աջէմեանի տունը, աճապարանքով մի սպասաւոր մօտեցաւ Աթա-բէյին և ասաց.

— Հայրդ էլ հոգեւարքի մէջ է, բժիշկներ են հաւաքուած, գուցէ մինչև իրիկուն չապրի....։ Բոլորը յոյսերը կորցրել են.....։

— Պատճա՞ռ, ի՞նչ պատահեց, ասաց Աթաբէյը հետաքրքրուած։

— Մօրդ մահը շատ խիստ ճնշեց նրա վրա....

— Տեսնում էք, ասաց պաշտօնակալը, շատ

վատ օր էք սահմանել, Աթաբէյ։ Ցանկարծ մենք եթէ տուն մտնենք, նա էլ նկատի, իսկոյն այդ բորբոքումից կարող է մեռնիլ և սրտիդ ցաւ կդառնա։ Հարազատ հայրդ է, դու լաւ մտածիր....

— Հանգամանքը ծանրացաւ, Աթա-բէյ, ասաց Մադսէթ բէյը, աւելի լաւ է գործը ետացնենք, իսկ դուք առանց գործադիր մարմնին էլ կարող էք գնալ և տանը ամէն բան կարգադրել, ինչպէս ձեր սեփական տանը։ Ո՛չ ոք իրաւունք չունի ձեզ խանգարելու։ Առայժմ մենք դառնանք, դուք մենակ գնացէք և մի երկու օր անցկացրէք, մինչև ամէն բան խաղաղուի։

Գործադիր մարմինը իսկոյն ետ դարձաւ, թողնելով որ հարազատ որդին գնա, ներկայանա կաթւածահար հօրը, նրա աչքերը փակի և տիրանա գոյքին։

Սէթօն արդէն այնքան էլ չէր աճապարում Աջէմեանի գոյքի ցուցակագրութեան, նա հաւատացած էր, որ արդէն ամէն ինչ մի քանի օրից յանձնելու էին Աթային, որից իր խղալի չափ բաժինը ապահովուած էր։ Նա անմիջապէս բաժանուեց Մադսէթից և Աթայից, դիմեց դէպի Սթամբոլ-Բէգէօղլուն, որպէսզի մօրը ապսպրած թիթղ շղակնեա ծաղիկը, գինդերն ու ապարանջանները վեր առնէ։ Ամէն մի կտոր զարդ բորբոքում էր նրա սիրտը և նա հրճւալի, երիտասարդացած վերադարձաւ Պէրա։ Ճանապարհին նա այցելեց այն բոլոր վայրերը, ուր յաճախում էր Աթան, բայց առանց աներոջը տեսնելու, կէսօրից քիչ անց ժպտադէմ մտաւ իր նորավարձ ապարանքը, Աթէնայի համար պատրաստել տուած խաղաղավայրը։

Ամէն ինչ նրբութեամբ և գրաւչութեամբ զար-

դարել էին արհեստաւորների ճարտար մատները և Սէթօն ոչինչ չէր խնայել իր բնակարանի իշխանավայել արդուզարդի համար։ Լացարարը անյագաբար պահանջում էր ամէն բան այնպէս դասաւորել, այնպիսի ընտիրներից և թանկագիններից ձեռ բերել, ինչպիսին նորան ժամանակով ապշեցրել և հիացրել էր Թադէոսների և ուրիշ բէգերի պալատներում։ Սէթօն պարտաւորւած էր մօր ամէն մի պահանջը խնդրութեամբ լրացնելու, քանի որ յարկը այդ էր պահանջում։ Նա որ զրկանքների մէջ էր խեղդւել ամբողջ կեանքում, այսօր մտածում էր վայելքների մէջ լողալ և անձը չզրկել, հոգին չզրկել ոչ մի հաճոյքից։ Լացարարը այնպէս էր զուգւել, զարդարւել, այնպիսի նրբին ձևեր էր բանացնում, որ ոչ ոք չէր կարող գուշակել նորա անցեալը։

Ագահաբար ճաշը լափելիս Սէթօն մտածում էր, թէ ինչով կարող էր Ամէնայի սէրը բոլորովին գրաւել և նորա սիրտը սեփականել, իւրացնել։ Սէթօն համոզւած էր, որ Ամէնայի նման բաւական զարգացած, ճոխ տանը մեծացած և լիութեան մէջ զեղւած մի օրիորդի չէր կարող շլացնել իւր գնած շողակներով, մարգարիտով և ուրիշ զարդերով։ Մանաւանդ նա՝ Սէթօն ոչ միայն բռնութեամբ էր տիրացել Ամէնային, այլ նորա սիրեկանին՝ Իդէասին էլ նենգամիտ չարագործութիւններով էր յափշտակել Ամէնայի գըրկից և հեռացրել Եւրոպա։ Ի՞նչով կարող էր նա ոչ միայն Իդէասի յիշատակը ջնջել Ամէնայի քնքոյշ և սիրաբորբոք սրտից, այլ այդ տեղը մի միայն իր սիրո, իրեն համար աճելիք համակրանքի ու յարգանքի մար-

կը, այդին դարձնել։ Տիրելը, առնելը հեշտ է, մտածում էր Սէթօն, դժւարը գրաւելու, կապելու, պահպանելու մէջն է։ — Ի՞նչպիսի չղթաներ ես գտնեմ, ասում էր ինքն իրեն Սէթօն, որ այդ սիրտը կապեմ, հիւսեմ սրտիս հետ։ Ի՞նչիս է պէտք այս ապարանքը, այս ճոխութիւնը, այն գանձը, եթէ ես չպիտի կարողանամ խաղաղութիւն գտնել։ Արդեօք նա մոռացաւ, պիտի կարողանա մոռանալ, պիտի չնչւի նորա սրտից այն լղպոր լակոտի յիշատակը,..... Բայց եթէ չմոռանա, ինձ կեղծէ,..... ինչ զարհուրելի տանջանքի պիտի ինձ դատապարտէ...։ Ամբողջ կեանքս վայելելու տենչով սևացնեմ և այսօր վայելքի բազմոցի վրա արիւն փսխեմ ոսկի թասում։ Մինթէ կեանքի քաղցրութիւնը այս է, մինթէ աշխարհի վրա խաղաղութիւն, հաճոյք չէ սահմանւած ինձ համար....։ Մինթէ քսան տարւան տենջանքս ու տանջանքս այստեղ պիտի վերջանա...։ Այս իրիկուն, չորս-հինգ ժամից յետո, նա հրապարակով, հոգևորականի ներկայութիւնով պիտի խոստանա ինձ սէր և հնազանդութիւն,..... բայց եթէ կեղծէ, եթէ ատէ, եթէ դաւաճանէ....։ Այս ինչ ենթադրութիւններ, այս ինչ կասկածանքներ ինձ չրջապատեցին, այս ինչ փոթորիկ բարձրացաւ հոգւոյս խաղաղութիւնը խզեց այն ժամին, երբ պատրաստւում եմ երջանկութեան պարտէզը մտնել, տարիներով երազած դրախտի, եդէմի շեմքից ներս սողալ, ցանկից ներս ցատկել.... այս ինչ օձեր, կարիճներ, մորմեր, ու կոկորդիլոսներ ինձ չրջապատեցին։ Ամբողջ կեանքս զոհ կտայի, նորա ոտքերի տակ կգցէի սիրտս, զգացումներս, ամէն ինչս, միայն թէ նա ինձ խոստանար ան-

կեղծ սէր. նա ինձ խղճմր, գթմր ու կարեկցելով չարաքաշ սիրտս մխիթարէր։ Ինձ ինչ պատահեց, այս ինչ այլակերպութիւն է, այս ինչ փոքրոգութիւն է, մի՞թէ ես լւացարարի տղան՝ Սէթօն չեմ, մի՞թէ սպառեցան ոյժերս, մեռաւ արիութիւնս, ցնդեցաւ քաջութիւնս, շանթահար փոշիացաւ վրէժխնդրական ոգին իմ սրտի միջից....։ Ե՛ս այն աստիճան ստորանամ իմ դահիճիս, իմ հոգեկան տանջանքներիս յօրինողի թուրի առաջ,....։ Այս ինչ վհուկի ճանկն եմ ընկել, այս ո՞ր կախարդը ինձ սորկացրեց, այս ինչ թալիսմով կաշկանդեցին հոգիս...։ Մի՞թէ ես տասնուչորս տարեան պատանի եմ, որ այս աստիճանի խրւիմ. ընկղմիմ սիրո անյատակ կպրէ կարասը և չկարողանամ դուրս ճողոպրել.....։

Վատ մտքերը վանելու դիտմամբ Սէթօն գինիի շիշը պարպեց և երբ զւարթացաւ, նրան քաջալերեց այն միտքը, թէ Աթէնան ընկճւած՝ Իգէասին ուրանալուց յետո, անպայման ոչ միայն իրան անձնատուր եղաւ, այլ իր արիութիւնը, քաջութիւնը, հաստատամտութիւնը ներգործութիւն ունեցաւ Աթէնայի սրտի վրա և վերջինս անպայման խոնարհեցաւ իր հեղինակութեան առաջ, որը ամէն մի հասկացող կնոջ համար պաշտելի առաւելութիւն է։ Աթէնայի նման խորամիտ մի աղջիկ չէր կարող իր առանձնայատկութիւնները չգերադասել, չհպատակել և չպաշտել։ Մինչ այս մտքերի հետ ծփւում էր Սէթօն սիգարի ծխի տատանումները դիտելով, իմացրին, թէ պալատական յատուկ մի պաշտօնակալ ուզում է նրան տեսնել. Սէթօն անմիջապէս դիմաւորեց թիկնապահին և առաջ-

նորդեց սրահ։ Այդտեղ պաշտօնակալը գրպանից հանեց մի թուղթ և ասաց.

— Ջէւադ բէյն ուղարկեց սոյն աւետիսը ձեր վսեմութեան, թէ արդէն Բաբը-Ալի ուղարկեցին ձեզ յանձնւելիք Օսմանիէ շքանշանի առաջին աստիճանը և Շուրայի-Դօլէի ուղարկեցին ձեր այդ ժողովին անդամակցութեան հրավիրատակը։ Յոյս ունին, որ սրանից յետո աւելի ջերմագին աշխատութիւններով ծառայելով տէրութեան, առաւել բարձր աստիճանների կարժանանաք։

— Խորին յարգանքներս յայտնելով նորին վսեմութեան Ջէւադ փաշային, խնդրում եմ նրան բացատրէք, որ ես ոչնչով արժանի չեմ այն աստիճաններին, որին Նրա ազնւութիւնը ինձ բարձրացրեց։ Ես յաւիտեան երախտապարտ եմ և երբէք չեմ կարող մոռանալ, որ նա ինձ տղմից ազատեց, գահոյքի բարձրացրեց։ Որտեղ էլ լինիմ, ինչ աստիճանի էլ որ հասնեմ, դարձեալ փաշայի խոնարհ ստրուկն եմ։

Սէթօն օշարակով և ուրիշ քաղցրաւենիներով հիւրասիրելուց յետո աւետաբեր թիկնապահին երեք հարիւր լիրայի չէկով ճանապարհեց։ Այս նւիրաբերութիւնը այնքան չհրապուրեց թիկնապահին, որքան հրճւանք պատճառեց կանխիկ երեք երեք ոսկիների նւէրը թիկնապահի ծառաներին, որոնք դաւիթում նոյնպէս հիւրասիրւեցան իրենց տիրոջ սեղանի աւելցուքներով։ Երբ Սէթօն թիկնապահի հեռանալուց յետո կրկին կարդաց Ջէւադ-բէյի աւետագիրը ասաց.

— Այո, մինչեւ որ չհասաք նպատակի, մինչև որ չհամոզւեցաք, թէ ստանալու էք ձեր բաժինը, չգի-

ջաք բաղձանքս կատարելու։ Բայց և այնպէս յաղթանակը ես տարի, ես ձեզ ստիպեցի և ոյժովս կորզեցի ձեզնից «Օսմանիէ» շքանիշն էլ, պետական- խորհուրդի անդամակցութեան բարձն էլ։ Այո՛, վաղը Կ. Պոլսի բոլոր լրագիրները պիտի յայտարարեն, որ վեհամաշուք Սէդրաք էֆէդին արժանացել է Օսմանիէի առաջին աստիճանի շքանշանի և պետական խորհրդի բարձին։ Իսկ այդ շքանիշն ու բարձը անպատճառ պիտի հրապուրէ Ա.թէնային, նա պիտի խոնարհի իմ հեղնակութեան առաջ, պիտի շլանայ և պարծանք պիտի համարէ իմ սէրս... Փո՛ղ, շքանշա՛ն, բա՛րձ, էլ ի՞նչ է պակաս, հրեշտակնե՛րն էլ կարող են հրապուրել, ո՛ւր մնաց մահկանացուները։ Այս մտքերով տոգորուած երբ զննում էր դահլիճի կահաւորութիւնը և զանազան նկատողութիւններ էր անում, ներս մտաւ Ա.թա-բէյը։ Սովորական և գործի վերաբերեալ խօսակցութիւնը վերջացնելուց յետո, ասաց Ա.թա-բէյը։

—Ձեր նշանտուքը պէտք է ետ գցել, գոնէ երեք օր։ Հայրս պէտք է թաղել։ Բժիշկն ասաց, որ հոգևարքը արևը մայր մտնելուց առաջ կհանգչի։ Ես գիշերս մեր տնէն չեմ կարող բացակայել, այնտեղ անհրաժեշտ է ներկայութիւնս։ Աշխարհի սովորական կարգերին պէտք է հնազանդել, չար լեզուները, նախանձոտ աչքերը հազար ու մի զրպարտութիւն կարող են յօրինել։

—Մ՛թթէ այդքան արագ, ասաց Սէթօն և աչքերը պաղած ընկղմեց դարձեալ իւր նեըքին խորհերի մէջ։

—Ա.թա-բէյը շատ լաւ կըսէ, խօսքի մէջ մըտաւ լուացարարը ուրախութիւնը ծածկելով, սգաւոր են, կարգ չէ այժմ վրդովել և աշխարհի ծամոնը դառնալ։

—Ինչպէս կամենաք, ասաց Ա.թա-բէյը դուրս գալով, տունը պատրաստ են ձեզ ընդունելու, բայց ես չեմ կարող հեռանալ հայրական յարկից...

—Անհրաժեշտ է ետաձգել, ասաց Սէթօն չըկարողանալով տեղից շարժուել։

XVIII

ՀԻԱՍԹԱՓ

Իդէասը Կ. Պոլսից դուրս գալուց քսան ժամ յետո՝ դուրս էր եկել Թուրքիայի սահմանից, ազատուել էր զաբթիէնէրի խուզարկութիւնից, բայց չէր ազատուել սրտի, զգացումների հալածանքից։ Ա.թէնային բաժանուելը նրա համար կատարեալ հոգեկան մահ էր, այնպէս վշտի հեղեղ, որ չէր կարող ընդդիմադրել դրան, պիտի հոսանքի հետ գնար, բալխուէր, փշրուէր, լցուէր ապականութեան ծովը։ Քանի՛ քանի՛ անգամ նա որոշեց թողնել գնացքը, ետ դառնալ, գտնել Ա.թէնային, խլել, յափշտակել տանել եւրոպա, մայրը նրան կաշկանդել էլ, թշուառ և անմխիթար մայրը շղթայել նը-

ման հանդուրժել էր Իգնասի թևերին ու սրունքներին, չէր թողնում շարժւելու։ Ի՞նչ անէր, ո՞ւմ թողնէր այդ դարաքաշ կնոջը, որը քանի երկու տարի տանջւել, հալածւել, ճնշւել, արտասւել, ցնցւել էր, և ամէն բան համբերութեամբ տարել էր միակ զաւակի սիրով և յոյսով, իսկ ինքը, այդ յոյսի բէմը՝ ինչպէս թողնէր նրան տար աշխարհում, անտէր, անօգնական, դառնար Կ. Պոլիս, որտեղից վերադառնալու յոյսը այնքան նւազ էր, որ երբէք չէր կարելի վստահել։ Ի՞նչ անէր, ինչպէս վերցնէր սրտի բեռը, եթէ դառնար խիղճը պիտի ծանրանար թշւառ մօր վիճակի դառնութիւններով, եթէ չդառնար Աթէնայի յիշատակները նրան խելագարեցնելու աստիճան հալածելու էին։

Մտքի փոթորիկը Իգնասին հանգստութիւն չէր տալիս, նա չէր կարողանում վագոնի մէջ, մօր մօտ նստել- խաղաղել, անվերջ կանգնած անցքի դռնում, աչքը ետ գցած զննում էր թողած վայրերը, այն վայրերը որոնք ամէն ակնթարթի զանազան պատկերներով յիշեցնում էին իր Աթէնային, զանազան դիրքի մէջ։ Զգում էր թշւառ մայրը որդու տառապանքը և ներքին յոյզերով բորբոքւում, բայց զսպում էր իր ջղերը, մկանները, որ չստիպւի մտնելու իր խոհերը որդու վիրաւոր սրտին։ Այսպէս անվերջ վշտերով մայր ու որդի շարունակեցին իրենց ճանապարհը մինչև Վիէննա, ուր կայարանից անմիջապէս դիմեցին «Լոնդոն» հիւրանոց, իրենց գալստին սպասող Բէատրիչէի և Տիրանի մօտ։

Իգնասն ու մայրը բաւական քաջութիւն ներշնչեցին Բէատրիչէին այդ օտար քաղաքում, ուր

թշւառ օրիորդը օրէցօր յուսահատւում էր, երբ հետզհետէ համոզւում էր, թէ անբուժելի էր սիրեկանի՝ Տիրանի մտաւոր կարողութեան խանգարումը։ Բոլոր բժշկապետները և համալսարանի պրոֆէսօրները մի քանի անգամ ժողով գումարելով յուսահատական պատասխաններ էին տւել, իսկ մի բժիշկ խոստացել էր իր փորձերը շարունակել մի երկու ամիս, մինչև որոշ եզրակացութեան հասնելը։ Թշւառ խելագարը միշտ ենթադրում էր, թէ ինքը Ղալաթա-սարայի որջումն է և դաժան ոստիկանները իրեն հրմշտկելով այս ու այն կողմն են տանում։ Այս ողորմելի ձևերը տանջում էին վշտալի Բէատրիչէին, որը յուսահատութիւնից քիչ էր մնում, որ հետևի իր սիրեկանի ընթացքին։

Իգնասը, մայրը անմիջապէս միջոցներ ձեռք առին, թէ խելագարը խնամելու և թէ Բէատրիչէի վշտերը ամոքելու։ Անթառամը, որպէս հասակաւոր և փորձառու իր վրա առաւ բոլոր ծանր աշխատութիւնները, ազատ թողնելով Իգնասին ու Բէատրիչէին, որպէսզի վերջիններս իրար մխիթարելով, մոռանան իրենց վիշտը։ Իգնասը Բէատրիչէի սոսկալի վշտերը նկատելով, ըմբռնելով նրա հոգեկան տանջանքները, մասամբ մոռացաւ Աթէնային և ամբողջ օրը աշխատում էր զանազան միջոցներ հնարել և թեթևացնել թշւառ օրիորդի տանջանքները։ Յաճախ կառք էին նստում, ման էին գալիս Վիէննայի երկար փողոցները բուլւարները, այգիներն ու անտառները, միւզէներն ու վաճառանոցները, որ այդ հետաքրքրական տեսարաններով զբաղւի իրենց միտքը և մոռանան վշտերը։

Բայց զուր, ամէն քայլափոխի նրանց ներկայանում էին Տիրանն ու Աթէնան և յուզում, մրրկում նրանց բոլոր զգացումները:

—Սիրելիս, ասաց մի օր Բէատրիչէն Իգէային, երբ նրանք կառքով անցնում էին մեծ բուլւարով, աշխարհ նախանձում է մեր վրա. ամէնը հիացմունքով մեզ են դիտում, բայց ոչ ոք չի կարող գուշակել, ենթադրել թէ ի՛նչ զարհուրելի տագնապի մէջ ենք: Մի՞թէ այնքան տառապանքս նրա համար էր, որ սիրեկանիս ինձ հասցնէին գլխակնացած: Ինչի՞ս է պէտք, որ ապրում է թշուառը: Հազար անգամ նախապատիւ չէր, որ նրան տանէին մանրէին, Մարմարեայ ձուկերին կեր թափէին, քանթէ այս անուշ գիրքով ինձ վերադարձնէին: Խղճալին պէտի տառապի, առանց զգալու իւր վիճակը, առանց ըմբռնելու իմ վիշտը:

—Օրիո՛րդ, մի՛ յուսահատուիք, բժշկապետը խոստացաւ, նա վստահացրեց և ես յոյս ունիմ... արդէն զգալի է փոփոխութիւնը...

—Յո՛յս, անիրագործելի յո՛յս,... Ինքնախաբէութեամբ ենք պարապած և օրից օր խորասուզւում ենք անդունդը: Իգէա՛ս, Տիրանիս վիճակը անբուժելի է, թուրք ոստիկանութեան սուրը երկու կողմից էլ հարուածեց և երկու կողմից էլ բաւականութիւնն ըստացաւ,...: Թէ Տիրանին հոգեպէս սպանեց և թէ նիւթապէս կողոպտեց: Ես պատրաստ եմ երկու հարիւր հազար լիրայի կրկնապատիկը վճարելու, եթէ հնար գտնէին Տիրանիս բուժելու:

—Օրիո՛րդ, ինչի՞ էք այդքան ընկճւել...: Դուք որ շարունակ ինձ քաջալեր, համբերութիւն, յարա-

տեւութիւն էիք քարոզում, ձեզ ի՞նչ պատահեց, ինչի՞ էք այդպէս հիասթափւել...:

—Սոսկալի է, զարհուրելի է հոգիս մրրկող փոթորիկը: Այն չարագործը սպանեց սիրտս, անշնչացրեց սիրելիս, սիրեկանս ջնջոցի վիճակում դարձրեց գիրկս, սորկացրեց ոտքերս և այսօր յաղթանակած, ժանիքների մէջ առած Աթէնային՝ հրճւում է, ծիծաղում է, արհամարում է մեզ և արդարադատութիւնը, իսկ ես հնար չունիմ վրէժս լուծելու.......: Նա իւր գրպարտութիւններով կործանեց Տիրանիս, նրա տունը, տոհմը, մեզ, իսկ մենք ձեռներս ծալած, վզներս ճկած մի գլուխ ենք խոնարհում, զմռսում: Ի՞նչի է պէտք գլուխը, ինչիս է հարկաւոր այն մարմինը, որտեղից հոգին, զգացումը խլեց Սէլժօն... Ի՞նչ եմ անում ես ապարանքը, գանձը կարողութիւնը, երբ աշխարհի երեսին էլ ոչինչից բաւականութիւն չեմ ըստանալու, երբ գիշեր, ցերեկ, քուն թէ արթուն ինձ հանգստութիւն չի տալու այն միտքը, թէ ամուսինս հալածող չարագործը նպատակին հասած յաղթանակում է, գրաւել է Աթէնային, բազմել է պետական խորհրդականի բարձին, ոտքերի տակ տրորում է անմեղներին և հրճւում...:

—Այո՛, նա յաղթանակեց... նա վայելում է իր չարագործութեան պտուղը, բայց նա չէ յաղթանակողը, այլ ժամանակը, դարը...:

—Մարդի՛կ ա՛յնքան ընկել են, ա՛յնքան ստորացել են, այնպիսի մեղկութեան են անձնատուր եղել, որ մեռել է նրանց մէջ բարոյականութիւնը ամբողջապէս... Կաշւի խնդիրը, ապրելու իղձը այնպէս է

անբարոյականացրել, որ ոչ ոք չի ցանկանում աղրի տղմից դուրս գալ և մարդկային արժանապատվության աստիճանի վրա կանգնել...: Եւ ցաւալին այն է, դըժբաղտութիւնը այն տեղ է, որ ոչ ոք չի զգում, թէ ինչ անբարոյականութեան մէջ է խրուած, այնպէս որ ամէն կողմ ծաւալւել է ու տարածւել այդ զարհուրելի ախտը:

—Օրիորդ, ամէնքն էլ զգում, ամէնքն էլ ըմբռնում են, բայց այնպիսի պայմաններ է ստեղծում աշխարհին, որ բոլորն էլ մոլորւել են, չեն իմանում, ինչ անեն, ինչ միջոցի դիմեն...: Մի՞թէ Սէթօյի հարւածից ամէնից շատ տուժողը ես չեմ, մի՞թէ կա՞ մի ուրիշը աշխարհի երեսին, որ այնքան տանջանքի դատապարտւած լինի, որքան ես, սիրոս, բայց ինչ կարող էի անել....:

—Յուսահատւողներին կտիպլեն ստրկանալու...

—Ո՛չ, ինձ ոչ ոք չէր կարող ստիպել, ոչ ոք չէր կարող ստրկացնել, բայց ինչ կարող էի անել դաժան թուրքերի բանտում, երբ դեսպանուհիի թելադրութիւնով ինձ երեսի վրա թողեց մեր կոնսուլատն անգամ...:

—Ինչի այդքան խեղճացար, ինչի այդպէս անբարոյականութեան տղմի մէջ սուզուեցար, ինչի կեանքը գերադասեցիր բարոյականութիւնից, որ այսօր այդպէս սրտի խորքերից հառաչես...

—Բէհաթիչէ, Բէհաթիչէ, դու բորբոքում ես այստեղ քնած առիւծին, դու զրգռում ես գազանին... Մի՞թէ չգիտես, որ այստեղ թմրած է Իտալական բանւորի դաժան թշնամին... Մի՞թէ ես ապրում եմ, մի՞թէ կարող էք ենթադրել, որ այն աստիճանի ընկած եմ,

որ այստեղ մեռել է բարոյականութիւնը...: Ինչիս էր պետք կեանքը... եթէ այս կինը... այս թշւառը... մտքս...

—Մի՞թէ բարոյականութեան վրա կանգնած Իտալացի Սկեւռլանները մայր, քոյր չունէին, մի՞թէ քո մայրը ուրիշների դուները լւացք անող կիներից որևէ տարբեր հոգի ունի: Ինչի ազնիւ զգացումները պիտի տուժեն այդպիսի պատրւակների դէմ, կամ ինչի ես էլ Շարլոտտայի նման չպիտի մտնէի բռնակալ Մօրատի-Սէթօյի կամ Նազմի տունը և նրանց իրենց օջախի մէջ, բաղնիսի մէջ չպիտի խողողէի: Բայց ո՛չ, մեզ անբարոյականութեան կոյանոցում այնպէս են դաստիարակել, մեր զգացումները և ջղերը այնպէս են մարզել, որ Սէթօները համարձակ շարունակեն իրենց սխրագործութիւնները, սպանեն, յափշտակեն մեր սիրեկաններին և մենք փայփայենք մեր սրտի խորքերը մեռած ճիրանները...:

—Այո՛, բայց դարը վատ է, *հասհասաների* շըրջանում ենք ապրում:

Անբարոյական և բռնակալ ամէն մի պատմական շրջան իւր ծայրահեղ բարոյական հերոսներն է ծնել, որոնք սանձել և փշրել են դահիճներին, լոկ կեանքն արհամարհելով:

—Ահա և քո ծրագիրը, ահա քու հնարամտութեան հետևանքը, ասաց Նազմ բէյը Սէթօյին, երբ

ամէն գործ վերջացրած մտնում էինք տիրելու, նուաճելու Աջէմեանի գանձերը, մեզ խայտառակ դուրս են անում… վռնդում են…

—Ես ինչ մեղք ունիմ. ինչպէս կարող էի ենթադրել, թէ Շէյխ-իւլ-իսլամի դանից *Հիւքմի-Շէրի* են ստանալու, պալատից *ֆէրման*, արտաքին գործերի նախարարն էլ այսուշ այսուշ պիտի պետական կնիքով վաւերացնէր և օտարահպատակ մի որևէ աղջկա յանձնէր այս ահաւոր գանձը, կարողութիւնը։

—Նրանց կատարելը յանցանք չէ, այլ մեր անհեռատեսութիւնը աններելի սխալ է…։ Քանի՜ քանի՜ անգամ այս գործի պատճառով քիչ մնաց, որ կործանուիմ, կործանելով կեանքս և զաւակներիս ապագան։ Քանի՜ քանի՜ անգամ ինձ հարիւր հազար լիրայի առաջարկ եկաւ Բէատրիչէից, որ նրան աջակցեմ, բայց ես քեզ չդաւաճանեցի. իսկ այսօր քեզ հետ դատարկ մնալուց յետոյ, այսպէս էլ խայտառակուեցի։ Հապա ի՞նչպէս դոհացնեմ այն սովալլուկներին, որոնց ամիսներով յոյսով եմ կերակրել։ Ո՞րտեղից և ինչպէս բաւականացնեմ…։

—Ես չեմ յուսահատել, ես հաւատացած եմ, որ դատարանը պիտի ոչնչացնի այդ շէրիական վճիռն էլ, պալատական բէրաթն էլ, պետական վաւերացումն էլ, քանի որ ամբողջ գործը կատարուել է պետական օրէնքների ներհակ, գաղտագողի, մի ինչոր դիւակի անունից։ Հարկաւոր է շտապեցնել, ստիպել դատաւորներին օր առաջ վճռել և կայացնել իրենց որոշումը…։

—Ի՞նչ կարող են անել դատաւորները, երբ

գործի աւելի շէրիաթը իւր պատգամը և պալատը իւր կամքը տուել է գրաւոր կերպով։

—Կործանուի՛ այն երկիրը, որը իրար ներհակ երկնակի օրէնքներով է կառավարւում, կործանուել է այն պետութիւնը, որի մէջ երկնակի թագաւորութիւնը իրար հակառակ ընթացքով քայքայել է ազգաբնակութիւնը։ Արդարութեան ատեանները արհամարած, ինչի՞ պիտի գործադրեն շէյխ-իւլ-իսլամի դանից տըրւած որոշումները։ Քանի՜ մէկ այս կղզի մրոտածները օրէնք ու պատգամ պիտի դառնա մեզ համար։

—Նոտարն էլ արդարութեան ատեանների գործակալն է, նա ինչի վաւերացրեց, վաճառականական ատեանի նախագահն էլ արդարադատութեան պաշտօնակալ է, նրա վաւերացումի դէմ ինչ կարող ես անել։

—Դրանք բոլորն էլ կարելի է հերքել, ոչնչացնել, այս է Մազսէթ-բէյի կարծիքն ու խորհուրդը, միայն թէ պէտք է պալատից մի նոր *իրադէ* ձեռք բերել, գործը արդարութեան համաձայն քննելու…

—Ես յոյսս կորցրել եմ, ձեր ուզած *իրադէն* վաղը կտա Ջէւադ-բէյը, բայց Ֆրանսիական դեսպանատունը այդպիսի հրամաններ չի կարդալ, երբ պետական կնիքով վաւերացած թուղթը պահպանում է իւր գրադարանում։

—Դուք վստահ էք, վաղը կարող ենք ստանալ այդ հրովարտակը…

—Կստանաք, այդտեղ կասկած չկա՛, բայց դուք տեղը մի՛ տանջուէք, դատաւորներն ինչ էլ որ վճռեն, Բէատրիչէի ճանկից բան չպիտի կարողանանք դուրս բերել, քանի որ Ֆրանսիական դեսպանը արտաքին

գործերի վարիչի կնիքը, պետական դրօշմի հետ մեր աչքն է կոխելու...

—Դրանք դատարկ բաներ են, նենգութեամբ, մութ տեղը կատարուած ամէն մի գրութիւն չի կարող արժէք ունենալ արդարադատութեան առաջ:

—Բայց և այնպէս այդ բոլորից մի փարա էլ դուրս չի գալու, իսկ ես այս սովալլուկներին ինչպէս պիտի կշտացնեմ....

XIX

ՊԱԿ

—Ամէն բան շատ լաւ, բայց այս աղջիկը ոչ-տեղ է, Բէատրիչէն ուր է: Հայրս տեւել է, ծախել է նորան ունեցած պարտքի—ուր հարիւր հազար լիրայի վախարէն ամբողջ գոյքը. նա է այժմ բոլորի տէրը, բայց տէրն ուր է: Թող հրապարակ գա, երեսը տեսնեմ, երկու խօսք ունեմ, ասեմ, թող էլի գրկիմ այս կարողութիւնից, ասաց բորբոքւած Ամաբէլը:

—Քեզ ինչ, ասաց Սէթօն սառնութեամբ, ինչ իրաւունք ունես նորան պահանջելու, երբ նա արդէն

հաստատւած հաւատարմագրով իւր եղբօրը լիազօր է կարգել:

—Ես լիազօրութեան դէմ առարկութիւն չունիմ, հօրս տւած թղթի դէմ էլ գատարանը կտա իւր որոշումը, թէ իրաւունք գտաւ, կտանամ, թէ ոչ, կերթամ ծովը կընկնեմ, բայց այդ աղջիկը ուր կորաւ...:

—Նա անպատճառ հեռացաւ Եւրոպա, երևի նորա վրա խիստ ներգործեց սիրականի անյայտացումն, ասաց Սէթօն մտազբաղ: Այնտեղ շուտով կմոռանա Տիրան-բէյին և մի պրէնսի հետ ամուսնանալով կը-ռալլէ աղա Թադոսի գանձերը...: Բայց դու ինչ մարդ ես, չորս օր է շարունակ այն տանն ես գտնւում, բայց այսօր միայն կարողացար հասկանալ, թէ Բէատրիչէն թռել է...Մեծ խօսել գիտես. բայց ոչ գործել...:

—Անհրաժեշտ է նորան գտնել, եթէ ես նորա հետ դէմառդէմ տեսնւիմ, դատավարութեան կարիք չենք ունենալ, նա յօժարութեամբ ինձ կվերադարձնէ հօրիցս կորզած թղթերը:

—Ո՜հ, ինչ ցանցար ցանցար մտքեր ես արտայայտում: Միլիոնի գանձից այդպէս դիւրութեամբ չեն անջատւիլ: Այդպիսի թակարդներով ձեռք բերւած կարողութիւնից ձեռ քաշել տալը հեշտ չէ:

—Ուրեք ձեր գործը գիտէք, Սէթօ, ձեր ընթացքի մէջ մարդու չէք հաւանիլ, այնքան ուսում. նասիրած էք, որ ապահովաբար կհասնիք նպատակի: Ես էլ իմ ծրագիրն ունիմ և վստահ կարող եմ ձեզ հաւաստիացնել, որ առաջի տեսութեամբ ետ կառնեմ Բէատրիչէի ձեռքից այդ բոլոր թղթերը: Ես նորան

լաւ եմ ճանաչում... բա՛հ, անեմ, լեզին կճաքի...

—Պիտի համոզէք, ամաչացնէք, թէ վախեցնէք,

—Այդ էլ իմ գործս է...:

—Է՜հ, զուր զլուխս մի՛ ցաւացնէք մեծամիտ խօսքերով: Դուք գնացէք տուն, պատրաստուիլն տեսէք, որ գիշերս գնանք, պահպենք, վերջանա, հերիք Ամէնաս տանջւի... Մնացեալի մասին կխորհինք: Արդէն ես բարեկամներիս հրաւէր ուղարկել եմ, տանը պատրաստուիլն տեսնւած է: Հալածանիք չունիմ, չեմ ուզում վրդովել Ամէնայի սիրտը, եթիկայի դէմ է, բայց և այնպէս բարեկամներիս առաջ դուռս չեմ կարող փակել:

—Մենք պատրաստ ենք, երբ որ կամենաք, հրամայեցէք: Բայց գուք սիրտս խաղաղացրէք, փընտռեցէք, տեսնենք ո՞ւր է Բէատրիչէն.

—Մինչև գիշերը կիմանամ և ձեզ էլ կհաղորդեմ:

—Մեծամիտ մարդ, ասաց Սէթօն Ամալի եռեւից, երբ վերջինս դուրս եկաւ նրա գրասենեակից: Ամրոզչ կեանքը պատրաստի գրամ է կերել, կեանքում նեղութիւն չէ քաշել, կամքը ամէն տեղ առաջ է տարել, ոչ մի կապիկ չի վաստակել և ինչպէս ծբնողներից, եղբօրից կորզել, լափել է, կարծում է, թէ Հարսնացուից՝ Բէատրիչէից էլ կարող է կորզել: Այն չգիտէ, որ Աթէնայի տունն երեքուց լաւ, պէտք է լալել, Ամէնայիս տունն երեքից լաւ, պէտք

է յարաբերութիւնս խզել այս ցանցարից: Երբ առանձնացած խորհում էր անելիքը, ծրագրում բռնելիք ընթացքը, մայրը ներս մտաւ և առաջը կանգնած, աչքերի մէջ հայեացքը ուղղած ասաց.

—Սէթօ, հոգիս, ախոր մուրթն ընկաւ, քիչ յետո հրաւիրեալներդ կգան ինչ ես նատել, գնա այն ասածս մանեակը բեր, մօրդ սիրտը մի՛ կոտրել, թո՛ղ այս էլ իմ կամքով կատարւի: Եատ ես տանջւել, տեսնում եմ, անչափ փող ծախսեցիր, գիտեմ, այս իմ կամքս էլ կատարէ, էլ ուրախ աչքով, լի սրտով կբաժանւիմ քեզնից, երբ Գաբրիէլս գա հոգիս առնելու:

—Լա՛ւ, մայրի՛կ, շատ բարի՛, ես իսկոյն քո մանեակն էլ կբերեմ:

—Յաւդ տանեմ, զաւակս, չեմ ուզեր քեզ չարչարել, բայց անուն ունենք, պատի՛ւ ունենք, ինչի՛ ուրիշների չալ: աչքը տեսնի ու բամբասէ: Հիմի խո՛ Աստուած տւել, չէ խնայել: Պետական խորհրդականի անդամի մօր վայել պիտի նստիմ, կանգնիմ: Մանաւանդ որ նոր հարս պիտի բերեմ, ինչի նա զա և իմ արդ ու զարդիս մասին պահանջներ գտնի:

Ամենի խանութը գլուխ քաշ գցած վազում էր այս ու այն գործի եռևից, ծառաներին, բանանոցներին գործի, դրած պատրաստութիւնն էր տեսնում խնա-

մինելին ընդունելու։ Նա բանն անում և գաղտագողի լալիս էր։ Ընջապատողների առաջ ժպիտ էր կեղծում, սրտովը վշտակցում և առանձնութեան մէջ արտասուելիս թաշկինակով այնպես էր սրբում աչքերն ու այտերը, որ ոչ ոք չնկատէ։ Ամբողջ տունը իրարանցումի մէջ էր, երեխաներն էլ ուրախանում էին, թէ դիշերը հարսնևորները գալու և իրենց քոյրիկին հարս էին տանելու։

Արդէն եկեղեցում պսակի ամէն պատրաստութիւնը տեսնւած էր, քահանաները, արքեպիսկոպոսը հրաւիրւած էին, որ խորհուրդը շքեղութեամբ կատարւի։ Թէև Սէթօն մտածել էր արիստոկրատների նման տանը պսակւել, բայց մայրը ընդդիմացել և պահանջել էր անպատճառ պսակը եկեղեցուց տուն բերել, որ խորհրդի շնորհը, ողորմութիւնը անպակաս լինի իր տան վրայից և սրբւի հին հին մեղքերի ազատները։

Ալթա-բէյը կնոջ պահանջի համաձայն անգադար վազում էր այս ու այն շուկան, այս ու այն դերձակուհիների և վարսավերայի մագազինը, կարևոր նիւթերը ձեռք բերելու։ Ազգական, բարեկամ բոլոր մատաղահասները եկել, հաւաքւել էին Ալթենայի ուրախութեան մասնակցելու և հանդիսատես դառնալու։ Ամէնը հրճւում էին, ամէնը նախանձւում էին, որ այդքան դեռահաս, այդպիսի մեծ բաղտի էր արժանացել օրիորդը, բայց ոչ ոք չէր կարողանում թափանցել նորա ներքին աշխարհը, որ մռայլել, մթնեցրել և խաւարացրել էր Ալթենայի սքանչելի աչքերը։

Ալթենան չէր կարողանում և ոչ մի րոպէ մո-

ռանալ իր սէրը՝ իր Իդէասը։ Նա սիրեկանին փրկելու, մօրքուրին մահի ճիրանից կորզելու համար՝ զիջել էր, հօրը կործանումից, մօրը խայտառակութիւնից, եղբայրներին և քոյրերին անկման սպառնալիքից ազատելու համար՝ սէր էր կեղծել Սէթօին, բայց հոգին ու զգացումները չէին հնազանդում, ուշքը, միտքը մի վայրկեան անգամ չէին կարողանում բաժանւել Իդէասից։ Ալթենան սարսափելով Սէթօից, նրան փաղաշում, գգւում էր, ինչպես կարող էր գրքւել օձի, կամ կոկորդիլոսի։ Այս գազանները գուցէ այնքան չզզւէր ու չսոսկար, ինչ նոքանք զզում էր Սէթօից։ Քանի որ անճարացած խոստացել էր, շարունակում էր հաճոյանալու դէր կատարել նշանածի առաջ, բայց այդ դերը, այդ յարաբերութիւնը նորան հալւում, մաշում ու տանջում էր։ Ինչքար ապազգալի անակնկալ յոյսով ապրում էր Ալթենան, բայց երբ կսւեց այդքան արագ պսակի պատրաստութիւնը, երբ յայտնեցին նորան կատարւելիք խորհրդի օրը, ժամը նա զարհուրեց, նա սարսափեց, չէր լմանում ինչ ընթացք բռնի։ Երբ զգաց, որ մայրն էլ իրեն հետ տանջւում է, Ազնիւ խանումն էլ բորբոքւում է այս սոսկալի պսակից, մօրը վիշտը ամոքելու համար Ալթենան աշխատում էր հոգու անդորրութիւն, խաղաղութիւն կեղծել, ցոյց տալ, թէ ինքը խոնարհւում և համբերութեամբ հնազանդւում է իւր չար բաղտին։ Ինչպես տղչկիկը մօր, այնպես մայրը տղչկա տանջանքը չբորբոքելու համար իրարից ծածկում էին իրենց հոգեկան աշխարհը, որպէսզի չսատկացնեն իրար վիշտը։

Գիշեր էր, ժամը ութն անցել: Վարսաւիրան կանգնած Աթէնայի ննջարանում և բազկաթոռին նստած օրիորդի մազերն էր սարքում տաքացրած ունելիքով: Աթէնայի սիրելի ընկերուհիները նորա՛ն շրջապատել էին և ամէն կողմից կատակ ու նկատողութիւններ էին տեղում օրիորդի գլխին: Վարսաւէրը խուլումունջի նման իբր թէ ոչի՛նչ չէր լսում, ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր ըմբռնում, ուշքն ամբողջապէս կենտրոնացրած իւր գործին, ոլորում ու գանգուրացնում էր Աթէնայի ճոխ ու երկար մազերը, որոնք սըփռւած էին ուսերի և թիկունքի վրա: Անզգայացել էր Աթէնան էլ, թէև մէկ մէկ նա պատասխանում էր ընկերուհիների հարցերին, բայց նորա խօսքերը անկապ, անիմաստ էին, այնպէս որ շրջապատողներին խորհելու պատճառ էին դառնում:

—Այո՛, մտածում էր Աթէնան, բողոքս էլ հասա, վիճակիս էլ արժանացա և ձեր էլ նախանձն եմ բորբոքում, ազնիւ օրիորդնե՛ր,.. Բայց եթէ գիտենա՛ք, ըմբռնէ՛ք հոգւոյս խռովութիւնը...: Ի՞նչիս է պէտք, որ Սէթօն պետական խորհրդական է, ի՛նչ եմ անում ես նրա շքանշանները. որքան էլ հարուստ լինի, չի կարող պալէս չափ գանձ ունենալ, բայց ի՛նչ տարաւ խղճալին բացի պատանքը... Որ չե՛մ սիրում, որ չե՛մ կարողանում մոռանալ Իգէասին, որ ամէն վայրկեան ինձ ցնցում է նրա պատկերը, որ շուքը չի հեռանում աչքիս առաջից...: Ա՛խ, Իգէա՛ս, թշւառ Իգէա՛ս, այս էր քո սէրը, գլուխդ փրկելու, մօրդ տանջանքից ազատելու համար ինձ զոհեցի՛ր...: Մարդի՛կ, մարդի՛կ, եսամոլ մարդիկ... Ա՛յս էր քու սէրը, Իգէա՛ս, այս էր

քու խոստումը, ուխտադրո՛ւժ, այս էր քու հովանաւորութիւնը, քո ընկերակցութիւնը, հարազատ զարմի՛կ: Դու ազատ թռչկոտի՛ր, մայրդ էլ գուգուրա քեզնով, իսկ զարմուհիդ, թո՛ղ ճղիկ ճղիկ դառնա Սէթօյի գըրկում, թո՛ղ ձուիկ, ձուիկ դառնա դահիճի ճիրաններում... Արժէ, որ ես մտածեմ այնպիսի մի երեխայի մասին, մի լղպորի մասին, ինչպէս անւանում է Սէթօն, որ ինձ թողեց իր թշնամիի, հակառակորդի ժանիքներում, նապաստակի նման փախաւ, բունը մտաւ, որ գլուխը փրկէ... Յիմա՛ր, անմի՛տ Աթէնա՛, փոխանակ նա ինձ հովանաւորելու, փոխանակ նա իր կրծքով կեանքս ազատելու, ես ապուշի նման խնամակալի, պաշտպանի դերն ստանձնեցի, այն էլ ի՛նչ զարհուրելի թանկ գնով, անձս զոհեցի, ինձ ծախեցի, գրաւ դրի, ազատութիւնս կաշկանդեցի, յօժար կամքովս անձս յանձնեցի դահիճիս, հօրս օջախի թշնամուն, պապիս ոխերիմ հակառակորդին, ապօրինի ծնունդին...: Բայց նա՛ ի՞նչ մեղք ունի, նա ինչով է մեղաւոր. մօր յանցանքի, հօրս ոճիրի համար: Մի՞թէ նա կարող էր դիմադրել..:

—Մի՞թէ նա կարող էր տհաճութիւնը արտայայտել................ կրքից մոլորւածներին: Մի՞թէ նա հազար անգամ բարձր չէ կանգնած հօրից, որ դահիճըս դարձած ինձ ուզում է գցել իւր ոխերիմի գիրկը, մի՞թէ նա հազար աստիճան վեհ չէ դասւած այն թուլամորթից, որ չկարողացաւ տոկալ բանտի շղթաներին և ինձ ստիպեց կեանքս ծախելով նրա՛ գլուխն ազատել... Եւ ե՛ս.... ե՛ս անպարծս, դեռ այս րոպէիս խղճում եմ դահիճիս, մորմոքում եմ նրա համար...

Ո՜Հ, որքա՜ն զարՀուրելի է այսպիսի կեանքը, որքա՜ն սառը և խղճալի են այսպիսի արարածները… Արժէ՞ մը-տածել այդպիսի չնչին էակների Համար… Առանձնու-թեան մէջ խրոխտում էիր, լեռներին ու ամպերին ո-րոտալով սպառնալիք էիր կարդում…. ո՞ւր ես այժմ, որտե՞ղ ես, երբ սիրուՀիդ տանում է Հակառակորդդ… Հա՛ն, ի՞նչ է, պարծենում էիր մի խիղճ աղջկա մօտ, առիւծ էիր Հանդիսանում և Հրապուրում…: ԱՀա ժամը, թէ քա՛ջ ես, գործադրի՛ր թևերիդ ոյժը… Բայց դո՛ւ, քեզ նման քաջերին շա՜տ ենք տեսել, կաշւիդ մէջը կոլոլւած ո՛վ գիտէ այժմ Եւրոպայում ու՛մն ես ուզում Հրապուրել: Գնա՛, Աթէնա՛, բոլորովին մի՛ տըր-տնջալ վիճակիդ դէմ, դու ընտրեցի՛ր, դու գիջա՛ր, դո՛ւ Համաձայնեցար… Կգնամ, ուրախութեամբ պիտի գը-նամ, աւելի պատուաբեր է մի աղջկա Համար գլխին Սէթօ-յի նման տէր ունենալ, քանթէ սրտում Իդէասի նման անապարծի սէրը: Ի՞նչ անենք, որ ես չեմ կարողա-նում Սէթօյին սիրել, յարգել, նա խօ ինձ պաշտում է, նա խօ ինձ Համար խելագարւում է, նա ինձ յարգում և ստիպում է որ ուրիշներն էլ յարգեն, այն ինչ զարմիկս, Հարազատս, նրան, որին պաշտել եմ ինձ ճանաչելուց իվեր, ինձ մի կտոր ջնջոցի նման թողեց, Հեռացաւ: Նա դեռ ինձնից որևէ սէր, յարգանք, գը-գւանք չտեսած այսպիսի զոՀողութիւններ արաւ սէրս գրաւելու Համար, ի՞նչեր չպիտի անէ, եթէ իսկապէս Համակրութեանս արժանանա, իսկ դո՛ւ, դո՛ւ,… ողոր-մելի մանուկ, ափսո՛ս, որ տղամարդի անուն էք կը-րում…: ԱՀա՛ տղամարդը, իւր չոր գլխով, դատարկ գրպաններով, լերկ բռով, վազեց, ցատկեց, ընկաւ, ե-

լա՛ւ, առանց որևէ մէկի օգնութեան, իրեն Համար մի օջախ Հիմնեց և այսօր ամբողջ Կ. Պոլսի աչքի փուշն է դարձել: Ամէնքը նախանձւում են նրա բաղտին, ամէնը կարօտ են նրա Հովանաւորութեան… իսկ ես, ես, ես դեռ սպասում եմ, որ Մեսիա գա……:

—Մինչ այս մտքերով տանջւում էր Աթէնան, եկան իմացրին, թէ էֆէնդին քսանը չորս կառքով, բարեկամներով և ազգականներով եկան, բարձրանում են սրաՀ: Աթէնան, որ ներքին յոյզերից արդէն բոր-բոքւած էր, այս լուրը ստանալուց կարմիր կակաչ դարձաւ: Վարսաւիրան իսկոյն գործն աւարտած լինե-լով դուրս գնաց ննջարանից, որին յաջորդեց դերձի-կուՀին: Վերջինս մի մեծ ծրարով առաջ բերեց պը-սակի շրջազգեստը իւր պարագաներով:

Երբ ֆրանսուՀին փոխեց Աթէնայի շորերը, երբ նորան Հագցրին ձիւնի նման ճերմակ սնդուսի շըր-ջազգեստը և սկսեցին սպիտակ շուշաններով զարդա-րել գլխից մինչև ոտքերը, Աթէնան ո՛չ միայն զրկւեց շիկնած ու կակաչած դէմքից, այլ սպրդնեց, դեղնեց ու սպիտակեց, կարծես նորան պատանում էին: Որ-քա՛ն որ երևակայութեամբ աշխատում էր ինքն իրեն յուսադրել, ընթացքը արդարացնել, Իդէասին պախա-րակել, կեանքը-շրջանը անարգել, շրջապատի ու պա-րագաների ներգործութիւնով արդարանալ, բայց ո՛չ մէկը նորան իսկական Համոզում չէր ներշնչում, ոչըն-չով չէր կարողանում սիրտը խաղաղել: Թէև շուշանի նման պճնեց ու զարդարւեց Աթէնան, բայց նորա աչ-քերը Հանգել՝ կորցրել էին իրենց կենդանութիւնը, նորա դէմքը թառմել՝ զրկւել էր գրաւիչ փայլից, նորա

բոյն ու բուսատը կծկտել՝ շլացնող նազանքը աներե-
ւոյթացել էր, նորա տատանումներից իսկապէս դա-
լուկ շնչող մի դիակ էին զարդարել, որի մէջ խսպառ
բացակայում էր շնորհալի Ա.թէնայի քնքշալի շար-
ժումները, վայելուչ ձևերը և վեհ ցնցումները: Հար-
սըն քոյրերը այդ խրտուիլակի թևերը մտած սրահ տա-
րան, ուր ո՛չ հարսանեկան երաժշտութիւն կար, ո՛չ
պար, ո՛չ կաքաւ. աւելի սքուորի էին նման, քանթէ
հարսնեւորի: Անուշեղէնը բաժնելուց, բարեմաղթու-
թեան բաժակները դատարկելուց յետո, քահանաները
կարգը կատարեցին և կառքերը դանդաղ քայլերով
հարսնևորներին տարան Երրորդութեան եկեղեցի:

Թէև լիսուեից աւել հետևորդ չուներ Սէթօն,
թէև ամէն կերպ աշխատել էին չտարաճճել, չազդարա-
րել պսակի օրն ու ժամը, բայց հազար հինդ հարիւ-
րից աւել հանդիսատես՝ այր ու կին մտել ու շրջապա-
տել էին եկեղեցին և փողոցը: Կառքի մէջ Ա.թէնան
լոկ ձևականօրէն ամօթխած պատասխանում էր Սէ-
թօյի և խաչեղբօր հարցերին, բայց բոլորովին
դալկացաւ, թուլացաւ, երբ կառքը անցաւ Ղալաթա-
Սարայի առաջից և թէքուեց եկեղեցու կողմը: Այդ-
տեղ վայրկենական արագութեամբ պատկերացան-սլա-
ցան Ա.թէնայի մտքից հազարաւոր տեսարաններ, թէ
իր և Իդէասի կեանքից, թէ Բէատրիչէի ու Տիրանի
կեանքից և թէ Սէթօյի սխրագործութիւններից...:
Այն ամբոխը, որ թքել ու երեսն էր շուռ տալ սո-
տիկանական լրտեսից, այն խուժանը՝ որի գաւակները
գնդաններում և աղբիկներն որջերում ողբում էին,
Սէթօյի մատնութիւնների շնորհիւ իրենց վիճակը,

իւր դահիճի պսակադրութեան հանդիսատես էր եկել:
Ամէնքը ոչ միայն ձգտում էին թագուոր-թագուհին
տեսնել, այլ ամէն կերպ աշխատում էին, որ վսեմա-
շուք էֆէնդիի քաղցր հայեացքին արժանանան և
գլխի իջեցնելով յարգանքները յայտնեն:

Եւ այս ամբոխը ճեղքելով կառքերը անցան և
շարուեցան եկեղեցու դռան առաջ:

Ամբոխը խռնուած չէր ուզում զրկուել տեսարա-
նից: Հարսնևորների հետ ով որ կարողացաւ, մտաւ
եկեղեցին, որի դուռը բարապաններն խնդին փակեցին,
քանի որ ժողովուրդն արդէն վաղ լքցուել էր և շարժ-
ուելու տեղ չկար: Կէս ժամի չափ տևեց այդ խորհուր-
դը, բայց հանդիսատես ժողովուրդի համար անչափ ա-
րագ սահեցաւ այդ կէս ժամը և երբ եկեղեցու դըռ-
ները բացին, ծնծաղներով ու շարականով դուրս հա-
նեցին թագուորին ու թագուհիին, ամէն կողմից հազա-
րաւոր աչքեր սևեռեցան նրանց վրա: Բարապանները,
ժամհարները դուռում էին,—Մէկդի, ճամբա բացէք,
ետ քաշուեցէք,—Բայց ով էր լսողը, ում պէտքն էր,
ամէն մարդ աշխատում էր մի քանի րոպէով աւելի
պննել բաղտի երես տւած նորապսակներին: Հազարա-
ւոր սրտեր հառաչում էին նախանձից, թէ լաւցարերը
այնպիսի զաւակ էր ծնել, որն իւր ձեռքով և սրամը-
տութիւնով Պէրայի գեղեցկուհիին գրաւել, հասել էր
փառքի գագաթին,...:

Մինչ կառապանը ուղղում էր կառքը, որ բազ-
մին նորապսակները, մինչ Սէթօն Ա.թէնայի թևերը
մտած նորան կառք էր բարձրացնում, յանկարծ մի
ոչխարների գնդակ հասաւ փշրեց Սէթօյի գանկը.....

որն ընկաւ կառքի մէջ Աթէնայի ոտքերի տակ, ներկելով նորա սնդուսի շրջազգեստը և սպիտակ շուշան ծաղիկները...:

Ոստիկանները, պէրայի ծպտեալ պոլիսներն ու լրտեսները գոռում էին, կանչում,—Բռնեցէք, մի թողնէք, ճանապարհը կտրեցէք....

Բայց ում բռնեն, ո՛րտեղից հասաւ գնդակը, ոչ ոք չկարողացաւ իմանալ:

Երբ ոստիկանութիւնը առթից օգտւելով կալանաւորում էր պատահական ամէն մի հանդիսատեսի, փո՛ղ կորզելու, պոպկելու և փետրելու յոյսով, մի երիտասարդ ետ քաշւելով ասաց,—Մի թէ վսեմաշուքները կարո՞ղ են համբերել, որ լուացարարի գաւակը իրենց դասն անցնի...: Նրան ո՛վ ասաց, որ ամբողջ կորովը գործ դնէ, ամէն ստոր միջոցների դիմի, որ վսեմաշուքների դասն անցնի: Աւելս այն ահեղ ջանքը, որ սին փառքի համար անդունդը գլորեց, թաւալւելով ամենաստոր ապականութիւնների մէջ...

Բարեբախտաբար ոստիկան աստիճանաւորները Սէթօյի արիւնոտ դիակը տուն առաջնորդեցին, ասպարէզը թողնելով զաբթիէներին, որոնք կալանաւորւածների գրպանները, քսակները դատարկելով բաց էին թողնում:

Լուացարարը թագւորի փոխարէն արիւողող գաւակի դիակին դիմաւորելիս, չկարողացաւ վշտի դէմ տոկալ, նորան առաջնորդեցին Փրկիչ...:

Աթէնան հօրը տանը, դեռ արիւնոտ պսակագգեստը չհանած, մի տոմսակ ստացաւ և անմիջապէս ծպտեց, հետևեց տոմսաբերին, որը նորան երկաթուղու կայարան առաջնորդեց, ուր Իդէասին գտնելով մեկնեցան դէպի Վիէննա, սրընթաց գնացքով:

XX

ՎԵՐՋԱԲԱՆ

Ներքինապետի զեկուցումների ճշմարտութիւնը պարզւելուց, Նազմի դարանակալ գործողութիւնները յայտնւելուց յետո, խալիֆի իշխանութեան ընդհանրական ոստիկանապետը ո՛չ միայն իւր բարձից գլորւեց, այլ նախ Դամասկ, այնտեղից էլ Հէջազ աքսորւեց: Ջէւադ-բէյը բոլոր յանցանքը խոստովանելով և ամէն բան Նազմի ծրագրին վերագրելով՝ ներման արժանացաւ, թէև առաջւա դիրքից ընկաւ: Ներքինին ոչ միայն Աչէմեանի ժառանգութիւնից բաժինը կորզեց, այլ այնպիսի դիրք ստացաւ մայրաքաղաքում, որ ամէն անճարացած նրա դուռն է բաղխում:

Աթաբէյլի պահանջատէրները խորհուրդ արին նրա տունն ու *խանը* միջները բաժանեցին, հարիւրին քսան ստանալով, առանց նրան սնանկ հրատարակելու, յուսալով որ եթէ երբևիցէ նա կարողանա ձեռք բերել Հայրական ժառանգութիւնը, նրանց կվերադար-

ձնէ մնացորդ ուխտուն տոկոսիքը։

Ա.զնիւ խանումը իւր զարդերը ծախելով կարողացաւ մի տնակ գնել Փանկալթի, ուր առանձնացած ազգականներից ու ծանօթներից, երեխաներին գըլխին հաւաքած, օրական տասնուչորս ժամ աշխատում են, կար են կարում, լացք են օսլայում, իրենց արդար դատումով մի կտոր հաց են ձեռք բերում։ Ա.թաբէյը ամօթից տուն չի կարողանում գնալ, միայն շաբաթական մի գիշեր ուշ ժամանակ այցելում է կնոջը, լացքը փոխում, քնած երեխաներին գննում և առաւօտ վաղ դուրս է գնում։

Մագսէթ-բէյը, որի դռանն է ծառայում գիշեր-ցերեկ Ա.թաբէյը, յոյս է տալիս, որ պիտի կարողանա ստիպել դատաւորներին քննութիւն բանալու, ջրելու կաթւածահարի խելացնոր օրերում կազմել տըւած ապօրինի փաստաթղթերը և ետ ստանալ Բէատրիչէից Ա.ջէմեանի կարողութիւնը։ Ա.թաբէյը ստրկաբար ծառայում է Մագսէթ-բէյին, որի վրա է կենտրոնացրել իւր բոլոր յոյսը Սէթօյի սպանութիւնից յետոյ։ Ա.րդարադատութեան բոլոր ատեանները համաձայն են Մագսէթ-բէյի հետ, թէ ապօրինի է կազմւած կաթւածահարի օրիորդ Բէատրիչէին տւած *հիօջէթի-շերիֆ*, բայց գործի քննութիւն սկսելու համար կարիք են զգում խալիֆի մի *ֆող-իրադեի*, բայց այդ հրովարտակը չեն կարող տալ պալատից, ինկատի ունենալով, որ նրանց այդ դէպքում կարող է խայտառակել ֆրանսիական դեսպանատունը։

Ա.յն Ա.թաբէյը, որ հազարներ էր շպրտում, որ իւր կերուխումի, հագուստի, կապուտի, գւարճու-

թեան և զբօսավայրերում ոսկին առանց համրելու բռով էր ցրւում, Մագսէթ-բէյի սեղանի աւելցուքով է կերակրում, նրա հներն է հագնւում, անհամարձակ նրա սպասին է վազում, երազելով որ փաստաբանը մի օր պիտի կարողանա *իրադե* կորզել, ստիպել դատաւորներին, քննել Բէատրիչէի անւան ապօրինաւորապէս հաստատւած թղթերը և հայրական կարողութիւնը, կալւածները ետ ստանալ Փաւլադիներեբի ձեռից, որոնց հակառակութեամբ յանձնել էր յամառ հայրը։ Երբ մտածում էր Ա.թաբէյը, իր անցեալ և ներկա վիճակի համեմատութիւնն էր անում, նա հառաչելով կրկնում էր.

—Եթէ հարազատ հայրս ինձ այս վիճակին չէր դատապարտէր, ես ինչի պիտի ստորանայի և հարազատ եղբօրս գլորէի անդունդը...։

Թէև լսել էր Ա.թան եղբօր ազատութիւնը, Եւրոպա փախուստը, Բէատրիչէի հետ Պարիզ բնակութիւն հաստատելը, բայց չէր հաւատում, քանի որ նաւապետը և ոստիկանները նրան երդումով համոզել էին, թէ հարազատին մանրել, ծովն էին թափել։ Ա.թան ենթադրում էր, թէ Բէատրիչէն մի ինչ որ համանիի հետ ապրում էր և պատիւը չաղարտելու համար տարածել էր այդ սուտը։

Տիրանը ճնշւած բժշկական խնաքից յետո մըննաց անբուժելի։ Սէթօյի սպանութիւնը քիչ հոգեկան խաղաղութիւն տւեց Բէատրիչէին, որը աշխարհն ուրացաւ, անձնատուր եղաւ հարազատ եղբայրներից տանջւած Տիրանի խնամքին, վերջինս նորա մխակ մըխիթարութիւնն էր պանդխտութեան մէջ։ Տիրանը

հոգեկան կարողութիւնից զրկւած, ո՛չ կամք ունէը, ո՛չ զգացում, անխօս, լռակաց հանդարտ և մեղմ անցկացնում է օրը Բէատրիչէի հովանաւորութեան տակ, առաւօտից մինչև իրիկուն նրա ընկերակցութեամբ պարտէզներում, կամ բուլւարներում կառքով, կամ հետի զբօսնելով։

Անթառամի ուրախութեան չափը չկա, նա արդէն Պարիզում հարսանիք արաւ, հարազատներին պսակեց։ Իդէասը նկարչական ակադէմիա է յաճախում, Աթէնան կոնսէրւատորեա, բայց իրենց ժամանակի մեծ մասը ամոլները անցկացնում էին իրենց հարազատների՝ Բէատրիչէի և Տիրանի մօտ։ Բէատրիչէի մխիթարութիւնը Իդէասի հրաշալի նկարներն է, Աթէնայի սքանչելի նւագները։ Անթառամը իր վրա է առել տան ամբողջական տնտեսական բաժինը, Կ. Պոլսի ոճով տուն կահաւորել, այդի են սարգել Պարիզի մի գեղեցիկ փողոցի վրա, արւեւելքցի խոհարար ունին և հազարներ չեն խնայում, ցանկացածները իրագործելու համար, բայց Պոլսի համն ու հոտը անհնար է Պարիզում ձեռ բերել։ Բէատրիչէին յաճախ հառաչում է և կրկնում.

—Պոլսի բոլրն ու համեմանքը չկա, ամէն բան ձեռք բերում ես, Անթառամ, բայց բոլորը խորթ է, անհամ է, անգոյն է, իսկականը չէ, հարազաս չը կա, չէ մնացել։ Ա՜խ, երբ պիտի հարազատներով բոլորւինք։

31 Մարտի 1897 թ.

Թիֆլիս

Ա Ն Ն Կ Ո Ւ Ի Ն

ԱՐՏԱՏՊԱԾ Ի
Ջ. Հայր. 1892 №№ 149—162

ԱՆՆԿՈՒՆ

Վ Է Պ

(Կովկասի Ինտիլիգենցիայի Կեանքից)

Ա

ԿԱՊՊԱՐԵԱՆՑԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Մայիսի սկզբում շոգը աստիճանաբար սաստկացել էր Թիֆլիսում։ Յետինք էր, երբ երկու օրիորդ Մէյչին-փողոցից դուրս գալով, անցան Երևանեան հրապարակը, ուղղուեցան Կուկիայի կողմը։ Թիֆլիսի հասարակութեան մեծ մասը դիմում էր Մուշկէիդի այգին զովանալու։ Օրիորդները տրամւայում նստելու տեղ չգտնելով, եռւը կանգնեցին ու իրենց ընդհատւած խօսակցութիւնը շարունակեցին։ Թէև ձիաքարշը

խիստ արագ էր սահում գառիվար, սաստիկ ազմուկ էր բազարի մէջ, բայց նրանք առանց ուշք դարձնելու այնպէս հետաքրքրութեամբ շարունակում էին իրենց վիճաբանութիւնը, որ ոչ մի բառ, մի շեշտ ուշադրութիւնից չէին բաց թողնում։ Ինչպէս նկատելի էր նորանց դէմքերից, երկուսն էլ բորբոքած էին, երկուսն էլ յափշտակած իրենց վէճով և երկուսի էլ միտքը ամբողջապէս լարած էր իրենց խորհրդածութեան նիւթով։

—Բայց չէ՞ որ, Աստղիկ, ասաց օրիորդներից մէկը իւր ընկերուհուն, պարոն Կաղպարեանի պընդածն էլ ճշմարտութիւն է, մէթէ՞ ոչ ոք իրաւունք չունի, իւր ծնողների կարողութիւնով ապրելու։ Ահաւասիկ մենք, տասնուինը կամ քսան տարեան օրիորդներ, ինչ կարող ենք անել, ինչպէս կարող ենք առանց մեր ծնողների նպաստին ապրել։ Մանաւանդ դեռ մենք շարունակելու ենք մեր ուսումը։ Ահա մի ամսից, գիմնազիոնից վկայական ստանալուց յետո, մայրաքաղաքում կամ արտասահմանում ինչով ենք ապրելու, որ կարողանանք բարձր կրթութիւն ստանալ։ Ի՛նչ զարգացման անհրաժեշտութիւնը նա չի՞ հերքում։

—Յայտնի բան է, Արփի՛, Կաղպարեանցի առաջը ուղղակի մեզ չի վերաբերում, մանաւանդ որ նա երբէք էլ դէմ չէ բարձր կրթութեան։ Ընդհակառակը՝ նա միշտ պնդում է, որ մեզ կարևոր է բարձր զարգացում, որը միայն կարող է մեզ մաքրել թաթարների ճիրանների ազդեցութիւնից առաջացած ժառանգական ստոր ունակութիւններից և մարդկային

արժանաւորութեան բարձր աստիճանի վրա կանգնեցնել։ Կաղպարեանցի դասախօսութիւնը ընդհանրապէս վերաբերում է այն մարդկանց, որոնք ձեռքերը ծալած, նստած են և անդադար լակում, փչացնում են ուրիշների դառն քրտինքով դատաճները։ Բաղդի բերմամբ մէկը միլիոններ է կորզել, մէսը իւր հօրից հարիւր հազարներ է ժառանգել, երրորդը իւր գեղեցկութիւնով դուր է եկել մի բանկերի և իւր անձը նրան կին ծախելով, հազարներն և բիւրերը շպրտում են դէս ու դէն։ Նրա խօսքը իսկապէս այդ պորտաբոյծների մասին է, որոնք առանց մի գործ անելու, այս կողմից, այն կողմից պլոկում են ու խժռում։

—Չէ՛, Աստղիկ, չէ՛։ Նա դրականապէս ասաց, որ ազնիւ մարդը, մինչև անգամ ազնիւ ուսանողը պիտի մտածէ, թէ ինչ աղբիւրից է գալիս իւր ծնողներից վեր առած գումարները։ Եթէ անազնիւ միջոցներով է հաւաքւում, պէտք է մերժել և ձեռք չբռտալ անգամ այդպիսի գրամներին։ Ասա տեսնեմ, ես որտեղից իմանամ, թէ հայրս իւր վաճառատան մէջ նստած, ինչպէս է փող վաստակում, ինչպէս է տուն պահում և մեզ հոգում։

—Այո՛, այո՛, այդպէս էլ հարկաւոր է անել։ Այդ ինչ դժւար բան է, որ շւարում ես։ Մէթէ՞ ամէն մարդ, եթէ ցանկանա, չի կարող իմանալ, թէ իւր հայրը ինչ աղբիւրներից է հարստացել, կամ ինչպէս է ձեռք բերում։

—Այդքան էլ հեշտ չէ՝ Աստղիկ, ես ինչպէ՞ս իմանամ, թէ իմ աշխարհ գալուց էլ առաջ ինչ ճանապարհով հայրս դիզել է իւր կարողութիւնը։ Ա-

նաւանդ եթէ նա բնիկ Թիֆլիսեցի էլ չէ, Պարսկաստանից կամ Տաճկաստանից է եկել և ինքն էլ չի ցանկանում իւր անցեալի ճշգրիտ նկարագրութիւնը խոստովանիլ:

—Ուղիղ է, Արփի՛, դժուար է, բայց որ մարդ ցանկա գաղտնիքն իմանալ, ճանապարհը կարող է գտնել: Ինչի՞ ուղղակի հարցնել, քանի որ կարելի է կողմնակի բացատրութիւններից գուշակել, մակաբերել...:

—Ուրեմն կեղծել, հօրը դէմ դիմակաւորէ՞լ...: Չէ, Աստղիկ, դա ազնիւ միջոց չէ, ստորութիւն է: Մանաւանդ որ մեր ի՞նչ գործն է մեր ծնողների անցեալը, արարքը քննել: Թո՛ղ նրանք իրենց խղճի հետ հաշիւ տեսնեն: Մեր պարտականութիւնը նրանց յարգելն է և եթէ միջոցներ ունին, ինչի՞ չօգտուիլ յառաջդիմելու համար: Մենք ազնիւ լինինք, մենք ուրիշի աշխատութեան ձեռնամուխ չլինինք. մեզ շրջապատող հասարակութեան արտասուելու, հառաչելու առիթ չդառնանք, ահա մեր պարտականութիւնը:

—Չարաչար սխալւում ես, Արփի՛, ահա երկու—երեք տարի է լսում ենք նրա դասախօսութիւնները, ուրեմն դու դեռ լաւ չես ըմբռնել Կազպարեանին: Իսկապէս նրա ասածն այն է, որ եթէ *«նրանք միջոցներ ունին»* օգտուինք առաջադիմելու համար: Միակողմանի մի՛ դատել, մենք պարտաւոր ենք քննել ու համոզուիլ, թէ արդեօք «նրանք միջոցներ ունի՞ն», այստեղ է մեր պարտականութիւնը: Դիցուկ թէ քու հայրը Պարսկաստանում, կամ Տաճկաստանում մէկին կողոպտել է, նրա ընտանիքը տասը-քսան հոգւով

քաղցած, տկլոր է թողել և նրանցից գզլած հազարներով եկել է Թիֆլիս և այսօր լայն ու բոլ շռայլում է. դու կընկերանա՞ս քու հօրը: Այսօր հեռու աշխարհում հօրիցդ գրկածները մուրացկան են դարձել, սովամահ կոտորւում են, այն ինչ դու այդ փողերից մինչև օրս լիառատ օգտւելուց յետո, դեռ պատրաստւում ես այդ քաղցածների, մերկերի փողերով Եւրոպա գնալ, բժշկութիւն սովորել: Ասա՛ խնդրում եմ, եթէ դու քննես և յանկարծ այդ բոլորը իմանաս, լսես, որ քու հօրից գրկածները չարաչար տանջւում են, ի՞նչ սրտով կարող ես այդ տանջանքների մատնածների գումարներին ձեռնամուխ լինել կամ վայելել:

—Միևնոյն է, ես այդ փողից օգտւիմ թէ ոչ, հայրս այդ փողը գրկածներին դարձնելու չէ, իմ տրգէտ մնալովս այդ թշուառները օգտւելու չեն, այն ինչ եթէ ես ուսումս շարունակեմ, աւարտեմ, գուցէ կկարողանամ նրանց նեղութիւնները թեթևացնելու մի հնար մտածել:

—Իսկ եթէ, Արփի՛, մինչև քու աւարտելը նրանք սովից կոտորւին...

—Օրինակով միշտ կարելի է հարցը ծռմռել: Բայց ժողովուրդը մի լաւ խօսք ունի, թէ «սովից մարդ չի մեռնիլ»: Զրկածը—կողոպտածը կջանա մի գործ ճարել և դարձեալ ապրել: Բայց ինչ էլ որ պատահի, որդին, զաւակը իրաւունք չունի ծնողների արարքը քննադատել և վերլուծել:

—Ի՞նչ ես ասում, Արփի՛, մենք ի՞նչ դարում ենք ապրում. ներկայումս աշխարհի վրա արդեօ՞ք կա՞ մի առարկա, որ խիստ քննութիւնների նիւթ դարձած

չլինի։ Եթէ այսօր քննադատում ենք երկնքի խորքերը, տիեզերքի անհուն տարածութիւնը, աշխարհի ծագումը, մարդկային ազգի անցեալը, պետութիւնների օրէնսդրութիւնը, էլ ինչի՞ պիտի մեր ընտանիքը քննութեան նիւթ չդառնա, ինչի՞ պիտի մեր ծնողների գործերը նոյնպէս չվերլուծենք։ Դիցուք թէ մեր ծնողները մեզ այնքան փայփայում են, պաշտում, որ մեր սիրուն պարտաւորուած են ամէն օր զգալի ստորութիւնների, քստմնելի զեղծումների և անարդ գործողութիւնների դիմել, մեր առօրեա պահանջները բաւարարելու համար։ Ասա խնդրում եմ, եթէ մենք ծնողասէր զաւակներ ենք, միթէ՞ չպիտի մտնենք նրբանց սոսկալի դրութեան մէջ և միթէ՞ չպիտի չանանք նրանց դաժան վիճակը բարւոքել։

—Այդ բոլորը ես ըմբռնում եմ, Աստղիկ, ես հասկանում եմ, բայց Կաղպարեանցի խօսքը քու նկարագրածով չի սահմանափակում։ Ո՛չ, ո՛չ, նա այդքանով չի բաւականանում, նրա առաջարկած հետազօտութիւնը ո՛չ միայն անսահման է, այլ մինչև անգամ մարդ ու մանանեխն է ստիպում չոկել։ Նրա պահանջը ոչ միայն անիրագործելի, այլ մինչև անգամ որդիական իրաւունքի սահմանից դուրս է։ Ես որքան լուրջ մտածում եմ, չեմ կարողանում հաշտուել այդ մտքերի հետ։

—Նրա համար, որ արտասովոր է այդպիսի հետազօտութիւնը։ Բաւական է, որ հաշտւինք այդ մտքերի հետ, մեկ-երկու փորձ և կդառնա սովորական։ Միայն թէ նախ պէտք է պատրաստել նախապայմանների քօղը, դրանից յետո գործը կմտնի իւր ընթացքը։ Սակայն, խնդրում եմ, եթէ համոզւիս, որ հայրդ ամբողջ մարմնով փշաքաղւում է. դողդողալով գոռանում է, կոպտում է դրացիներին, որ քու վայելքներին բաւականութիւն տա, դու կհամաձայնէի՞ր այդ դրամը ընդունել։ Զէի՞ր աշխատիլ որ հօրդ ազատես այդ անարգ վիճակից, չէի՞ր ձգտիլ այդ դժոխքից նրան փրկել։

—Այդ տարբեր խնդիր է, դու նեղն ընկնելիս օրինակով հարցը կճռմռես։

—Տարբերութիւն չկայ, Կաղպարեանի առածը միայն այդ կէտին է վերաբերում։ Քննիր, ինչ փողի, ինչ առարկայի որ ձեռ տաս, նրանց եկած աղբիւրն ուսումնասիրիր, եթէ ազնիւ չեն, իրաւունք չունես ձեռնամուխ լինելու...։

—Բայց և այնպէս հարցը չլուծեց, ասաց մըտախոհ Արփէն։

Իջան տրամւալից, լուռ անմռունչ, մտան այգի ընկերուհիները։

Բ

ՀԱՅՐ ՈՒ ԴՈՒՍՏՐ

Արփէն որբ էր։ Նրա մօր Յուստինէի մահուան ժամանակ մանուկը դեռ երեք տարուան էլ չկար, այնպէս որ թշուառ աղջիկը մայրական խնամքից, գորովից ու

գգւանքից զրկւած էր մեծացել։ Զուրաբը դստերն ան-չափ սիրում էր, թէև հազիւ երեսուն տարեան լինէր, շատ վայելչակազմ, առոյգ տղամարդ էր, բայց պաշտելի կնոջ յիշատակը յարգելով, մերժել էր տասնեակ օրիորդների և մատաղահաս այրիների առաջարկները, որոնք հազարներ էին խոստացել իրենց ձեռքերի հետ։ Զուրաբը իր կնոջ մասին տածած սէրը մէացնելով դէպի դուստր ունեցած անհուն գորովի հետ, զաւակի համար և՛ մայր դարձաւ, և՛ դաստակ, և՛ նաժիշտ։ Այնքան քնքոյշ խնամք և հոգածութիւն ունէր աղջկա համար, որ կարող էր գրգռել ամենադորով մօր նախանձը։ Յուստինէի մահից յետո, Զուրաբը կեանքի մեծ մասը անցկացրել էր աղջկա մօտ, այնպէս որ Արփիի մանուկ-մատաղ ժամանակը օրերով նորա սնարի մօտ նստած, սրտատրոփ սահեցրել էր անթիւ րոպէներ։ Արփին էլ անչափ սիրում էր հօրը, այնպէս վարժւած էր նրա գգւանքին, որ պաշտում էր Արարչի նման։

Արփիի ամէն մի պահանջը վայրկենական արագութեամբ բաւականացրել էր Զուրաբը, այնպէս որ լիութեան ու շքեղութեան մէջ աճել էր, հասել քընքշասիրտ օրիորդը։ Զուրաբը կէս միլիոնից աւել կարողութիւն ունէր, Թիֆլիսում սեփական տանն էր ապրում, գործակատարները Պարսկաստանի խորքերը, Խորասան, Բուխարա, Թաշքէնդ բուրդ էին հաւաքում և Մարսէլում ծախում։ Բաւական ընդարձակ գործ ունէր, տարեկան առնւազը յիսուն հազար րուբլի շահում էր, որը հազիւ բաւականանում էր տնական և դրսի ծախսերին։ Քսան տարուց աւելի կար, որ Զուրաբի գործերը այդ ընթացքի մէջ էին։ Նա աւելի րիսկ չէր անում, որը թէև կարող էր նրան մեծ շահ բերել։ Նա վիճակից գոհ էր, միայն վայելքին յանձնւած։

Զուրաբի միակ վիշտը վաղաժառամ կնոջ յիշատակն էր, որին յիշելիս չէր կարողանում արտասուքները զսպել վշտաբեկ ամուսինը։ Մանաւանդ կնոջ մահի պատճառն ինքն էր, իւր յամառութեամբ։ Այս պատճառով խղճի խայթից ազատելու, նրա ուրւականի հալածանքից պաշտպանւելու համար, ամէն մի կնոջ գործ էր դնում, աղջկայ բոլոր ցանկութիւնները ճշտութեամբ կատարելու համար։ Արփիի կամքը, ցանկութիւնը օրէնք էն դարձել նրա տան համար։ Արփին այնքան նման էր մօրը՝ Յուստինէին, տարիների հետ միասին աճելով այնպէս սորա տիպն ու կազմւածքը պատկերացնում էին մօրը, որ երբեմն Զուրաբը յափշտակւած երբ դիտում էր դստեր քայլերը, շարժումները նրան թւում էր, որ Յուստինէն՝ ինքն էր հրեշտակային շարժումներով շրջում իւր յարկի տակ։ Այս յուշագնացութիւնից սթափւելուց յետո, վայրկենական արագութեամբ ուրախութեան արտասուքները սրբում էր բիբերից և ժպտալի դստեր մօտենալով համբուրում էր նորա գագաթն ու մազերը։

Արփին փաթաթւում էր հօրը վզով, կախւում, համբիւրներով ծածկում էր նրա շրթունքները։ Այսպիսի րոպէներին Զուրաբը ինքն իրեն երանութեան գագաթնակէտին էր համարում և չէր իմանում, թէ ինչով զարգարէ այն յատակը, որի վրայից գլորւում էին Արփիի կայտառ քայլերը։ Այսպէս տարիներ անընկատ բոլորւել էին, գլորւել, մինչ Արփին մտել էր

քսաներորդ դարուն։ Բայց պարագաները փոխուեցան, Արփին գիմնազիոնում աւարտեց դասընթացքը։ Գիտութեան հետ նրա աշխարհայեցողութիւնն էլ ընդարձակուել էր, պատրաստւում էր արտասահման գնալու, որ բժշկութիւն սովորի։ Նա չէր ձգտում գիտութիւնը շահագործութեան միջոց դարձնել, այլ մտածում էր գիտութիւնը իր նպատակին յատկացնել, թշուառի վիճակի բարւոքման ծառայեցնել։ Այս միտքը որքան ընդարձակ ծաւալով բացատրում էր Զուրաբին, այնքան հօր սիրտը խոցոտում էր, հոգին վրդովում, և որքան բազմակողմանի լրջութեամբ պարզում էր Արփին իր հեռաւոր նպատակը, այնքան դառնապէս վրշտացնում էր հօրը։ Բայց անչափ սիրելով աղջկան, Զուրաբը արտաքուստ համակերպում էր գաղափարական օրիորդի մտքերի հետ, այնպէս էր ձևացնում, որ պատրաստ է Արփին բազձանքին հասցնել։

Միանգամայն մտածում էր Զուրաբը, որ մինչև Արփին արտասահման գնալու պատրաստւելը, նա կշրջապատէ աղջկան այնպիսի փեսացուներով, որոնք այնպէս կգրաւեն նորան, որ նա սիրո նետերից յաղթուած, անձնատուր կլինի իրեն երկրպագուներից մէկին, կմոռանա արտասահմանն էլ, բարձր գիտութիւններն էլ, վսեմ գաղափարներն էլ, Փիֆլիսից հեռանալու, իրարից բաժանւելու առիթ չի դառնալ։ Սէրը կորցրած, պաշտելի կնոջից այնքան շուտ անջատւած մարդուն, աղջկանից բաժանւելու միտքը սարսափեցնում էր։ Զուրաբը մտածում էր մի այնպիսի փեսա գտնել, որ մէկի փոխարէն երկու զաւակ ունենար իր յարկի տակ և նրանց բարերաղտութիւնը դիտելով

հրճւել և բերկրել։ Բայց վերջին ժամանակները Արփիի արտասահման գնալու հարցապնդումները նկատելով, Զուրաբը աստիճանաբար ընկղմում էր տխուր մտքերի մէջ։ Նա զգում էր, որ աղջիկը առանց ցանկութեան հասնելու խաղաղելու չէր, իրեն հանգիստ տալու չէր։

Արփին այնպիսի սուր հայեացք ունէր, որ Զուրաբն ինչքան էլ աշխատեց չկարողացաւ իր ներքին յոյզերը նորանից թագցնել։ Օրիորդը արդէն նկատել էր հօր ներքին վիշտը, միանգամայն զգացել էր, որ իրենից սքօղում է այդ բանը։ Սկզբում Արփին ինքն իրեն յանդիմանում էր, որ իւր սրտում մի այդպիսի անտեղի կասկած էր ծնում, որը իւր կուսական սրտի անարատ քօղը բծաւորում էր մի այդպիսի տխուր են-թադրութիւններով. բայց փաստերը հետզհետէ հաստատում էին նորա կասկածները։ Օրիորդն իւր կեանքում առաջին անգամն էր նկատում հօրը ներքին խըռովութիւնը և արտաքուստ իւր ներկայութեան անդորրութիւն կեղծելը։ Այս բանը այնքան սոսկալի տպաւորութիւն թողեց Արփիի վրա, որ նա չկարողանալով կրքերը զսպել, ասաց լացակամաց.

—Հայրիկ, ինչ վիշտ ունիս, այդ ինչ հոգեկան տանջանք է, որ ահա քանի՛ քանի ժամանակ է, նկատում եմ, իսկ դու ոչինչ չես ուզում ինձ յայտնել։ Մինչ ես որևէ անմտութեամբ տեղիք եմ տւել քեզ ինձնից վշտերդ ծածկելու։

—Ի՞նչ ես ասում, աչքիս լոյսը, ես քեզնից վշտանամ. գաղտնիք պահեմ։ Ոչինչ, բան չկա...

— Ո՛չ, հայրիկ, ո՛չ, դու այժմս էլ շարունա-

կում ես կեղծել, և ո՛ւմ առաջ...։ Մի՛թէ ես երբևէ թագցրել եմ քեզնից իմ սրտիս խորքերից անցածները։ Ի՞նչն է ստիպում քեզ, որ ինձ այսպէս անարգում ես։ Ի՞նչի ես ինձանից ծածկում քու հոգու մէջ բուն դրած այդ տխուր վիշտը։ Խնդրում եմ, հայրի՛կ, ասա՛ ինձ, պատմի՛ր, որ ես էլ ընկերանամ քու վշտին, ասաց Արփին գրկելով հօրը վիզը, համբուրելով ճակատը։

—Ոչի՛նչ, հոգի՛ս, բան չկա։ Ես միայն մտածում եմ, թէ ինչպէ՞ս պիտի քեզնից բաժանուեմ, դու եւրոպայում սովորելիս, տարիներով ես ինչպէս պիտի դիմանամ քո կարօտին։

—Ուրեմն, հայրի՛կ, դու չես ցանկանում, որ աղջիկդ բարձր ուսում ստանա։

—Ես հոգուով ցանկանում եմ, որ դու մտքով էլ կատարելատիպ դառնաս, ինչպէս սրտով, հոգուով ու դէմքով գրաւած ես բոլոր ծանօթներիդ։ Բայց ի՞նչ անեմ, հոգի՛ս, գիտե՞ս թէ ինչպէս սիրտս ամբողջապէս բռնած ես։ Աշխարհի վրա քեզնից զատ էլ ո՛ւմն ունեմ։ Ինձ մի՛ մեղադրել, որ ընկճուում եմ և այսօրւանից մտորում, թէ բաժանուելու ենք...։

Մի առժամանակ լռեցին երկուսն էլ։ Հօր վերջին թոթոված խօսքերը սլաքի նման ներգործեցին Արփիի սրտում և նա սկսեց այլագունել։ Այս բանը չվրիպեցաւ վրդովւած հօր աչքերից և նա աւելացրեց։

—Հոգի՛ս, ես պիտի համբերեմ, որպէսզի կատարողանամ մի օր քեզ տեսնել ձգտումիդ հասած։ Այս մասին մի՛ տխրիլ, մի՛ մտածել, հոգս մի՛ անել, աչքի՛ս լոյսը։ Ես արդէն ծրագիրս ապագայի մասին

կազմել եմ։ Եթէ չդիմանամ այս անջատման, հաշւապահիս լիազօրութիւն կտամ գործերս վարելու, իսկ ես կտեղափոխւիմ քեզ մօտ։ Վերջին օրերի մտմտուքներս ինձ հասցրին այս եզրակացութեան։ Հանգստացի՛ր, հոգեա՛կս, վանի՛ր սրտիցդ այս տխուր միջադէպը։

Արփիի սիրտը թէև բաւականաչափ խաղաղեց, բայց մտմտուքը չանհետացաւ, նա անմռունչ լսում էր հօր ծրագիրը։ Երբ Զուրաբն աւարտելով բացատրութիւնները աւելացրեց.

—Հիմա, աչքիս լո՛յս, պատրաստուի՛ր, որպէսզի ճանապարհ ընկնենք դէպի Բորժոմ։

—Արդէն շոգերն անտանելի են, ասաց օրիորդը, հայրի՛կ, շտապենք։ Միայն թէ...

—Ի՞նչ էիր ուզում, հոգի՛ս, ասա՛, որ կարգի դնենք։

—Աստղիկի ծնողները չպիտի կարողանան ամառանոց գնալ։

—Նրան մեզ հետ կտանենք, ասաց Զուրաբը, նա մեզ կուրախացնէ։

—Գնա՛մ, նորա ծնողներից խնդրեմ, որ թոյլատրեն.

—Այդ քո գործն է, արա՛, ինչպէս ցանկանում ես։

—Պարոն Կաղապարեանին ասել եմ, որ գա։ Գիտե՞ս, հայրի՛կ, որ մայրենի լեզւի մէջ դեռ շատ թոյլ եմ։

—Ամսական որքան ուզում է, տո՛ւր, թո՛ղ գա, պարապի։ Միայն թէ ամառանոցում նրա համար սենեակ և ճաշ չենք կարող ունենալ...։

Գ

ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

Յունիսի սկզբներին էր։ Թէև արևագալից հազիւ երկու ժամ էր անցել, բայց տօթը աստիճանաբար սաստկացել էր և բոց արևի տակ նեղուում էին ամառանոցի այցելուները։ Օդափոխութեան ելած քաղաքացիները ճիգ էին թափում ամառանոցի, անտառների ջուրը, օդը և բուրմունքը հարստահարելով, քաղաքների ապականած մթնոլորտի մէջ քայքայած ու դալկացած իրանները կազդուրելու։ Համարեա թէ Բորժոմի բոլոր ժամանակաւոր այցելուները իրենց բնակարաններից դուրս էին թափւել և ամառանոցների պարտիզակների, հովանաւոր ծառերի տակ կամ անտառի շւաքներում, իրենց լի պաշարները սեղան բարձրացրած, բոլորւած ուտում, խմում էին։

Բորժոմի անտառի խորքում, մի գառիվայրի դոդում, բարձր ու լայնատարած շոճիների հովանիի տակ, դալար կանաչ գորգի վրա թաւալւած էին երկու ընկերուհիները, Արփին ու Աստղիկը։ Երկուսն էլ թեթև, մոխրագոյն անօսր չիթի զգեստներ էին կրում,

երկուսի էլ կուրծքերը ազատ, արձակ, թեզանիքները մինչև արմունկները մերկ էին, երկուսի էլ լայնաշրջան ծղնոտի գլխաբկները իրենց շղարշի քողերով կախւած էին մօտակա մի մատղաշ և դիւրաթեք մայրիի ոտից, որոնք քամու հետ ճօճում էին։ Մեղմ հովիկը հարւածով հաստաբուն շոճիները փշատերև ճղներին և ապուռաժներին շշուկ էր բարձրացնում, որին հեռւից՝ ձորից ձայնակցում էր արագահոս Փուրի ժայռերին բախւող ալիքների և յորձանքների շառաչիւնը, որոնք մի մշտամռմունջ մեղեդի էին կազմում ծառերի վրա բուն դրած միջատների ու թռչունների ճռճռոցի ու ծլվլոցի հետ։ Այս մեղեդին երբեմն երբեմն ընդմիջում էր շոգեկառքերի սրաձայն սուլիչը, որն ամէն ժամ մտնում էր և դուրս էր գալիս ձորից։

Երկու ընկերուհիները արդէն բաւական խօսել էին իրենց սիրելի առարկաների մասին և լուռ, մտախոհ ընկղմել էին իրենց երևակայութեան անդունդը, չյանդգնելով ընդմիջել իրար խոհը։ Երկարատև լռութիւնից յետո, Արփին դարձաւ ասաց ընկերուհուն։

—Աստղիկ, ինչի՞ ուշացաւ Կաղապարեանը, արդէն ժամը ութ կլինի։

—Ո՛չ, ասաց ժամացոյցին նայելով Աստղիկը, նա երբէք անճիշտ չէ եղել, իր պարտականութիւնները կատարում է առանց զանցառութեան։

—Դու դասդ սովորել ես, Աստղիկ, ես որքան աշխատում եմ, այդ քերականական կանոններից իմ գլուխս բան չի մտնում։ Զարմանալի պահանջող է Կաղապարեանը, ինչ հարկաւոր է կանոններ բերան անել։ Պէտք է մարդ ուշք դարձնէ, որ անսխալ գրէ,

խօսի և հասկանա։ Թո՛ղ ինձ տա ինչ գիրք որ ուզում է, ես նրա բովանդակութիւնը մանրամասնաբար պատմեմ, գրեմ։

—Ո՛չ, հոգիս, ո՛չ, քերականութիւն չիմանալով, կարող ես սխալ բան կարդալ, կամ անճիշտ գրել և սխալմունքը չնկատել։ Մանաւանդ որ ամէն լեզու իր յատկութիւնը ունի։ Ահա գալիս է, թո՛ղ ինքը բացատրէ։

—Բարի լո՛յս, օրիորդներ, բարև ձեզ, ասաց Կաղպարեանը քսան քայլ հեռուից։ Երևի դուք շատ վաղ էք եկել։ Յայտնի բան է, այս թարմ օդին, այս անոյշ բուրմունքին արժէ առաւօտ վաղ անտառ գալ, զբօսնել։

—Ինչպէս չէ, ինչպէս չէ, իսկ դուք զրկւել էիք այս անվճար բարիքից օգտւելուց։ Ձեզ ո՛վ ասաց որ այդքան քնէք, ասաց Ս.րփին մտերմական տօնով, ժպտալով։

—Սխալումէք, օրիո՛րդ, ես չէի քնել, զբաղւած էի։ Որքան լաւ է առաւօտ վաղ թարմ օդին նստիլ, կարդալ։

—Այդ էլի ինչ նոր գիրք էք կարդում, պատասխանեց Ս.րփին, չի կարելի մեզ էլ ծանօթացնել բովանդակութիւնը։

—Ինչի՞ չէ, բայց նախապատիւ եմ համարում, որ դուք ինքներդ ձեռք բերէք և կարդաք Լ.ըտուրնի «Սեփականութեան զարգացումը»։ Իմ պատմելուց դուք կվնասւիք։ Ես միայն շատ ամփոփ կարող եմ նկարագրել այդ բոլորը, իմ բառերով, մանաւանդ իմ սրտին աւելի մօտ կէտերի վրա կանգնելով։ Հետևաբար գրքի գուցէ երեք քառորդի մասին հազիւ մի աղօտ գաղափար կազմէք, իսկ ինքը Լ.ըտուրնօն ձեզ ամէն մի մանրամասնութեան հետ կծանօթացնէ։ Այնժամանակ դուք ձեր սեփական դատողութեամբ կհասնիք ձեր ինքնորոյն եզրակացութեան, առանց ուրիշի տրամադրութեան, կամ քմահաճոյքին ենթարկւելու։

—Գոնէ մեզ պատմեցէք շատ ամփոփ, մի քանի խօսքով գրքի բովանդակութիւնը, ասաց Արփին հետաքրքրւած։ Ես բերել կտամ այդ գիրքը, կկարդաք՝ կքացատրենք իրար հայեցակետները։

—Գիրքը խօսում է սեփականութեան ծագման ու զարգացման մասին։ Ինչպէս մենք անցեալ անգամ կարդացինք Էնգէլսի ընտանիքի սեփականութեան և պետութեան ծագման մասին գրւածքը, միայն սա աւելի ընդարձակ է և աւելի գրական օրինակներով և փաստերով ճոխացրած։ Այդտեղ նկարագրւում է, թէ ինչպէս է սկսւել բացւիլ և աստիճանաբար խորացել է այն վէհը, որ ներկայիս անջատում է մշակ դասակարգը կապիտալիստներից։

Որքան աշխատում էր Կաղպարեանը դասի նիւթից չշեղւիլ, բայց հարցասէր օրիորդները այնպիսի խնդիրներ էին շօշափում, որ բարեխիղճ ուսուիչը ակամա, անզգայաբար ժամերով բորբոքւած խօսում էր այդպիսի հարցերի մասին և այդ պատճառով մի ժամի պարապմունքը երբեմն երեք—չորս ժամ էր տևում և դեռ անտառից նախաճաշի համար տուն դառնալիս, ճանապարհին շարունակում էին կիսատ մնացած վիճաբանութիւնները և բացատրութիւնները։

Այդ օրը նոյնպէս Կաղպարեանցին չյաջողւեց

դասը աւարտել։ Այնքան խօսեցան սեփականութեան զարգացման մասին, որ կէսօրին մօտ հազիւ հասան բնակարաններըը։ Երբ Կաղպարեանցը ցտեսութիւն էր ուզում յայտնել օրիորդներին, Արփին ասաց.

—Խնդրում եմ, գնանք մեզ մօտ նախաճաշենք և շարունակենք ընդհատած վիճաբանութիւնը։

—Ներեցէք, օրիորդ, խնդրում եմ, այդ առաջարկը մի՛ անէք։ Դուք գիտէք վաղուց, որ չեմ կարող ընդունել։

—Ախար ինչո՞ւ, այդ ի՞նչ ինքնուրոյնութիւն է. խնդրում եմ բացատրեցէք։ Ինչո՞ւ չէք ցանկանում մեզ մօտ նախաճաշել, մեզ արհամարհում էք, ի՞նչ է։ Ես այս բանը վաղուց նկատած լինելով, բացատրութիւն եմ պահանջում։

—Նրա համար, որ ձրիակերութեան չվարժւում։ Մանաւանդ որ եթէ լաւ լաւ նախաճաշի ընտելացնեմ ոտամոքս, ինչ տեղից ապագայում ճոխութիւն ձեռք բերեմ քաղցս յագեցնելու համար։ Ես չեմ կարող խեղկատակի նման ամէն օր մէկի սեղանին բազմել և շաղակրատելով լափել փշրանքները։ Խնդրում եմ մի՛ նեղանաք, գիտէք որ ընտանութիւնս չեմ կարող փոխել։ Դուցէ, եթէ դուք առանձին տան տէր լինէիք, չյանդգնէի մերժել ձեր խնդիրքը, բայց... խնդրում եմ, թողնէք այս խօսակցութիւնը։ Առաւօտ կշարունակենք...

—Ցտեսութիւն, ցտեսութիւն, ասացին օրիորդները և ներս մտան։

Արփին մի խուլ հառաչ արձակեց, այնքան մեղմ, որ Աստղիկը չնկատեց։ Նորա աչքերը տխուր,

հեզիկ ոլորւեցին իրենց բնի մէջ, փակւեցան և նա յոգնած աչ կողքին տարածւեց իրենց այգու ծառերի մէջ կապած թոռի ճօճքում, դասագիրքը թևի տակ բռնած, մտայլ մտքերի մէջ ընկղմած։

Դ

ԾԻԼԵՐ

Այնտեղ երկար ժամանակ Արփին ճօճում էր, իւր խոհերի մէջ ընկղմած։ Նորա երևակայութեան մէջ արագընթաց սահում էին այն բոլոր տեսարանները, որոնք երբևէ տպաւորութիւն էին թողել իւր յիշողութեան մէջ։ Նա երևակայութեան մէջ զննում էր կեանքում պատահած, յարաբերութիւններ ունեցած բոլոր ծանօթներին և համեմատում էր էր Կաղպարեանցի հետ։ Ապշած չափում էր, թէ դրանք բնաւորութեան ինչ ծայրայեղ ներհակ ծայրեր էին կազմում։ Նորա մտքում յաջորդաբար սահում էին այն բոլոր թեթևամիտները, որոնք ձգտել էին իւր քաղցր հայեացքին արժանանալ։ Նա մտաբերում էր, թէ որքան բաղտախնդիրներ իրենց հազար ու մէկ շողոմներով, իւր ոտքերի տակ սողացել էին մի ժպիտը, մի

խինդը կորզելու համար։ Կարծես նորա ականջում դեռ հնչում էին այն այն ղողջորդ լաւերը, որոնցով դիւթել և նորան իրենց թակարդի մէջ բռնել էին ձգտել երկրպագուները։ Մտաբերում էր, թէ ինչպէս իւր հեգնական ծաղրը ժպտի տեղ ընդունելով, ինչ յանդուգն քայլերի էին ձգտել շատերը և շատ անգամ ինչպէս ինքն էլ, անգութ դահճի նման, անտարբեր, ոտքերի տակ փռւած սրտերը արհամարհանքով կոխրճել, անցել էր։ Այս տեսարաններին հետևում էր Կաղպարեանը իւր սառնարիւն վարքով, կոպիտ շարժումներով և խստապահանջ պայմաններով, և որ գլխաւորն է, անշահասէր, դէպի գաղափարին ուղղւած հաստատ քայլերով, որին ոչ մի բան չէր կասեցնում և որը երբէք կոմպրոմիսներ չէր անում։

Կաղպարեանի նախաճաշ մերժելը սկզբում սաստիկ կպաւ Արփիի սրտին, բայց ճաճքում որքան տարուբերւեց, այնքան աւելի արդարացի գտաւ ուսուցչի ընթացքը և դրանով աւելի բարձրացաւ նորա աչքում Կաղպարեանը։—Այո՛, մտածում էր Արփին, նա ինչի՞ պիտի իւր ուղղութեան դէմ ընթանար, իմ խնդիրքիս պատճառով։ Ինչի՞ պիտի մտնէր այն յարկի տակ, որտեղ գուցէ նրա «եսը» պզտիկ մնար, հօրս կամ հիւրերի մէկի արհամարական շարժումով։ Չէ՞ որ սրբանք բոլորը նրան չեն հասկանում։—Այս մտքերը դեռ շատ կլուզէին Արփիին, եթէ Աստղիկը այն կողմից չկանչէր նախաճաշի։

Այդ օրը Զուրաբը նախաճաշի էր հրաւիրել երիտասարդ գինւորական բժիշկ Փողոսեանցին, որը սպիտակ համազգեստով, փայլուն կոճակներով, խնդում

երես դիմաւորից Արփիին։ Օրիորդը, որը դեռ չէր ըմբռնւած իւր խոհերից, սառնութեամբ վարւեց բժշկի հետ, որը ամբողջ օրւան ընթացքում իւր բոլոր ճարտասանութեամբ չկարողացաւ օրիորդի մի համակրական հայեացքը, կամ խօսքը որսալ։ Իրիկնադէմին երբ բժիշկը հրաժեշտ տւեց, գանց հիւանդանոց հերթական պարտականութիւնները կատարելու, օրիորդները ազատ շնչելու համար նրա ուղեկցութեամբ տանից դուրս եկան և սկսեցին ճեմել կամուրջի վրա։

—Աստղի՛կ, ասաց Արփին, երբ նորանք ազատ մնացին, այս կամուրջի տեսարաններից էլ ձանձրացա, եկ գնանք, այցելենք Կաղպարեանին։ Նրան հրաւիրում ենք, մերժում է, մենք առանց խնդրանքի գնալով նրան ամաչեցնենք։

—Կարծում ես, դրանով նրան կստիպես իւր ընթացքից շեղւելու։

—Երբէք, ես գիտեմ, որ այդ չի յաջողւել։ Ինձ էլ հաճելի չէ, որ նա ընկճւի մի այդպիսի այցով և զիջողութիւններ անի։ Գնանք ժամանակ անցնելու։

—Դուք նրա բնակարանը գիտէք, հարցրեց Աստղիկը, այնպէս աչքերը Արփիի բիբերին յառելով, որ կարծես ուզում էր նորա սրտի խորքերը թափանցել։

—Եթէ չեմ սխալւում, նա «Կոլքիս» համարներում է ապրում, Քուրի ձախ ափին։ Գնանք, եթէ չգտնենք, մեծ կորուստ էլ չենք ունենալ, ասաց Արփին ձայնը մեղմելով և հայեացքը շրջելով։

Երկու օրիորդները բաժանւեցան բազմաթիւ զբօսնողներից և դիմեցին հիւրանոց։ Նորանք շուտով գտան Կաղպարեանի բնակարանը և երբ պատրաստ-

ւում էին ներս մտնելու, յանկարծ դուրս թռաւ սենեակից Կաղապարեանը և օրիորդներին նկատելով չփոթուած, չէր իմանում, ինչ խօսէր։ Նա ծիծաղախառն կակազով ասաց—Ինդրում եմ, օրիորդներ, համեցէք, մըտէք իմ աղքատիկ բնակարանը։

Օրիորդները նաղ չարին։ Անշուշտ սենեակը զարդարուած էր մի փոքրիկ սեղանով, երկու աթոռով և մի ցած ու նեղլիկ մահճակալով, այնպէս որ տան տէրը աթոռները հիւրերին հրամցնելուց յետո, պարտաւորուած նստաւ մահճակալի վրա և դառնալով փոքրիկ աշակերտին, ասաց։

—Արամ, մի մոլորուիր, ինչի ես ոտքի վրա մընացել, ես, ինձ մօտ նստիր։

Յետո դառնալով օրիորդներին աւելացրեց.— Այս ինչ է պատահել, օրիորդներ, ինչպէս եղաւ, որ հաճեցաք իմ խղճուկ յարկին այցի գալ։ Երևի սա մի ապտակ է, ես ձեր ապարանքը չմտա, դուք կամենում էք...

—Բոլորովին ոչ, խօսքը կտրեց Արփին, ինչի՞ տղամարդիկդ սովոր էք մեշտ այդպէս դատել, ինչի՞ ամէն մի պատահարի հետաւոր, մուխ, խորհրդաւոր պատճառներն էք որոնում։

—Ներեցէք, օրիորդ. գուցէ և շատ իրաւացի էք. բայց պարագաներն այնքան յարմար էին, որ կատակելու առիթը փախցնելու չէր։

—Բայց շատ իրաւացի նկատողութիւններ կատակով էլ են ասում, այնպէս չէ՞, Աստղիկ, ասաց Արփին ընկերուհուն, որը լուռ, ընկղմել էր իւր մտքերի մէջ։

—Ինձ չլսեցի, ասաց Աստղիկը ուշքը հաւաքելով, ինչ ասիր.

—Ես ասի, որ շատ իրաւացի նկատողութիւն կատակով էլ են յայտնում, այսպէս չէ՞.

—Այո՛, այո՛, միայն մի պարզութեան բացակայութեան դէպքում, երբ մարդիկ իրարից քօղարկւել են ձգտում։

—Ո՛չ, օրիորդ, ո՛չ, ես բողոքում եմ ձեր այդ ակնարկի դէմ, ասաց Կաղապարեանը, ձայնին պաշտօնական տօն տալով։ Միայն անկեղծ մտերիմները կարող են իրար հետ կատակել։ Իսկ առանց պարզութեան մտերմութիւն չի կարելի երևակայել անդամ։

—Եւ եթէ մտերիմների շրջանում կատակելը հաճելի է, ինչի՞ չէք թողնում, որ Աստղիկն էլ օգտւի այդ հաճոյքից, ասաց Արփին ժպտալով, թէ տղամարդիկդ անպայման առաւելութիւնները, արտօնութիւնները ձեր անկապտելի առանձնաշնորհումներն էք համարում։ Բնազդմամբ, մինչև անգամ աննկատելի կերպով ձեր գերիշխանութիւնը գործադրում էք։

—Ամենևին ոչ, ես այդպիսի նպատակ չեմ ունեցել, ազատ էք կատակելու, որքան կամենաք, ասաց Կաղապարեանը կարմրելով։

Այս միջոցին Արամ դուրս գնաց, որ պատրաստելու հեշտաեռը պատրաստելու։

—Հա, ասաց Արփին խօսքը փոխելով, մենք որ եկանք, դուք զբաղած էիք։ Ձեզ խո՛ չխանգարեցի՞նք։

—Բնա՛ւ, ես արդէն դասը աւարտել էի։ Արամը մի՛շտ մօտս է։ Երբ ազատ ենք, պարապում եմ։

—Ուրեմն այստեղ էլ ապրում է՞, հարցրեց

Աստղիկը զարմացած, ակնարկը Արփիին յառելով։

—Ա՛յո, միևնոյն է, ես սենեակ վարձելու էի, էլ ինչի՞ նրան թողնէի շոգերին Թիֆլիսում։ Մանաւանդ որ մի քանի առարկաներից թոյլ է, պէտք է կրկնել։

—Իսկ ճա՞շը, կրկնեց օրիորդը կարեկցալի հայեացքով։

—Ինչ բաժին որ ինձ տալիս են, կիսում ենք, երկուսիս էլ բաւականացնում է։

—Գնանք, ասաց Արփին, գնա՛նք, ուշ է, մեզ կսպասեն։ Իսկ դուք պարապեցէք, ձեզ չխանգարենք։

Կազպարեանը անմռունչ մի այնպիսի հայեացք ուղղեց, որ կարծես ասում էր, ձեր կամքն է, ինչպէս եկաք, այնպէս էլ կարող էք վերադառնալ։ Երբ օրիորդները դուրս ելան, Արամը աւելի ճարպիկութեամբ ասաց.

—Ո՞ւր էք գնում, օրիորդնե՛ր, արդէն հեշտաեռը եփ եկաւ, կացէ՛ք, թէյ խմեցէ՛ք։

—Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, կրկնեցին օրիորդները սանդուխներից ցած գալով։

Կազպարեանը յտեսութիւն ասելով մի վայրկեան աւելի անշարժ մնաց արձանացած տեղն ու տեղը։

Ե

ՅՈՅԶԵՐ

Յանկարծ մի ակամա հառաչ դուրս թռաւ Կազպարեանի շրթունքներից և նա դժնադէմ մտաւ իւր սենեակը։ Արամը դեռ փողոցումն էր, այնպէս որ Կազպարեանը առանձնացած անձնատուր եղաւ իւր մտածման։ Նա, իւր հինգ վեց քայլ երկայնութեամբ սենեակում, մտամոլոր ջոլթա էր տալիս, անդադար ուսերը, թևերը, ձեռքերը տարօրինակ շարժելով, դէմքը կնճռոտելով, ունքերը կիտելով և աչքերը երբեմն երբեմն բոլորելով երկարացնելով, այնպիսի հայեացք էր գցում, այնպիսի ցնցումներ էր գործում, որ նրա հոգեկան յոյզերը կատարելապէս արտայայտւում էր։ Այդ խոհերի մէջ սուզւած, նա աստիճանաբար կէծէմռում էր, կնճիռների և աչքերի ցոլքերը սաստկանում էին։ Աղօտ լուսաւորւած սենեակը գրեթէ մթնել էր, բոլոր առարկաները միապաղաղ սև էին երևում Կազպարեանի բորբոքած աչքին։ Երբեմն երբեմն նա կանգ էր առնում, անդամներով, զանազան նշաններով հոգեկան խանգարւած վիճակն էր

արտայայտում և կրկին շարունակում էր իւր բօլթման։ Յանկարծ կանգնեց, ուշաբերուողի նման սթափուեց, չռեց աչքերը լուսամուտին ու մռմնջաց.

—Ո՛չ, սա կատակ բան չէ, սա կամովի բան չէ, սա ուղղակի հոգեկան տանջանք է։ Ուրեմն զգացումների աշխարհն այս է։ Ահա թէ ինչ՞ են ասում, սէրը կոյր է։—Ա՛յո, սէրը կոյր է, սա նոյն ինքը սէրըն է, որ բուն է դրել, որ տիրել է հոգուս։ Նոյն իսկ սկզբունքիս, գաղափարիս հակառակ։ Ուրեմն սիրտը չի կամենում ըմբռնել, թէ ինչպէս է դատում բանականութիւնը։ Հոգիս կպել է Նորան, ես սիրում եմ Նորան։ Զգացումները ի՞նչ առնչութիւն ունին դատողութիւնների հետ...։

Կաղպարեանը լռեց, նրա աչքերը փակուեցին, նրա դէմքը ցմքեց, արձանի նման կանգնած մնաց և քիչ յետոյ աւելացրեց—Ո՛չ, գուցէ լոկ համակրական ձգողութիւնն է, որ այսօր մեզ մօտեցնում է, քանի որ գաղափարական կապ էլ կա, իրար հետ ձեռ ձեռի տուած թռչկոտում ենք, ուրիշ ոչինչ...։ Կարող է շուտով անհետանալ, երբ մենք հեռանանք իրարից։

Իսկոյն քիթը—մուռթը ոլորելով, աչքերը կրկին փակեց Կաղպանեանը և րոպէական լռութիւնից յետոյ մի դառն հառաչ արձակեց ու նորից շարունակեց իր մենախօսութիւնը։

—Է՜հ, ի՛նչ զզուելի արարած է մարդը, որքա՛ն ստոր...։ Այս որքա՛ն խոր արմատ է գցել մեր սրտում կեղծիքը, այս ի՛նչպէս թնջկուել է մեր ջղերի մէջ ծածկամտութիւնը, այս որքա՛ն զարգացել է մեր մէջ երկակութիւնը, որ այսքան եռանդալի կռիւնե-

րից յետոյ, դարձեալ երևում է իւր զզուելի ծամածռութիւններով։ Ես ինձի, իմ առանձնարանում, իմ խոհերի մէջ դարձեալ ձգտում եմ կեղծել, ուզում եմ ինքս ինձ խաբել։ Ահա՛ քանի ամիս է, իմ սրտումս եռ է գալիս այս միտքը, ակամա աչքերս Նորան որոնում են, ականջներիս մէջ Նորա ձայնը—բառերը բախւում են և քայլերս ուղղւում են Նորան շրջած վայրերը, իսկ ես կռւում եմ զգացումներիս հետ և կամենում եմ խոյս տալ։ Ի՜նչ ծիծաղելի վիճակումն է, ի՜նչ անարգ կեանք է վարում մարդկութիւնը։ Ինչ՞ եմ ես Արփիից փախս տալիս, ի՞նչ մեղաւոր է այդ աղջիկը, որ ծնւել է ոսկի օրօրոցում։ Մի՞թէ ես Նորան կը մերժէի, եթէ նա ցնցոտիների մէջ մեծացած լինէր։

Արամը ներս մտնելով սթափեցրեց Կաղպարեանցին։ Նա դուրս եկաւ տանից, հասաւ կամուրջ ու տարաբաղտաբար չգտաւ իւր փնտռածին։ Թէև բոլորովին չէր մթնել, բայց արդէն ճեմողները քաշուել էին իրենց բնակարանները, այնպէս որ Կաղպարեանը ծանր քայլերով սկսեց մենակ ման գալ իւր խոհերին անձնատուր։ Նա մտածում էր, թէ ինչից առաջացաւ այս ջերմ համակրութիւնը, որ լափում էր իր կուրծքը։ Մի՞թէ Աստղիկի հետ աւելի վաղ չէ՞ր ծանօթացել, մի՞թէ Աստղիկը իրեն աւելի չէր յարգում, մի՞թէ սա աւելի ուշիմ չէր հետևում իւր դասախօսութիւններին և Արփիից աւելի լաւ չէր իւրացրել աւանդածը։ Մանաւանդ որ Աստղիկը անպայման Արփիից գեղանի էր, աւելի քնքուշ և անչափ յամառութեամբ քարոզում և տարածում էր իր քարո-

գած գաղափարները։ Ուրեմն ինչի՞ իւր սիրտը այդ ոչ հարուստ օրիորդին չէր կպել, այլ կաշկանդւել էր Արփիի սլաձիգ հայեացքով և կամ նորա ժառանգելիք ոսկիների ցոլքերի շաղախով։ Նա առաջին անգամը չէր, որ այս հարցը ինքն իրեն տալիս էր, բայց պատասխանը չէր կարողանում գտնել, պարզել։

Նա այնքան զբօսնեց, որ յոգնած անզգայաբար տարածւեց մի նստարանի վրա և չէր էլ նկատում թէ փողոցները դարակւել էին, խանութները փակւել, ճրագները հանգել և շուրջը տիրել էր գերեզմանական լռութիւնը։ Միայն Կուբն էր, որ անվերջ շառաչելով բաղխում էր ափի ապառաժներին, ինչպէս Կաղպարեանի մտքերը դատողութիւններին և մռնչելով սահում, անցնում էր մաշելով ժայռերն անգամ։ Կուբի անվերջ մռինչիւնները, ապառաժի հետ մղած կռիւը և նրանից պոկոտած աւազը, փոշիացեալ աւազի տեղ ժայռում բացած ահաւոր խրամատները, անդունդները պատկերանալով Կաղպարեանցի երևակայութեան մէջ, նրան ընկղմեցին մտքի ովկիանը, ուր ծփում էր վեկից ու առագաստից զրկւած։ Երկար ժամանակ արձանացած մտածումներից սթափւելուց յետո, նա մռմնջաց քթի տակ։

— Ո՛չ, դատողութիւնը միշտ պիտի կրքերին— զգացումներին յաղթէ։ Գաղափարը կրքերին զոհելը ամենամեծ անբարեխղճութիւնն է։ Մեր մէջ ահաւոր վիհ կա, երբէք մենք չենք կարող իրար հետ համբաշխ ապրիլ։ Ես չեմ կարող վեհ ձգտումներս զոհել զգացումներիս, կրքերիս և իմ սկզբունքի շաւղից խոտորել։ Ո՛չ մենք չենք կարող իրար նժար դառնալ։

Նորա հօր ոսկիները եթէ ինձ չկարողանան աղբակոյտի մէջ խրել, անպայման կկաշկանդեն, կչէզոքացնեն և շրթունքներիս սանձ կդնեն։ Պէտք է ընդմիշտ հրաժարւիլ այս մտքից, թէև սիրտս կտոր կտոր էլ դառնա։

Շատ էլ հանգիստ սրտով չհեռացաւ Արփին նոյն իրիկունը Կաղպարեանցի օթեակից։ Նորա էլ սիրտը բռնկել էր, չգիտէր, թէ ինչ մի՞ջոցի դիմէր, որ կարողանար պարզել Կաղպարեանցին։ Առաւօտից մինչև իրիկուն Աստղիկը չէր բաժանւում, իսկ Կաղպարեանցն այնքան քաշւող բնաւորութիւն ունէր, որ չէր կարելի հատ ու կտոր բառերով մի այդպիսի ծանրակշիռ խնդիր հասկացնել։ Արփին զգում էր, որ Կաղպարեանցը անտարբեր չէր դէպի իւր զգացումները, կարդում էր սիրո աչքերով նրա սրտի խորքերը, որոնք իրեն ոգի, կեանք էին ներշնչում, բայց դրական փաստ էր որոնում, շօշափելի ապացոյց, լեզւի թոթովանքի վկայութեան կարիքը նորան այրում էր։

Քանի՛ քանի՛ անգամ Արփին ուզեցել էր, որևէ բառով արտայայտել զգացումը Կաղպարեանին, բայց կարկամել էր։ Քանի՛ քանի՛ անգամ պատեհ առիթը փախցնելու համար զղջացել էր, բայց միշտ դէպքը գալիս էլի կաշկանդւել էր։ Կաղպարեանցի բնաւորութեան հետ ծանօթ լինելով, գիտէր, որ մինչև ինքը որևէ քայլ առաջ չգնար, նա երբէք յանգգնելու չէր

սիրտը պարգելու, բայց ինքն էլ քաջութիւն չունէր, չէր յաջողւում այդ քայլն անել:

Այդ իրիկուն թէև բաւական ուշ առանձնացան օրիորդները, բայց Արփին երկար ժամանակ գլորւում էր անկողնում և չէր յաջողւում քնել: Օրիորդը իրեն անբացատրելի մի հրատապ ճնշման տակ տանջւում էր և աչքերի առաջից Կաղպարեանցը բնաւ չէր հեռանում: Անվերջ նա համեմատում էր իր բոլոր ծանօթներին՝ բանւորական կապոյտ շապկով և գունատած զգեստներով ուսուցչի հետ, որը իւր վերջին պատառն անգամ բաժանում էր թշւառների հետ և իւր չքաւոր ապրուստին ընկերակից էր վեր առել ուսման կարօտով մի պատանի: Իւր երկրպագուների սրտերի մէջ նկատում էր միմիայն նիւթապաշտական ոգին, որը դրանց միակ նշանաբանն էր կեանքի ամէն քայլափոխում: Այդ բաղտախնդիրները նպատակի հասնելու համար պատրաստ էին ամենաստոր կեղծիքներով, ամենանւիրական գաղափարներով դիմակաւորւելու: Հօրը ոսկիների փայլից շլացած, շրջապատել էին նորան ամէն կողմից, ոչ թէ արժանաւորութիւններից յափշտակւած, ոչ թէ սիրտը գնահատած, այլ ահաւոր ժառանգութիւնի շողերից շլմած:

— Իսկ նա, նա, մտմնջում էր Արփին դողդոջուն շրթունքներով, ինձնից խոյս է տալիս, խորշում է, փախչում է, մի միայն այդ ժառանգութեան, այդ գանձի, այդ ոսկիների համար: Մեր շէմքից ներս չի մտնում հօրս հարստութեան համար... Բայց ինչ յանցանք ունի Հայրս...: Մինչ ամէն մարդ այդ տեսնով չէ վարակւած... Ո՛չ, ոչ, Հայրս մեղաւոր չէ, ոչ,

անհատը մեղաւոր չի կարող լինել, քանի որ մարդիկ այս մրցման մէջ են ապրում, քանի որ այս պարագաները թագաւորում են...:

2

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Կաղպարեանը իւր կենդանի օրինակով այնպէս էր գրաւել օրիորդներին, որ սրանք խիստ մտերմացել էին իրենց ուսուցչին, որքան ուսումնասիրել էին նրա լուրջ բնաւորութիւնը, այնքան աւելի համակրել ու յարգել էին: Անմաքուր, ապականած և կեղտոտ կեանքը իր բոլոր միջավայրով Կաղպարեանցին հսկայի նման հազարաւորներից բարձր էր կանգնեցրել գաղափարական ուղու վրա, որը ոչ մի գիջողական քայլ չէր ընդունում իւր համոզմունքի դէմ: Իրական կեանքի այս հազւադէպ օրինակը յափշտակել էր օրիորդներին, որոնք փոխադարձաբար ցանկանում էին իդեալական ազնիւ քայլերով յետ չմնալ իրենց առաջնորդից: Այս վեհ կալը, որ օրիորդներին կապել էր Կաղպարեանցին հետ, նորանց մէջ համակրութեան, յարգանքի և սիրոյ էր փոխարկւել աստիճանաբար, այնպէս որ երկուսն էլ իրարից անտեղեակ, իրենց սըր-

տի խորքերում պաշտել էին Կաղպարեանցին։ Այնպիսի ընթացք էին բռնել անմեղ մանուկները, որ երբէք տեղիք չէին տւել ոչ միայն ուրիշների, այլ իրար վրա կասկածելու։

Բայց Արփիի այդ վերջին օրերի հառաչները, սուր հայեացքները, աչքերի փայլը, անքուն գիշերները կասկածներ էին զարթեցրել Աստղիկի սրտում, օրիորդը շանթահարի նման թուլացել, յուսաբեկ ընկճւել էր, երբ նկատել էր, որ Կաղպարեանցը նոյնպէս անտարբեր չէր դէպի Արփին։ Այս պարագան այնպէս խիստ ներգործեց, որ Աստղիկը չդիմացաւ, թուլացաւ ու տրկարացաւ, նա չէր յանդգնում իւր մրցակցի հետ երես առ երես միևնոյն յարկի տակ ապրիլ։ Այդ օրերը Աստղիկի հայրը Բորժոմ գալով, Աստղիկին երեք չորս օրով Թիֆլիս տարաւ, որ թէ մօրը տեսնի և թէ ինչ-որ հիւր էր գալու նրանց տուն Բագուցի, որի հետ ցանկանում էին ծանօթացնել օրիորդին։

—Հոգիս, Աստղիկ, երևի քեզ ուզում են այդ Բագուցիի ոսկիների վրայ պսակել, բայց չլինի՛ թէ սըխալւիս։ Երեք չորս օրից անհամբեր քեզ եմ սպասում, ասաց Արփին նորան ճանապարհ դնելիս։

Աստղիկ, հեռանալուց, յետո, անզգալի կերպով երեք օր գլորւեցին։ Թէև ամէն օր երեք չորս ժամ Արփին իրենց այգում, ջերմուկների ձորում Կաղպարեանցի հետ միասին էին անցկացնում, վիճում, քննադատում, բայց որքան աշխատում էր օրիորդը սրտի զգացմունքների մասին խօսք բանալու, կարկամում էր և տխուր, մռայլ հառաչանքներով բաժանւում էր ուսուցչից։ Վերջինս էլ թէև մռայլ էր դէմքով, հա-

ռաչանքները խեղդում էր կոկորդի մէջ. առանց շեղւելու իւր սովորական ընթացքից բացատրում էր դասերը, առօրեա հարցերից անցնում էր հասարակական և ընկերավարական հարցերին, քննում, նկատողութիւններ էր կատարում և իրարից բաժանւում էին սաստիկ յուզւած, չղաձգւած, խոստանալով յաջորդ օրը շարունակել դասերը և բացատրութիւնները։

—Չուրաբեն էլ գնաց Թիֆլիս։ Արփին որոշեց և վճռեց. որ անպատճառ այդ օրը ճիգը թափելով բանա սիրտը սիրածին, խոստովանի ամէն բան։ Այս տրամադրութեամբ նա ամբողջ գիշերը չէր կարողացել քնել, այլ միայն երազել էր ու սաւառնել։ Այդ օրը առաւօտեան վաղ երկու իրար հակւած սրտերը իրար քով տեղ բռնեցին ջերմուկի ձորում, մի կլոր սեղանի շուրջը, ծառերի թանձր ու խիտ հովանու տակ։ Արփիի ուշքը բոլորովին վրան չէր. նորա սիրտը շատ խիստ տրոփում էր, չէր ըմբռնում Կաղպարեանցի խօսածները, աշխատում էր խոյս տալ ուղղակի դասատւի աչքերին աչելուց և մեղմիկ հառաչում էր։ Կաղպարեանն էլ նոյնպէս սովորական վիճակում չէր գտնւում, քնհատ էր երևում, աչքերը կարմրել և չէին բացւում։ Մեքենաբար թէև խօսում էր, կարդում էր, բայց ոչինչ չէր հասկանում։ Սրա էլ ամբողջ մարմինը դողում էր, քրտինքը պատել էր քունքերը, ճակատը, լեզուն թոթովում էր և չէր ճկւում։ Մի վայրկեան լռեցին երկու սիրահարները և անմռունչ իրար նայեցան։ Դիտելու պէս ցնցւեցան, դողալով աչքերը գետին խոնարհեցին։ Ջղերը, թերթևւունքները հառաչանքներն ու դիմակնճիռները արտայայտում

էին իրար սրտի խորքերում կատարածները և զգացածները։ Ոչ մեկը սիրտ չարաւ, քաջութիւն չունեցաւ, ոյժերը չպատեց շրթունքները շարժելու մի բառ արտասանելու։ Մինչ այդ այն բոլորը ինչ որ շքի նման, ատելի նման խաւար ներանց թաւացել էր, այդ րոպէին դրականապէս պարզուեց, ամենանուրբ կերպով զննեցին ու շօշափեցին։ Իսկ սրտերը, զգաւումները սփոփելու, արտայայտելու ճիչեր, բառեր չըգտան, կարիք էլ չունէին, քանի որ աչքերը աւելի ճիշտ էին կարդում, արտացոլում սրտի խորքերին տիրած երջանկութիւնը։ Երկուսն էլ կարմրեցան, բորբոքեցան, երկուսն էլ ուրախութեամբ լցեցան—գեղեցան և ուրախութեան արտասուքները լճացած ներանց աչքերում, գլորեցին այտերի վրայից։ Մի քանի վայրկեան տեսարանը անշարժ շարունակուեց, և այս տեսարանը անփոփոխ գուցէ շատ շարունակուէր, եթէ Արփին ընկճուած՝ մի բոցակէզ հառաչ չարձակէր սըրտի խորքից։

—Հոգիս, ասաց կակազելով Կաղպարեանը, քեզ ով տւեց այդքան զգայուն սիրտ, որ այդպէս դառնալի հառաչելու դատապարտւես, որ այդպէս սրամաշուկով տանջւես։

—Այս հալւամաշը անզգա բուսական կեանքից նախապատիւ եմ համարում,...։ Բայց դու որքան մեծասիրտ ես, որ դեռ արձանի նման կանգնած, ինձ տանջում ես...։

—Ո՛չ, Արփի, ո՛չ, մենք անասունի նման ըզգացումներից յաղթւելու չենք։ Ես չեմ յանդգնիլ ապատաւորել այդ սուրբ, նւիրական մարմինդ, որը երբէք ինձ չի կարող վիճակիլ։ Զգո՛յշ կաց, սոսկալի մի անդունդ կա քու ոտքերի առաջ։ Սայթաքելուց յետո, էլ յաւիտեան փրկութիւն չկա։

—Ո՞վ է կարողացել այդ անդունդից խոյս տալ։ Ես անչափ ուրախ եմ, որ միասին, ձեռք ձեռի բռնած պիտի առաջանանք։ Քեզ հետ դժոխք էլ պատրաստ գլորւելու։

—Ի՞նձ հետ...։ Բայց չես նկատում մեր մէջ գոյութիւն ունեցող անյատակ խորխորատը, Ո՛չ, ո՛չ...։ երբէք չենք կարող այդ խորխորատից թռչել, իրար մօտենալ, քանի որ հայրդ և իւր գաղձերը գոյութիւն ունին, քանի որ ես էլ իմ սկզբունքներս։ Այն ինչ քու սրտին է տիրել, վաղուց է խաճւել իմ երակների մէջ, թափանցել ուղեղիս ու ոսկորներիս ծուծը, բայց պարագաները...

—Ուրեմն դու էլ վաղուց է, որ ինձ...։

—Սիրում եմ կեանքից շատ աւել, պաշտում եմ գաղափարներիս պէս, իսկ դու գիտես, որ երբէք գաղափարներիս չեմ դաւաճանել։ Մենք մի յարկի տակ չենք կարող ապրել։

—Ինչի՞...։ Մի՞թէ կարծում ես, որ ես քեզ չափ ոյժ չունիմ Գաղափարին, Վսեմին ձգտելու։

—Քեզ չեն թողնի...։ Բացի այդ, իմ պատճառով դու ինչի՞ զրկանքների մատնւես, որի դէմ մաքառելու ոյժ չունես։

—Ուրեմն դու կարծում ես, թէ ես երեխա եմ, որ ինձ արգիլեն կամքիս և դատողութեանս համեմատ ապրելու։ Ինչի՞ ես ինձ անպատւում։ Ի՞նչ բան է զրկանք ենթադրածդ, ինչի՞ կարծում ես, որ տոկալու

քաջութիւն չունիմ, չեմ կարող գաղափարս պաշտպանել և ազնուութեան մէջ ապրիլ։

—Ես հաւատացած եմ, սիրելի՛ս, որ դու գաղափարիդ այնպէս կպած ես, որ պատրաստ ես զոհողութիւններ կատարելու։ Բայց մի՛ մոռանալ, որ հայր ունիս, որին սիրում ես, որի միակ մխիթարանքն ես, որին չես կարող տանջել քու ընթացքով։

—Բայց եթէ հայրս համաձայնի և մեզ օրհնէ...։

—Մենք դարձեալ չենք կարող միասին ապրիլ։ Ես իմ աշխատութեան հասոյթով եմ ապրելու, իսկ այդ հասոյթը չի բաւականացնել քո կարիքները...։

—Քեզ հետ, քու ընթացքով ամէն բան, ո՛վ մեծասիրտ... ասաց ու երեսը բռների մէջ սեղմեց Արփին։

Է

ԵՐԿՈՒ ՍՐԻ ՄԷՋ

Զուրաբը հետևեալ երեկուն Թիֆլիսից վերադարձաւ իւր հետ բերելով, Արփիի թախանձանքի համեմատ, օր. Աստղիկին։ Արփին համբուրով ընկերուհիին դիմաւորելիս ասաց,

—Հոգի՛ս, որքա՛ն ուրախ եմ, որ դու շտապեցար ետ դարձար։ Առանց քեզ որքա՛ն պիտի տխուր ու վշտալի մինակ հառաչէի։

—Ինչի՞ հոգի՛ս, ի՞նչ կայ, հա՞ն, չլինի նոր բան ունիս... ասաց դողալով Աստղիկը։ Օրիորդը գրեթէ կիսամեռ հեռացել էր Կաղպարեանից։ Անչափ զղջացել էր, որ մեկնել էր և ասպարէզը թողել ընկերուհուն։ Բայց և այնպէս այնքա՛ն լաւ ծանօթ էր Կաղպարեանի հոգեկան աշխարհի հետ, որ համոզուած էր, թէ նա չի կարող կեանքը կապել Արփիի հետ։ Նա ո՛չ միայն մերժել էր հօր ընտրած Բագւեցի հարուստ փեսացուին, այլ սրտատրոփ վերադարձել էր Զուրաբի հետ։ Երբ անհամբեր Արփին աչերը յառած ընկերուհու աչքերին, նայեց, աշեց և վշտալի սրտով հառաչեց. գլուխը ոլորելով և հայեացքը առաստաղին յառելով։

—Ի՞նչ է, հոգի՛ս, ի՞նչ ունիս, ասաց անհամարձակ Աստղիկը ընկերուհիի շարժումը դիտելով, չե՞ս վստահանում սիրտդ ինձ պարզել, զգուշանում ե՞ս...

—Ես թշուառ եմ. Աստղի՛կ, աշխարհի երեսին ամէնից թշուառը, ասաց բարեսիրտ նայուածքով գետին նայելով և սրտի խորքից մի հառաչ արձակելով։

—Բայց նա քեզ սիրում է, իմ աչքերս չեն կարող խաբուած լինել, նա տոչորւում է. . .

—Այո՛, այդ ես էլ զգում եմ, կարծում եմ, բայց . . .

—«Բայց», էլ ի՞նչ «բայց», երբ համապատասխանում է։

--Այնպիսի մի սոսկալի խոչնդոտ կայ, որ մեր սէրը յաւիտեան նպատակի-բաղձի չի հասնելու։

—Բաւական է, որ փոխադարձ սէր կայ, մի

օր կարող կլինիք նպատակի հասնել...

—Ո՛չ, Աստղիկ, ո՛չ. ես ամենից թշուառ էակն եմ, ասաց առանց կարողանալու արտասուքը զսպել: Ա՜խ, եթէ գիտենայիր, եթէ զգայիր, Աստղիկ, թէ ես որքան դժբաղդ եմ, որքան . . .

Աստղիկը գրկեց ընկերուհիին, նորանց շրթունքները իրար հպած մնացին:

—Դու այնչափ սխալուում ես, Հոգիս: Կաղպարեանցին սիրողը երբէք չի կարող թշուառ լինել: Քու բարեբաղտութիւնը Հոգեկան մխիթարութեան մէջ է: Հերոսաբար տար աշխարհային մանր մունր վշտերը, վերջի վերջո կարժանանաս վսեմ Հոգեկան բաւականութեան, որի մասին երազում ես:

—Ա՜խ, ինչ ասեմ, Աստղիկ, եթէ թափանցես Հոգուոյս խորքերը, ինձ չես մեղադրել: Այո՛, բաղդատը եմ, որ նրա սրտումը տեղ ունիմ բռնած և նա տանջւում է ինձ հետ: Բայց հարցը այնտեղ է, որ մենք երբէք չպիտի կարողանանք իրար հետ ապրիլ: Մեր մինչև օրս ունեցած ձգտումները մի քաղցր, մի հրճւալի երազ էր, որ անցաւ, սահեցաւ մեր սրտերի վրայից, յետքից մի այնպիսի թունալի վերք բանալով մեր սրտերում, որը, ինձ այնպես թւում է, թէ յաւիտեան չէ բուժւելու:

—Ձեմ հասկանում, թէ ինչ բան կարող է ձեզ այդպէս յուսահատեցնել:

—Ես էլ չգիտեմ, բացի հանգամանքները և միջավայրը, ուրիշ բան չկայ:

—Իսկ դրանց համար խեղդւիլը, ես կարծում եմ յիմարութիւն է, պատառիր խաւարի քօղը, ճեղքիր

ու անցիր, վճռական եղիր կեանքի մէջ.

—Ի՞նչ անեմ, երկու կրակի մէջն եմ, մի կողմս Հայրս և օրհնական պարտականութիւնս, միւս կողմը սէրս և երջանկութիւնս:

—Եւ դու ինչ ես մտածում, որին ես գոհելու...:

—Ոչ մէկից չեմ կարող բաժանուել: Հայրս յամառ, կամապաշտ, Կաղպարեանը մեծասիրտ և ազնիւ, ոչ մէկը մի զիջողական քայլ չէ անելու:

—Ուրեմն Հայրդ համաձայն չէ,

—Նա դեռ ոչինչ չգիտէ: Բայց եթէ ես նրան թողնեմ, Կաղպարեանի հետ գնամ, նա կաթւածահար կլինի, քանիոր նրա աչքում ուսուցչից մի հրէշ է երևում, իսկ Կաղպարեանը երբէք չի զիջանիլ մերը տուն մտնել, բուրժուական կեանք վարել: Ես գիտեմ, ճանաչում ես երկուսին էլ, Հայրասպան գաւակ դառնամ, թէ սէրս խեղդեմ կրծքիս և նրա կրծքի մէջ: Ես ոչ մի ճանապարհ չեմ գտնում այս անել վիճակից ազատուելու: Մտածիր, Հոգիս, խորհիր լրջութեամբ, գուցէ դու կարողանաս ինձ փրկել:

—Բայց դու այժմից երևակայական վիշտ մի յարուցանել քո սրտում: Հայրդ անչափ բարի է. այնպէս խելացի և քեզ անչափ սիրում է, որ երբէք քեզ չի տանջել: Նա փորձառու մարդ է, կարող է միջոց հնարել: Փոխանակ երևակայութեամբ տանջելու, սիրտդ պարզապէս բաց Հօրդ: Եթէ նա կամենա քեզ համար գահիճ դառնալ, այն ժամանակ մտածիր ել ճանապարհը գտնելու:

—Այո՛, եթէ միայն հարցը հօրս կամքից կա-

խում ունենար։ Բայց բանն այն է, որ Կաղպարեանցը ոչ մի զիջումի մասին չի ցանկանում լսել։

—Ուրեմն նա քեզ չի սիրում,

—Նրա սիրո մասին ես բնաւ կասկած չունիմ։ Բայց նա իր բնորոշ պայմանն է դնում։—Թող հօրդ տունը և առանց մի կտոր փալաս վեր առնելու, եկ իմ համարը։

—Վերջն այսպէս էլ լինելու է։ Եթէ մենք ձգտում ենք գաղափարի հասնել, պէտք է և մեր ընթացքով, և մեր գործով երբէք չշեղւինք մեր ուղղութիւնից։

—Բայց ինձ ասա, Աստղիկ, ես ինչպէս թողնեմ հօրս...։

—Հարցը շատ ծանրակշիռ է, սպասիր, քիչ էլ համբերիր, տեսնենք ինչ վախճան կունենա...

—Ախար, ես ինչպէս ասեմ հայրիկիս, թէ ուզում եմ Կաղպարեանցի հետ ամուսնանալ և գնում եմ նրա բնակարանը։ Ախր Թիֆլիսում այդպէս բան ոչ աղջիկն է արել։ Երանի քրդուհիներին, սիրածի հետ փախչում են և ամէն բան վերջանում է...։

Ը

ՀՕՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Տխուր մտքերը սկսեցին օրից օր կրծել Սրբիի սիրտը։ Վշտահեղձ հոգւով, մորմոքալի հառաչանքներով, գիշերներն անհանգիստ, առաւօտները առանց հօրը սպասելու, Աստղիկի հետ թէյերը խմում և թեթև հագնւած շտապում էին ջերմուկների կողմը, թեւերի տակ մի մի դիրք առած և քսակների մէջ մի մի քիչ պաքսիմաթ, կամ խմորեղէն դրած։ Այն վայրերը, ուր իրար հետևից երեք ամառ էին անցկացրել օրիորդները Կաղպարեանցի հետ, ակամա քաշում էին մատաղահասների քայլերն ու սրտերը։ Յաճախ նստում էին այն նստարանների վրա, ուր ժամերով տարածւել էին ուսուցչի հետ և լսել նրա ոգևորութեամբ պատմածները։ Օրիորդների ականջում անվերջ ղժղժում էին Կաղպարեանցի ձայնի ելևէջները, նրա խօսքերը և նրա արծարծած մտքերը ոլորւում էին նորանց գլխում։ Երբեմն այնպէս խոր էին ընկղմում այդ քաղցըր տեսարաններում, որ յափշտակւում, կամ ուշքը կորցրած զառանցում էին, առանց իրար հասկանա-

լու։ Երբեմն Աստղիկը իրեն զսպելով մօտենում էր Արփիկին, գգում, համբուրում, խաղացնում, մեղմիկ սթափեցնում էր, այնպէս որ Արփին երազից զարթնողի նման չէր էլ լիշում զառանցանքը։

Կաղապարեանցը վհկական սուերի նման և ոչ մի ակնթարթ չէր հեռանում Արփիի աչքի առաջից։ Յաճախ օրիորդին թւում էր, որ ինքը Կաղապարեանցի քով է նստած, նրա հետ խօսում է, կամ նրան լսում, նրա շնչառութիւնը իր դէմքին է քսւում և ամբողջ մարմնով ցնցւում էր։ Այս երևակայութիւնները այնտեղ էր հասնում, որ նորան թւում էր, իբր ինքը թողած հայրենի ապարանը փախել, ապրում էր սիրականի աղքատիկ, բայց խաղաղ բնակարանում։ Այս քաղցր տեսարանին իսկոյն յաջորդում էր հասարակական բամբասանքներով քսու դառաստանը և հօր մերժալը, վշտաբեկ դէմքը, որ նորան իսկոյն սթափեցնում էր։ Եւ բոլորը մաշում էին թշւառ օրիորդին ու գունատում։

Այսպէսի վիճակի մէջ մի օր Զուբարը հանդարտ քայլերով մօտեցաւ Արփիին և ճոճը կապած ծառին կրթնելով սկսեց դիտել տարաճաճ աղջկան, որը թըմբրել մեղմիկ օրօրւում էր։ Իսկոյն սիրակորոյս հօր միտքն ընկաւ Արփիի ծնունդը, մանկական օրերը, Յուստինէի օրօրոցի երգերը, երեխայի ճչոցները, ճըխալը և վայրկենական արագութեամբ սահեցան յետագա քսան տարւան մէջ տեսած բոլոր պատկերները։ Մի քանի վայրկեան նա կանգ առաւ Յուստինէի հիւանդութեան ժամանակ նորա քաշած տանջանքների մանրամասնութեան մասին մտածելով։ Յիշեց իւր սի-

րո կուսական դիւթիչ պատկերը, գրաւիչ աչքերը և կախարդիչ շարժումները, մտածեց ու համեմատեց Արփիի հետ։ Նայեց, զննեց հայրը և յափշտակւած քիչ մնաց, որ չոքի, ազերսի իր աղջկան, հարցնի թէ—Ինչի՞ է տխուր, ինչ թախիծ է պատել նորա սրտին, ինչի՞ է գունատւել։ Բայց նա զսպեց իրեն, մինչև որ Արփին ինքը աչքը բաց արաւ և տխրադէմ սկսեց անմռունչ հօրը ոտքից գլուխ զննել։

—Ի՞նչ ունիս, հոգիս, ինչի՞ տխուր ես, աստղ դողդողալով Զուբարը։

—Ոչինչ չունիմ, հայրիկ, ասաց ու շտկւեցաւ, նստեց Արփին իր ճոճում։

—Ո՛չ, աղջիկս, ո՛չ, ինձնից բան մի ծածկել։ Յիշիր թէ անցեալները դու ինչպէս յարձակւեցար ինձ վրա։ Այժմ դու էլ բան մի թագցնել, եթէ չես ուզում ինձ վշտացնել։ Միթէ սիրտդ գաղտնիքը ինձ չէս վստահում։ Ասա ինձ, հոգիս, գիտես, որ կեանքս, կամքս զոհաբերել եմ քեզ և ոչինչ չեմ խնայել...

—Հայրիկ, բան չկա, ասաց ու կանգնեց սիրտը դող հօրը կողքին։

—Գուցէ էլի արտասահմանի մասին ես մտածում, կասկածում ես խոստումս դրժեմ։ Երբէք, ամէն բան պատրաստ է, Հոկտեմբերի մէջ ճանապարհ ենք ընկնելու։ Չէս խօսում, հան, չլինի թէ միտդ փոխել ես։

—Ոչինչ, ոչինչ փոփոխութիւն չկա, հայրիկ։

—Թէ ինձ սիրում ես, հոգիս, մի ծածկեր վիշտը սիրտդ խորքում։ Մի քաշւիլ, մի ամաչել, ասաց ու գրկեց Զուբարն աղջկան։ Ասա, հոգիս, խո՛ սիրա-

հարսնել չես...: Ի՞ն մէկին չես սիրում...:

Արփին չկարողացաւ յուզմունքը զսպել. նա արտասուալի աչքերով հօրը գրկեց հեկեկալով, երեսը դըրեց նրա կրծքին և սկսեց երեխայի նման դառնապէս լալ: Զուրաբը Արփիի գասատկից բռնելով հարցրեց.

—Ասա՛, մի՛ քաշուիլ, խո՞ բժիշկ Փողտուրեանցը սիրտդ չէ՞ գրաւել:

—Ոչ, հայրիկ, ո՛չ, ո՛չ...:

—Ուրեմն Իշխան Մանդակունին՝ դատախազը, թէ փաստաբան Կամսարականը...

—Ո՛չ, ո՛չ, մռմնջում էր Արփին հեկեկալով, առանց երեսը հօր կրծքից բարձրացնելու:

—Հապա ո՞վ, ասա՛ ինձ, մի՛ քաշուիլ:

Արփիի սիրտը փղձկած լալիս էր և չէր կարողանում հօր երեսը նայել: Իսկ Զուրաբը իրենց բոլոր ծանօթների անունները տալով, բոլորի մասին բացասական պատասխան ստանալուց յետոյ, մտքից անցկացրեց, թէ չլինի իւր աղջիկը իրենց Թեթևսօլիկ դըրացի Վրացի երիտասարդ իշխանի վրա սիրահարուած լինի, որն առաւօտ, իրիկուն չուխէն հագած, խանչալը կապած, իրենց դրան առաջից անվերջ անց ու դարձ էր անում: Երբ դրա մասին էլ բացասական պատասխան ստացաւ, ասաց.

—Աչքի լոյս, ասա՛, մի՛ քաշուել, ես քեզ բաղձանքիդ հասցնեմ, ո՛վ ուզում է լինի:

Իսկ Արփին խեղդուած ձայնով միայն հեկեկում էր: Այդ րոպէին մի սոսկալի ատելութիւն զգաց Զուրաբը դէպի այն արարածը, որ մոլորեցրել և գրաւել էր աղջկա սիրտը: Նա կատաղած, տխուր մտքերից յուզ-

ւած, ձայնը կոկորդի մէջ սեղմած ասաց հեգնելով.

—Զլինի՞, աղջիկս, այն վարժապետը քեզ շշմեցրել է:

Արփին ուշքից ընկած մնջեց: Զուրաբին մի սառը քրտինք պատեց: Արփին քիչ էր մնում գլորուէր, եթէ Զուրաբը ծառի բնին չկրթնէր: Վշտալի հայրը մի քանի վայրկեան շուրջը գնելուց յետոյ, աղջկան դըրեց ճոճքը և երբ Արփին աչքը ուզում էր բանալ, հայրը բերանը ծռմռելով ասաց,

—Կաղպարեանիդ վրա ես սիրահարուել. քեզ փէշքաշ: Եւ ուրիշ այլանդակը չկա՞ր աշխարհիս երեսին:

Այս հեգնական խօսքերը այնպէս ցնցեցին. որ բոլորովին ուշքը անցաւ և Արփին նուաղեց մնաց:

—Ի՞նչ անենք,—ասաց խեղդուած ձայնով Զուրաբը, գննելով աղջկա դէմքը,—թո՛ղ դա լինի, քանիոր սիրտդ դրան է կպել: Մի՛ դողալ, մի՛ ցնցուել, կամքդ ինչպէս ուզէ, կկատարեմ: Ոչնի՛չ չեմ խնայել, Եւրոպա ես ուզում, գնացէք, սովորեցէք, մի՛ կասկածել, ուշքի արի, կամքդ կկատարուի:

—Ա՜խ, հայրիկ...

—Քեզ համար և կեանքս զոհելու պատրաստ եմ: Ուշքի արի, աղջիկս, խօսի՛ր, խօսի՛ր: Դու լաւ մըտածիր, որ ապագայում չզղջաս. լաւ քննի՛ր, որ հաստատ մնաս քու որոշման վրա. իսկ ես միշտ պատրաստ եմ կամքդ կատարելու, բայց դու անչափ սխալ ընտրութիւն ես արել:

—Հայրի՛կ, ես նրան սիրում եմ, պաշտում...

—Նա քեզ կլժշուառացնէ, կսպանէ,...: Ափսոս,

ափսոս քեզ… Դու դեռ երեխա ես, չես զգում….

Թ

ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐ

Երկար օրերը իրար ետեւից դանդաղութեամբ էին գլորւում, տօթը աստիճանաբար սաստկացել էր, ամառանոցը լե—լքւել էր, այնպէս որ կարծես Բաղւի, Թիֆլիսի ունեւոր դասը քանդւել, եկել էր Բորժոմ: Տօներով, ուրախութիւններով, փոխադարձ նախաճաշերով ու ընթրիքներով չէին կարողանում ժամանակը սպանել: Բաղդի երես տւած զաւակները ուր որ հաւաքւում էին, թղթախաղի սեղանի շուրջն էին խմբւում եւ այդպիսի զուարճութիւններով օրերը մթնեցնում էին: Զուրաբի սեղանը ճոխ, պատրաստ էր ծանօթների շրջանի համար, տանը նւագում էին դաշնամուր, զբաղեցնում էին հիւրերին, պարում, թռչկոտել տալիս, կաքաւում եւ ջանում էին օրերը ուրախ զւարթ մթնացնել, բայց ոչ մի բան չէր հեռացնում տխրութիւնը Արփիի այլագունած դէմքից:

Արփին օրից օր աւելի տխրում, մռայլւում եւ խոյս էր տալիս հօր հետ խօսակցութեան բռնւելուց: Թշւառ օրիորդի ուշքն այն աստիճանի ցրւած էր, որ

ձեռքի մի գործը թողնելով, միւսին էր կպչում, բայց եւ ոչ մէկը նպատակին չէր կարողանում հասցնել: Սովորական լեզւի եւ գրականութեան դասերը արդէն դադարեցրել էր, քանի որ չէր կարողանում կարդացածը ըմբռնել եւ դասերը պատրաստել: Կաղպարեանն արդէն ինքն էլ խաղաղութիւնը կորցրած, նկատել էր ամէն բան ու ասել.

—Այլեւս աւելորդ եմ համարում, Արփի, այս զբաղմունքը, քանի որ ոչ դու հոգեկան անդորրութիւն ունիս, որ կարողանաս ուշքդ ամփոփած զբաղւելու, ոչ էլ ես կարողանում եմ այնպէս դասաւորել մեր պարապմունքը, որ կարողանամ ձեր միտքը լարել եւ արդիւնաւէտ դարձնել մեր զբաղմունքը: Դադարեցնենք առ այժմ դասերը, մինչեւ մեր ջղային դրութիւնը բարւոքւի:

Այս խօսքերի վրա, Արփին աչքերը դարձնելով Կաղպարեանի վրա, ոտից գլուխ չափելուց յետոյ, բիբերը յառեց նրա սրտի խորքերը թափանցելու ցանկութեամբ, զննեց, նայեց ու ասաց.

—Ուրեմն այս մի երկու ժամւա հոգեկան մխիթարութիւնից էլ կամենում ես մեզ զրկել: Այստեղ ո՞վ է խագարում:

—Ցրւածութիւնը: Ամէն ջանք զուր կորչում է: Ժամերս անմեղ վատնելուց ինչ օգուտ: Մանաւանդ որ կարելի է դասերը մի ուրիշին յանձնել, որը խաղաղ հոգւով կարգին կկպչի եւ ձեր թարմ ժամանակը ապարդիւն չէք վատնել:

—Եւ դու անդորր հոգւով, ասաց Սաթղիկը վրդովւած, կկարողանաս դասերդ թողնել: Երեք տար-

ւան ընթացքում ձեր հիմնածն ու կառուցածը կյանձնէք պատահական հոդմերին։

—Բայց ինչ օգուտ, որ ես չեմ կարողանում աւանդել, առաջնորդել ձեզ ցանկալի ուղղութեամբ։

—Շատ լաւ կկարողանաք, ասաց դարձեալ Աստղիկը, եթէ միայն ճանապարհը գտնէք լուծելու այն հարցը, թէ ինչ ընթացք էք բռնելու երկուսդ, ձեր կեանքը վտանգից փրկելու համար։

Երկու սիրահարները դարձեալ պապանձեցան, իրար աչքերից աշխատում էին միմեանց սրտերի խորքերը քննել։ Աստղիկը հնթադրելով որ իր ներկայութեանը չեն կարող բացատրել, հեռացաւ լիսուն քայլ հեռուն մի կոճղի վրա նստելով, սկսեց անթարթ նայուածքով գիրքը կարդալ, սիրահարները լուզուած չէին կարողանում մինչև անգամ իրար երես նայել և երկար լռութիւնից յետոյ, Կազպարեանցն ասաց.

—Ջուր է, ես այնքան ոյժ չունիմ, որ այսպիսի հոգեկան տանջանքներ կրելով կարողանամ լուրջ զբաղուիլ։ Ձս ներկայութեանը այնպիսի մտքեր են ծնում գլխումս, որ խորհրդս և յոյզերս խճճուում են, միտքս ցնորւում է։ Լաւն այն է, որ դու հրաւիրես մեր Զաքարին կամ Խաչիկին, նրանք կարող են շարունակել այս բոլոր առարկաները։

—Հապա սրտիս համար ոչ մի կանչենք, սրտիս, որ ոտքերիդ տակ տրորում ես...։ Եւ կարծում ե՞ս, որ ես այս վիճակով կարող եմ ուշքս կենտրոնացնել և այս հարցերը քննադատել։ Բայց ոչ թէ դասերից, այլ ինձանից ես խոյս տալիս, ուզում ես խզել խսպառ մեր յարաբերութիւնը. առանց պատճառը բացատրելու, առանց սրտիդ վարագոյրը պատռելու։

—Մասամբ իրաւ է նկատողութիւնդ, օրիորդ։ Ուզում եմ հեռանալ, յուսալով որ անջատումով քիչ քիչ սառչինք, կամ գոնէ կրկին ու կրկին բորբոքելու առիթ չունենանք։

—Ինչի՞ բորբոքեցիր, բռնկեցիր սիրտս, եթէ այսօր սառն ջրով հանգչեցնելու պիտի ջանայիր։

—Ես չէի կարծում, երբէք չէի կարող երևակայել, որ մի այսպիսի յանցանք գործելու պիտի դատապարտուիմ։

—Չէիր կարծում... ասաց գլուխը շարժելով Աբփին ու լռեց։ Բայց չկարողանալով երկար կրքերը զսպել, համբերութիւնը սպառած, բորբոքած յարեց.

—Գոնէ յոյս ունիմ, որ այնքան ազնիւ էք, որ ինձ կյայտնէք, թէ ինչի՞ էք խոյս տալիս այն սիրուց, որ ձեր սիրտն էլ պակաս չի լափում և անկարող էք դադարեցնել։ Աւէք, խնդրեմ. ինչի՞ էք ստիպում ձեզ սիրուց խոյս տալու, փախչելու։

—Սէրը.

—Ես ձեզ չեմ հասկանում, կամ գուցէ դուք էլ ինձ չէք սիրում, ասաց բորբոքած Աբփին։

—Դու արդէն թափանցել ես սրտիս խորքերը։

—Փոխադարձ զգացմունքիս վրա կասկած ունիս։

—Երբէք։

—Ուրեմն ինչի՞ ես կամենում դադիճս դադարնալ, սէրս սպանել։

—Նրա համար, որ երբէք չպիտի կարողանանք բաղձանքներիս հասնիլ, ասաց սառնութեամբ։

—Պատճառ, մխիթ ես գաղափարիդ բաժանարդակից չեմ, չեմ պաշտում քո դաւանանքը:

—Այդ մասին կասկած չունեմ: Բայց մենք ապրում ենք դրական աշխարհում: Գաղափարի և դոքժնականի մէջ է այն վիհը, որ ես նկատեցի: Այս պատճառով ես չեմ ցանկանում դահիճ դառնալ:

—Ներողութիւն, խնդրում եմ այդ ձևերը թող, պարզ խօսքը: Այդ ինչ քայլափոխ է, որ իբր եմ այժմ չի պատել: Ես այլ ևս երեխա չեմ, կամք ունիմ և կարող եմ կեանքիս մասին անօրինութիւն անել: Թող այդ դարձուածները և որոշ ասա, ես պահանջում եմ:

ՃԱԿԱՏ ԱՌ ՃԱԿԱՏ

—Ես օրականով ապրող եմ, դու հարուստ: Ես քաղցի, ցրտի կարող եմ տակաւ, իսկ դու ամէն օր փափկիկ խորտիկներ եթէ չուտես, կհիւանդանաս: Ահա, թէ ինչի մենք չենք կարող հաւասար ընկերութիւն կազմել, կամ աշխարհի խօսքով—ամուսնանալ:

—Ինչի՞ ինձ «հարուստ» ես անուանում, մխիթ մեղաւոր եմ մեծատան զաւակ ծնելուս համար: Ես կհրաժարւիմ կարողութիւնից, հօրիցս կխնդրեմ, որ կտակէ բարեկործական նպատակի իր գոյքը:

—Տեսնում ես, որ բորբոքելով խօսածդ չես ըմբռնում անդամ: Ես հաւատացած եմ, որ քո հօր ամբողջ կարողութիւնը քեզ մօտ հաշիւ մի գեղասեղի արժէք ունենա: Բայց հարցը գոյքից հրաժարելու մասին չէ, այլ առանց հարստութեան *հոշոտ* գնալու: Դու քո հօրից դժւար թէ կարողանաս բաժանւիլ, իսկ քո հօր ներկայութեան յարկում ես մի ժամ, մի րոպէ չեմ կարող ապրել: Եթէ դու ամէն արգելքի յաղթես, ինձ հետևիս, այդ դէպքում էլ բարեբաղդ ապագայ չեմ կարող դուշակել, քանիոր դու պատրաստ չես պրօլետարեալի կեանք վարելու: Այսօր քան տարւան ես, բայց ասեղ թելել չգիտես: Ցգուց եթէ քո բաճկոնի կոճակը քանդւի, ով պիտի կարէ: Եթէ դու հրաժարւիս հօրդ հարստութիւնից, որ դերձակուհին կհամաձայնի քո շորերը պատրաստել: Դու ձուածեղ եփել չգիտես, իսկ առանց ծառայի, ապրանի, խոհարարի, նաժիշտի ինչպէս պիտի եօլա գնաս: Կամ ես որտեղից միջոց ձեռք բերեմ, որ այդպիսի պահանջների բաւարարութիւն տամ:

—Մեծ մեծ քարերով մի փակիլ իմ ճանապարհս: Դու գիտես, ու ես ակամայ եմ տանում հօրս տանը կատարւածները Ես չափաւորութիւն սիրող եմ: Երբ այս բանը միտքդ սնեննաս, այն ժամանակ դու ինքդ կարող ես երևակայել, որ ես կարող եմ լեզւի ու դաշնակի դասեր աւանդել: Երկուսս ձեռք ձեռքի տրւած կգործենք և հեշտութեամբ կկարողանանք ապրուստի փող վաստակել:

—Ամէն ժամանակ դասեր չենք գտնել, իսկ եթէ գտնենք, դաս յանձնող աղաների քմահաճոյքին չենք կարող վզներս ճկած ծառայել, որ յարատև գործ

ունենանք: Կարող ես երևակայել թէ ուսուցչէն, մանաւանդ քեզ նման դեռահաս վարժուհիի այս ու այն տունը եւ ու մոի հետ ինչ սոսկալի քսութիւններ կարող է կապել, կեանքի վատ կողմերը դեռ չես կարող թափանցել: Երէկ դու դեռ մտածում էիր արտասահման գնալ, ուսումդ շարունակել, բարձր գաղափարի ծառայիլ, իսկ այսօր...: Այսօր բորբոքած վարժուհիի դեր ես ուզում սառնձել, վաղը, մի՛ս օրը, եթէ կեանքի, ապրուստի դառնութիւնը զգաս, ո՛վ է իմանում, ինչ չի կարող պատահել ...:

—Ինչի՞ս է պէտք բարձր ուսումը, զարդացումը, եթէ ես ցնորւելու վրա եմ, կամ գոյութեանս վտանգ է սպառնում: Եւ դու համոզուած ես, որ ինձ սպառնում է այդ երկուսից մինը: Ներհակ ընթացքիդ համար հակառակ պատասխան տալուս վրա մի՛ զարմանալ: Ես դարձեալ կերթամ եւրոպա, եթէ ինձ առաջնորդես մինչև վերջը: Բայց այս հարցերը մնան: Ես եկել եմ այն եզրակացութեան, որ բոլոր հարցերը կվերջանան, եթէ իմ ու քո մէջ պարզուի այն միութիւնը, որի շուրջն է պատւում ամէն բան: Որպէս գաղափարակիցդ պահանջում եմ, որ ինձ ասես, թէ ինչից ստիպւած այդքան ատելութեամբ հակւած ես դէպի Հայրս: Ասա, համարձակ, ինձ մի՛ խղճալ, եթէ ենթադրում ես, որ ասելիքդ կարող է ինձ վիրաւորել:

Արփէն վշտաբեկ հայեացքով, կնճռալի դէմքով այնպիսի մի հայեցողական դիրք բռնեց, որ Կաղպարեանը ամբողջ մարմնով ցնցւեցաւ, քրտնեց, կարմրեց և մազերը փշաքաղւեցին: Երբ տեսաւ, թէ դեռ տատանում է ուսուցիչը, նա խեղդւած ձայնով շարու-

նակեց, ամբողջ ճիգը գործ դնելով իրեն զսպելու համար:

—Խնդրում եմ, ասա, եթէ ինձ սիրում ես, եթէ թանկ արժէ քեզ համար կեանքս. ասա ինձ, հայրս քեզ, քոյր ծնողներին, ազգականներին, կամ որևէ ծանօթներին ինչևէ վնաս հասցրել է, զրկանքի, տանջանքի և տառապանքի մի՛ չէ ենթարկել:

Այս խօսքերը արտասանելիս Արփէն ամբողջ ոյժը հաւաքած, աչքեր չռած յառել էր Կաղպարեանցի դէմքին, ուշի ուշով զննում էր նրա բոլոր շարժումները: Կաղպարեանցը գունատւած, անմռունչ հարցը լսելուց յետոյ, ուսերը վեր բարձացրեց, գլխով բացասական նշան արաւ և ասաց.

—Ո՛չ, ոչինչ չեմ լսել, ո՛չ էլ նկատել, երբէք..

Այնպիսի հաստատուն նշաններով, վստահեցուցիչ տօնով և համոզիչ շեշտով արտասանեց Կաղպարեանցը, որ Արփէի սրտից կասկածները հիմնովին անհետացան: Նա կարիք չզգաց հարցը կրկնելու և շունչ առնելուց յետո յարեց,

—Ուրեմն ինչից ստիպւած խոյս ես տալիս դու նրանից, ինչպէս խոյս են տալիս հրեշից·

—Ես յատուկ ձեր օր մասին առանձին հակակրութիւն չեմ տածում, ինձ համար բոլոր հարուստները մի՛ևնոյն չրջանակին են պատկանում և ամէնից խոյս եմ տալիս, ինչպէս գիշատող յափշտակողներից:

—Պատճառը·

—Ես զգում եմ, որ ամբողջ երեք տարի ինձ ու գաղափարներիս հետ շփւելուց յետոյ, միայն

այսօր ես ինձ տալիս այդ հարցը: Ես դեռ կեանքումս չեմ հանդիպել մի այնպիսի հարուստի, որը գանձ գըտած լինէր առանց թշուառներին սգացնելու, տուժածների սպատառները կորատելու և կամ աւազակաբար յափշտակած, կամ գողացած չլինէր:

—Միթէ այդ էլ գիտական ակսիոմա է, ասաց Արփին վրդովուած,

—Եթէ ոչ գիտական, գոնէ փորձնական: Այս համոզմունքս աներկբայելի է:

—Տարակոյս չկայ, որ մարդ իր առանձնական քրտինքով կարողանա հարիւր հազարներ, միլիոններ դիզել: Բայց չեմ կարող կրկնել քեզ հետ, որ ամեն մի հարուստ միայն կեղեքելով, թշուառներին մորմոքեցնելով է դիզել իւր կարողութիւնը: Եթէ յանկարծ մի բարի ռանչպարի խոփը լի ոսկով պղնձի դէմ առնէ, միթէ դրանից էլ պիտի խորշել:

—Այո, պիտի խորշիմ, ոչ թէ ռանչպարից, այլ գտած ոսկուց: Այդ ոսկին դարձեալ թշուառին արտասուեցնելով են դիզել և ոսկիապաշտը տարել, թաղել է, որ ժառանգները կամ թշնամիները չուտեն, չցրուեն այդ գանձը: Այդպիսի արկածների միայն հէքեաթներում ենք պատահում, բայց համոզուած եմ, որ գանձ գտնող ամենաբարի ռամչպարն էլ կխելագարուի և դաժան կդառնա: Այս պատճառով արևելքի օրէնսդիրները օրէնք են սահմանել, որ գտնուած գանձերը՝ որպէս հասարակական սեփականութիւն, պետութիւնը գրաւէ: Այս համոզումն է, որ ինձ ստիպում է խույս տալ հարուստներից, նրանց կողի տակ սիրտ չկա, նրանց զգացումների մէջ խիղճը մեռած է, բացակա է:

—Չեմ կարող հաշտուել այդ մտքի հետ, որովհետև հայրիկս այնքան բարի է, որ եթէ դու նրա սրտի քնքոյշ լարերի հետ ծանօթ լինէիր, նրան այդպէս խիստ չէիր դատապարտել: Նա այնքան զիջող է, որ…

—Տարաբախտաբար անչափ թերահաւատ եմ գանձատէրերի բարութեան մասին . . . :

ԺԱ

ԿԱՍԿԱԾՆԵՐ

Զուրաբը՝ աղջկան Կաղպարեանցին փեսայեցնելու խոստումը տալուց յետո, անհամբեր սպասում էր, որ աղջիկը սիրահարի ձեռքից բռնած իրեն կներկայանա, կխոնարհի իւր առաջ և հայրական օրհնութիւն կխընդրէ: Նա ենթադրում էր, որ Կաղպարեանը այդ շնորհին արժանանալու համար, ուրախութիւնից պիտի գլխաբաց վազէր, դիմաւորէր այն բարեսիրտ հօրը, որը հարիւր հազարներով գրկաբաց կանգնել և սպասում էր այդ պլուտին: Զուրաբին անչափ տարօրինակ էր թւում, այդ մուրացկան վարժապետի դանդաղկոտութիւնը և սաստիկ վիրաւորւում էր այդ ձգձգումներից: Բայց անչափ խելք ունէր, որ զայրոյթը զըսպում, սպասում էր գործի վախճանին:

Այդ դանդաղկոտութիւնը վերագրում էր Կազպարեանի չքաւորութեանը: Մանաւանդ գաղափարական երիտասարդի կապոյտ շապիկը, սև ակնոցները, կարմիր չեան գօտին, սաթի նման խիտ, կռնճ և երկար մազերը, հաստ և կոպիտ մահակը, մտախոհ դէմքը և թոքախտաւոր զրպանը ատելով ատում էր: Ուստի աղջկան մի կերպ խաղաղացնելու համար, Թիֆլիզից պոստով Կազպարեանցին մի հազար րուբլի ուղարկեց, որպէսզի այդ մուրացկանը վրան գլուխը շակէ և գա իրեն ներկայանա:

Կազպարեանցը բոլորովին չհլացաւ այդ գումարով, զգաց, որ Զուրաբի խաղն է, ուստի առանց այլև այլի վերադարձրեց ծրարը: Բայց Զուրաբը այդ արարքը ստորացուցիչ համարելով, բոլորովին ուրացաւ, մերժեց ծրարը: Կազպարեանցը այդ բեռից ազատելու համար, խնդրեց բաժանեց այդ գումարը աղքատ ուսանողներին և ամիջապէս պոստով ցրեց: Վարժապետի այս քայլը բոլորովին բորբոքեց Զուրաբին, որը չէր կարողանում բացատրել այդ ցնորւածի անխելք ընթացքը:

Երբ լսեց Զուրաբը, թէ մուրացկան վարժապետը դադարեցրել է դասերը, խոյս է տալիս իր աղջկանից, նա կատաղեց, այնպէս բորբոքեց, որ քիչ մնաց ատրճանակը ձեռքին գնար, յարձակվէր այդ սովածի վրա, տեղն ու տեղը գնդակահարէ, բայց մտածելով իր անունը, դիրքը, շրջանը և տիրող կարգերը, անպատուութիւն համարեց գրօշանոց ուսանողի հետ ընդհարվիլը: Ուստի որոշեց խոպան մուրացութեան տալ այդ անցքը, մեծ բաղտաւորութիւն համարելով,

որ օձիքը ազատել է մի այդպիսի բաղտախնդիրի ճանկից: Բայց որքան ուզում էր Զուրաբը մոռանալ այս վիրաւորական արարքը, չէր յաջողւում, չէր հանգըստանում:

Զուրաբը բոլորովին անդորրութիւնը կորցրեց, երբ նկատեց, որ իր փայփայած աղջիկը սրտի խորքերից հառաչում է, վշտից բռնկւած այրւում: Արփիկն երազների և զառացանքների մէջ անգամ չէր կարողանում բաժանել իր Կազպարեանից: Զուրաբը այս սոսկալի կացութեան մէջ յուսահատւել, չգիտէր ինչ ընթացք բռնել: Այս ճգնաժամին հօր աչքից չէր հեռանում Յուստինէի դէմքը, մահւան անկողնում կնոջ արած վերջին կտակը, վերջին խօսքերը բաղխւում էր նրա ականջում.—«Զուրաբ, Արփիկիս կտաս իր սիրածին, իր ընտրածին: Փեսացուի ընտրութեան չես միջամտի, եթէ մինչև անգամ աղջիկս մի բօշա ընտրէ:» Տխուր մտքերը ճնշում էին հօր սիրտը և նա մոռացւած չէր լմանում, ինչպէս լուծէ խնդիրը:

Մի օր, երբ Արփին գիրքը ձեռքին կարդացած տեղը անզգայաբար երևակայութեամբ դարձեալ թռել էր Կազպարեանցի մօտ, սուզւել, խրել էր դառն մըտքերում, յուսակտուր արձանացել մտորում էր, Զուրաբն ասաց.

—Հոգիս, ինչի՞ ես խռովում այն արարածի համար, որը քեզ չի սիրում, քեզ արհամարում է:

—Սխալ ես, հայրիկ, սխալ ես, նա ինձ պաշտում է: Նա ինձ համար հալւում է, մաշւում է:

—Որ այդպէս է, էլ ինչի՞ է քեզանից խոյս տալիս, ինչի՞ է երեսը պահում:

—Նա քո հարստութիւնից է փախչում, նա քո գանձերից է խորշում, ասաց հառաչելով Աբփին։

—Այդ ինչ է նշանակում, ինչ է ուզում ասել այդ կեղծաւորը, փողից փախչում է։

—Նա ասում է, որ ինքը օրականով ապրող մարդ է, իսկ ինձ նման փափուկ ապրուստի վարժացին մէջից, հնարաւորութիւն չունի բաւարարելու։

—Դա խելօք մարդու խօսք է։ Հապա իմ կարողութիւնս ումն է.

—Նա չի գիջանում և ոչ մի կոպէկից դպչել։ Չի ուզում ուրիշի վաստակով ընտանիք պահել։

—Ուրեմն հաստատ խելագար է։ Աչքիս լոյս, ախար չէ որ անարատ, ճշմարիտ սէրը ամէն բան մոռացնում է, կուրացնում է։ Սիրողը թռչում, սլանում է դէպի նպատակը և չի նկատում, թէ ոտքերի տակ ինչ է կատարւում։ Քեզ սիրողի ամենամեծ ջանքը քեզ բաղձանքիդ հասցնելը պիտի դառնա, նա ցնորւած է, նա խելագար է, նա ազնիւ զգացմունք չունի։

—Ո՛չ, հայրիկ, ո՛չ, նրան մի նախատել, մի անարգել։ Ինձ անչափ սիրելու պատճառով, նա չի գիջանում ստորանալ, արատաւորել ձեռքերն ու հոգին, կեղտոտել ուրիշի դատածներով։

—Ինչ է մնում, որ ինձ խելագարացնես, աչքիս լոյս։ Մինչ հայրական կարողութիւնը վայելելը ստորութիւն է, կեղտոտութիւն է։ Այդ ինչ բարոյական է, ինչ քամահելի միտք է։ Ինչպէս են ապրելու մլիոնաւոր մատաղհասներ, եթէ չգիջանին օգտուիլ ծնողների գոյքից։ Մեր նախորդներից մեր վեր առած պարտքը ձեզ փոխ ենք տալիս, որ դուք էլ փոխադարձաբար վճարէք ձեր յաջորդներին, ձեր զաւակներին։

—Այո՛, բայց մէկը իւր ժառանգներին մլիոններ է կտակում, միւսը՝ չոր ձեռքեր, քաղցած ստամոքս և թագման ծախսեր։ Մէկը՝ լիութեան մէջ է խեղդւում, հազարները՝ զրկանքների...։

—Ի՞նչ զրկանք, ինչ լիութիւն, ասաց Զուրաբը վրդոված, այլայլած և հայեացքը աղջկա աչքերին յառելով, որոնք իսկոյն խոնարհւեցան գետին։ Զուրաբը լռեց և աչքերը չռած անթարթ զննում էր աղջկա կնճռոտ դէմքը։ Երբէք Զուրաբը այսպիսի վէս հայեացք չէր ուղղել դէպ իր աղջիկը, այնպէս որ Աբփին սարսափած այլագունեց և տեղն ու տեղը սքլաւ։ Այս լռութիւնը, այլայլութիւնը այնպէս բորբոքեցին Զուրաբին, որ նա գլուխը շարժելով, ուսերը թօթափելով սրտնեղած հեռացաւ մտմնջելով.

—Մինչ ես երբէք մխիթարութիւն չպիտի գտնեմ, մինչ բերկրութիւնը անվերջ պիտի փախչի իմ յարկի տակից, իմ սփոփանքս էլ եթէ երեսը շուռ տա ինձանից, էլ ուր գիմեմ գժբախտս։

Հօր հեռանալուց յետո, Աբփին սուգ եց մտքերի մէջ, թէ ինչէ հայրը այսպէս խիստ վրդովեց։ Այս մտքերը թշւառ աղջկան սլացրին և նա վշտաբեկ սկսեց ծփալ իւր դաժան բաղտի ահեղ ալիքների վրա, տատանւելով կոհակների հետ, առանց թևի տակ մի կտոր փշրւած տախտակ ունենալու։

ԺԲ

ՅՈՅՍԻ ՆՇՈՅԼՆԵՐ

Արփին յուսահատած չէր խմանում, որ կողմը թէքւի։ Խղճում էր հօրը, երբէք չէր կարող որևէ արարքով նրան վիրաւորել։ Բայց հօրից չբաժանւելով պիտի զրկւէր սիրուց, պէտք էր ձեռք քաշել սրտից —կեանքից։ Երկար մտածումներից յետո, նա դիմաւորեց այն հարցին.—Սէրն սպանել—զոհել Կազպարեանցին թէ հօրը։ Այս կնճռոտ խնդիրը մեխի նման գամւել էր թշւառ օրիորդի ուղեղում և երկար տապակւելով, չէր կարողանում ղմշել ոչ մէկին էլ։

Օրիորդը երբեմն հօրն էր արդարացնում, երբեմն էլ սիրահարին։ Բայց որոշ եզրակացութիւններից չհասնելով երկուսին էլ դատապարտում էր, որ նորան այսպէս տանջում էին։ Նա մտածում էր, եթէ ես զոհւիմ, հայրս չդիմանալով վշտին ինձ է հետևելու։ Իմ մահով նրա կեանքը չի ապահովում, այլ տանջանք է դառնալու։ Եթէ հօրս զոհեմ, ինձ Կազպարեանցին յանձնեմ. յետո, յետո, ամբողջ կեանքումս ինչպէս մարտնչիմ խղճիս հետ։ Այս ի՞նչ քմահաճոյք է, ի՞նչպէս են

միջամտում իմ կեանքի ընթացքին, ինչի՞ են ուզում նրան իրենց քմահաճոյքի համաձայն ուղղութիւն տալ։ Ի՞նչ, ինձ շատ սիրելու պատճառով։ Հայրը իւր աղջկան տալիս է մի մարդու և նրա գործը վերջացաւ։ Երևի այս էլ մի դժբաղդութիւն է, որ հայրս ինձ անչափ սիրելով պիտի թշւառացնէ։ Աչխարհ է, մի կերպ կապրինք։ Եթէ ապրուստ ձեռք բերելու տանջանքներին չի ուզում ինձ մատնել, էլ ինչի՞ է թողել, որ հոգեկան վշտերի մէջ խեղդւիմ։ Այս ինչ վիճակ է, ահա մարդիկ, եաամոլները, միթէ՞ կարելի է այս կրակների մէջ մարդու խրել ու խորովել...։

—Որքա՜ն երանելի կլինէի, եթէ այս իրիկուն հայրս իւր բոլոր կարողութիւնը թղթախաղի մէջ կորցնէր։ Է՛լ ինչ արգելք կմնար ըղձալուս հասնելու։ Վաղը Կազպարեանը կմօտենար, կխնդրէր, ձեռը կհանբուրէր, որ մեզ օրհնէ ու բաղտաւորացնէ։ Այդ դէպքում մենք բոլորս մի յարկի տակ, նոյն իսկ մի առաստաղի տակ բարեբաղդ կանցկացնէինք մեր օրերը։ Բայց ինչ յամառ ու անողոք կամքի ուժ, ինչ դաժան հաստատակամութիւն վահանի կողմից, որ ոչ մի քայլ զիջողութիւն չի անում։ Ինչով է մեղաւոր հայրս, որ այս համաշխարհային մրցման մէջ չէ ցանկացել գնալ ստրկանալ, կուլ գնալ նմաններին, արիաբար մթերել է իր պաշարը, կուի դաշտում դատարկաձեռն չմնալու համար։ Ա՛չ, հայրս մեղաւոր չէ, որքան էլ որ սկզբից այդ կէտը Կազպարեանցը և նրա թէօրիաները այդ ապացուցանեն։ Նա եղել է ժամանակի զաւակը, դարի ծնունդը և այդ միջավայրի արտադրութիւնն է։ Եթէ նա էլ այն համոզումն ունենար, ինչ

որ ես ու Վահանը, յայտնի բան է, նա էլ օրավարձով ապրողների դասից չէր դուրս գալ։ Հայրս էլ ինչպէս կարող է ձեռք քաշել ներկա վիճակից, քանի որ լիսուն տարեան է, գործելու ուժից զրկւած։ Այս պարագան ինչի՞ աչքի առաջ չունի Վահանը։

Այս մտքերը ամբողջ երկու ամիս տանջեցին Արփիին, այնպէս որ նա ոչ կարողանում էր հօրը տուն թողնել, ոչ էլ սիրուց ձեռք քաշել։ Այս վիճակի մէջ հալւեց, մաշւեց և ամառանոցից փոխանակ կազդուրւելու, լքցւելու, թարմանալու, նիհարած, դունատւած թիֆլիզ վերադարձաւ։ Կաղպարեանը ամառանոցից վերադառնալուց յետո, անվերջ շարունակում էր իր դասերը, որը նրան մի ազքատիկ ապրուստ էր տալիս և դասախօսութիւնները, որը նրան մի այնպիսի հոգեկան բերկրանք էր պատճառում, որին կարող էին նախանձւել ոչ միայն պալատական գահերի տէրերը, այլ մինչև անգամ թատերաբեմից ժողովուրդի անվերջ ծափահարութիւններին արժանացողները։ Բայց Կազպարեանցի սիրտը փշրւած էր, հին Վահանը չէր մնացել, այն վսեմ գաղափարների բարձրաբերձ սաւառնանքից այնպէս խոր և անյատակ անդունդն էր գլորւել, որ վշտի ծովում խեղդւում էր, չկարողանալ ըմբռնելով շրջապատից զեղւած սէրն ու համակրանքը։

Որքան ցանկանում էին իրարից խոյս տալ սիրահարները, այնքան յաճախ իրար էին դիմաւորում, որքան մտադրում էին իրար գոյութիւնը մոռանալ, այնքան շատ նրանց մտքերը իրար մասին էին զբաղւում և սրտերը իրար ձգում։ Փողոցներում, կամ հասարակական վայրերում իրար տւած սոսկ բարևով, կամ

իրար ուղղւած լոկ հայեացքով աւելի ու աւելի էին իրար սիրով բորբոքւում և բացատրւում, քան թէ ժամերի խօսակցութիւններով։

Արփին դեռ ամառանոցից նամակներ էր ուղարկել եւրոպայում սփռւած իր ծանօթներին և տեղեկութիւններ էր խնդրել համալսարանական պայմանների, կլիմայի և շրջանների մասին։ Օրիորդը կարծում էր, որ արտասահմանում ուսման հետևելով, կկարողանա թեթևացնել հոգեկան վշտերը։ Նա ամէն օր իրար եռևից նամակներ էր ստանում ծանօթներից և պատասխանելով նորանոր բացատրութիւններ էր պահանջում։

Մի օր Արփին նամակ ստացաւ մի անծանօթ ձեռագրով։ Նամակի վրա Եգիպտական բրդերով ու սֆինքսով զարդարւած նամակադրօշը նրա հետաքրքրութիւնը շարժեց։ Իսկոյն նրբանցքում նա բացեց ծրարը և սկսեց զննել ձեռագիրը, ստորագրութիւնը։ Նա ասլչեցաւ, չէր հաւատում աչքերին, ուստի կրկին ու կրկին ստորագրութիւնը զննելուց յետո, ուրախութիւնից սրտի սաստիկ բաբախումով ներս մտաւ և սկսեց կարդալ։ Բայց էլի թողեց ընթերցանութիւնը և մռնչեց.—Ուրեմն ես ունիմ հարազատ հօրեղբօր որդի։ Նա կրկնում էր մտքում անդադար.—Իմ հարազատ զարմիկը։ Բայց ինչի՞ դրա մասին իմ հայրս երբէք ինձ բան չէ պատմել։ Բայց որտե՞ղ է այժմ զարմիկս, որտե՞ղ են ապրում նրանք, և նամակի թւականի կողմը յառեց աչքերը։ Նա մտքով կարդալուց յետո, բարձր կրկնեց.—«Քէյպան, աքսորավայրիցս, 10 Սեպտեմբերի 189* թւականին։»

—Ուբեմն թշնամուը աքսորից է գրում, ծննդավայրից հեռացրել են, երևի նրա էլ խաղաղությունը երկինք է համբարձել: Բայց նա ինձանից բաղտաւոր է, որ գոնէ կարողացել է թշնամների համար անձնազոհ լինել: Նա խղճի ուղղած ընթացքով այդ տեղ է հասել: Անպայման նրան էլ թուրքերը ազնիւ ճանապարհի վրա ձեռբակալել են ու քշել:

Արփին ուրախ մէկ էլ գննեց նամակը, ասորագրութիւնը և բարձրաձայն կարդաց.—«Ջո հարազատ զարմիկը—հօրեղբօր որդիդ՝ Հրաչեա:»

—Իւր կեանքը ցեղակիցների համար զոհաբերողն անշուշտ ազնիւ սիրտ էլ պիտի ունենայ: Այս ինչ անբաղդ եմ, որ ոչ միայն չեմ տեսել նրան, այլ գոյութեան մասին տեղեակ էլ չեմ եղել:

ԺԳ

ԴԻՄԱԿԸ ՊԱՏՌՈՒՄ Է

Էլ չհամբերեց Արփին, սկսեց բարձրաձայն կարդալ՝

«Իմ լաբեսիրտ զարմուհիս, Արփի ջան.

«Թու գուցէ կզարմանաս, հոգեակ, յանկարծակի մի այսպիսի նամակ ստանալով, չիմացածդ անձնաւորութիւնից, բայց երբ ծանօթանաս պարագաների հետ, կարդալացնես վարմունքս: Ես վաղուց վեց-եօթ տարեկան հասակից լսել էի քո գոյութիւնը, գիտէի որ Թիֆլիսում հօրեղբօր աչիկ ունիմ: Երբ մեծացա, տասնուհինգ տարեան եղա, դու երեխա էիր, գարձեալ չէի կարող քեզ գրել: Իսկ դրանից յետոյ.... ես երբէք չէի կարող երևակայել, որ քու կրծքի տակ թշնամներին կարեկից մի սիրտ է բաբախում: Այս նամակս էլ չէի վստահել քեզ գրել, եթէ աքսորավայրում չհանդիպէի մեր ազնիւ Մուրադին, Սասնի հերոսին, որի հետ յաճախ տեսնուել ես Կաղպարեանցի դասախօսութիւններին: Մուրադը քեզ ամբողջապէս նկարագրեց, այնպէս որ խրախուսուած ինձ պարտք համարեցի սոյն տողերը քեզ գրել:

«Անչա՜փ ուրախացա, հոգեակս, որ այնպէս համեստ սիրտ ես կրում, որ չես խորշում Մուրադի նման գործիչներից, ձեռք ես կարկառում և ամէն տեսակ զոհաբերութիւններով օգնութեան ես հասնում հալածուած- հարստահարուածներին: Ուրախութիւնս այնքան մեծ եղաւ, որ բերկրանքս քեզ յայտնելու համար, պարտաւորուած էի անպատճառ գրիչս ձեռք առնել և գոնէ գրով քեզ հետ ծանօթանալ: Ահա սրանով իմ անկեղծ և հրալի զգացումներս արտայայտելով, օգալին համբոյրս սլացնում եմ դէպի քեզ:

«Գուցէ չգիտես էլ, որ ես միայն չեմ աքսորավայրումս, քոյրս, աղջկանը հետ ինձ ընկերակից են, այնպէս որ թէև բոլորվին անմխիթար չեմ, բայց նեղութիւնս էլ ահագին է: Կարող ես երևակայել, որ մենք սեփական տան մէջ չենք ապրում, երկիր էլ

չունինք, որ վարուցան անենք, բերքով ապրինք, հալրենակից, ազգակից էլ չկա, որ մեզ կարեկցին, եզածներն էլ մեր վիճակումն են և մեզնից ապրուստ են ակնկալում: Արհեստ չգիտենք, իսկ տեղացիները այնքան սարդ կեանք են վարում, որ ոչնչի կարիք չունին: Կերածները արմատ է, հագածները մի մաշկէ գոտի: Իսկ մենք մեր պահանջները կրճատելու հնարաւորութիւն չունինք: Պարզը գրեմ, որ—կեղծելու կարիք չեմ զգում—անչափ նիւթականի—փողի կարիք ունինք, որ պարտաւորուած ենք շատ օրեր լոկ արմատով յագեցնել մեր քազցը և այդ էլ դժուար ենք ձեռք բերում: Եթէ երբեմն ոսմաթէս է ձեռքերնիս անցնում, իրար ձեռքից յափշտակելով ենք կլանում:

«Այս նամակը քեզ գրելուս, վիճակիս մասին որոշ տեղեկութիւն տալուս պատճառն այն է, որ ամէն ճիգ թափես և մեզ սովի ճիրաններից ազատես: Եթէ կարգին կարողանաս մի զգալի գումարով մեզ օգնել, գուցէ և ազատւինք այս սոսկալի տառապանքից և եւրոպալի մի անկիւնը քաշւելով փոխենք դաժան վիճակներս:»

Այս տողերը կարդալիս արտասուքը լցւեց Արփիի աչքերը, նա հեկեկալով շարունակեց:

«Հոգեակս, մի զարմանար, որ մի այսպիսի խընդրով քեզ եմ գիմում, փոխանակ հօրդ գրելու, հատատացած եղիր, որ ես Սահարայի անապատի աւազի տակ խեղդւել—մնալը նախապատիւ եմ համարում, քանթէ գիմել նրան, որը անընդհատ քսանը հինգ տարւա գիմումներին գիմադրել է ապատաժի նման անզգա սրտով: Չկարծես, որ նրան փոխատուութեան,

կամ ողորմութեան եմ դիմել... ոչ, ոչ, այլ հօրս սեփականութիւնը. մեր ժառանգութիւնը—բաժինն ենք պահանջել, մայրս, քոյրս և ես: Ամբողջ քսանը հինգ տարի անընդհատ խնդրագրով, թախանձանքով և ազի արտասուքով մեզնից խլւածը, յափշտակւածը ենք խընդրել, աղերսել և ոչ մի բաւարարութիւն չենք ստացել Մայրս այնքան սգաց ու լացեց, մորմոքայ ու ծեծկըւեց այդ ժառանգութեան պատճառով, մեզ չքաւորութեան ճիրաններից ազատելու աեղով, որ թշւառը չդիմացաւ և առանց նպատակին հասնելու, սև հողը մտաւ: Քրոջս մարդուն էլ Վան ձերբակալեցին, երբ ինձ տանջում էին Կ. Պոլսում: Որպէս խոովարար աքսորեցին Ֆէզան, ուր իրար թէև գտանք, բայց բանտերում այնպիսի սոսկալի տանջանքների էին ենթարկել, որ թշւառը չդիմացաւ աքսորանքին և մի տարի առաջ թաղեցինք անապատի աւազներում:

«Յայտնի բան է, դու չգիտես թէ ինչ ենք պահանջում մենք հօրիցդ: Մի քանի խօսքով քեզ բացատրեմ: Սրանից քսանը հինգ տարի առաջ Հայրս թշնամանում է մի յայտնի թուրք սրիկայի հետ խարբերդում, մի այգու պատճառով, որը գտնւում է Եփրատի ձորում: Թշնամութեան պատճառը հետևեալն է: Մեր պապական այգուն և ագարակին կից այդ թուրքը ունեցել է մի մեծ տափ, որը նորան ոչ մի օգուտ չի տալիս եղել: Հայրս երկար ժամանակ թըրքին թախանձում է, մինչև նրան համոզելով երեք հարիւր լիրայով գնում է այդ տափը: Ջրելու հնարը գտնում է մեր այգին միջով և սկսում է խաչխաչ յանել: Թուրքի ձեռքից հողը գնելուց երեք տարի յետո,

կալաճքը տարեկան երեք հարիւր ոսկի եկամուտ է բերում։ Այս պատճառով թուրքը դժկամ է, նախանձում է և ատիպում է հօրս, որ ետ ծախէ։ Երբ հայրը չի զիջանում հողը տիրոջը վերադարձնելու, թուրքը սպառնալիքներ կարդալով, գնում է ու մտնում այգետունը և սկսում իւր բանւորներով ցանել։ Հայրը էլ անճարացած կալաճքը մեր սեփական հողերի, տների և խանի հետ կիսագնի ծախում է մի թուրք ուժեղ հաշիւի։ Որպէսզի փողը—մեր դրամագլուխը ապահովացնի, ստացած գումարը տասը հազար լիրան տալիս է եղբօրը՝ հօրդ ձեռքը և Թիֆլիս ուղարկում, որ գործ բռնի և իրենք ամբողջ ընտանիքով գաղթեն։ Կալաճքը ծախողը երբ լսում է հօրս արարքը և համոզւում է, որ էլ անհնար է գօրեղ հաջէից տափարակը յափշտակել, կամ ետ գնել, կատաղած ոխակալութիւնից օր ցերեկով յարձակում է հօրս վրա և մի դաշոյնի հարւածով գետին է թափում Թշւառի աղիքները...։ Այդ ժամանակ ես միայն երկու տարւան եմ եղել, իսկ քոյրս ինձանից երկու տարով մեծ։ Թէ ինչ տանջանքներով մենք մեծացել ենք, մայրս լալով—ողբալով մեզ նկարագրում էր։

«Սկզբներում հայրդ պարբերաբար փող ուղարկելիս է եղել մեզ ապրուստի։ Վեց—եօթ տարի մեր ապրուստի մէջոցները հայթայթում է հօրեղբայրս, անդադար խորհուրդ տալով մօրս ու մամիս, որ մենք մի քանի տարի համբերենք, մինչև խաղաղ մոռացութեան տրւի հօրս մահւան անցքը, թուրքի ոխակալութիւնը մեղմի և ապա փոխադրւինք Թիֆլիս։ Սրիկա թուրքը անվերջ փնտռում է հօրեղբօրս հետքը, որ

վրէժը լուծէ։ Վերջը երբ ես ութ—տաս տարւան տարւան դարձա, հօրեղբայրս աստիճանաբար կարճեց ուղարկած նպաստները։

«Ես սովորում էի Խարբերդի Ամերիկացիների քոլէճը։ Կհաւատաս, այնքան նեղութեան մէջ էինք, որ մայրս զարդերը, ոսկիները բոլորը իմ և քրոջս գաղման վրա ծախսելուց յետո, սկսեց գաղտնաբար իր նախկին թանկագին հագուստները տնական թէլալների ձեռքով ծախել, մեզ համար հացի ու գրքի փող ճարելու համար։ Իսկ հօրեղբայրս տարէց տարի նեղցնում էր մեզ ուղարկած նպաստներ։ Երբ տասնևհինգ տարւան եղա, մօրս հետ խորհելուց յետոյ, ես նրանց թողի, եկա Թիֆլիս այն ժամանակ դու հինգ—վեց տարւան էիր, իսկ դաժան հօրեղբայրս այնքան գազանաբարոյ եղաւ, որ ոչ միայն ինձ դռնից վռնդեց, այլ չթողեց անգամ, որ երեսդ տեսնեմ։

«Ամբողջ վեց ամիս Թիֆլիսի փողոցները թափառեցա, հնար չգտա հօրիցդ մի կոպէկ ստանալու։ Այդ հրէշը, որ տարեկան մի քանի չքաւորների և որբերի նպաստելով գիմնազներում և համալսարաններում ուսում է տալիս, իր սին փառքի, ժողովրդի գովքին արժանանալու համար, չգիջաւ ոչ միայն իւր եղբօրորդուն այդ օրը —որդեդիրների դասն անցկացնելով դաստիարակել տալ, այլ չցանկացաւ անգամ սովից փրկել օտար քաղաքի քաւանասարայում։ Այդ սոսկալի ճգնաժամի մէջ ինչ այլանդակ գործի ձեռք չէի զարկել, ինչ ցնորամիտ մտքերով չէի տոգորւել, դու կարող ես ենթադրութեամբ ըմբռնել։ Զգիտեմ տարաբաղտաբար մի բարեհոգի մարդ գտնւեց, որն

ինձ անյայտ պատճառներից, դուցէ բարերարելու դիտումով, առաջս ընկաւ փողոցից փողոց և յիսուն րուբլի փող հաւաքեց։ Այդ դրամով հայրենակից Արաբկերցիների հետ ճանապարհ ընկա և վերադարձա «մօրս»։

Այլևս չկարողանալով կրքերը զսպել, Արփին ուշագնաց ընկաւ։

ԺԴ

ԿԵՂԵՔԻԱՑՆԵՐԸ

Բարեբախտաբար այդ րոպէին Արփիի սենեակը մտաւ Աստղիկը, որը նկատելով ընկերուհին այդ վիճակի մէջ, անմիջապէս մօտեցաւ, գրկեց և ազախիններին ձայն տւեց։ Իսկոյն ներս վազեցին, իրար անցան, բժիշկի եաւից գնացին, որը Զուբաբին կանչելու, որը ջուր և սառուց բերել և ամէն ջանք ի գործ դրին թշւառ օրիորդին սթափեցնելու։ Աստղիկը Արփիի ձեռքի նամակը նկատեց, կասկածելով թէ Կազազարեան ցից կլինի, իսկոյն ծալեց շալրտեց ընկերուհու գրպանը։ Սառուցի ջրի ազդեցութեամբ Արփին սթափւեց և առաջը դողդողալով կանգնած հօրը տեսքից գլուխ չափեց, գննեց ու առանց մի բառ մռմնջելու, կրկին աչքերը փակեց։

—Հոգիս, աչքի լոյս, ասա ինձ ցաւդ, ազիկա դաստակները բռնած մրմնջաց Հայրը։

Մի քանի ժամից յետո Արփին վշտալի նստել էր դաշնամուրի մօտ և նւագում էր Մոցարտից։ Զուրբաը անշշուկ մտաւ դահլիճ, նստեց բազմոցի վրա, լսեց աղջկան սուզւելով դառն մտքերի մէջ։ Արփին ոգևորւած նւագեց, դաշնակի ձայների հետ ուշքը սըլացաւ, գնաց հասաւ իր իդէալին, իւր սիրոյն և զարմիկի նամակը կարդալուց յետոյ, Կազազարեանցը նորա աչքում հալիւը անգամ վսեմացաւ, բարձրացաւ մի առասպելական կուռք դարձաւ։ Նա յափշտակւած ըսկսեց նւագել, երգել իր կուռքը, իր չաստւածը, որը գաղափարով, ընաւորութիւնով և վարքով անչափ բարձր է կանգնած շրջապատող ոսկեպաշա ամբոխից։

Երբ երգը վերջացրեց, հառաչեց սրտի խորքերից ու մռնչաց.—Այ՛, նա չէր կարող սխալւիլ, նա իրաւացի է, նրա հոգին չի գիջանել ձեռք տալ որևէ կուտակւած գանձի, քանիոր առանց թշւառների հառաչանքներին, առանց խղճալիի աղիողորմ արտասուքներին գանձերը չեն դիպւում։ Նա չի կարող իւր գաղափարական Ալիմպոսից իջնել ու թաւալւել աղբակոյտի շեղջերի և ապականւած ճահիճների մէջ....։

—Այ՛, այ՛, ասաց հառաչելով Զուբարը, ասւած վարժապետ, երկնային է, հրեշտակների, չաստւածների դասից, իսկ մենք ոսկեպաշաններ՝ հրեշտակների վոհմակից...

—Դո՛ւք այստեղ էք.

—Այ՛, մե՛նք այստեղ ենք, այդ էլ երևի նոր դաս է, նոր ձև, այնպէս չէ...։ Աչքի լո՛յս, քանի՛ մէկ

պէտի շարունակես այդ խելագարութիւններդ: Միթէ աշխարհի մէջ այդ գիւտը, այդ մարգարէութիւնը միայն քու վարժապետին վիճակւեց և դու էլ նրա առաջին դաւանակիցն ես:

—Ո՛չ գիւտը Կաղպարեանցն է արել, ո՛չ էլ ես միակ աշակերտողն եմ: Ամբողջ աշխարհ հալածում է կեղեքողներին և զրկողներին: Սարդի նման թակարդ լարողներին և ուսերի արիւնը ծծողներին ատում են:

—Ո՞վ չէ հալածում այդպիսիներին: Բայց ինչի՞ պէտի ձեռք վերցնել հայրենի ժառանգութիւնից:

—Նրա համար, որ զրկանքներով է կուտակւած:

—Եւ դու ենթադրո՞ւմ ես, որ հայրդ կարող էր զրկանքի մատնել....:

—Իւր հարազատ եղբօր զաւակներին Խարբերդում քաղցած, մերկ թողնելով, ասաւ Արփին համբերութիւնը կորցրած:

Զուրաբը չկարողացաւ և ոչ մի բառ արտասանել, կարկամեցաւ: Հայր ու աղջիկ աչքերը գետին յառած լուռ ծանր ծանր շնչում էին, զայրութից աստիճանաբար բորբոքւելով: Իրիկնադէմ էր, դահլիճում աղօտ լոյս էր միայն մնացել, իսկ հայր ու աղջիկ սիրտ չէին անում իրար երես նայել: Երկար այդ վիճակը չկարողանալով տանել, Զուրաբը զայրալի բարձրացաւ և դուրս գնալով ասաց.—Այդ գուշակութիւնն էլ վարժապետդ է արե՛լ:

—Ո՛չ, եղբօրդ որդին, զարմիկս է գրել, ասաց աւելի վրդովւած Արփին:

—Այն սրիկա՛ն, որ ուզեց դաշոյնը փորձել ինձ

վրա, ասաց դռնից դուրս գալով Զուրաբը:

Արփին հօր խօսքերը կրկնելով մտաւ առանձնարանը, ճրագը վառելով շարունակեց ընդհատւած նամակի ընթերցանութիւնը: Արփին, որ երբեմն երբեմն կասկածում էր ստացած նամակի բովանդակութեան մասին, հօրը զայրութից յետո, բոլորովին համոզւեց զարմիկի դրածների ճշմարտութեանը: Այս դառն իրականութեան ճնշման տակ, նա բաց արաւ ծալւած նամակը և յուզւած շարունակեց:

«Հասա Խարբերդ յուսահատ և անճար: Ո՛չ հագուստ, ո՛չ յարկ ունէինք պատսպարւելու և ո՛չ էլ գործ կարող էի անել, հաց վաստակել: Մայրս թուլակազմ և անվարժ էր, չէր կարող ուրիշի դռանը մանուսա, գեագի գործելով մեզ կառավարել. իսկ ես դեռ գործի կպչելու անկարող էի: Ամբողջ տասն երկու տարի մայրս հնից, նորից, ընդուկում ունեցածներից, ծախած զարդերի գնով մեր պակասը մի կերպ հոգա էր տարել: Իսկ այժմ էլ բան չէր մնացել: Բարեբաղդաբար այդ տարին քոյրս աւարտեց Ամերիկացիների քօլէճը առաջին մրցանակով, այնպէս որ նորան վարժուհի վարձեցին ամսական երկու ոսկի վարձով: Դա մի այնպիսի գումար էր մեզ համար, որ կարծես նոր բաղդի արև ծագեց մեր վրա և մայրս հրճւում էր, որ իւր անչափ հոգսերը զուր չէին կորչել:

«Քոյրս չթողեց, որ ես արհեստի գնամ: Նորա խորհրդով շարունակեցի ուսումս մինչև քսան տարւան հասակս ու աւարտեցի: Մենք մեր յոյսը իսպառ կըտրել էինք հայրենի ժառանգութիւնից: Քոյրս պահում էր մեր տունը իւր ռոճիկով, իսկ ինձ էլ լաւ ապա-

գա էր խոստանում վիճակս։ Երբ քօլէճն էլ աւարտեցի, բոլոր ուսուցիչները խորհուրդ էին տալիս ինձ, գնալ Ամերիկա բժշկութիւն սովորել։ Մայրս ինձնից ծածուկ, քրոջս հետ խորհուրդ անելով, քօլէճի վկայագրիս պատճէնը հօրդ ուղարկելով՝ թախանձում են, գոնէ յանձն առնել հինգ վեց տարի ինձ թոշակ տալ, որ կարողանամ բժշկական համալսարան յաճախել։ Անգութ հայրդ զլացաւ և պարբերաբար ուղարկուած նամակներին պատասխան անգամ չտուեց։

«Իրերի այս վիճակում, ես մօրից ու քրոջից բաժանուած, գնացի Կ. Պոլիս և մտա թուրքերի բժշկական ուսումնարանը, որտեղ երեք տարի մի քանի հայրենակիցների նպաստով կարողացա ուսումս շարունակել։ Տարաբազտաբար գժբախտիս էր վիճակուած խաղաղ կեանք վարել և ով կարող է այսպիսի զրկանքների և անիրաւութիւնների ենթարկուելուց յետոյ, կըրքերը զսպել և բողոք չբարձրացնել, երբ ամէն կողմից նկատում է, շշափում է զրկանքի մատնուածներէ զարհուրելի տանջանքները։ Գում.-Գափուի դէպքից յետոյ՝ ինձ էլ կալանաւորեցին և երեք տարի Կ. Պոլսի բանտերում աքալուց և սոսկալի տանջանքների ենթարկուելուց յետոյ, ահա երկու տարի է, որ այստեղ եմ և չեմ գիտեր, թէ ինչ վախճան կունենանք, եթէ որևէ օգնութիւն չստանանք։

«Վիճակս քեզ նկարագրելուց յետոյ, թողնում եմ քո խղճին, արա՛, ինչ հնարաւոր է։ Ես գալիս եմ մուրալու հօրեղբօրից այն գումարի փշրանքը, որից նա մեզ զրկել է։ Ես, ինչպէս թէքել էի այդ ժառանգութեան վրա, կարող էի հաստատ ցմահ վճռից չը-

շեղուել, բայց աքսորուածքս, քոյրս իւր անմեղ զաւակի հետ, թշուառ ընկերակիցներս, սուաճ ու տանջուած աքսորականներիս վիճակը ինձ ստիպեցին, խոնարհեցրին այս տողերը քեզ գրել, պահանջել, որ իմ հայրական ժառանգութիւնս աշխատիս առնել հօրիցդ ու ինձ հասցնել։ Եթէ Մուրադը ինձ չծանօթացներ քո սըրտի հետ, ես երբէք չէի զիջանիլ այս տողերը գրել։

«Վերջացնում եմ նամակս, համբուրելով քեզ՝ զարմուհիս, անհամբեր պատասխանիդ սպասելով։

«Նամակիս պատասխանը գրեցէք՝ Եգիպտոս Ա.-Լէքսանդրիա, Յովնաթան Նաթանեանցին, սեփական արճարան, Մէհմէտ Ալի փաշա հրապարակում. հասցէ նել Հրաչեա Ամիրեանցին։»

ԺԵ

ՅՈՒՍԱՀԱՏԸ

Օրիորդը երևակայութեամբ թուաւ Ֆէզան, մըտաւ Հրաչեայի բնակարանը, գննելու նրանց վիճակը։ Մուրադը խոյն իւր քաղցր ձայնով, համեստ և զըւարթ կատակներով ներկայացաւ օրիորդին և սկսեց ձգել նորա սիրտը այն զրկեալների կողմը։ Աբփին ե-

բազում էր մի հնար գտնել և նրանց աչակցիլ, զբրկուած զարմիկին դարձնել նրա կարողութիւնը և նա սուզուեց այս մտքերի խոր յատակը։ Բայց Զուրաբի վէս հայեացքը, բորբոքուած շարժումները և սպառնալի խօսքերը նորան յուսհատեցնում էին։

—Բայց ինչպէս անել, որ այն թշուառներն իրենց սեփականութեան գոնէ մի մասը ետ ստանան, սովամահ չկոտորուին։ Ես կպահանջեմ, ես կթախանձեմ, կաղերսեմ վերջապէս ես նրան կտիպեմ...։

Այս մտածութիւնների խորը սուզուեց Արփին մինչև ընթրիքի ժամը իւր առանձնարանում, և երբ ընկղմած գառն մտքերի մէջ, հնար էր որոնում նպատակին հասնելու՝ աղախինը ներս մտաւ և ասաց.

—Օրիորդ, պարոնը սեղանատանը ձեզ ընթրիքի է սպասում։

Արփին այս հրաւէրից սթափուեց գունատուած, քանիոր միշտ Զուրաբը ինքն էր անձամբ մտնում աղջկանը առանձնարանը և մի քանի րոպէ զարմի կատակելուց, խօսելուց յետո միասին դիմում էին սեղանատուն, ուստի չհասկանալ ձևացնելով հարցրեց.

—Ի՞նչ ասիր.

—Պարոնը ձեզ սեղանատանը սպասում է ընթրելու։

—Ասա որ ախորժակ չունիմ, չեմ ուզում ընթրել։

Աղախինը հեռացաւ։ Արփին բազմոցի վրա թեկն տուած սպասում էր անհամբեր հօրը դարձին, բայց Զուրաբը վրդովուած տեղից անգամ չշարժուեց, սկսեց ընթրել և մտորել։ Ամբողջ կեանքի անցեալը

իրեն վատ գոյներով և տխուր տեսարաններով իրար հետ էց սլացաւ, անցաւ նրա երևակայութեան մէջ և նա այդ մտքերի ազդեցութեան տակ, սկսեց մռայլել, տխրել։ Նա յիշեց Խարբերդի իւր տաժանելի կեանքը, եղբօր ձեռքի տակ վարած ստրկական վիճակը, իրենց այգին, հարևան թուրքի տափը և տասը հազար ոսկով Թիֆլիս փախուստը։ Իւր գործերը, Յուստինէի հետ ամուսնանալը, Արփիի ծնունդը այնպիսի պարագաներով և վառ գոյներով ծփում էին նրա մտապատկերներում, որ նա ակամա մռայլում էր ու կապուտում։ Մանաւանդ Յուստինէի հոգևարքի պատկերը, լղարած դէմքով, փոսն ընկած աչքերով և ցոլացող հայեացքով։ Այդ մռայլ դիրքով, թուում էր թէ նա դահիճի նման առաջն էր կանգնած, վիզը ճուկ, ողորմելի նալուածքով։ Զուրաբին երևում էր, թէ Յուստինէի ուրուականը իրան հալածում էր։

Ընթրիքից յետո Զուրաբը չկարողացաւ զսպել իրեն, անզգայաբար քայլերը ուղղեց աղջկա առանձնարանի կողմը։ Արփին առանց դէմքը փոխելու անվերջ սպասում էր հօր այցին, նոյնպէս երևակայութիւնների մէջ ընկղմած։ Հօր ներս մտնելը չզգաց, չնկատեց մինչևւոր հայրը աղջկան առաջ բազկաթոռի մէջ իջտարածուեց։ Մի առ ժամանակ հայրը ու աղջիկ լռիկ նստան, առանց ծպտուն հանելու և Զուրաբը չգիտեր թէ որտեղից սկսի կամ ինչ խօսի։ Վերջապէս նա լռութիւնը խզեց ու ասաց։

—Ահա Հոկտեմբերն էլ հասաւ, աղջիկս, պատրաստութիւնդ տես, գալ շաբաթ ճանապարհ ընկնինք արտասահման։

—Ես այլևս չեմ ցանկանում արտասահման գընալ, ասաց Արփին, էլ կարիք չկա։

—Պատճառը. ինչ պատահեց, ինչի՞ միտքդ փոխեցիր։

—Նրա համար, որ ես զրկուած հօրեղբօր զաւակներիս սեփականութիւնը չեմ կարող ծախսել, գընալ Եւրոպա, ուսումս շարունակել։ Նրանք Սահարայում, Ֆեզանում քաղցած մորմոքան, իսկ ես նրանց հազարները շռայլելով բժշկութիւն սովորիմ։ Ո՛չ, այդ իմ սկզբունքներին հակառակ է։

—Ի՞նչ ես յիմար յիմա՛ր դուրս տալիս, ո՞վ է զրկել, ովքե՞ր են զրկուած։

—Ես համոզուած եմ, որ Հրաչեան չի կարող ստել, կեղծել, մանաւանդ զրպարտել։ Ահա՛ նրա նամակը, առ՛, տեսնեմ, այստեղ ի՞նչ զրպարտութիւն կա։

—Այդ սրիկայի և ոչ մի բառը չեմ կարող կարդալ։ Նա չէր կարող քեզ թողել, եթէ սոված վարժապետդ քեզ չհամոզէր, որ հայրդ հրէշ է, կարողութիւնը դիզել է աշխարհ սգացնելով։

—Ո՛չ, ո՛չ, այլ սպական և թուրքից գնած կալուածների գինը, տասը հազար լիրան իւրացնելով, զրկել ես եղբօրդ զաւակներին ...։

—Այդ հեքեաթներ է։ Գնա՛, քրքրիր մատեաններս և տե՛ս, թէ որքա՛ն փող եմ ժամանակին նրանց հասցէին Խարբերդ փոխադրել։ Նրանք իրենց բաժնից շատ են տարել։

—Բայց բնազդս ինձ ստիպում է աւելի հաւատ ընծայել Հրաչեային։ Ձեր խօսակցութեան ձայնը, ձե-

ւերը, կիրքդ ու բորբոքումներդ ձեր խօսքերի հակաւակն են ապացուցանում...։

—Հապա իրենց մօտ թողած, ոսկին, արծաթը, զարդերը...։ Այդ հարցին դու չես կարող խելք հասցնել։

—Ո՛չ, Հայրի՛կ. ո՛չ, ձեր մեղքը այժմ քաւեցէք, դարձրէք ձեր եղբօր զաւակներին, այն աքսորականներին՝ ինչից քսանը հինգ տարի զրկած էք եղել նրանց։ Եթէ խրատունք էլ չունին, ես խնդրում եմ, աղաչում եմ, Հայրի՛կ, գոնէ կէսը ուղարկեցէք։

—Ինձ վրա սուր բարձրացնողին, իմ կարողութիւնս ուղարկեմ, որ լափէ ու փչացնէ ինձ ծաղրելով, անարգելով։ Ո՛չ, նա ինձնից գրօշ չի ստանալ։ Ես նրանց և ո՛չ մի փող պարտք չունիմ, բաժնից աւել եմ տուել։

—Եթէ պարտք չունիս, գոնէ խղճա՛ նրանց, ազատի՛ր սովի, կարիքների ճիրաններից։

—Որպէսզի վերադառնա դաշոյնը փորս ճխտէ, աղիքներս թափէ։

—Քու անխղճութիւնը, անգթութիւնը նրան ստիպել է դաշոյնը քեզ վրա բարձրացնելու։ Յուսահատը ծայրայեղ միջոցների դիմելիս, նրան չեն կարող մեղադրել։ Քո արարքն է նրան ստիպել կատաղելու և սուր բարձրացնելու։

—Ձա՛յնդ, ձա՛յնդ կտրի՛ր. մի՛ խօսիր անխղճի, անգութի, անմեղներին քաղցած ու մերկ թողնողի հետ, ասաց բորբոքուած և դուրս ելաւ Զուրաբը։

ԺԶ

ՉԱՒ ԱՐԱՒ

Հետեւեալ օրը Արփին իւր գզրոցները ու արկղները բացեց, ունեցած բոլոր թանգակին զարդերը, առանց խնայելու մինչեւ անգամ մօրից մնացած անգին յիշատակները, մի կապոցի մէջ լցնելով դուրս եկաւ տանից։ Նա մտաւ իւր գաղտնապահ և մօրը սիրելի տիկին Հեղինէի մօտ, նորա հետ միասին գնացին Երեւանեան հրապարակը, մտան Իւանովի լօմբարդը։ Երկու ժամից յետո Արփին երեք հազար րուբլի փոխադրեց Ալիքսանդրեա Նալթանեանցի հասցէին, որ հասցնի Հրաչեային ու չէքը յանձնեց պոստին ապահովացրած նամակով։

Այդ տեղից դիմեց Կաղպանեանցի տունը, նրա խորհուրդն իմանալու, բայց տանտիկինը յայտնեց, որ արդէն երեք օր առաջ ուսուցիչը տեղափոխուել էր գաւառ, քաղաքային ուսումնարանի տեսչի պաշտօնով։ Իսկ թէ որտեղ. նա ինքն էլ ճիշտ չէր իմանում, Ելիսաւետօպոլ թէ Ալէքսանդրապոլ։

Այս յանկարծակի լուրը շանթի նման ծակեց

Արփիի սիրտը, այնպէս որ նա արդէն չափից դուրս յոգնած, նրբանցքում բազմոցի վրա տարածուեց մի քանի րոպէ հանգիստ շունչ առնելու։ Արփին մի քիչ զովանալուց յետո, տուն վերադարձաւ մոլորած։ Ծանօթներին պատահի, հարց ու փորձ են թարկի, նապարհին որքան աչքերը չորս կողմը դարձրեց, որ բայց հակառակի նման ոչ ոք չպատահեց։ Տանը երկար չկարողացաւ սպասել, կրկին դուրս եկաւ և վազեց Աստղիկի մօտ։ Վերջինն էլ տեղեակ չէր Կաղպարեանցի հեռանալուց, շփոթուեց և խոստացաւ դուրս գալ, տեղեկութիւններ հաւաքել և հաղորդել Արփինին։

Նոյն օրը Զուբաբը ճաշին աղջկան սպասելուց ձանձրացած, չուզեց աղախնին ուղարկել նորա մօտ և ծառաների առաջ պարզել իրենց լարուած դրութիւնը։ Ձարահատեալ քայլերը դողդողալով ուղղեց Արփիի ննջարանը, դուռը կիսով չափ բացեց և ասաց։

—Ճաշի ժամանակն անցաւ, դնանք, ինչի՞ ես պառկել։

—Ախորժակ չունիմ, սիրտս տակ ու վրա է, չեմ կարող ուտել։

—Այսօր առաւօտը, նախաճաշին էլ բան չես կերել։

—Զրկւածների, սովածների գոյքը լափելու և վայելելու այժ չունիմ, կոկորդիցս ցած չի գնալ, երբ ամէն պատառ կուլտալիս երեւակայելու եմ նրանց վիճակը։

—Այդ քայլոզները պահիր, երբ առանձնանանք կխօսիս։ Այժմ ծառաների առաջ խայտառակութիւն մի բանալ, ինձ մի ստորացնել, ասաց նեղս մտաւ և դուռը վրա դրեց Զուբաբը։—Դնանք, վերջը կգանք

և կշարունակենք մնացեալը, բացատրութիւնները։

—Աւելի վատ է սեղանատուն գալս, քանի որ պատառներս առանց արտասուքի չպիտի կարողանամ կուլ տալ։

—Ա՜խ, որտեղ պատահեցիր դու այդ խելագարին, այդ հրէշին, ասաց Զուրաբը ատամները կրճտացնելով։ Դու ինձ ողջ ողջ սպանեցիր, Արփի։

—Սխալւում ես. նա խելագար չէ, նա հրեշտակ է, ասաց Արփին։ Նրանի՜ չէր լինի, եթէ ամբողջ աշխարհը նրա նման դառէր։

—Այո՛, եթէ...։ Բայց կեանքը ուրիշ պահանջներ ունի, որ ցնորւածները չեն ըմբռնում։

—Ո՛չ. եսամոլները, անխիղճները լափում են, շռայլում են, փչացնում են և իրենց սեղանի ոսկորներն անգամ չեն զիջանում զրկւածներին տալ կրկտնելու։

—Բո՛ւ է, բաւակա՛ն է, Արփի՛, ես կաթւածահար կլինեմ, յետո դու կլաս, կոգաս և ինձ կփնտռես ու էլ չես գտնի։ Վեր կա՛ց, գնա՛նք, ասաց լացուկումած Զուրաբը։

Հայր ու աղջիկ թէև սեղանատուն մտան, բայց չկարողացան ճաշել։ Ո՛չ մի խօսք. ոչ մի շշուկ, դէմ ու դէմ բազմած, կերակուրները համտես էին անում։

Աստղիկը խոստացած ժամանակին եկաւ, իմացուց Արփիին, թէ Կապարեանը Ալէքսանդրապօլ է մեկնել քաղաքային ուսումնարանի տեսչի պաշտօնով։ Այս լուրը շանթահարեց Արփիին։ Կապարեանցը Թիֆլիսը, Գաղափարական գործը, պրօպականդան թողել էր և գիջել գաւառական քաղաքի մէջ ուսուցչական

գործ վարելու։ Այն կողմը զարհուրելի կտորած էր,
Թուրքերը ոչխարների նման, հաւի նման կտորում
էին ցեղակիցներին, այս կողմը խրել էին անձնական—
մանական շահագործութիւնների մէջ, ժողովուրդը
մոլորւած անտէրութիւնից, իսկ Կապարեանցի նման
գործիչը մտել էր պետական ծառայութեան և ու-
սումնարանի չոր սեղանների վրա նստած աշակերտնե-
րին այբ ու բեն էր դաս տալու, լուսաւորելու։

—Աստղի՛կ, այս ի՞նչ բան է, ո՞ւր կորաւ Վահանը։ Ա՞յս էր նրա քարոզութեան վախճանը։ Այս
տագնապալից շրջանում թողնել ընկերակիցներին, գաղափարակիցներին և մեկուսանալ....։ Գուցէ մի

—Երևի մի պատճառ կունենա....։ Գուցէ մի
անհրաժեշտ կարիք էր պրօպականդաի համար, կամ
գործը կարգի բերելու համար։

—Ես էլ ինձ կորցնում եմ, այս ի՜նչ սոսկալի վիճակ է։ Միթէ իմ այս ճգնաժամին միակ խորհրդակից, միակ նեցուկիցս պիտի զրկւէի։ Միթէ այնքան խիստ շտապողական էր նրա գործը, որ մի բացատրութիւն էլ է չուեց, չգրեց...

—Պէտք է սպասել, շտապով վճիռ չպէտք է կայացնել։

—Ո՛չ, ո՛չ, Աստղի՛կ, ես արդէն յոյսս կորցնում եմ...։

Արփին անչափ բորբոքւած լինելով չթողեց, որ Աստղիկը գիշերը գնա իրենց տուն։ Նա վախենում էր, որ չկարողանա տանել վիճակը և ջղաձիգ վիճակում աւելի ծանր վերաւորանքներ տեղացնէ հօրը գլխին և իրանց վիճակն էլ դառնանա, էլ խիստ լարւի

յարաբերութիւնները։ Օրից օր աւելի սառնանում էր աղջկա ու հօր յարաբերութիւնը, այնպէս որ արդէն տան մէջ ծառաները, աղախինները, մինչև անգամ դրացիները ըմբռնել և վայ էին տալիս, որ վարդի նման մեակ աղջկան ոտքերի տակ տրորում, թորմշեցնում և չէին թողնում մուրազին հասնելու։

Արփին Աստղիկի գիտակցութեամբ մի նամակ գրեց Կաղպարեանցին, յայտնելով նրան Հրաչեայի նամակի բովանդակութիւնը, Արփիի յարաբերութիւնը հօր հետ, իրերի դրութիւնը, տպաւորութիւնը և նրանցից խորհուրդ ուզեց։ Միանգամայն բացատրութիւն պահանջեց թէ ինչ պատճառով Կաղպարեանցը իւր սուրբ գործը, բարոյական պարտականութիւնը երեսի վրա թողած, Թիֆլիսից հեռացել էր, մտել ծառայութեան։ Մանաւանդ շեշտել էր այն կէտի մասին թէ ինչի՞ նորան չէր տեսել, չէր իմացրել նպատակը, չէր բացատրել։ Այս ընթացքով իր պատիւը շոշափելը զգալ էր տւել և պահանջել շուրթափոխի պատասխանի։ Վերջին կէտի մասին խիստ լեզու էր բանեցրել, յանդիմանութիւններով, պահանջել էր որոշ և դրական պատասխան։

ԺԷ

ՆԱՀԱՆՋ

«Սիրելի Օրիորդ.

«Նամակդ մեծ հրճւանքով կարդացի։ Ուրախութիւնս և հրճւանքս անչափ էր, որ դու շոշափելի փաստերով համոզեցիր, զգացիր, ուղեղիդ և ծուծիդ մէջ թափանցեց այն միտքը, թէ երբէք հարստութիւնը չէ կարելի կուտակել, դիզել առանց մօտաւոր կամ հեռաւոր շրջանների, առանց անհատներին կամ համայնքներին յայտնի, կամ անզգալի կերպով զրկելու տանջելու և սգացնելու։ Անչափ ուրախացա, որ զարմիկդ՝ Հրաչեան ինձ աջակցեց և բևեռեց քո գլխում այդ մեխը, որ յաւիտեան ուղեղումդ ցցած, առանց անհետանելու քեզ պիտի յիշեցնէ իմ թէօրիաի ճշմարտութիւնը։ Զարմանում եմ բաղդի խաղերի վրա, մի թէ՞ Լ ուրիշը չկար, որ նրանց վրա կատարէր իւր փորձերը։ Ինչի՞ պիտի անպատճառ բերէր ու քո գլխին պիտի կոտրատէր այդ պողպատէ ընկոյզները, այն էլ հարազատներիդ ձեռքով։

«Արիացիր սիրելիս, երբէք մի՛ ընկճւիլ։ Ամէն

օր այդպիսի արկածներով կեանքի այս ու այն անկիւնում համանման խաղերը, նոյնպիսի պատկերները ներկայացնում են, բայց մարդիկ առօրեա հոգի խնդրով այնպէս են հարբած, որ չեն կարողանում աչքերը բանալ և լրջութեամբ նկատել իրենց շուրջը կատարւածները: Մի մեղադրել ո՛չ հօրդ, ո՛չ բարեկամիդ և ո՛չ էլ որևէ շրջապատողիդ, աշխարհում ամէն բան բնական ընթացքով է շարժում — առաջանում, բնական ընթացքը պիտի կործանէ եղածները, որ նոր կեանքի հոսանքին տեղ բաց անէ: Ես, դու, մէկը, միւսը չենք կարող բնական հոսանքի առաջն առնել, այդ անհատական ուժից վեր է, մենք միայն կարող ենք մեր քարոզութիւններով, գործերով նպաստել, քիչ արագացնել հների կործանումը և նորերի տիրապետութիւնը: Միայն թէ պէտք է մեր քարոզութիւնները հիմնական լինին, մենք նրան անկեղծ պիտի հաւատանք, դաւանինք, որպէսզի կարողանանք ներգործել և շրջապատողներին հաւատացնել:

«Ա՛հա այս խնդիրը ես որոճում էի վաղ ժամանակից և եկա այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է մեր մէջ ամբողջից նոր դաստիարակւած սերունդ պատրաստել, ներշնչել նոր գաղափարներով, զինել հիմնական սկզբունքներով և ազնիւ հոգւով: Այդպէս դաստիարակած թարմ ուժերը բաց թողնել մասսայի խաւարի մէջ՝ քարոզելու և գործելու: Քարոզիչը իւր վարդապետութեան տարածման համար ո՛չ մի ջանք չպիտի խնայի և հարկ եղած ժամին նրա համար իր կեանքը պիտի զոհէ, հակառակ դէպքում քարոզւած վարդապետութիւնը ծաղրի կմատնւի: Այս իսկ պատճառով թողի Թիֆլիսը, մտա գաւառ, որ աչքիս առաջ և շքիս տակ դաստիարակած աշակերտներով, գաղափարի անձնազոհ գինւորներով հիմնական կերպով առաջ տանեմ սրբազան գործի դրօշակը և բարձր պահեմ, որին աշակերտելու և վարդապետելու կոչւում եմ ստանձնել:

«Ես վաղ եմ ասել քեզ, թէ յուսահատւեցայ Թիֆլիսում շրջապատող երիտասարդութիւնից: Նա լաւ կեղծել գիտէ, լաւ ձևացնում է, թէ ըմբռնում է ամէն վեհ գաղափար, ծափահարել գիտէ, ուռճենալով ցոյց տալ թէ գնահատել գիտէ, բայց բարոյական ոյժից, զոհաբերութիւնից զուրկ է: Երբ հարցը գալիս է խօսքից գործի, նա ընկճւում է և ծերծաղելի դերը ընդունում: Նա Թիֆլիսից դուրս գալու և գաւառական կեանքում գործելու զիջողութիւնը անգամ չի կարողանում անել: Քեզ հետ միասին մի քանի հարիւր ընկերակիցներ եմ ունեցել զանազան շրջաններում, բայց մէկը չկայ, որ քեզ նման զինւած, քու տասանեորդի չափ կուռ հարազատների դէմ բարոյական զէնքերով: Այն ինչ ամէնը, ամէնքը հալածահարում են ո՛չ միայն իրենց ծնողների դրամարկղները իրենց գեխութեան, շռայլութեան համար, այլ գիշատչի նման պատրաստ են յարձակւելու պատահական ամէն մի ոսկեշղթի վրա:

«Ա՛հա ինչի և ո՛ւր եմ շտապել, առանց կատարելու ամենատարրական պարտականութիւնները անգամ, շտապել եմ մեղանչելով շատ շատերի դէմ, մանաւանդ քեզ: Միայն ես մեղաւոր չեմ, մեղաւոր մի՛ համարիր ինձ, որովհետև յանկարծական եղաւ ամէն բան և

խօսք տալուց յետո, ինձ ստիպեցին չորս ժամւա ընթացքում ցտեսութիւն յայտնել Թիֆլիսին ու վազգալ գիմել։ Ամեն բան այնքան յանկարծական եղաւ, որ մոլորւեցայ։

«Դու գիտես, որ վերև լիշածս մտքերը ինձ վաղ էին տանջում։ Այս մասին ես յաճախ խօսք էլ բաց արել մի քանի ռուս մտերիմներիս, որոնք գաղափարակից մարդիկ են։ Դրանցից մէկը ինձ իւր տունն հրաւիրեց և երկար բարակ բացատրութիւններից յետո, ասաց որ իրենք վճռել են, նպատակի հասնելու համար մի պատեհ առիթից օգտւիլ։ Երբ ինձ բացատրեց պաշտօնի պարագաները, ինձ տրւած դիւրութիւնները, առաւելութիւնները և ես համոզւեցի, իսկոյն ինձ տարաւ Կովկասի ուսումնական վարչութեան հոգաբարձուի մօտ։ Վերջինս պաշտօնը ինձ յանձնեց այն պայմանով, որ հէնց նոյն օրը ճանապարհ ընկնիմ, քանի որ դասերը սկսւել էին և ուսումնարանն առանց տեսչի էր մնացել։

«Թիֆլիսի ընթացիկ գործերը, դասախօսութիւնները կարող են շարունակել ընկերներս, իսկ մի այսպիսի հիմնական գործ, սերունդ պատրաստելու մէջից միշտ ձեռք չի անցնիլ, ուստի շտապեցի։

«Ուրեմն պարտազանցութեանս համար ներողութիւն խնդրելուց յետո, աղաչում եմ նոյնպէս, որ հաճիս անտեղի ենթադրութիւններդ ետ առնել և կարդացածդ յանդիմանութիւններից ազատել։ Քեզնից գաղտնիք հնարաւորութիւն չունիմ պահելու, քեզ արհամարելու կամ քեզ վրա կասկածելու առիթ երբէք չեմ ունեցել։

«Իսկ թէ ինչի էի քեզնից խոյս տալիս, քեզ հիմնովին բացատրել եմ. չեմ կարող գրաւոր էլ կրկնել։ Ես եղել եմ և կմնամ քո մտերիմը, սրտակիցը և գաղափարակիցը մինչև գերեզմանիս դուռը։ Աւելին մի պահանջէք, քանի որ ես չեմ կարող ամուսնական կապով կաշկանդել, կամ կաշկանդւիլ։ Քեզ համար վարժուհու պաշտօն կա, վեց հարիւր րուբլի ռոճիկով, քեզ համար տունս բաց է, բնակարան էլ կա, քեզ համար անձնւէր բարեկամի սիրտը բաբախում է ....։ Բայց ներեցէք, որ անկարող եմ դրժել դաւանանքս, չեմ կարող...., ձեզ թշւառացնել, ձեր դահիճը դառնալը ....»

«Այս էլ յայտնեմ, որ դու չես վարժւած — դասախարակւած ուսուցչի չարքաշ կեանքը վարելու, դու դրասենեակի, խմբագրատան մէջ գործ որոնիր, թարգմանական պաշտօն փնտռէ, գրականական գործերով, կամ մի լաւ խմբագրւած հանդէսով դու աւելի ծառայութիւն կարող ես տալ ընդհանրութեան, քանթէ մասնաւոր գործով։»

«Միշտ քեզ յարգող՝ Կաղպարեանց։

Նամակը կարդալուց յետո դառն մտքեր պատեցին Արփիին և ընկղմած երկար մտածելուց յետո ասաց.— Ռու պատրաստելիք անձնազոհ գինւորները հազիւ տասը տարի յետո ոտ կոխեն կեանքի շրջանը, իսկ մինչ այդ...։ Մինչև հիմնական գործ սկսելդ հեղեղը հիմքից կտանի ոտքիդ տակի հողը...։

ԺԸ

ԶԻՋՈՒՄՆԵՐ

Արփին անվերջ կարդում էր Կաղպարեանցի գըրածը և քննադատում, թէում էր, որ Կաղպարեանցը իր գործովը հակասում էր իր սկզբունքին։ Նա գրում էր, որ անհատները չեն կարող ընդհանուր հոսանքի առաջ կանգնել, ամէն բան պետք է բնական ընթացքով առաջանա, ուստի նրա պատրաստելիք անհատները դարձեալ չպիտի կարողանան նպատակի ծառայել, շրջապատող բնական ազդեցութիւններից չպիտի կարողանան ազատ մնալ։ Էլ ինչ հարկ է դրա համար գաւառ քաշւելու և ոյժ սպառելու։

Բնական ընթացքի վարդապետութեան համաձայն, Կաղպարեանցը պարտաւոր էր իւր բնական զգացումներին լսել, իւր սիրածի հետ ամուսնանալ, նորա հետ կեանք վարել և պատառելով նախապաշարմունքի թանձր վարագոյրը նորա հետ ընթանալ գա-

պափարական շաւղով։ Զգացումների հակառակ վարմունքը Կաղպարեանցին դուրս էր շպրտում բնական ընթացքի օրէնքի շաւղից։ Հետևաբար, պէտք էր ենթադրել, որ կամ Կաղպարեանցը այնքան էլ բառացի մոլեռանդ չէր իւր սկզբունքներին ճշտութեամբ հետեւելու, և կամ չէր ըմբռնում կատարեալ նրա հոգին։ Իսկ այս ենթադրութիւններից երկուսն էլ անհիմն էին Արփիի համոզմունքով, քանի որ Կաղպարեանցին ամրոջապէս և ներքին աշխարհով ճանաչում էր օրիորդը։

Արփին մտածում էր, որ ինչ որ իրանից գաղտնի մի ուրիշ պատճառ կայ այդ գործում, որը Վահանը չէր համարձակւում իրեն պարզել։ Ենթադրում էր, չլինի թէ Կաղպարեանցը կապւած լինի մի ուրիշի հետ սիրային յարաբերութիւններով և այդ բանն էր կասեցնում։ Առաղնկի աչքերը, անպայման կերպով Կաղպարեանցի բոլոր արարքը արդարացնելը, գօրեղացնում էին նորա կասկածները։ Բայց չէր կարողանում հաւատալ, թէ ընկերուհին այդպիսի երկդիմի դեր կատարէ։

Այս մտածողութիւններով տարուբերւած ժամանակ, մի երկրորդ նամակ ստացաւ Հրաչեայից, որն աւետում էր քրոջ հետ Ֆէգանից փախուստը և ազատ շունչ քաշելը գեղեցկուհիների մայրաքաղաքում։ Օրիորդին բացատրել էր թէ ինչպէս ամենակարևոր ժամանակ հասել էր դրամները և դործադրել նրանց ազատութեան գործին։ Անհուն շնորհակալութիւնների հետ խնդրում էր նոյնպէս, որ ճար անէ, մի այդքան էլ դումար հասցնէ, որ սովից չկտտորւին քաղաքակրթու-

թեան կենտրոնում, մինչև գործի ձեռնամուխ լինելը։ Այդ դրամը մտածում էր գործադրել մամուլ ձեռք բերելու և իրենց յեղափոխական օրգանը վերականգնելով գործերը առաջ վարելու։

Արփին դարձեալ ընկաւ մտահոգութեան մէջ, խելակորոյս չէր իմանում, թէ ինչ ընթացք բռնէ, որ կարողանա փող գտնել ու օգնել զարմիկին, կամ նրան դարձնել իր հայրենի ժառանգութիւնը։ Զուրաբը վըճռել էր, անհնար էր ուղղակի նրա յամառութիւնը կոտրել, փող ստանալ։ Արփին թէև դողում էր իւր առաջին անվայել գործի առթիւ, որից դեռ Զուրաբը տեղեկութիւն չունէր, բայց դարձեալ տան բոլոր խրեբը գննում էր. որ կարողանա թանկագին առարկաներ գտնել և նորից գրաւ դնել, բայց աչքի ընկնող բան չկար։ Հրաչեայի Փարիզի վիճակը , նրանց սպառնացող սովն ու կարիքը, մանաւանդ նպատակը՝ կտրել էին օրիորդի հանգստութիւնը։

Որքան որ լրւաճ էր հօր ու աղջկա դրութիւնը, որքան որ դեռ չէին մոռացել իրար հասցրած վիրաւորանքը, աշխարհի ծաղրից ու բամբասանքից ազատ մնալու համար պաշտօնական յարաբերութիւն պահպանում էին։ Զուրաբի հոգին թէև ընկճւած էր աղջկա նախատինքներից, բայց չէր կարողանում ատել նորան, որին մի քառորդ դար գգւել ու փայփայել էր և որի համար սիրտը տրոփել էր։ Որքան որ հրէշային էր համարում Արփին հօր արարքը, բայց և այնպէս մտածում էր, թէ այդ ընթացքը համաշխարհային, սովորական էր դարձել։ Ի՞նչ տարբերութիւն կայ, նա մտածում էր, դրացուն, օտարին կամ հարազատին կեղեքելու, զրկելու մէջ։ Ի՞նչ զանազանութիւն կայ քաղաքավարի, համարձակ, նենգութեամբ, կամ բռնութեամբ յափշտակելու մէջ, քանի որ ներկայ մրցման կարգերով մեկից բան կորզելը, քիչ թէ շատ քաջութեամբ՝ օրինական շահագործութիւն է համարւում, համեստ գիտութեամբ կամ նենգութեամբ զըրկանքների տարբերութիւնն ինչ է։ Այս մտածողութիւններով Արփին այնքան հօրը չէր մեղադրում, որքան զզւում էր այն միջավայրից, որից ծնունդ էր առել, դաստիարակւել ու սնւել։

Մի իրիկուն Զուրաբը առաջարկեց աղջկան զբօսնելու։ Արփին չկարողացաւ բազմութեան մէջ եղած առաջարկը մերժել և միասին դուրս եկան։ Դեռ կառք չնստած իրենց դռան առաջ հրաւէր ստացան հայր ու աղջիկ մի մեծատան հարսանեկան հանդիսին ներկա լինելու։ Զուրաբը խօստացաւ ուրախութեամբ մասնակցել։ Արփին մտազբաղ չգտաց անգամ, թէ հայրը իւր կողմից էլ խօսք տւեց։ Հայրը անչափ գոհ աղջկա այդ գիջումներից կառք նստան և սլացան Դվօրցովայա փողոց։ Գոհարավաճառի ցոյց դրած՝ շողակների փայլը գրաւեց օրիորդի սիրտը, նա նոր միտք յղացաւ Հրաչեային օգնելու համար և անմիջապէս խնդրեց հօրից գնել այդ գոհարները, որպէսզի դրանցով զարդարւած գնան հարսանիք։

Հայրը անչափ գոհ, անչափ ապշած դստեր այդպիսի առաջին առաջարկը լսելով, իսկոյն կառքից իջան, մտան գոհարեղէնի վաճառատունը և մի ձեռք գըլխի, կրծքի. ականջի և բազկի շողակնեա զարդեր առան, հինգ հազար հինգ հարիւր ռուբլու չէք յանձնելով

վաճառականին։ Երկուսն էլ գոհ գուրս եկան վաճառանոցից և շարունակեցին իրենց ուղին։

Զուրաբը ուրախութիւնից անչափ հրճւում էր, որ կարողացել էր ընկճել աղջկան, դատարկ գրպան վարժապետի ճիրաններից ազատելով, Աբփին էլ ուրախութիւնից ցայտում էր, որ կարողացել էր գրաւական գտնել, Հրաչեային օգնելու համար։ Երկուսն էլ գոհ էին մանաւանդ իրենց հանճարամտութիւնից և ոչ մի բառով չընդհատեցին իրար, ամողջ ճանապարհի ընթացքում։

Փորձառու վաճառականը մտածում էր ծանրաքայլ ճանապարհի ընթացքում, թէ ինչքան վարպետութեամբ թակարդ էր լարել, Թիֆլիսից հեռացրել էր աղջկանը դահճին այնպէս ճարպիկ կերպով, որ ոչ միայն որսածը, այլ մինչև անգամ որսացողները չէին թափանցել այդ գաղտնիքի խորքերը, թէև դրա համար աղջկա գոհարներից հինգ անգամ աւել վրամ էր ծախսել։ Այդ յաջող գործից քաջալերուած, Աբփին գիջումից խրախուսուած, նա երազում էր շուտով մի պատւական փեսացու էլ ճարել և բոլորովին հաշտւել աղջկան հետ, վերջ դնելով բոլոր անտեղի միջադէպերին։

Այս քաղցր յոյսերով մխնայնում էին օրերը, սպասելով պատեհ առթի։

ԺԹ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԾՆՈՒԾԸ

«Հոգեակս և փրկչուհիս.

«Մինչև գերեզման, գուցէ և դէնը, եթէ իրար դիմաւորենք, յուխտեան քեզ չենք մոռանալու, զարմուհիս։ Հերիք չէր, որ հրեշտակի նման հրաշագործաբար հասար ու մեզ փրկեցիր անապատի աւազից, տաճկական թաթերից. նոյնպէս կենդանութիւն, յարութիւն տւիր մեզ, մի խումբ հայերիս, որոնք Փարիզի փլատակներից մեկում սովի ու ցրտի ճիրաններն էինք ընկել։ Հերիք չէ, որ կեանք տւիր, այլ մինչև անգամ գործ, սրտի սիրած զբաղմունքով պարապելու, հոգեկան ըղձերին հասնելու ճանապարհի վրա մաքառելու։ Իսլամական ինկվիզիցիայից և սովից ազատւած այդ խմբի մըջից յուխտեան չի կարող ջնջւել այն բարերարի, այն պահապան հրեշտակի յիշատակը, որ նրանց փրկելու համար ամէն տեսակ զոհողութիւն արաւ, նրանց կենդանացնելու համար կռւեց, մաքառեց իր հարազատ հօր հետ և խիղճն արատաւորելու չափ ստորութիւններ տարաւ։ Դուք այդ քայլով անչափ գրաւեցիք մեր

խմբի սիրտը, մեր կուռքը դարձանք։

«Մամուլի գործը իւր կարևոր շրջանն ինկնելուց յետո, երբ հանդէսը կրկին սկսեն տարածել Հայկական բոլոր շրջաններում, որին սպասում են անհամբեր, ես ընկերներովս, աքսորականներովս մեր ուխտի համաձայն Կիլիկիայով կվերադառնանք հայրենիք, մաքառելու այժերս պատած չափով, մինչև որ բաղդի անիւը դարձնենք և ստիպենք մեզ էլ ժպտալ։

«Անչափ ուրախ պիտի լինինք, բերկրութեամբ պիտի լցւինք, Հոգեակս, եթէ հնարաւոր լինի քեզ տեսնել Եւրոպայում։ Ուրախ եմ, որ մտադրւել ես գալ այս կողմերը ուսումդ շարունակելու։ Շտապիր, մինչև գալուն հասիր, որ քեզ տեսնեմ, զգացումներս շրթունքներով և Հոգւովս լայտնեմ և ապա ուրախ Հոգով ճանապարհ ընկնեմ պարտքս վճարելու։

«Մուրադը ինձ ծանօթացրել է Կաղպարեանցի գործերի հետ. Հոգւով սիրում ենք նրան կատարած աՀաւոր պրոպագանդայի համար։ Շատ զարմացա կարդալով յո նամակը, որ նա այսպիսի ճգնաժամում ընդՀանրական գործերը երեսի թողած, դաւառական ուսուցչի վիճակով բաւականացել է։ Որքան որ մանրամասն նկարագրել էիր այդ պարագան, բայց մենք արդարացուցիչ վաստ չգտանք, ինչ որ մի մուխի կէտ է մնում, բոլորովին մեզ անբացատրելի։ Եթէ իրեն նամակ գրէք, բարևներս յիշելով խնդրեցէք, որ մեզ մանրամասն բացատրութիւն տա, որպէսզի ըմբռնենք նրա, իսկական միտքը։

«Յոյս ունենալով մինչև գարուն քեզ տեսնել, Հոգեակս, սլացնում եմ օդային համբոյրս դէպի քո ճակատը և այն մատները, որ գործել գիտէ։ Զարմիկդ՝ Հրաչեա։»

Այս նամակը Արփիին Հոգւով դէպի ամպերը բարձրացրեց։ Ուրախութիւնից և ոգևորութիւնից նրա սիրտը այնպէս էր բաբախում, նորա Հոգին այն քաղցրութիւնով էր զեղւել, որ թւում էր թէ խպաւ թեթևացել, անՀետացել էր սրտի վրա ծանրացած վշտերը և օրիորդը բոլորովին չէր զգում, որ դեռ գետնի վրա էր քայլում, այն Հօրը տանը, որ կողոպտել, զրկել էր զարմիկին, տանջել էր տնով տեղով և սնուցել նրա սրտում յեղափոխական ոգին։ Մինչև անգամ թուլացել էր այն զգացմունքը, որ նորան յիշեցնում էր, թէ անջատւած էր այն սրտից, որին սիրել էր ամբողջ եռեք տարի, մտածել, մորմոքել էր այդ սիրով և այդ ցանկութեան հասնելու տենչով։ Արփիի սրտից դուրս քաշւած—մերժւած սիրո փոխարէն մի ուրիշ զգացում տեղ էր բռնել։

Այս նոր զգացումով օրիորդը Հպարտացել, վեՀացել և վեՀանձնացել էր։ Ձէր պարծենում ոչ իր Հօր կարողութիւնով, որի ծագման կեղտոտ լուրերի պատմութիւնը երեն շատ լաւ էր պարզւել, ոչ իւր ուսումով, ոչ էլ իւր Հասցրած նպաստներով. այլ այն զարմիկով, որը կեանքը զոհ էր բերել թշւառների արտասուքը սրբելու, նրա պատուհիկը ապահովելու Համար։ Արփին կարդացել էր պարբերական թերթերում Հրաչեայի գործերի պատմութիւնը, դեռ չիմանալով նրա իւր զարմիկը լինելը։ Նա ծանօթ էր ինչպէս Հրաչեայի սուր գրւածների, արիւնահեղ նկարագրութիւնների, նոյնպէս և անվեՀեր քաջութիւնների Հետ։

Անապատական աքսորավայրից ազատելուց յետո, մուռանալով թրքական բանտերի գազանային տանջանքները, անյողդողդ նորից գործի ձեռնամուխ լինելու ցանկութիւնը, բոլորովին բարձրացրել էր Հոգւով, ծննդով յեղափոխականին օրիորդի աչքում: Իսկ վերջին նամակը կարդալուց յետո, երբ իմացաւ Սրփին, թէ Հօրեղբորդին՝ անձնագոհ դիւնորը պատրաստւում է կրկին մտնել պայքար՝ իսլամի կրօնամոլ և վայրենի դահիճների հետ, վտանգելով գլուխը, նա դիւցազնացաւ օրիորդի մտապատկերում: Հրաչեայլ աչքերի արձակած խտացնող ճառագայթները, նեմացրին Կաղպարեանցի աղօտ ճրագի լոյսը, որը գաւառ քաշելով այնքան նւազեցաւ, որ օրիորդը նմանեցնում էր Հանդչող ճրագի:

Ի

ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Կաղպարեանցը Սրփիից այլևս պատասխան չըստանալով և քաղաքային օրիորդական գիմնազիօնում մի վարժուհու անհրաժեշտութիւն ունենալով, դիմել էր Աստղիկին, որը համաձայնել էր պաշտօնը ստանձնել: Աստղիկն ինքը ժամանակին պարբերաբար

հաղորդել էր բոլոր գրւածները և նրանից խորհուրդ հարցրել: Սրփին պատասխանած յորդորել էր Աստղիկին գնալ, աջակցել գործին. միանգամայն հսկել, որ Կաղպարեանցը չյուսահատւի, չընկճւի և վեհ գաղափարները չժանգոտին, չսպանւեն:

Բայց Սրփիի սրտում հետզհետէ իւր կասկածները զօրացել էին, երբ Աստղիկը վերջին անգամ եկել էր Սրփիի մօտ մնաս բարովի, օրիորդը նորան ճանապարհից մինչև վագզալ, և բաժանւելիս ասաց.

—Սիրելիս, ինձնից շատ բարև կտանիս Կաղպարեանցին, կասես, թէև ինձ անորոշ է մինչև օրս նրա գործելու ծրագիրը, բայց ես նրան խորհուրդ եմ տալիս, որ իւր ուսումնարանի պատերից դուրս գա, մտնւոր ու մօրուսաւոր աշակերտների քարոզի այն վեհ գաղափարները, որի գինւորն է համարում ինքն իրան: Եթէ հասակաւորների մէջ չարծարծւի և չքարոզւի վեհ մտքեր, ուսումնարանից աւարտող աշակերտներից շատերը հասակաւորների ազդեցութեան տակ մոռանալով իրենց աւանդածը, ոչխարի նման հետևելու են նախորդներին: Յայտնի բան է, հոգիս, դու էլ կանանց շրջանին նախապատւութիւն տուր, որպէսզի բարոյագուրկ մայրերը չսպականեն մատաղահաս սերունդի հոգին: Բարի ճանապարհ և յաջողութիւն եմ ցանկանում քեզ, յուսալով որ մենակ գնալով դոյզ կվերադառնաս:

—Յաեսութիւն, յաեսութիւն, ասացին և ճեպընթացը սլացաւ:

Երբ հայր ու աղջիկ կառքով տուն էին վերադառնում, Զուբաթը մի քանի անգամ ուզեց սրտի մաղ-

ձը ժայթքել և խայթել «մուրացկան վարժապետին», բայց ապագան մտածելով դարձեալ զսպեց իւր կրքերը և թաղեց սրտում իւր սխրագործութեան գաղտնիքը: Միայն տուն հասնելուց յետո կատաղաբար ասաց.

—Կասկածում եմ, չլինի՛ թէ այժմ այդ աղջկան խելքահան անի վարժապետդ: Օրիորդը շատ վաղ որոճում էր այդ միտքը յուզած սրտով, այնպէս որ ուշքը վրան չէր, չըմբռնեց հօր միտքը և առանց պատասխանի թողեց:

Արփին յամառութեամբ չկարողանալով նպատակին հասնիլ, հօրը յաղթել, կռիւներից, ընտանեկան փոթորիկներից ոչինչ չշահելով, գործելու եղանակը փոխել էր, մինչև նպատակի հասնիլը: Եւրոպա գնալու, ուսումը շարունակելու և զարմիկին տեսնելու տենչը աստիճանաբար սաստկանում ու բորբոքում էր նորա սրտում: Նա երկար տատանումներից և հօր վստահութիւնը բաւական հաստատելուց յետո, մի պատեհ ժամում, երբ հայրը հարբել էր գոտեր նւագած եղանակներով, առիթից օգտւելով ասաց.

—Հայրիկ, ահա Փետրւարն էլ վերջացաւ, արդէն շատ գարնացանք, խնճոյքներ, հրաւէրներ, պարահանդէսներ և հարսանիքներ բաւական վայելեցինք: Այսպէս կեսատ—պատ խո չես թողնելու իմ ուսումը: Ե՞րբ պիտի գնամ Եւրոպա: Կարծեմ ժամանակն է գիտութեան օրորանի և գեղարւեստի տաճարների հետ ծանօթանալու:

—Ամէն բան իր ժամանակին, կերթանք, կերթանք, աչքի լոյս, երբ որ կամենաս:

—Շտապենք, հայրիկ, չեմ կարողանում այլևս

փողոց դուրս գալ. Թիֆլիսը բանտ է դարձել:

—Թող Մարտը կիսենք և ապա ճանապարհ ընկնենք:

Չուբարը մի այնպիսի տրամադրութեան մէջ էր, այնպէս էր ոգևորւել աղջկան նւագներով, այնպէս էր սուզւել քաղցր երազների մէջ, որ չէր կարող ոչինչ խնայել, պատրաստ էր ամէն տեսակ զոհողութիւնների: Կաղպարեանցին Թիֆլիսից հեռացնելը, աղջկան նրա ազդեցութիւնից հանելով հպատակեցնելը նրան ուռցրել էր ու փքել, իւր բաղտի ու գործունէութեան վրա մեծ վստահութիւն էր գոյացել սրտում և աներկիւղ չէր ցանկանում աղջկան հետ գժտւելու ուէ առիթ ունենալ: Թէև նոյն գիշերը տւած խոստման առիթիւ զըզջաց, բայց չուզեց խոստմնազանց լինել և բորբոքել աղջկան: Հետևեալ օրից սկսեցին ճանապարհորդութեան պատրաստութիւն տեսնել:

Կապոցները կապկպելիս, թանկագին նիւթեր հաւաքելիս դողդողում էր, ամէն րոպէ խիստ կերպով տրոփում էր Արփիէ սիրտը, կասկածելով որ հայրը կարող է յանկարծ պահանջել գարդերը և իւր արարքը բացւելով խայտառակւելուց յետո, կարող է միտքը փոխել և ետ կանգնել Եւրոպա ճանապարհելուց: Բայց Չուբարը այնքան զգուշանում էր աղջկան հետ ընդհարւելուց, որ ոչ մի քայլով, ոչ մի բառով չէր ցանկանում կասկած, կամ թերահաւատութիւն արտայայտել: Մանաւանդ Թիֆլիսի բոլոր շրջաններում նա արդէն տարածել էր, որ ճանապարհորդելու են, ուստի ինչ էլ որ պատահէր նրան, չէր կասեցնելու:

Արփին իւր պայուսակները ինքը պատրաստեց

ու կապեց և գոհարեղէնի մասին ոչ մի բառ չլսեց Զուբաբից: Հայրը երբէք չէր կարող մտածել, որ դուստրը իր մօր յիշատակները և այնքան մեծ ցանկութեամբ գնել տւած գոհարները թողել էր Իւանովի լսմբարտը: Մարտի տասնևհինգին նրանք ճանապարհ ընկան Բագուի և Վօլօչինսկի վրայով դէպի Վիէննա:

Արփին այդ մայրաքաղաքում ութ օր ապրելուց յետո, իմացրեց տոմսակով Հրաչեային իրենց ճանապարհորդութիւնը և մեկնեցին հօր հետ ուղղակի Փարիզ:

ԻԱ

ԳՆԱՑԻՆ

Փարիզ մտնելու երկրորդ օրը առաւօտեան Արփին կառք պահանջեց իւր ծանօթներին այցեր անելու ու գնաց, գտաւ Հրաչեային և նրա ընկերներին: Հայրը կարծում էր, որ աղջիկը իւր նախկին ընկերուհիներին տեսնելու էր գնում, որոնց հետ Թիֆլիսից թղթակցութիւն ունէր: Զուբաբին յայտնի չէր, թէ եղբօրորդին ազատւած էր աքսորից և թղթակցութիւն ունէր իւր աղջկա հետ: Աքսորականների ուրախութիւնը անհնարին է նկարագրել, երբ նրանք տեսան իրենց

բարերար հրեշտակին: Քաղցր ու երկար խօսակցութիւններից յետո, Արփին Հրաչեայի հետ կառք նստելով դիմեցին Լուքսեմբուրկի այգեստաններըը: Ձանապարհին Արփին բացեց իւր սիրտը զարմիկի առաջ և պատմեց անտանելի վիճակը, խնդրելով նրա խորհուրդը և օգնութիւնը:

—Երկար բանակցութիւնից յետո որոշեցին, որ Արփին գնա Լօնտօն և խմբագրատանը ապրի: Ծանօթանա գործերի հետ, մինչև Զուբարի Թիֆլիսից հեռանալը:

—Բայց գիտես, սիրելիս, ասաց Հրաչեան, մեր քիքական և ուսումնարանի վիճականներդ վեր ած, որպէսզի չափահասութիւնդ կարողանաս ազատուել և ազատուիլ հօրդ խնամակալութիւնից:

—Նրանք պատրաստ են, պ՛յուսակիս մէջն են:

—Ուրեմն կարող ենք այսօր պատրաստութիւն տեսնել և վաղը ճանապարհ ընկնել:

—Ես պատրաստ եմ, ասաց օրիորդը, գընանք:

—Բայց անպատճառ հօրդ պիտի յայտնես նպատակդ և պահանջես, որ չհետամտի, չխոչտռակի:

—Այդ կիմտարեմ, ինչպէս որ խոստացա:

Արփին նոյն գիշերը պատմեց հօրը իւր վճիռը և պահանջեց, որ կամ Հրաչեային գարձնէ հայրական ժառանգութիւնը, հարիւր հազար րուբլի կամ իրեն ազատ արձակէ:

Երբ Զուբաբը այս վճիռը լսեց, մնաց շւարած:

Արփին որքան որ վճռել էր որոշումը չփոխել, հայրը տասն անգամ աւելի յամառած ուզեց աղջկան հնազանդեցնել։

—Ո՛չ, դու երբէք այլ եւս ո՛չ Հրաչեայի երեսը կը-տեսնես և ո՛չ էլ շեմքից դուրս կգնաս։ Առաջ ինձ թաղիր, ապա հետևիր Հրաչեային։ Մենք վաղը կվերադառնանք Թիֆլիս։

—Ես քեզ նման անգութ զրկողի հետ չեմ ապրիլ։ Քանի որ դու չես վերադարձնում զարմիկս իւր կարողութիւնը, ես ո՛չ կմնամ քեզ մօտ, ոչ էլ կուտեմ քո սեղանից։ Իսկ եթէ բռնութեան դիմես, կպաշտպանուիմ օրէնքով, հակառակ դէպքում դիակս կտանիս Թիֆլիս մօրս աճիւնի մօտ թաղելու։

Զուբաքը շւարեց, շշմեց, աղջկա ձեռքը խեղճացած մնաց։ Նա համոզուեց, որ չափահաս դստեր վրա բռնանալու իրաւունքը խլած էր նրանից օրէնքը։ Վերջին օգնութիւն խնդրելու համար նա դիմեց դեսպանատան։ Արփին նկատելով որ բռնութիւն պիտի գործ դնեն իւր վրա, գնաց նօտարի մօտ, դրեց վկայեալթղթերը և վկայականները, քաղաքական ամուսնական դաշնագրով կապուեց իւր զարմիկի՝ Հրաչեայի հետ, որպէսզի իսպառ ազատուի հօր բռնութիւնից և մտնի զարմիկի հովանաւորութեան տակ։

Այս բանը որ լսեց, Զուբաքը բորբոքուեց և զայրութից չէր իմանում թէ ինչ մէկոգի դիմի։

—Ո՛չ, ճար չկա, սա էլ նորա աղջիկն է, նորա նման էլ յամառ։ Սա էլ կամքը կատարեց, ինչպէս մայրը, եթէ հետամտիմ, այն ժամանակ ցմահ պիտի հալածէ ինձ և զաւակիս ուրուականը։ Բայց ինչպէս

բաժանուիմ, ինչպէս թողնեմ, որ սա գնա և կապուի այն ձեռքի հետ, որն ինձ վրա դաշոյն է բարձրացրել։ Ա՜խ, ես որքան տխմարեցա, չիմարեցա, որ այն խելագարին յանձնեցի աղջկանս դաստիարակութիւնը . . . : Սոսկալի է, ամբողջ քսանըհինգ տարի է, քանի մտածել եմ խաղաղութիւն գտնել, մխիթարուել, ուրախանալ, բայց տանջանքների եմ մատնուել . . . : Կըխելագարուիմ կընորուիմ։ Ամբողջ կեանքս թռնատուրեցի, չամուսնացա, որ նորան չմշուսանեմ, նորան տանջանքի առիթ չտամ, իսկ նա, նա ուզում է ինձ երեսի վրա թողնել ու հեռանալ . . . : Ես նորա համար ահաւոր գանձ դիզեցի, իսկ նա ինձ գող ու ղրկող համարելով, խորշեց ու ատեց ինձ . . . : Ի՞նչ սոսկալի է այս վիճակը . . . :

Վերջապէս նա խեղդուած ձայնով աղջկան ասաց.

—Գնա՛, գնա՛, կորչի՛ր, ո՛ւր որ ուզում ես։

Արփին պայուսակը առած դուրս եկաւ, կառք նստաւ, հեռացան Հրաչեայի հետ։ Ո՛չ աղջիկը հօրը մնաք բարով ասաց, ո՛չ էլ Զուբաքը նորան բարի ճանապարհ մաղթեց։

Յունուարի 21-ին 1898 թ.

Նոր—Նախիջեւան։

ՀՀ ԳԱԱ Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Государственная Библиотека
7/XI-1922
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ*
Հրևանի Պետ. Համալսարան
Կենտ. գիտական (օրհուդ.)

ԲԱՑՈՒԱԾ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՏՐՊԵՏԻ

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ

ՌՈՒՍԱՑԻՆ ՎԵՑ ՀԱՏՈՐԻ ՀԱՄԱՐ

ՊԱՏԿԵՐՆԵՐ *Տասը պատկեր Թիւրքահայերի կեանքից գինն է 1 ր. կամ 5 ղր.*

ՎԻՒՔ. ԳԱՂՏՆԻՔ *վէպ Թուրքիայի 76-77 թ. արկած. գինն 1 ր. կամ 5ղ.*

ԱԼՄԱՍ *Վէպ Բարձր-Հայոց կեանքից, Երկրորդ Տպագ. Երկու հատոր, խուրաքանչիւր հատորը 1 ր. կամ 5 ղր.*

ՋԱՒԱՀԻՐ *Վէպ վերջին Ռուս-Թիւր. պատերազմի, 1877—78 արկածներից գինն է 1 ր. կամ 5 ղր.*

ՎԻՊԱԿՆԵՐ *Երկու վէպ Թուրքահայերի կեանքից գինն է 1 ր. կամ 5ղր.*

Գործերը լոյս կը տեսնեն ամսական 1904 թուականի ընթացքում:

Բաժանորդագինն է վեց հատորը միասին 4 րուբլի կամ 2 թուման, պատի ծախսով: Ընտիր թղթի վրա 7 րուբլի կամ 4 թուման:

Բաժանորդագրութիւնը շարունակւում է մինչև վերջը սոյն 1904 թ.

Դիմել՝ TAURIS (Perse) ATRPET.

986

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԵՐԸ ԾԱԽՒՈՒՄ ԵՆ

ՎԻՊԱԿԱՆ

ԱԼՄԱՍ Թրքահայերի կեանքից երկրորդ տպագրութիւն Երկու հատոր, իւրաքանչիւրի գինն է 1 ր. 5 ղր.
Ընտիր թղթի վրա 2 րուբլի—կամ 10 ղր.

ԽԵՒ - ԿԱՐԱՊԵՏ. Թրքահայ. կեանքից ″ 1 ր. 5 ″

ՔՈԹ - ԵՂԻԿ ″ ″ ″ 30 կ. 30 շհ.

ՑԽՆՈՑ ″ ″ ″ 30 կ. 30 շհ.

ԺՈՌԱՆԳՆԵՐ ″ ″ ″ 30 կ. 30 շհ.

ԲԻՐՑԱՅԻ ՆՈՒՌՋԵԼԸ ″ ″ ″ 25 կ. 25 ″

ԹՈՒԼՈՒՄԲԱՋԻՆԵՐ ″ ″ ″ 10 կ. 10 ″

ՎԻՒՔԵՍԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ ″ ″ 1 ր. 5 ղր.
Ընտիր թղթի վրա 2 րուբլի—կամ 10 ղռան

ՋԱՒԱՀԻՐ 77-8 թ. Ռուս Թուրք կռւից արկած 1 ր. 5 ղր.
Ընտիր թղթի վրա 2 րուբլի—կամ 10 ղռան

ՊԱՏԿԵՐՆԵՐ Տասը Պատ. Թրքահայերի կեանքից 1 ր. 5 ղր.
Ընտիր թղթի վրա 2 ր. 10 ղր.

ՎԻՊԱԿՆԵՐ Երկու վէպ. Թրքահայերի կեանքից 1 ր. 5 ղր.
Ընտիր թղթի վրա 2 ր.—կամ 10 ղր.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

ՑՈՒՑԱՆ Երեք արարուած. Թրքահայ կեան. 1 ր. 5 ղր.

ՍԱՐՐԱՖ Հինգ ″ ″ ″ 30 կ. 30 շհ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԽԱԼԻՖԱԹ Պատմական տեսութիւն. 30 կ. 30 ″

Դիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցը և Կովկասի քաղաքների հայ գրավաճառներին: Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 % զեղչում:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ (ԹԱՒՐԻԶՈՒՄ)

ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽՈՒՄ Է

---

1. Լ. Տոլստոյի *Մարդիկ ինչի են ապրում*
   թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 2 ղր.
2. » » *Կարմա-Բուդդայական պատմուածք*
   թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ.
3. *Օտար փունջեր Ա. Հիւսք. Շիլլերից.*
   թարգ. Մ. Վ. Մաղսուդեանի 1 ղր.
4. Կ. Կաուցկի *Կոլոնիական Քաղաքական.*
   թարգ. Ռ. Խանազատեանի 2 ղր.
5. Ռ. Խանազատ *Իդէալիզմ թէ Մատերիալիզմ*
   Ուսումնասիրութիւն 10 շհ.
6. Ատրպատականի *Հայոց Հիմնական և Հայաստանեայց եկեղեցու ծխական կանոնադրութիւն* 2 ղր.

Դիմել՝ TAURIS A L' IMPRIMERIE DU

DIOCÉSE ARMÉNIEN

ՀՀ Ազգային գրադարան
NL0321687

21159